



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Ltn

✓ 244

1999



ԱՐԼԵՆՔՈՒՐԻ

ՄԵՆԱԿԵԱՅԸ



ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

ԳԷՈՐԳ ՊՈՒՊԼԻ



ՀՐԱՏԱՐԱԿԵԱՑ

Մ. ԹԱԹՈՒԼ

1700.



Ի ԳՈՐԾԱՐԱՆԻ ՋԱՐԳԱՐԵԱՆ

Կ. ՊՈԼԻՍ ՍՈՒԼԹԱՆ ՀԱՄԱՄ Ն. 12-14

= 1871 =



U.S. DEPARTMENT OF THE INTERIOR
BUREAU OF LAND MANAGEMENT

PLANNING

GENERAL



[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]

244-60

28 248

ՄԵՆԱԿԵԱՅԸ

ԳԼՈՒԽ Ա.

Մորա լիճին մօտ, Հերվեաիոյ լեռներուն սեշտեղը, Ունտերլախի մենաստանը, ԱՅՐԷ դարուն ժամանակէն մաշուող իւր հինօրեայ աշտարակները կը բարձրացնէր : Յանդուգն Շարլ, իր կորստեան պատճառ եղող այն հռչակաւոր ճակատամարտէն (*) քանի մը օր առաջ, սոյն կրօնական շէնքը իւր զինուորներու մոլեղին բռնութեան յանձնած բլլալով, վանքին ամէն կրօնաւորները սպաննուած էին : Գաւառին հովիւները ուղեւորին ցոյց կուտային այն ժայռը, որուն վրայ այս դժբաղդները գլխատեր էին : Լեռնականները կը պատմէին թէ հրաշքով մը հռչակաւոր Պուրկոյնցիին բարբարոս գործը յաւերժ անմռայ պիտի մնար : Բարեպաշտ նահատակներու իբր գլխատութեան բեմ՝ ծառայող քաղը, տակաւին մարդասպան գոյներով ներկուած կը կենար : Սպաննուած քահանայից արիւնը գոգցես դեռ կը շողար կարմրախայլ, և որտընդօտ հեղեղի մը եղերքը կանդնուած, այս ահարկու յիշատակարանը՝ սճիրին անջնջելի հեռքը պահելուն, Գաւառի սոսկալէ կ'անուանէր :

(*) Մորայի պատերազմը :


Մշն ազեաայի անցքէն ՚ի վեր բաւական տարիներ անցած էին, երբ Լորենի դ.ա. քս երիտասարդ Ռենէ, իւր ստացումները վերադին ձեռք ձգեց, որոնք առաջ Պուրկոյն նահանգին գօրքերէն նուաճեալ էին : Իւր ստիսին գէմ Նանսիի անմահ յաղթանակը տարած էր : Այս քաղքին մետ յանդուդն Շարլի ազականեալ և անձանօթ մարմինը լճակէ մը դ.ա. քս քաշած հանած էին, ուր տեղ իւր սպասուորը կը հաւատտէր թէ, կռիւին մէջ մահաբեր հարուած մը ընդունելէ յետոյ, հոն տեղ ինկած էր շնչապառ : Իսկ Հերլեաիա երկար ատենէ ՚ի վեր բռնաւորէ զերծ՝ խաղաղ հանգիստ մը կը վայելէր :

Լուսինը երկնից գաշտերու վրայ իւր շքանք կը գլէր : Չիւնը մեծահասար կը տեղար և հովերը ուժգին կը սուլէին : Ունտերրախի վանքին տէր էրթմալ պարունը, տարիներու բեռին ներքեւ ընկճուած, իւր աշտարակի բնակարանին մտքած ճրարազը վառելով իւր յամր քայլերը գէպ ՚ի մատուռ կ'ուղղէ, ուր տեղ ամեն իրիկուն իւր սրբաազին աղօթքը կը մատուցանէ առ Աստուած :

Հիմա սեղանին ոտքը հասած, — Մեծդ Աստուած, կը գոչէ, գծրողդութեան համար արբանջալուս ներէ՛ ինձ : Միթէ մահը մտուցած է դիտ : Ա՛հ, երկար ատենէ ՚ի վեր կեանքը ինձի համար այնպիսի գաշտ մին է, սրուն բերքը սպասում, մերկ, խաղան մին է այն, որն որ չոր խոտ ու լեցի բոյս միայն կ'արտադրէ : Ա՛յ դ.ա. ք, որ ատեն մը ձեր երդ երակը այս կամայունքը կը լծնդ արցնէիք, ո՛վ սուրբ ստաւերներ, պատասխան սուէք ինձ :

Միթէ գոյութեան խաւարներու մէջ երկար ատեն
 թափառելը բաւական չէ՞. միթէ տակաւին չար-
 ժանացայ, որ յուսկ յետոյ ինձի համար բացուի
 այն լուսեղէն գուռը, զոր մարդս գերեզման կ'ան-
 ուանէ :

Գութարեր թռչունին աղաղակը և ձմեռումս
 մոռնչիւնը միայն դիչերային լուսթիւնը կը վրդա-
 վէին : Էրսթալ ուրք կ'ելլէ : Վանքին շիրիմներէն
 շրջապատած , թափահար , անշարժ , ճշմարիտ ձե-
 ոյն , իւր սյուերու խորշերը արտասուքով թար-
 չում , ցուերու սղին կը թռի անխելոյ , զան-
 դուն մեռեցներու ոսկրտիին վրայ :



Թեթեւ ձայն մը լսելով կ'սթափի : Վթափ բե-
 րան մը Էրսթալ անունը կ'աշտատանէ , և սրտանը կը
 նկատէ թէ իրեն մօտ իւր քրոջը Էրսթա անուն
 դուտորը ծնրագիր կ'արտասուէ : Քաղցր ալջիկը
 որը և վանքին մէջ մինակ ծերունիին հետ կը կե-
 նակցի : — Հայր իմ , ըսաւ Ռնանբըտի կոյսը ,
 դուն երկինքէն մահ կը հայցես , իսկ ես երկրի
 վրայ անոք և անօգնական ի՞նչ պիտի ընեմ . . . :

Իւր հօրը ձեռքը սրտին վրայ կը մնչէ , իւր
 ձայնը շուրթերուն վրայ կը կատի , թափած ար-
 տասուքը յանդիմանութեան վերջ կու տայ :

Էրսթափի ճրագին աղօտ լոյսը հաղիւ հաղ սոյն
 սրտաշարժ անսարանը կը լուսասորէր , ծերունին
 չի խօսիր , այլ իւր որդեգրին կը նայի ակնդէտ :

Էրսթա կը նմաներ այն երկնային կոյսերու ,
 զորս մարդ երկտասարդութեան գութարթ օրերուն
 մէջ կ'երազէ , իւր անեղբ երեւակոյցութեան մէջ

կը մնառէ այն էակը, և իւր սիրաը սիրաբայր հասակին մէջ միայն անոր հրաւեր կը կարդայ . էլրտիա կըսեմ, երկրի վրայ առաւօտեան վարդէն աւելի թաղմ ու վախ, դարնանային անուշաբոյր հոտէն աւելի յտակ կ'երեւէր : Իւր շնորհալի ձեւերը գէմքին գծադրութեան կատարեալ գեղին հեա կը հաւասարէին : Էլրտիա՛ մնառուին մթին կամարներուն ներքե հովիտի շուշանին պէս սպիտակ, արևելքի լեռներուն վրայ ծագող լլցսին պէս գեղադէմ, տեղական պատկերի մը կամ երկնաթեւ ու հիանալի երազի մը ախալը կը կրէր : Նթէ Սքամանարի եղերքը գանուէր՝ Բարիդի սերուհին յիշել պիտի տար անշուշտ . Եթէ թեաալիոյ գաշտերուն վրայ ճեմէր, Ապոզոն՝ Տախնէն վերադին տեսնել պիտի կարծէր, և Սրքաաիոյ երկինքին տակ՝ Ալֆէային այնպէս պիտի թուէր, թէ Սրեթուզայի հեա կը բանակցի :

Էլրթալ գլուխը գարձներալ՝ այս խօսքը մըրմնջեց .

— Տարարա՛դդ օրիորդ, կը ցախմ քու վրայ :

Ու ծերունին որը ազդկան հեա խաւար դահլիճէն անցնելով, մինաստանին բարձր աշտարակը երա :

Էլրթալ պարտը իր առաջին տարիները Պուրկոյնի արքունեաց մեջ անցուցած, և պատերազմելու մէջ իւր անունը մեծ փայլ մը ստացած էր : Մոյն աւերութեան մէջ է՛ն գեղանի օրիորդին սիրահարելէ յետոյ, անոր պաշտելի ամուսնւոր եղած էր : Նորածին զուակ մը իւր իղձերը լրացուց, և

սիրայօղ սրտով կապուած սոյն երկու ամուսնեբունս պէս մէկը չկրցաւ կեանքի մըրկայոյզ գետէն դիւրաւ վար սահել :

Մակայն մարդուս երանութիւնը յարատեւ չէ : Նոյն իսկ յաճողութիւնը ստեպ իբր սկիզբ դրժբազդութեանց , հոս տեղ լոկ աղետալի վայլմը կը ձգէ . մերթ ընդ մերթ մահուան անողորմ դաշնակից բազդը իւր սիրելիները զոհելու համար զանոնք զարդարել ուղելուն՝ անոնց ճակատը ծաղիկներով կը պսակէ : Նոյնը եղաւ պարոնին համար , վասն զի քիչ ասենէն իւր լծակիցը մեռաւ :

Իւր կաթողին սէրը , իւր քաղցր յոյսը այն առտն աղջկանը վրայ դարձուց , որն որ չափազանց գեղանի ըլլալով իւր կեանքի պաշտելի կուռքը եղաւ : Սրտիլի դքսուհին հեռուէ հեռու ազդական ըլլալով մեռներու ատեն անբաւ հարստութեանց ժառանգ անուանեց զինքը : Իրենա իւր ծնունդովը , հարատութեամբը , ձիրքերու հրապոյրովը , վայլուն ապագայ մը ունենալ կը թուէր ամենուն :

Եւրոպայի իշխաններուն էն հզօրը , Պուրկոյնցի առզմագէտներու էն գեղանին , դարուն գիւցազանց էն հռչակաւորը , այսինքն , Յանգուզն Շարլ՝ Իրենայի գեղին վրայ զմայլած սիրտհար եղաւ անոր : Ախտս , քիչ ասենէն սոյն ժառանգը , սիրոյ ամեն հրապոյրները վայելելէ յետոյ , հայրական տունէն անհետ եղաւ : Օրեր , ամիսներ անցան : Իւր վիճակը յայանի չէր մէկու մը : Յուսահատ էրթալ ահռելի վիշտերով կը տառապէր . տիե-

ղերքի մէջ լոկ խոր դուստրը տեսած էր , խոկ հիմա , իրեն համար բան մը չէր մնար հոն : Իրենայի սրտին խանդակաթ սիրտը միայն ինքը կը սնանէր , այլ հիմա դիտալին զուրկ էր անկէ : Իւր ազնկանը շտրհալի ձերքերուն վրայ կերպով մը կը վառքը կը կայանար , բայց հիմա խոր մուրք դուստրը ամօթ կ'ազդէր իրեն :

Պարոնը՝ արքունիքէն քաշուեցաւ . մեկուսի կեանք մը վարած ատեն , նամակ մը ձեռքը կ'անցնի , որուն մէջ անձանօթ՝ ձեռք մը այս տողերը գրած էր :

« Էրթալ , թշուառ իրենան ալ կը դղջայ և մահտան անկողինին մէջ պառկած ձայնը դէպի խոր հայրը կը բարձրացնէ : Ձքեղ կը կանչէ , անոր ազաչանքը 'ի գործ դի'ր անյապաղ , եթէ կ'ուղես անդութ Շարլին բրած զոհի մը յետին շունչը ընդունի » :

Ազնիւ և արի մարտիկը վերջապէս իրենայի բնակարանը կը ճանչէ , ուրտեղ առանձին և վշտաբեկ խոր մուրք ընթացքը կը քառէր անիկա : Կը համնի , աւտաական շէնքին աշտարակները կը նշմարէ արդէն , ծառուղի ճամբային մէջ տեղը կանգ կ'առնէ . . . :

Դղեկին վանդակեայ դուռերը խոկոյն կը բացուին , յուղարկաւորութեան կառք մը այն ընդարձակ դահլիճներէն դուրս կ'ելլէ , օրհներդութ խնը օդը խոկ կը թնթացնէ . . . : Էրթալ այնու հետեւ խոր դուստրը չ'կրցաւ տեսնել :

Իրենա՝ մայր եղած , խոկ արասաւրքի մէջ ճնող

զառակը՝ աչերը բանալը և դոյնը մէկ բրած էր :
Երկու նահատակները մի և նոյն գերեզմանին մէջ
թաղուեցան : Էրթիտը յուղարկաւ որովեան և տե-
ւէն գնաց , իւր աղջկանը համար փառասոր և հո-
յակապ շիրիմ մը կանգնել տուաւ : Ասոր անունու-
մը խել մը հիւրանոցներ , հիւանդատուաներ շինել
տուաւ , իրենայի ամբողջ հարստութիւնը գաւա-
ռին աղքատներուն բաժնեց , և իւր գծրաղգու-
թիւնը լայու համար եկաւ Չուկոյցեր , մեկուսի ապ-
րելով իւր դոյութիւնը ծածկելու :

Ռենտերլախի վանատունին փոքրիկ աշտարակ-
ներէն հեռու , կապոյտ երկինքին մէջ Ալպեան
լեռները կը տեսնուին , որոնց ձիւնապատ սարերը
տձեւ բերամիտներու և փայլած կրթողներու կը
նմանէին : Այս սպառնայի քարհատները , որ իրենց
մերկ և սպիտակ կողերը կը ներկայեն ուղեւորին
աչքերուն , բնութեան իրրեւ հսկայ կմախքը կը
թուէին : Անոց իրենց բարձր կատարները , իրենց
տձեւ կերպարանքը , պատիր երեւակոյթութեան
կարգ մը սխներու , քառակուսի խաբխիսներու , և
կամարեղէն սրահներու հեռատեսիլ պատկերը ցոյց
կուտար . արարչադործութեան վեհ դրոշմը կրող
սոյն սպառածները հորիզոնին ցնարական շոգիսե-
րու մէջէն , ժամանակին պալատներուն , նախնի
գարերու բուրդերուն և բնութեան տաճարներուն
պէս կ'երեւէին :

Ռենտերլախի դիւղակին շուրջը , այս ստակալի և
ահարկու լեռներէն մէկ քանին խլատ մծա կը տես-
նուին : Դէպի հովիտները տանող շախիչներէն մին

ահեղ ժայռի մը մէջ տեղէն կ'անցնի , որն որ կարծես թէ հրաբուխի մը ցնցումէն կիսովի դլտորուած է : Այս քարհատին դադաթը յաւերժական ձիւնով պատած միշտ կը փայլի , և Ռնաերըխի ծաղկեալ մարդերու , անուշաբոյր անտառակներու , և դարար անտառներու մէջ տեղը դիրք մը ունենալով , իւր անփոփոխ սպիտակութիւնը ևս առաւել կը ցոլայ : Նսեմ և աղօտ եղեւիններու անտառակներով և խորհրդաւոր դօտիններով պաշարուած ձորին մէջ տեղը , բուռն հեղեղ մը կը թաւայի , այն ժայռերը իրարու հիւսուած ձիւղեր կը նետեն , որոնք գարնան տակն վերստին կը ծլին : Այս վայրենի կամարներէն ալիքները պզգլեւով , հեռուն վանատունին մօտ դաւարադեղ վայրերը կը սահին կերթան , և հոն իրենց յատակ ու հանգարտ ջրերը այսդին անդին արծաթափայլ կը շրջին :

Սակայն մեծառտանին հինօրեայ կամարներուն ներքեւ , ծիծեռնիկին լեռնականներու երեւիլը՝ ծաղիկներու թագաւորութեան դարուստը կ'աւետէր :

Ռնաերըխի Հելվեաիոյ վայրի ապառաժներու մէջ տեղը դիրք մը ունէր , ինչպէս ոսախ մը անապատին մէջ , և արդէն իւր գեղածիծաղ դարատանները և երզն երզն փայլող մարդերը , Ֆիլոմելի քաղցր կամ հովիտին անուշ հոտերը կը սփռեն : Ահ , բնութիւնը երջանիկ ճակատագիր մը ունի , գարունը ասոր կեանք ու զուարթութիւն կը պարգեւէ , սիրաբոյր եղանակին մէջ հարիւրամեայ ծառը իսկ կենդանութիւն կ'առնէ , և իր շառաւիղները կը ծաղկին , թորչումանց բոյսը՝ արշալոյսին հետ

կը վերածնի , համօրէն աշխարհը գեղեցիկ օրերու
 դարձը կը հռչակէ : Ո՛վ մարդ , դժուար , որ միաքով
 աշխարհիս թագաւորն ես , ստեպ քու առանձնա-
 շնորհութեանցդ զո՛հ կերթաս , տառապանքով
 վշտահար , հաճոյքներով մուլար , տարիներով սառ ,
 երիտասարդութենէ արբշիռ , դու միայն երկրիս
 վրայ արշալոյսին հետ չես վերածնիր , դու միայն
 դարնան հետ նոր ոյժ ե կենդանութիւն չես
 առներ :

Վանաստանին սրբ աղջիկը ակնկոր ե մտախոհ
 իւր աշտարակին վանդակեայ պատուհաններէն ,
 այն դալարագեղ վայրերը կը նկատէր : Գէպի ա-
 րեւմուտք Մորա լիճին մօտ անտառներէ ծածկու-
 ող բարձր լեռ մը իւր ուշը կը գրաւէ :

— Մայր իւրսիւլ , բսաւ մենաստանին տնա-
 պահ պառաւ կնոջ , ո՛հ , այս ահագին ժայռին-
 վրայ արեւին յետին երվներանդը ի՞նչպէս կը
 վալիլի :

— Մուրը կոյս , քու նշմարդ անկէ դարձուր ,
 այդ ժայռը լայրենի լեռն է :

— Այս միժագին անտառներու մէջ հիւղեր
 կամ տնակներ կը գտնուի՞ն :

— Վայրենի լեռին վրայ տնակ , պատասխան
 տուաւ իւրսիւլ սոսկումով , ո՛վ կը ժպտահի շէնք
 կանգնել հոն , ո՛վ կը յանդգնի կեանք վարել
 հոն :

Էլրտիա կը ժպտի : — Ուրեմն այս անտառը աւ-
 հաւոր է , ուրեմն այս լեռը զարհուրելի է . . . :

— Ան տեղն է որ Մենակեացը կը բընակի :

Այս վերջին պատասխանը տալու ատեն , մայր իւրսիւղ ահիւ դարով պատած սարսուռ մը զգաց : Երթժայի քեռորդին անոր տրամաթիւն չազդելու համար , ուրիշ հարցում չըրաւ , և խակոյն աշտարակէն իջաւ :

— Ո՞վ է այս վայրենի լեռին Մենակեացը , կը հարցնէր իւրովի , որու անունը միայն ստակում կ'ազդէ հաս , իսկ գտաւաւին մէջ ամէն բան իւր բարի դործերուն արձագանքը կ'ըլլայ :

Վանքին պարտեղներուն մէջէն կ'անցնի : Գիւղակին մարդերու միգաստանը երկուքի բաժնոյ լայն խրամին մտա , ծագկաւէտ բարձրաւանդակի մը վրայ , դաշտային դքօսատուն մը կը բարձրանար , ուսկէ կրնար մարդ անբող ձորերը նկատել : Ելտախա հաս կը նստի : Երկնքին երեսը շառաղոյն ամպերը , մարը մանող արեգակնանցիւրցան հառապայթներուն մերթ քնդ մերթ միայն կը թուղուն որ փայլին : Հեռուօր լեռներու աղօտ և աւորոշ կատարը , հարիւրնին մեզերու մէջ գլխովին կ'անհետի : Քանի մը երիտասարդ հովիւներ ձորակին աղլկանց հետ մէկ տեղ մարդախայրին մէջ տեղ բալրակի կը պարեն : Ինչպէս սէրը իրենց աչերու մէջ նայնպէս զուարթութիւնը իրենց գիւմաց վրայ կը փայլի : Հովիւներու փեղցըրը դարնանային ծաղիկներով սրտակուած է , և իրենց վարսերու հիւսքը ղեկիւռէն իրենց գլխուն վրայ վէտ վէտ կը ծփան :

Լեռնական մը ներդաշնակ ձայնով յանկարծ այն մասը կ'երգէ :

Գծբաղդուծիւն ճաշակողներ ,
 Նթէ դաղանեաց բասուերին մէջ ,
 Չեր արտասու քը սրբեցին ,
 Ոտքը ինկէք Մեհեցեհն :
 Բայց դուք որ միշտ կը դողդըլաք ,
 Գաւաղանին լոկ անունէն ,
 Հովաններու գըւարթ հովիւք ,
 Մեհեցեհն լեռնէն փախիք :

Լեռնակամները պարը կը լծողան : Մեհեցեհն
 լեռնէն փոխի՝ դուչեցին անդէն Ունտերլախի յա-
 ւերթահարսի նման չքնաղ օրիորդները , և մինչ դեռ
 գըւարթ խումբին չորս կողմը մենասէր ծերերը կը
 ժողովին , արձագանգը հեռուն այս երգին վերջին
 մասը կը կրկնէ ,

Մեհեցեհն լեռնէն փոխի :
 Շինականին երգը կը շարունակուի :
 Բաղդէն տանջուող սիրահարներ ,
 Մ՛հ եթէ տէր մը բարեգուծ ,
 Սեղանին տակ ձեզ միացուց ,
 Մեհեցեհն ոտքը ինկէք :
 Այլ կասկածուք դո՛ւք սիրտերէ ,
 Միշտ դաղանիքի զօրութեան մէջ ,
 Ոճիր , ստկում միայն տեսի՛ք ,
 Մերեր բախիք Մեհեցեհն :

Մերեր փոխի՝ Մեհեցեհն , կրկնեց անդէն զու-
 արթ խումբը : Տակաւին կը պարեն , սակայն եր-
 կինքը կը մթազնի , ցորեկուան սասողին յեռին
 ճարագայթները մրդկաբեր ամպէ մը ծածկուած
 են , և Ունտերլախի կոյսը զարմանքով կը նկատէ թէ

հովիտին ուրախ երգը և իւր կիսովին աղետարեր
խօսքերը , լեռնականին թնդացող , այլ անուշ
ձայնը և հեզեղին գթալի մրմունջը , մարդավայ-
րին գեղը և հորիզոնին տրամաթիւնը , ամեն բան
հակասութիւն է ձոբին մէջ :

Դուք որ թագուն մէկ զօրութեամբ ,

Անշուք հիւղէն պաշտպանուեցաք ,

Եւ դու հիւանդըդ բժշկեալ ,

Մեռելացն ոտքը ինկէք :

Բայց եթէ քողը բարերար ,

Վազր մը ծածկէ արիւնըուշտ ,

Եթէ ծաղկին տակ օձ մը կայ ,

Կոյսեր վախի՛ք Մեռելացն :

Կոյսեր փեխէ՛ք Մեռելացն կրկնեց գարձեալ
շինական խումրը : Գիշերային խաւարը կ'սկը-
սէր անտառին վրայ տարածուիլ , գիւղակին երիւ-
տասարդ բնակիչները իրարու խառնուած իրենց
թեթեւ պարը շարունակելով կը հեռանան : Ար-
դէն վանատունին որքը հազիւ հազ մարդերուն հո-
վիւները և երիտասարդ աղջիկները կրնայ սրոշել :
Խումբերը կը բաժնուին և ինչպէս ամպին ներքեւ
լլայր , այնպէս անոնք ալ կը ցրուին : Իրենց ձայնը
օդին մէջ կը կորսուի , ինչպէս կը կորսուին յեշտ-
տակները մարդկային սրտին մէջ : Այլ Էլրտիա
քանի մը հեռաւոր ձայներ միայն կը լսէ , սակայն
հոյուական երգին վերջին մասը իւր երեւակայու-
թեանը մէջ կը դրոշմուի , և գիշերային սխրք գող-
ցէս իւր ականջին լեռնական երգին յետին բառե-
րը կը խօսի , կոյսեր փեխէ՛ք Մեռելացն :

Խը քայլերը ուղղեց դէպ ՚ի վանք : Երսթալ
զինքը կը դիմաւորէ, և իբն ընկերացած է նաեւ
Սուրբ սեղանին պաշտօնեայ, Ռնտերլախ զիւղա-
կին քարոզիչ, պատկառելի Մնտելը. Ելրախ ծե-
րունի Քահանային կուղղէ իւր հարցումը :

— Հայր իմ, կրտէ անոր, վայրենի լիւին Մե-
նակեացը տեսած ո՞նիս :

— Մնգամ մը միայն :

— Միթէ ծե՞ր է անի :

— Խը գեմքը շտեայ : Գիշեր մը Աւանշէ
եա դարցած տտենա Մորա լիճին եղերքը կը շր-
ջէի, հիսիսային բուն հով մը՝ սոյն սնապատ ա-
փերու վրայ կը սուլէր : սեւաթոյր ամպեր զիշե-
րային ատողերը կը սքողէին, և ալիսակալայլ ճիւ-
նը, մարդերը և ժայռերը ծածկած ըլլալով, այն
միայն ընտթիւնը կը լուսաւորէ : Յանկարծ նա-
ւակ մը տեսայ ոչ, ալեւատտ լիճին ստախ հատու-
ներուն մէջէն անցնիլ կ'ուզէր :

Գողո՞ղուն մակոյկին մէջ ձկնորս մը, կին մը և
տկար մանուկ մը կար : թի քաշելով հաղիւ հաղ
եղերքը կը մտաէին . . . , մէյ մ'ալ հովը ուժգին
հարուած մը ապլով նաւակը ստուերուն տակ կը
սուղի : Սակումի աղաղակ մը արձակեցի . . . :
Նայն պահուն ձկնորսը ջուրին երեսը ելաւ, իւր ա-
ղատած կնկան ձեռքէն բռնելով : Լճին եղերքը
կը հասնին, ձկնորսը իւր զգայութիւնը կը կորու-
սէ, սակայն իւր ընկերը ծունկի վրայ գալով սոյն
վշտաղին աղաղակը կարձակէ մեծամայն, ի՞նչ
. . . ի՞նչ :

Նոյն պահանջն մեծաշուք և փառաւոր հասակով անձանօթ մը եղբին մօտ կ'երեւի : Ձինքը պատուղ զգեստը կը հանէ , և գոռայտղ ալիքներու մէջ կը նետուի : Սառի բեկորներուն մէջէն ճամբայ մը կը բանայ , և կուգայ կը հասնի մինչեւ այն վիճակ տեղը , ուր նաակը կտոր կտոր եղած էր . հոն կ'ընկզմի , վայրկեանէ մը անհետ կ'ըլլայ . . . յետոյ մէկ ձեռքով միայն յողարով և միւս ձեռքով լիճին անդունդներու մէջէն հանած տկար մանակը բրու- նելով ընկողը դանուող ժայռերուն մէկուն վրայ շարերու շատուածին պէս կը կանգնի :

Որդեակէր մայրը անոր սուքը կ'իյնայ , արտա- ուալի աչերով անոր ծունկերը կը գրկէ և շնչաւ պառ աղան կուրծքին վրայ սեղմելով կը տաքոյնէ : Կը սլանամ՝ դէպ ՚ի հոն , օտարականը զիս կը տես- նէ , իւր զգեստաւը կը ծածկուի և Այս Էրոս- Բար Էմբերը + եղի կըյաննեմ , ի՛մ գործս ՚ի կորստի հանէ , բտելով կ'անհետի :

Քիչ մը անդին ձկնորսին անակը կար : Տարա- բողոքը՝ լոյսին առջեւ իւր աչերը կը բանայ : Գող- գողարով սաք կ'ելլէ , մանկամարդ կինը թէկէն կ'ա- ծէր իրեն , իսկ ես աղան գրկեցի . սցապէս մինչեւ գաշտային հիւզը հասանք , ուրակը բարեբար և թողուն ձեռք մը կրակ վառած էր , հոն միայն հաղիւ անոր տառած անդամները կը տաքան : Տղան գրեթէ կը վերածնի և այս թշուառ ընտա- նիքէն մէկնելու ատեն , նշմարեցի թէ անտես դօ- բաթիւնը , վայրենի լեռին անձանօթը՝ հիւզին սե- զանին վրայ տկարով լի քսակ մը ձգած էր :

Երախա Անտելի նկարագիրը ամբողջ լսելէ յետոյ, վախճանի սկսաւ ստակումի և գծութեան արտասուք հեղուլ :

— Եւ այս վեհանձն օտարականին երեսը բնաւ չի տեսա՞ր :

— Ո՛չ անոր չկրցայ մտախլ : Մեծ էր գիշերային խաւարը , ու ևս անոր ձայնը միայն լսեցի :

— Եւ ի՞նչպէս կրցար Մենակեացը ըլլալը ճանչել :

— Եւրոպականները արդէն անոր վրայօք խօսած էին ինձ , մասնաւորաբար յիշելով անոր վառար հասակը , խորհրդաւոր վարմունքը , նշանաւոր արխութիւնը , և հաշակաւոր բարեգործութիւնը :

— Եւ այս եզական մարդը վերտաին տեսնելու հետաքրքիր շեղա՞ր երբէք , հարցոյ Երթմալ հայր Անտելին :

— Ի զուր այդ փորձը պիտի վարձէի , Մենակեացը ամեն նշմարէ կ'անհետի , ամեն խօսակցութենէ կը խաբչի , և հեռուէ հեռու հազիւ հազ խոր նպատաւով դժբախտներու ինքզինքը ցոյց կուտայ : Մեր գաւառի բնակիչները դեռ հազիւ անոր երեսը կը ճանչեն : Հովիտին մէջ հազար տեսակ զոհասներու , հազար տեսակ ձեւերու տակ տեսան զինքը , և հիանալի գործերէ դրաւում ժողովուրդը՝ փոխանակ գանձած տեղը զինքը մնաւերու , անոր անտես եղած տեղը կ'որոնէ :

Ասկէ լեռնականներու այն անխնայաւ նկարագիրները յառաջ կու գան : Մին կը կարծէ թէ գի-

չերը զինքը տեսած է լիճէն անցնելու և ֆրիստոսի հրամանաւ Ս.ա.քեալին պէս Չուրերուն վրայ հաստատ քայլելու, իսկ միւսը անոր կարապի կերպարանք առած ժայռին վրայէն հեղեղին մէջ նետուելու ատեն : Ուրիշ մը կը հաստատէ թէ մահուան անկողինին մէջ, անոր ձեռքէն կենսարար ընկելիքը առնելով, նոյն պահուն իրեն այնպէս կ'երեւէր, իբր թէ անիկայ Գողգոթա լեռին վրայ մարմիններու յարութիւնը խնայ տուող Հրեշտակին պէս, իւր ճակատն ալ լուսեղէն շրջանակով մը պակուած է :

Ուրիշի մը եւս այսպէս կը թուի, որ մրրկալի ողին մէջ բոցավառ կառքով կը սլանայ, ինչպէս Եղիա Յորդանանի եզերքը :

Հուսկ ուրեմն վայրենի լեռին Մենակեացը սիրոյ, ստակումի և հիացումի ամեն խօսակցութեանց առարկան, դաղտնիքի ողին, բարեզործութեան դիւցազնը և սքանչելեաց էակն է :

— Տարօրէն բնութիւն, դաշեց կրթալ, իսկ դու Անսերժ, Մենակեացին վրայօք ի՞նչ կը խորհիս :

— Տակաւին չեմ կրնար զինքը դատել, վեհանձն հօգի մը բլլալու է, սակայն իւր անունը ան ու դող կ'ազդէ ինձ : Մտեպ, մեծ սճրագործներ, մեծ մարդերու տիպարը կը կրեն :

— Ռճրագործ մը . . . , ըսաւ. կլլախա զարհուրելով, անիկա. և դուն կը հաւատաս . . . :

— Ո՛չ, այս խորհուրդը մտքէս դուրս կը վանեմ ահարեկ, սակայն ինչո՞ւ դաղտնիքի ստուերով շրջապատիլ, ինչո՞ւ մարդկային նայուածքէ

խորշից , ինչո՞ւ անհաճոյ թուիլ շատերու , ինչպէս
 մայրի գաղանները անձաւներու , ծայրերու և ան-
 տառներու մէջ կ'ընեն : Ինչո՞ւ համար դիւրահա-
 լան , սոսկում աղբոյ , մողական երեւոյթներով և
 աղղեցութիւնով , իւր բնակարանը անմատչելի ընել :
 Ո՞վ աղջիկս , արդար և ուղիղ մարդը , կեանքի մէջ
 այսպէս շախղ մը չի բռներ երբէք : Առաքինութիւ-
 նը առանց քողի կը քայլէ , գաղանիքը անոր հա-
 մար շինուած չէ բնաւ : Անմեղ մահկանացուն իւր
 սիրտը ամենաւն կը բանայ , բոյսէն չի վախեր , ոչ
 իւր նմանները կ'ստէ և ոչ ալ անոնցմէ կը խորշի :
 Վա՛յ այն մարդուն , որ իւր ընկերէն երկնչեցրով ,
 իրեն դոյութիւնը խաւարներով և ձեռնածութեամբ
 կը սլառէ :

1700

— Սակայն տակաւին Մենակեացը չդատապար-
 տենք , յարեց Լբութալ , գուցէ դժբաղդութիւնը
 դինքը վայրենի ըլլած ըլլայ : Կեանքի ամեն ցնորք-
 ները ճանչելուն , առանձնութեան մէջ միայն հան-
 դոտութիւն կը դանէ անիկա . մի թէ սճիր մը կամ
 սխա՞ղ մըն է սոյգ : Քանի բարեպաշտ մենակեաց-
 ներ , իրենց յետին օրերը խորհրդաւոր առանձնա-
 թեանց մէջ թաղեցին , սակայն խղճի խայթը չրդ-
 գացին երբէք : Ափսո՛ս , ևս խակ , կեանքի տան-
 ջանքներու մէջ , ուրախ և գուարթ օրերու հաւատ
 ընծայելով , միբիսոյոյդ ալիքներու մըսոյ հանդիստ
 կ'երազէի , և լուսաւորեալ աշխարհին մարդաշատ
 անապատին մէջ , երջանկութեան ստուերին կը հե-
 տեւէի . ևս խակ , կ'ըլաէի , եթէ Ռենտերլախի կոյսին
 նկատմամբ նո իրական սխարտք մը չունենայի , ան-

մատչելի մենութեան մէջ, մարդերէ հեռու և ցաւերէ աւելջաներէ զերժ կեանք մը կը վարէի :

Սոյն հովիտներու անձանօթը մարդասեաց չէրնաւ, վասն զի անոնց առաւապանքներու կարեկից ըլլալով, ստեպ անոնց փրկիչը հանդիսացած է, անոնցմէ չի խորշիր, վասն զի ուր որ ցաւ և յուսահատութիւն կը տիրէ, անի ալ կ'երեւի անյապարհնչո՞ւ ուրեմն, մինչդեռ ամեն բան առաքինութիւն կ'աւետէ, մենք անկէ իբր սճիր կատկածինք :

— Գուցէ կը վերելիմ, ըսաւ Մեսերճ, իմ այս կարծիքովս չեմ դատաւարաւոր, սակայն անհնար է շտակալ, այն անյայտ մարդէն, որ միժողին վիճի մը կը նմանի, որուն յասակը կապարեաց խորաշափ դնդակով կը փնտռուի վայրապար :

Յետոյ վանքին պատերուն ներքեւը, երկու բարեկամները իրարմէ բաժնուեցան : Մեսերճ աշխարհէ հեռի, բարեպաշտ դործեր կատարելով, Հելլենտիոյ մէջ իւր օրերը խաղաղ ու երջանիկ անցուցած էր . պատահար մը միայն իւր սովորական հանդիսար վրդովելէ յետոյ, իւր սիրալը 'ի խոր խոցած էր կարեկիւր, իւր տղայութեան բարեկամ, Ունտերլախի աղօթոյը, յանդուգն Շարլի զօրքերէն իւր աչաց առջև սպաննուած, խկ ինքը Պուրկոյնցիներու կատաղութենէն զբէթէ հրաշքով ազատած էր :

Մեսերճ նախնի դարերու քարոզիչներուն ամեն աւետարանական առաքինութիւնները ունէր, սակայն հնդեատասաններորդ դարու քահանայից անթոյլ խստութիւնը միատեղ կը սածէր 'ի ներքուստ :

Աստելք իւր սրտին ազդեցութեան հետեւելու
տակն , բարեգութ առաքեալ մը , սակայն իւր
սկզբունքներու շարադիւծը ՚ի դարձ դնելու տակն ,
կրօնամեղ պաշտօնեայ մըն էր :

Անիկա կը նմանէր կենսաբար շուր մը սահեց-
նող հանդարտ առուակի մը , սակայն բոցավառ
հրարուղիի մը պէս , յանկազժ բռնկելով , մնար
մահկանացուներու վրայ կրնար վայլակ , կայծակ
ու մահ արձակել : Չարիազանց զգացուն էր , և
սրտի դիւցազնական կորով մը տածելուն՝ ապա-
գային անձնուէր , ֆրիսսանէական սղբամօժեան
սաջեւ ամեն զոհողութիւն , ամեն շանք կատա-
րելի կը սեպէր :

Աստելք սպարդապէս , այլ վառվառն , հան-
դարտ , և եռանդուն բնութիւն մը ունենալով ,
երկու տարբեր մարդ կը սպարտնակէր իր մէջ :
Այս հովիտին Յննէլանը՝ կրնար Սամուէլ մը ըլլալ :

Երտիտ հայիւ տանեւութը տարեկան կար ,
չկար : Մենութեան մէջ դատարարակուած , պար-
զակէր , համեռտ և անկեղծ ըլլալուն՝ աշխարհացին
իրերու վրայ շատ բան լսած՝ բայց անով չէր դա-
դած երբէք . անոր համար Ռնտերլախի ձորակը
տիեզերքն էր , և այն միայն իւր բաղձանքներու
կը բաւէր : Ռելիշ երկիրներու , ուրիշ կլիմայնե-
րու գովեստը լսած էր , սակայն զանոնք ճանչել
բնաւ չէր բաղձար : Եւ իրօք վանքին աշտարակ-
ներէն Մորայի զմայրուն գիրքը նկատելու կամ իւր
աչերը դէպ ՚ի երկնացին կամարը դարձնելու ա-
տեն , Աբարչին դարձելուն և վառքին վրայ հիտ-

նալու համար ի՞նչ հարկ կար ամբողջ աշխարհի մէջ շրջիլ :

Երկրագունդին մէկ կէտը , մարդկային կեանքի վրայ զարմանք ազդելու կը բաւէ , ինչպէս կը բաւէ նաեւ Աստուծոյ միակ անունը , կրօնասէր հոգիին ամեն խորհուրդներուն :

Էլլտախ իրեն անձանօթ գանուող մարդկային կիրքերէ զերծ՝ շարիքի կարողութեան չէր կրնար հաւատալ , սակայն որսորդին մօտ գանուող եղնորթի մը պէս դողդոջուն ըլլալով , պղտիկ աղմուկէ մը կը սարսէր , և ստէպ անորոշ ու փանաքի ստակումներէ յուզուած , ամենէն թեթեւ անցքէ մը ահաբեկ կը մնար : Լիճին եղերքին պէս տկար և անզօր , հաստատ պաշտպանութեան կը կարօտէր , որուն կարենար իւր քաղցր և անբիծ աղօթքը մատուցանել , և անոր քով իւր անակողութեան ապատան մը գտնել :

Լեռնականները թէեւ անոր ձորակին մէջ իջնելը աեմնելու սոխորած էին , սակայն ամեն անգամն մեծ հիացումով մը դրաուած իրեն կը նայէին ուշադիր : Վանաստանին ծառերուն մէջէն կը նկատէին զինքը , ու չէին կրնար համոզուիլ որ իւր հիանալի ձեւերը երկնային սգիլի մը միայն բնատուր չըլլային : Որք աղջկան դեղը , անոր աղնրութիւնը , անոր շնորհայի շարժումը դերբնական կը թուէին իրենց , և ամբողջ հովիտը Մեծասորոյ՝ Աղւնչն կ'անուանէր զինքը :

Էլլտախ թէեւ Մէն-Մորի գ.ուատը , հռչակաւոր անունի մը ժառանգը և անբաւ հարստութիւն

ձեռք ձգելու տահմանուած էր, այլ ամեն բան կու-
րուսեց անիկա, սակայն դէժ երկնային մեծու-
թիւնը իրեն յայնի զլլալուն ցաւերու ու վիշտե-
րու անտեղեակ էր :

Իւր հայրը՝ Պուրկոյրնի դուքս Ֆիլիբի տէրու-
թեան մէջ ծնած, ու յետոյ Շարլէ կոմսին բարե-
կամներուն մէջ, անոր առաջին քայլերու առաջ-
նորդած էր, որն որ յետոյ Յանգուզն Շարլ կոչ-
ուեցաւ : Լուի ԺԱ. այն տունն արքայազուն իշ-
խան ըլլալով, իրեն հօրը զայրութէն կը խուսի,
Ֆիլիբի արքունիքը կ'ապաստանի և այս դուքսին
երիտասարդ զակին հետ սերտ մտերմութիւն կը
հաստատէ :

Մէն-Մոր կանը, թէև այն երկու իշխաններէ
տեղի մեծ էր հասակով, այլ անոնց հաճոյքներու
և զուարճութեանց կ'ընկերանար, և քիչ անգամ
անոնցմէ հեռու կը մնար, սակայն Շարլի և Լուիլի
մէջ տեղ անկեղծ սիրոյ յարատեւելը հնարին չէր :
Ի՛նչ հակառակ բնութիւններ :

Լուի ԺԱ. ի բնէ կեղծաւոր ըլլալուն, երկիւղի
առկիժ շտարուն համար, իւր ամենէն հեղ և խու-
նարհ երեւցած ստեներ, աւելի ստակոմ կ'ազդէր
ամենուն : Որչափ իր շուրթերու վրայ բարեկամու-
թեան խօսքեր կը թրթրային, այնչափ ալ ստե-
լութեան խորհուրդներ իրարու կը հազարդէին իւր
սրտին մէջ : Ի բնէ նախանձաւ և մասնատու էր, ու
մեծութիւն և զօրութիւն իրեն անտանելի կ'երե-
ւէին : Սովորութիւն բրած էր մեծութիւնը խու-
նարհեցնել և ցածութիւնը մեծցնել : Իւր վառա-

մել , երդմնադանց , ուխտադրութեան արինուուչա
բնաւորութեամբը ամեն աղնիր գգացումներ խա-
զալիկ կ'ընէր , և լոկ չարութեան կը հաւատար :

Մռանց բարեպաշտ ողի մը ունենալու նախա-
պաշարեալ էր : Ո՛չ դաւակ , ո՛չ հայր , ո՛չ ամու-
սին և ոչ բարեկամ եղաւ անիկա , սակայն միա-
պետութեան հաստատիչ մտկանունը կուտային
անոր : Ուրեմն ճշմարիտէ , եթէ ըսենք որ առանց
քրիստոնէի աւաքինութիւններէն մէկը ունենալու ,
կարելի է արքայական մեծ յատկութիւններ ունենալ :

Լուիղի երկտասարդ ընկեր Շարլը , ընդհակա-
ռակն վեհանձն և անկեղծ ծնած էր : Ի՞նչ և իր
հոգւոյն յատկը մէկու մը չէր յայտնած , այլ ե-
ռանդուն ու արի էր . այսու ամենայնիւ անգոյշ
կերպով իւր ուժգին կիրքերուն անձնատուր ըլլա-
լով , իր ծագում առած օրէն ՚ի վեր կանխաւ գգա-
ցնել կուտար , թէ ինքը այն քով պատերազմալը ,
այն անդուսպ իշխանը պիտի ըլլար , որուն համար
պատմութիւնը Յանգոն , Սուլուի , Ահարիս պիտի
ըսէր :

Շարլ է . կը մեռնի , և այն արքայազուն իշխա-
նը անոր կը յաջորդէ . Ֆրանսայի և Պուրկիոյնի մէջ
տեղ պատերազմ կը հրապարակուի : Շարլ իրեն
ընկեր ունենալով Սէն-Մոյ կամը , իւր հօրը բա-
նակներուն հրամանատար կը կարգուի , յստալ կը-
քալէ անվեհեր . Մոնթլերի մէջ հռչակաւոր յաղ-
թանակ մը կը տանի , և այն միջոցին որ ինքը
Լուի ՃԱՐ գերբի բանելու կ'ըզաղի , միւս կողմէն
Բարկը կը պաշարէ :

Արքայն կ'սկսի բանակելի , Գննֆրանի անուանի
դաշնադիրը երկու իշխաններէ կ'ստորագրուի , և
յաղթող դիւցազնը իր երկիրները կը գտնուի :

Բարին-Յիլիբ սպրելէ գաղթեցաւ : Շարլ Պուր-
կոյնի դուքս եղած , իւր բռուն ու կատաղի բնու-
թեան անձնատուր , իւր կորովն և արիութեանը
վրայ վստահ ալ իւր սնտիառութեան չափ զնեւ
չէր գիտեր : իւր բանակներու ծախար ճարելու
համար անհամար տուրքեր կը զնէր : Եպիսոսի ար-
քային նման , դեռ հանգիստ և դադար չըբաժ
կ'ուզէր տնեղերը գրաւել : Արդէն շատ վիճակ-
ներ Պուրկոյնի միացուցած , Լորենի ալ կ'ուզէր
տիրել . յետոյ Ալլաք առնելու կը բաղձար , յու-
սալով նաեւ որ կրնար Զուիցցերն ալ նուաճել ,
վերջապէս միտք ունէր տէրութիւնը Ալմանեայի
միտք տարածել և Պելճիքայի թագաւորութիւն մը
հաստատել , որուն համար Մաքսիմիլիէն կայսրը
խիւ պիտի ստիպէր իւր գլուխը թագով պատկերու :
Սէն-Մոր հարուստ և պատուաւոր կոմսը , Էլլա-
թալ սպարոնին քեռայրը , Էլլաթայի հայրն էր . ժո-
ղովուրդէն և բանակէն սիրուող իշխանին քովէն
չէր հեռանար , արքունեաց մէջ իւր վարկը և հա-
մարումը մեծ ըլլալուն , իւր տիրոջը ռազմասէր
խորհուրդներու ղէմ կը կենար : Լուի ԺՄ . Պուր-
կոյն նահանգին օր ըստ օրէ մեծնայր տեսերով
անհանգիստ կ'ըլլար , և արդէն իւր լրտեսներովը
գաղանի զորձակայներովը , Շարլի գտնուելու մէջ
բաժանումի և գտառներուն մէջ ապստամբու-
թեան որոնը ցանաձ էր : Սէն-Մոր կոմսը , դիւ-

ցաղունի մը , այսինքն իւր հինօրեայ աշակերտին քանի մը խիտ գիտողութիւններ բրած , իւր ձեռնարկներէն յառաջ դասիք վտանդը յայտնած և անոնց ձախող ելքը կանխատես սղտով մը աշխարհակային անջու սղարզած էր : — Տէ՛ր իմ , ըստ ազնիւ կամը , երկար ատենէ ՚ի վեր բանակներու հրամանատար ըլլալու պատիւը ունիմ , ստէպ ձեր վտահաթիւնը ստացայ , ձեր յարգանաց արժանացայ : Եթէ իմ խրատներս կրցան ձեր կարծեաց հակառակիլ , ներեցէք ինձ որ արքունիքէն քաշուիմ , վասն զի իմ օղտակար չեղած անդու չեմ ուզեր կենալ :

— Բան է , ըստ դու քոր խոժու դէմքով , քաշուէ :

Սէն-Մոր կամը կը հեռանայ , հառաչելով կանցնի արքայական սրահէն : Շարլ անոր ետեէն կը դիտէր . այն ատեն իւր գիւցազնական առաքինութեանց հետ եռանդուն և զգայուն սիրտ մը կը տածէր : Տակաւին այն վայրագ հրէշը չէր եղած , որն որ յետոյ իւր անձնական կատաղութեանց զոհ , իւր ժողովորդին ահը և սոսկումը մինչև դերեզման հետը կը տանէր . իւր վաղեմի բարեկամը ետ պիտի կանչէր , մէյ մըն ալ , յանկարծ պալատին դռնին մէջ ահադին աղմուկ մը , վայնասուն մը կը ըստի : Խռովութիւնը կ'սկսի և ժողովուրդը սղառագէն գէպ ՚ի արքայական սղառար կը վազէ ահեղագոչ և մոլեղին ձայներ արձկելով : Շարլ ականջ կը դնէ և այս դուռումին ու դուռումին մէջէն , « Կեցցէ՛ Սէն-Մոր » , աղաղակը կը լսէ :

Անձնապահ զօրքը կ'ուզէր յարձակողները ետ մղել . արխնալի կուխ մը կ'սկսի , Պարիսյնի դուք

սը թուր 'ի ձեռին , իրեն հեար իրրև ընկեր քանի մը ապեւա՝ ապստամբներու վրայ կը գիմէ : Մէն-Մոր կը ներկայանայ և իւր տիրոջը կեանքին համար վասնդ տեսնելով կ'ուզէ զինքը կեցնել : « Մասնիչ , ձգէ՛ զիս » կ'ըսէ գուքսը զայրապին , և հեռուէն յեզաչքիկ բաղմութիւնը կրկին « կեցցէ՛ Մէն-Մոր » կը գոչէ . Շարլ գէպ 'ի իւր մարդիկներուն կը գառնայ և կը գոչէ՝ դրեթէ կատաղի .

« Ահա՛ , ահա՛ , ապստամբութեան դրութիւնը ապիկա է » , և մատուց կամար ցոյց կուտար :

Նոյն պահուն Մէն-Մորը կը սրաչարեն . զինքը արխնաթմաթառ դեռալին կը դրտորեն , և հատարակաց ձայնը իշխանը կ'ամբատանէր , իրը թէ իր վաղեմի բարեկամը ձեռքովը սպաննած ըլլար :

Շարլ պատերազմողներու մէջ տեղը կը հասնի , և տանն բքն իւր հզօր սուրէն կը վախչի , դաւաճանութեան թերադիրները կը բռնուին , ինքն ալ յաղթելով իւր բնակարանը կը գառնայ և հոն կ'սկսի թշնամոյն պարտութեան վրայ բերկրիլ . այլերը իւր առջին Մէն-Մորի գիակը կը բերեն , ահուելի սարսուռ մը կ'զգայ : Գարծուած սճիրը ուրիշ մըն ալ ընել կ'ուտայ : Ուստի Յանգուզն Շարլ Մէն-Մորի կոմսը իրրև ստակալի մատնառ մը կը ներկայէ ամենուն : — Զինքը զարկին , կ'ըսէր անիկա , ճիշդ այն պահուն , երբ կ'երթար ապրատամբներու դրութիւն անցնելու , որանք զինք կը կանչէին , և տէրութիւնը իւր էն անագորոյն թըշնամիէն այսօր կ'աղատի : Ապստամբներու կարծուած հրամանատարին արխնալի մարմինը կատաղի

բաղմուծեան կը յանձնուի : Մոյն նահատակին անբաւ հարստութիւնները յարքունիս կը գրաւուին , և Մէն-Մորի սարին գէտ ՚ի Հերլեաիոյ լեռները կը խուսի , հեաը ունենալով միայն Ռենտերլախի որբը :

Էրսթալ պարոնը այն առնն Մորա լճին եղերքը , այն մենաստանին մեա կը բնակէր , որն սր յետոյ իւր ստացուածքը եղաւ : Մէն-Մորի կամուհին մեռեղատիւ կերպարանք մը առած , եղբօրը գիրկը կը նետուի : Իւր գծրադուծիւնները , իւր փախուսաը , իւր վիշտերը բոլոր ուժը կորուսել տաին . վերջապէս մահուան գուռը հասած ,

— Էրսթալ , կ'ըսէ տարաբաղդ կլինը մահուանէն քանի մը օր առաջ , իմ ազջիկս քեզի կը յանձնեմ . ո՛հ չըլլայ թէ այն խաղաղ հովիտն հեռանայ , թող կեանքի մեծութիւնները և դանոնք ստացողներու տառտպանքը չդխանայ անխիստ : Եղբայրդ իմ , դուն միայն Էլտտիան նախնի դարերու կատարեալ պարզութեան մէջ մեծցուր : յայտնէ՛ անոր թէ ի՛նչ են իշխան և արքունիք , այլ խօսէ՛ , ինչպէս կը խօսիս Ռվկիանտաին ժայռերուն վրայօք , որոնց կրնան մօտիլ միայն յանդուգն և վարպետ նաւորդները :

Մենաստանին մատուռին մէջ դամբան մը կար , ուր Էլտտիայի մայրը թաղուեցաւ : Մնոր յետին կամքը ՚ի գործ գրին : Էրսթալ պարոնը վշտահար և հարեմար անդատնայի կերպով աշխարհէ հեռացած , իւր ամբողջ գոյութիւնը անօք և վատաբաղդ որբին յայտնելու չգլայցաւ :

Գ Լ Ո Ւ Ն Բ .

Առտուան նախաճաշին ընելու ատեն , Էլարիա , Անսերժ և Էրսթալ պարոնը , մենաստանին հին սըրբահաներէն մէկուն մէջ ժողոված էին :

— Հա՛յր իմ , կ'ըսէ յանկարծ Սէն-Մորի դուստրը Ռենտէրլախի քահանային , Մորա լիճին մօտ ժայռ մը կայ , որուն մօտ բնակիչները գալու ջն ժախը , և անոր Գոգհո Մուլտ ածականը կուտան , հան է որ կ'ըսեն քանի մը դարերէ 'ի վեր մերթ ընդ մերթ Արեւմտե Բիւն կ'երեւի : Այս ուսմկային ստակամները ս'ուսկէ յառաջ կուզան : Հովիտին նկարագրութեանց ի՞նչ կ'ըսէք : Ա՛վ է այս ոգին :

— Եթէ Զուիցցերի ամեն կողմը ճամբորդէիր , կ'ըսէ Անսերժ , քեզ զարմանք ազդող անապաշտութեանց վրայօք չպիտի հարցնէիր ինձ : Մեր լեռներու ամեն մէկ գիւղը իւր մասնաւոր սքանչելիքն ունի : Հոս անդ շիկազոյն ըզգեաա հաղնաղ ոգին կ'երեւի . վաղանձէնի մէջ ջրհոր մը կայ , ուսկէ հրային օձ մը կը բխէ . Պրվէյի մէջ ուռնի մը կայ , որ պատգամներ կուտայ . վերիերի մէջ մեկուսի աշտարակ մը կայ , որ երբեմն կը քայլէ . Մերլէնձէնի մէջ սեաւ ջրհոր մը կայ , որուն մէջ սպիտակ գիցանոյշ մը կը բնակի . Կրէնտէլլալտի մէջ սինն մը կայ , որ քանի մը վայրկեան միայն ջրվէժի կը փոխուի , եթէ դաւառին կոյսերէն մին լուսնի վեցերորդ օրը մեռնելու ըլլայ : Մեր ապրած դարուն մէջ Հերլեախա չկայ գիւղակ

մը , ուր ցնորական երեւոյթ կամ կախարդներ չը
դանուին : Այս անկատար ստուերագիրը , Աստ-
ուածութեան այն եղծուած պատկերը , այսինքն
մարդս , որ նախ սքանչելի բնակութիւն մը վայե-
լելու համար ծնած , այլ իւր անկումէն յետոյ տա-
րագիր և անցաւոր , նեաւուած է երկրի վրայ , իւր
առաջին սահմանին խառնակ և մթին գաղտնարը
գողցես պահել կ'ուզէ հոն . գերբնական իրերու
անորոշ և թագուն պէտքը անիկա կը տածէ 'ի
ներքուստ : Մնիկա անմահ բնակութեան համար
ստեղծուած , այս կեանքէն անհանդիստ , աշխար-
հիս մէջ կարծես թէ խախտուա , իւր տրտում իրու-
թիւնէն անշատող ամեն բանի նկատմամբ շատ
կ'երեւի : Ուրիշ գոյութեան մը սքանչելիքը գող-
ցես նախատեսելով երկրագունակն վրայ աւա-
նուած հրաշալիքէ մը ետքը միշտ կը հառաչէ , այն
երկրագունաը կ'ըսեմ , որուն առաջին հրաշալիքը
ինքն է , իսկ է՛ն զարմանալին իւր միտքը :

« Լեռնականներէն մէկը Աբէ-ն-Աբ օգն չտե-
սաւ , սակայն վազեմի աւանդութիւններ անոր
երեւոյթը հաստատեցին . գարեբէ 'ի վեր հայրերը
անով ստեղծ ազգեցին իրենց զաւակաց , ու-
րոնք իրենց յաջորդներուն եթէ ամիսօրս չը-
հաղորդէին իբր ամբարիշտ ինքզինքնին մեղա-
պարտ պիտի սեպէին : Այսպէս մարտութիւնները
կը տարածուին մեր մէջ , այնպիսի մարտութիւն-
ներ , որոնք գիւղերու մէջ ստէպ իրենց օդուար
ունին : Մնապաշտութիւնները երբեմն ոճիրի մա-
սին սուրբ ստեղծ մը կ'ազգեն ժողովուրդին , ա-

նոր խորհուրդները կ'ուզեն դէպ 'ի Սասուն , հանդերձեալ կեանքի մը վրայօք կը խօսին , անոր կը հրամայեն որ ազօթէ , և զանի չարի կարողութենէն փրկելու համար սեղանին առջև կը տանին զինքը , որն որ ապիկար մարդկութեան աստուածային պաշտպանին ոտքը կընայ սեպուի :

« Քանի քանի անդամներ անզարդ և հասարակ խաչ մը , խորհրդաւոր եզէզ մը , օրհնեալ շառաւիղ մը , հրաչաղործ պատկեր մը , խեղճ անակկն մէջ բերկրանք , յոյս և վստահութիւն կընենընչեն : Գծրազգ շինականին շուրջը հարկէ որ պաշտպաններ և ախօփանք գանուին : Որչափ իւր բարքը , ու ուրութիւնը կամ նոյն խօկ ցնարքը կեանքի արտոնալի խորհուրդներէն իւր խորհուրդները բաժնելով՝ դէպ 'ի գերբնային սահմաններ կը սառանին , այնչափ իւր շղթաները իրեն համար կը թեթեւին :

« Սակայ մարտութիւնը ճշմարտութենէ յառաջ կուգայ . անոր ընթացքը արդիւնելու համար սկզբունքին վրայ յարձակիլ հարկ է , ինչպէս առուա կը չորցնելու համար անոր աղբերակին դիմելու է . այն առնն նիւթը հողիին , ցնարքը զգացումին և հաւաքարանութիւնը հիանալի իրերու կը յաջորդեն . ա՛յլ մարդս ամուլ անապատին մէջ լսկ շանթահար տարազիր մըն է : Էրսթա՛լ , հաւաատինձ , մարդկանց մէջ , գոյութեան խաւարներու մէջ , խնաստաօրի լոյսը մահատիւ փարոս մըն է , որն որ վիհը միայն հաղիւ կընայ լուսաւորել :

Անսերմ ոտք կ'ելլէ , իւր նայուածքը դէպ 'ի

Մորա լիճը կը դարձնէ . — Ափաս , կը յարէ ան-
դէն , այն ժայռը ուր կարծուած ուլին կ'երնի ,
աղետալի տեսարան մը ընծայեց : Ճէղդ այն մա-
հաբեր ապառաժին վրայ է , որ Պուրկոյնի դուքսը
այս մենաստանին կրօնաւորներուն սպանութիւնը
հրամայեց : Ո՛հ , անոր դաժան բռնութեան շա-
հաաակներուն գլուխները այն ժայռին դադաթէն
ահեղադուհ հեղեղատին յատակը կ'էնային : Օր
քսամունքի . խճ երխատարդ հասակիս բարեկամը ,
Ռենտերլախի տարաբաղդ քահանայն կարծես թէ
տակաւին ինձ կ'երնի , որն որ հրեշին արբանեակ-
ներէն բռնի սուրբ սեղանին առջեւէն կը տարուի
ճակատագրի հզատակող մարտիրոսի մը պէս դըլ-
խատութեան բեմը կըլերու . . . : Ո՛վ աղջիկս , կոյն-
թէ երկրային իշխանները մեր հալիաներու երբէք
չը մօտէին :

Էրթալ բառական ըստ կենայէն յետոյ ըստ .
— Ինձ պատմեցին թէ վանքին անտրոճ աւարէն
եաքը Աւն-Վ Ո՛վ քարհատին վրայ երեւցած և
ամենն ալ Ռենտերլախի քահանային կերպարանը
ունենայը հասկըցած էին : Մակայն ա՛լ դադար մը
տանք սնապաշտութեանց , առտօսը գեղեցիկ է ,
եկո՛ւր , աղնիս բարեկամ , երթանք դարմանային
քաղցր և անմահ օրերը անգամ մը եւս վայելենք ,
ո՛վ գիտէ դուցէ մեզի համար այն սեղանակը յե-
տինը ըլլոյ :

Էլարիս երկու ծերունիներէն հեռանալով մե-
նաստանին պարտէզներուն մէջ կ'իջնէ և իր ման-
կութեան սխրելի անաստակներուն մէջ կը սուղի :

Նախորդ օրուան վեհաժողովան երգերուն միա դրած վայրը , այն բուսաւէա ըլլակը կը հասնի , կանգ կ'առնէ հին , աւազին միայ օտարականի քայլեցու հետքը տեսնել կը կարծէ : Զքօստանն մէջ կը մանէ , ուր տեղ խոր կողմը մուտքած և անոյ մէջէն անձանօթ ձեռք մը իրեն իրը դօտի ծառայող կապոյտ ժապաւենը գողցած էր : Ունտեր լախի կոյրը կը զարմանայ , դաշտային տան մէջ պահ մը կը նստի դեռին նայելով ակնկոր և միտայոյզ : Յանկարծ ոտք կ'ելլէ ահարեկ : Տարօրինակ նկարագրութիւնները քանի մը օրէ 'ի վեր խոր մտքին մէջ դրոշմաւած ըլլալուն՝ իր շուրջը գանձող իրերուն տարրեր աչքով կը նայէր : Պատրչղափն թանձր ապակիներուն մէջէն իրեն այնպէս կը թուի թէ , սեւազգեստ մարդ մը տերեւազարդ ոտներուն ներքեւ կը սահի . մտակոյ անտառէն արտանային աղաղակ մը լսել կը կարծէ . իրեն այնպէս կ'երեւի թէ զինքը կը դիտէ , դէպ 'ի վանք կը խուսի և իր խռովայոյզ և հալի պէս թեթեւ ընթացքը կը նմանի այն ամպին զոր երեկոյեան սիւրբ կը մղէ :

Օրեր անցան ու տակաւին թշուառ սրբը չէր յանդգնէր խոր պատկառելի պաշտպանին քովէն հեռանալու : Զքօստան չղնայ բնառ : Պարտեզին մէջ մինակ մնալու կը վախէր , խոր կապոյտ ժապաւենին կորուստը անդողտը կը յիշէր և յարատեւ կը խորհէր արտանային :

Մակայն քիչ մը ետքը էլլալիս խոր ցնորական երկիւղներուն յազմելով կրկին խոր սովորական

դուարթութիւնը ձեռք կը ձգէ . ա՛լ կը դադրի ստուերներով և սգիններով դրազելէ : վայրենի լեռին Մենակեացին վրայօք իսկ , ա՛լ հարցումներ չ'ընեք և իր օրերը հանդիսառ խաղաղ կ'անցնէին :

Էլլայրիա այն դարնանային վարդին նման , որ փոթօրիկներու կիզիչ շունչին հարուածը չէ կրած , կեանքի մէջ վստահ կը յառաջանար , ինչպէս արտուտիկը զուարթ երկնից կտայցա դաշտերուն մէջ կը սրանայ : Բան մը միայն իւր հանդիսառ կը վրբդալէր . Էրսթալ , իւր միակ առաջնորդը , իւր միակ բարեկամը , իւր միակ նեցուկը , վշտաբեկ և տառապեալ կարծես թէ կ'իջնէր դէպ ՚ի գերեզման :

Սուրբ զանգակը հովիտին հաւատացեալները աղօթքի կը հրաւիրէր : Աշխատութենէ վերադարձող շինականները արդէն մենաստանին մատուռէն գիւղակին միակ եկեղեցւոյն մէջ հաւքուած էին . որք աղջիկը օրհնեալ կամարին ներքև կը դանուի և իւր անբիծ ու եռանդաղին աղօթքովը իւր պաշտպան հօրը կեանքին պահպանութիւնը Աստուծմէ կը հայցէր . երեկոյեան մութը մենաստանին վրայ կոխած էր , ու քահանային օրհնութիւնը , լեռնականին երգը , մանկութեան քաղցր ձայնը , միաբերան դէպ ՚ի յաերթական կամարները սուտաներով՝ Էլլայրիայի սիրար բարեպաշտ և սուրբ տրամութեան մէջ կ'ընկղմէին :

Նոյն պահուն իրեն մտ խոր հեծութիւն մը կը ըլէ , և կրօնային մտախոհութենէն կ'սթափի : Մատուռին ապակիները թափանցող աղօտ բոցով

միջամայրի կամարին մերձ, քարոզիչներու երկայն
ղղեալը հազած օտարական մը կը տեսնէ, որ
մեծ եռանդով կ'աղօթէ ծնրադիր: Հէք որքը
յուզող եղիելի հասաչը արձկսցը՝ այս մարզն էր:

Էլտտիտ Ռնաերլլախի ամեն բնակիչները կը
ճաննէ: Անտեր՝ դատաւին միակ քահանայն է,
ուտախ այս օտարականը ձորակին եկեղեցիէն այ-
ցերու բարեպաշտ ուղեւոր մը պէտք էր բղալ:
Էրթծայի քեռորդին աչերը անոր վրայ սեռեռած
կը նայի: Անոր գէմքին դժաղրութիւնը ծանօթ
չէ իրեն, ու դրուխը սիւնի մը կ'աթնած, մարմինը
անշարժ իրեն նեցուկ մարմնարին պէս պազ և ան-
կենդան է: Երեկոցեան ժամերգութիւնը կը լրա-
նայ. սուրբ երգերուն խոր լռութիւն մը կը յա-
ջորդէ: Բազմութիւնը սրահէն դուրս կ'ելլէ, և ա-
ղօթքի հրեշտակը կրկին գէպ ՚ի անանհ աթոռը
կը սլանայ: Էլտտիտ կամարին ներքև գանուպ ան-
ծանօթին վրայ յեախն նշմար մըն ալ ձգելէ յետոյ,
պարտէղին քայի սենեակը տանող ստորերկեայ
ճամբով մը եկեղեցիէն կը հեռանայ:

Նկուղին աստիճաններուն ոտքը կը հասնի, և
մենատասնին հինօրեայ ճաշատունէն, այն տխուր
սրահը կ'անցնի: Իր ետին թեթեւ ազմուկ մը կը
լսէ: Մէկը իրեն կը հեռուի: Սոյն միայնակ կա-
մարներուն աակ, մութին մէջ գողցես կ'աթողի մը
կերպարանքը կ'երեւի . . . : Այս կերպարանքը կը
յառաջանայ: Վեհերոտ էլաբիտան մատուռին կրօ-
նաորը կը ճաննէ: Առանձին է, իր երեսը խոս-
վայցղ երեւոյթ մը չունի, խոր բարձր հասակը

ահեղ ու պատկառելի է, իւր նայուածքը հանդարտ և վեհ, իւր անձին գեղը, իւր շարժումին աղնուտ թիւեր, գերազանց և մեծ մարդ մը բլլայր կը յայտնեն ակներեւ :

Որք աղջիկը նախ և առաջ խառնիլ կուղէ, այլ անշարժ կը կենայ : Օրուան յետին նսեմ բյտալը կը տքնի օտարականին երեսը սրտել : Իսկ անի կը մօտի և իւր զգեստներուն աակէն կապոյտ դօտի մը հաներով՝ աղջկան ձեռքը կը յանձնէ : Ս՛ի զարմանք, պատշգամէն անհետացող ժապաւէնն է : Էլ լստիա աղչեալ և մտայոյլ օտարականին վրայ երկչտ նշմար մը կը ձգէ, որն որ արդէն իր երեւակայութեան իրր գերբնական ոգի մը կը ներկայի : Գաղղողալով կ'ապաս, առանց իր քայլը արդիւող, ձայնը սառեցնող, մարին հրամայող տարօրէն կարողութիւնը յայտնել կարենալու :

— Ունտերլախի դո՛ւտար, բառ անձանօթը : Ներէ՛ աղետալի ծնունդ մը ունեցող մէկու մը, որն որ իւր սրտին զգացմանց տէր չբլլալով՝ կարծեց որ անմեղութեան կրամ մէկ ժապաւէնը, երկնային հմայեակի մը պէս կրնար իւր միթին բնակութիւնը մարբել և իւր հոգիին հանգիստ շնորհել :

Իօսքը կ'ընդմիջէ . իւր ձայնը ախար և ահաւելի է : Պահ մը յետոյ կը յարէ .

— Անխար իւր սխալը ճանչեց և կուգամ անոր անիրաւ գործերու հատուցումը բնեւա : Իր ցաւերու վրկիչ կարծած հմայեակը հողւոյն խա-

ցիրը չբուժելէ զատ, նոր թոյներ ծայթ. քեց հան, և վրիժառու բացի մը պէս անոր վէրքը սաստկացուց : Յաւերժական արդարութիւն մը կայ . . . : Այս մահարեր գօտին եա ա՛ն . . . դժբաղդը զայն գործածելու արժանի չէ . ահա՛ : Հրեշտակդ ձորակին, երբեմն կէժէ քու աչերուդ գպի, զայն յախշտակող յանցաւորին վրայ դուժ ո՛ննցիր :

Հայի նահմ՝ ճառագայթ մը անձանօթին երեսը կը բուսաւորէր : Իւր գեղեցիկ սեռու աչերը խեղճ սրբին վրայ չէր սևեռուած : Իւր նայուածքը դէպ ՚ի երկինք դարձուց . այս նշմարը էրախայի մըտքէն բնաւ չպիտի ելլէր : Սմննէն ազեկէզ դըժբաղդութիւնը, ճակատագրի ամենէն ազնիւ հպտասկութիւնը, հողիի ամենէն ընտիր յաակութիւնը, մարի ամենէն մեծ ճարտարութիւնը, այս նայուածքին մէջ ամփոփուած էին : Էրախա սրահին մթութեամբը հանդերձ, այն սարօքէն մարդուն առնական գեղը կրցաւ որոշել : Գանի կը գիտէ, կը զմայլի ու կը դողայ . . . : Ա՛հ, այս ակամայ սարսուռը նախագգացում մըն էր :

— Օտարական, կըսէ օրիորդը, քու խօսքերուդ ճշմարտութեան կը հաւատամ, սակայն բռէ՛ ինձ, թէ ո՞վ է ժապաւէնը գողցողը, ու կը ներեմ :

— Կը ներե՛ս, վրայ բերաւ անդէն անձանօթը . բա՛ւ է, ալ պիտի տեղեկանայ :

— Պիտի անգեկանայ, կրկնեց էրախա, ուրեմն . . . : Դ՛ռն պիտի բռէր, սակայն այս բառը չկրցաւ արտասանել :

Պատրականը մեղմով զանի գէպ ՚ի սրահին պա-
տուհանը կը տանի : Իւր գողգոջան ձեռքովը եր-
կինքը ջոյց կ'ուտայ անոր :

— Հսն կը գոչէ , եթէ զղջումով վիհը ծած-
կուի , այո՛ , հոն միայն պիտի կարենայ ըսել ,
Քեզ կը տրե՛՛ :

Իւր նշմարը աղիողորմ է : Իսկ Էլրտիա անոր
վայրենի շարժումներէն յուզուած՝ ետ կը քաշուի
և կ'ուզէ վախիլ :

— Ազնիւ օրիորդ , յարեց կրկին , մի՛ գողար-
այն վատարապէր քեզի գէմ ՚ի նշ կրնայ ընել :
Աստուածային վրէժխնդրութենէն շանթահար՝ ալ
կարողութիւն չի մնար իրեն քով : Տե՛ս , այն սն-
տանը ծածկող ստուերները՝ իւր ճակատագիրը
ծածկող ստուերներէ նուազ թանձր են :

Ու յետոյ սրտայոյզ և մըլար՝ այս խօսքը կը
յարէ .

— Ի՛նչ ըսի . ե՛ս գրեղ կը հաւատասեմ որ անկէ
չվախես , ե՛ս քեզի վատահաթիւն ներշնչեմ : Ո՛չ ,
ամբողջ բնութիւնը այն միջոցին իմ ձայնախ քեզ
կը գոչէ . Փօփէր Էրէր ծովէր յորկէն . անոր ընդ
ժամք է , անոր ներկայութեանը ժան կը յայտնէ :

— Թո՛ղ զիս , կ'ըսէ Էլրտիա , խուսելու վտրձ
մը վտրձելով և իր ստակումէն անշարժ , թո՛ղ զիս ,
չեմ կրնար քու ո՛վ բլբլպղ ճանշել :

Պահ մի յետոյ կ'ուշարերի , և աւելի հանդարտ
կերպով մը կը խօսի :

— Զքեզ չեմ արգիլեր , կը սրատախանէ ան-
յայտ մարդը : Ազանի գ. մենաստանին , ո՛չ , գի-

չերային սխ.քը քու ականջիդ երբէք չպիտի բերէ
այն աղէտըր՝ ե գթայի ձայները , որոնք շար-
ժու մները կը սառնեն : Մեա րարեաւ , ազօթէ՛...
Միտք չունի՛մ ընաւ քեզի ըսելու , Սէրէ չե՛ :

Եւ իսկոյն վախաւ :

Էլ զթայի քեռորդին ահագին բնուէ մը թե-
թեւցածի պէս շուտ մը կուշարերի , որահէն ե
վանքին պարտէղէն կ'անցնի , կ'երթայ , իւր աշ-
տարակին սանդուղէն վեր կ'ելլէ , ե գեա վշտա-
բեկ իւր սենեակը կը մտնէ :

Սաստկաշունչ հով մը կ'ելլէ , ե վանքին ար-
տաքին կամարներուն տակ կը սուլէ մրրկայոյզ
մենաստանին հինօրեայ պատերը կը սարսուխ ե
անձրեւը կ'իջնէ տեղատարափ : Մէն-Մորի աղջիկը
վշտահար ե ակնկոր՝ երկինքը կը նկատէ , որան
ամեն կողմը սուգեր կը տատանին : Ախո՛ս , այս
միջոցին իւր մտքի վրդավումը ընտթեան հեա կը
հաւատարէր : Եղթայազերծ հովերու մանչիւնին ա-
կանջ չի կախեր , իսկ վոթորկէն խորտակուալ
ապակիներու անձրեւէն կրած ուժգին հարսած-
ները հագիւ կը նկատէ : Ունտերլախի կոյսը մա-
տուռին խորհրդաւոր անձանթօթին վրայօք միայն
կը խորհէր : Մնոր զբնայուն գեղը , անոր մշտար
խօսքը , աղեկէզ ձայնը , մանտանդ վեհ նայ-
ուածքը գեա իւր միտքը կը յուղէին : Մերթմ ընդ-
մերթ ինքրդինքը անհեթեթ երազէ մը զերծ կար-
ծելով , անցեալ գիշերուան անցքին երազութեան
վրայ կը տարակուսէր , այլ այն կապոյտ ժապա-
ւէնը գեա ձեռքէն չէր ձգած , ի՞նչպէս կը տա-

բակումէր այնպիսի գիշերային տեսարանին վրայ , որ տակաւին մանրամասն ներկայ էր խոր մտքին մէջ : Խոր աչերը դէպ ՚ի երկինք վերցուց . — Հո՛ն , կ'ըսէ որքը դողդողալով , եթէ մե՛նչ շնորհաւ ծածկուի , հոն ժոյն պիտի կրնայ է՛նչ քեզ , թեւ իւրե՛մ :

— Ո՛վ Աստուած իմ , յարեց , այլ խոր սիրտը ահռելի սարսուռով մը երերաց : Ինչո՞ւ անձանութի մը բերնէն ելլող քանի մը անյայտ խօսքերու համար իմ անձս տակնուվրայ կ'ըլլայ . . . Մի՛թէ աղէտալի և գուժարեր գուշակ մըն է այն . . .

« Սակայն ի՛նչ անոյշ ճայնով մը լատ . Գեղ կը սիրեմ : Ա՛հ , այն մեղապարտը , որուն համար ներում կը հայցէր , ինքն էր : Մի՛թէ ուրիշի վրայօք խօսելու ասէն կրնա՞ր այսչափ մեկին և դորովայի կերպով մը խոր միտքը բացատրել . . . : Ինչո՞ւ աշէմն , ինչո՞ւ այսպէս եղիկիլի կերպով յանկարծ խօսեցաւ : Ինչո՞ւ ցաւ է և յուսահատութենէ յառաջ եկող այն ահռելի հառաչք արձակեց : Մի՛թէ խուարճներու մէջ երեւցող չար կարողութի՛ւն մըն էր այն . . . : Այլ այն երկնային նշմարը . . . , այնպիսի վեհ և բարեպաշտ նշմար մը , զոր դիմալի և դժբաղդ առաքինութիւն մը խոկ չի զօրեր դէպ ՚ի երկինք դարձնել : Ի՞նչ պէտք է խորհլլաւոր պէս մէկու մը համար : Ճակատագիրը արդեօք ի՞նչ կը պատրաստէ ինձ . . . : Աստուած իմ , դու՛մ ունեցիր իմ վրաս :

Հովը կը հանդարտի , էլրտիս էրսթայի քով կ'իջնէ : Ծերունին անոր այլայլեալ երեսը տեսնելով կը կարծէ որ վսթարիկին ազդած տակումէն

յառաջ և կամ ըլլայ : Մտկայն հէք որբը խոր խոր-
հարդները պատկառելի պաշտպանին չյայանեց
երբէք . խոր հողին կեղծել չի դիտեր բնաւ , ուս-
տի դբօսատան մէջ խոր ստկումը , ժապաւէնին
կորուստը և սրահին անցքը միամտօրէն անոր աւ-
ջնւ կը սրբողէ :

— Եւ առաջին անդամն է որ , ըստ էրա-
թալ , այս օտարականը քեզ ներկայացաւ :

— Հա՛յր խմ , պատասխանեց աղջկիկը , քանի
մը շարաթէ ՚ի վեր վանքին պարտէվներուն մէջ
կըցայ նշմարել որ խմ քայլերուս հետեւող աներեւ-
ւոյթ և խորհրդաւոր էակ մը կար : Խմ շուքն
տարօրէն վոյնատուն մը , անակնկալ ձայներ ստի-
բական դբօսանքս կը վրդովէին և ստեղ թաղուն
ստկումով մը վանքէն հեռանալու կը վախէի :
Մտկայն խմ տառապանքս տկար երեւակայութե-
նէս յառաջ կ'ուզար , ուստի այն ատեն մէկու մը
չկըցայ յայանել :

— Բայց այդ տարօրինակ մարդը ո՞վ կրնայ
ըլլալ . . . , կըսէր էրաթալ մտովի : Գաւառին ա-
մեն բնակիչները կը ճանչեմ , սակայն անոնցմէ և
ո՛չ մէկը անոր կրնայ նմանիլ . . . :

Մերունին ընդհատելով կը կրկնէ անդէն .

— Եթէ ո՛չ , այն . . . :

— Ո՞վ է այն , հա՛յր խմ :

— Վայրենի ըւսին Մենակեացր :

Էլ յատկայի անդամները՝ այս խօսքը ըսելուն՝ ա-
կամոց սարսուռով մը կ'երերան , թաղկազար և
անխօս կը նստի :

Դուռը կը բացուի . Անտեր՛ը կը մտնի :

— Մեծ աղէտ մը մեր գիւղակը ահաւղարկե
մէջ ձգեց . պառաւ Մարտըլինին Ռենտերլախի
տոտրօսը կանգնած հիւղը ձիւնի մեծ կոյտի մը
հարուածովը կործանելով՝ դնաց հեղեղաւախն յա-
տակը սուղեցաւ . իսկ իւր բեկորները բուռն և
մոլեղին կոհակներէն մղուելով՝ փոթորիկի ասուն
անհետ եղան :

— Իսկ Մարտըլին ի՞նչ եղաւ :

— Մահուանէ աղատեցաւ , սակայն իւր ունե-
ցած փանաքի ստացուածն ալ կորսուեցաւ , և ա-
մենէն դժնդակ չքաւորութիւնը . . . :

— Ա՛հ , կըսէ Էլլախա , ինչո՞ւ ես ալ խո՛նախա-
նեացս հարստութիւնը չունենայի . . . :

Էլլաթալ գէտը ՚ի քահանայն կը դառնայ :

— Վաղը , սիրելիդ խո՛ Անտեր՛ը , վաղը պիտի
երթանք Մարտըլինը սիտիելու :

Մարտըլին երկար տանէ ՚ի վեր Ռենտերլախի
ձորակին մէջ կը բնակէր : Ա՞ր երկիրը ծնած էր ,
ո՞ւր կրթուած էր , իր երիտասարդութիւնը ո՞ւր
անցուցած էր , մէկը չկրցաւ տեղեկանալ : Մեծ
աղէտներով ճնշուած ըլլալը ամեն մարդ կը խօսէր ,
սակայն Մարտըլին իւր մտքին մէջ դառն յիշա-
տակներ յարուցանող ընկերութենէ միշտ կ՛զգու-
շանար :

Իւր կրթութեանը անշուշտ հող տարուած պիտի
ըլլար , վասն զի իւր խօսակցութիւնը պարզ և վառ-
վրուռն էր : Եինականի զգեստ կը հագնէր : Իւր
ձեւերը պարզ էին , բայց իւր խօսքերուն մեծ

յարդ կ'ընծայուէր, իւր զգացումները միշտ վառ
և խօսելու կերպը եռանդուն էին : Հովիտին
հիացման և զարմացման առարկայն բլլալով՝ իւր
ճառերը իրր պատգամ կ'ընդունուէին : Առ-
նականները իրմէ խորհուրդ հարցնելու կ'ուզա-
յին, անոր միտ գնելու ատեն կը զմայլէին, անոր
պատուէրները 'ի գործ կը գնէին, և Պրլւթե-
րի սիրիլլային նման Ռենաերլախի մարդարէն կը
սեպուէր :

Արեւը ծագելու ատեն էլրատիա սենեակէն կ'իջ-
նէ . քունը իւր արտեւանունքը շէր փակած, իւր
հանդարտ հոգին վրդովուած էր : Այսու ամենայ-
նիւ գծրադղութիւնը սխալիել կարենալու դադա-
վարը պահ մը այդ տրամալի խորհուրդներէ զերծ
կը պահէր զինքը : Էքսթալի և Անաերմի ընկերա-
ցած՝ իւր քայլերը գէտ 'ի Մարսելինի վազեմի բը-
նակարանը կ'ուզէ, և կարծես թէ արդէն իւր
ժանր բեռը գոյցն ինչ կը թեթեւնայ : Առտուան
յտտակ օդը, արշալոյսին ծագումը, մարդերու
ժաղկանց անոյշ հոտը, անտառին սոխակներուն
ձայնը, ամեն բան իր երխտասարդ երեւակայու-
թեան առջեւ ազու ժպտաով մը կը փայլի . . . : Եւ
խակոյն միշտերը իւր հոգիին վերեւէն անցան, ինչ-
պէս կ'անցնի փոթորիկը ձորին յտտակ երկինքին
վերեւէն :

Մակոյն վանքին բնակիչներուն ինչ տխուր
տեսարան մը կ'երեւի : Կոտորած ժայռեր արմա-
տաքի խլած կաղնիներ, Ռենաերլախի լեռին վրա-
յէն գլտորեղով մինչև հեղեղաւին յտտակը կ'ու-

դան , սրուն ջուրերը նոր ուղղիներ բանալու հա-
մար երկիրը աւեր և քանդ ըրին : Բուռաւէտ եր-
կիրը անբեր և ջամար աւազով ծածկուած է : հե-
ղեղները մարդերը կը վարեն , և բազմաթիւ ըն-
տանիքներ այս անակնկալ աղէաքէն վնասուելով՝
թշուառ վիճակի մը կ'ենթարկին և իրենց կիսա-
կործան տուներուն առջև նստած՝ իրենց կորու-
սած հունձքը և պաշարը կ'ուրան :

Աւեր և անասրատ դարձած մարդերուն ամեն
կողմէն առուակներ կ'անցնէին , վասն սրոյ հազիւ
կրցան քանի մը կտուրջներ նետել : Էլբաթալ ,
Անսերք և որքը մինչև Մարտըլինի խրճիթը գրա-
նուած գետեղբը հասան : Հողի և ժայռերու ա-
հագին կոյտ մը լեռին մէկ կողմէն զատուելով՝
հիւզը բայն անդունդի մը մէջ կը դահալիթէ , ուր
ակոզ ծծմբային կոհակներ կը վրովրին , և խոր մաւրն-
Ռեննէ յի բարեկամը կը հեռանար :

— Էքպե՛ր , ըսաւ աղջիկը :

Եւ զօրականը սոյն գորովալի բասը լսելուն կանդ կ'առնէ և

— Խնայէ՛ զիս , կ'ըսէ անդէն , քու աղէխարչ ձայնդ ականջիս մէջ թո՛ղ չլծնդայ , եթէ ոչ քու սօքդ պիտի իյնամ : Թող էլլտտիայի անոյշ նշմարը իմ նայուածքիս չհանդիպի , եթէ ոչ որ և իցէ մարդկային կարողութիւն այս տեղէն չպիտի կըրնայ հեռացնել զիս , եթէ ոչ Մենակեացին ըրած ամէն երդումներս պիտի մոռնամ :

— Մենակեացին ըրած ամէն երդումներդ կրկնեց կոյսը զարմանքով :

— Այո՛ , ամէնն ալ , նը հաւատան , էլլտտիա : Ես անոր երդում ըրի , որ քեզմէ խորշիմ . . . երդում ըրի , որ քու հանգիստդ չվրդուվեմ . . . : Մնդութը ստիպեց , այլ յորդատատ արտօսը հեղուքս տեսաւ . . . իմ առաջին արտասուքս :

Սրահէն կ'անցնի մեծաքայլ , ի զուր կը ճգնի իւր ձայնովը վիշտերը ծածկել , վայրագատ կը նկրտի զանոնք ճնշել : Եւ Մենաստանին բարձր պատշգամէն վայրենի լեռին վրայ ակնարկ մը կը ձգէ :

— Տարաբա՛ղդ Մենակեաց , կը յարէ , կը կարծես որ քու վիճակդ իմինէս աւելի գթութեան արժանի է :

Նորենտալի ամէն մէկ խօսքը էլլտտիայի յոյզը և տաղնապը կը յաւելու . — Կո՛մս , կը դոյ՛է , քու

խօսքդ պարզէ , ուրեմն քու արհիւ զղջումդ , քու վեհանձն սրոշումդ : Մենակեացի՞ն պարտաւոր եմ :

— Ո՛հ , ինձ մի՛ հարցներ , կը գոչէ մարտիկը զայրագին , անոր գաղանիքը չեմ կրնար յայտնել : Դո՛ւ ալ լսելու ատեն վախցիր :

Էքպեր պահ մը լուռ կենալէն յետոյ հէզ որքին հանդարտ ոգւով մը կը մտախ :

— Այո՛ , կրնայի գքեզ երջանիկ ընել , քեզ ամուսին ըլլալու արժանի կը սեպէի իմ անձս , այլ երկինք չներեց : Այսչափ բազդաւոր ըլլալու համար ծնած չեմ անշուշտ , իմ յետին մնաս բարովս ընդունէ՛ : Էլտոխա՛ , եթէ կրնամ քեզ օգնել , հրաման տո՛ւր ու ես պատրաստ եմ : Զքեզ պաշտող սոյն եռանդուն հոգիին մէջ մեծանձնութիւն մը տիրելուն՝ քեզմէ կրնայ բաժնուիլ , բայց դո՛ւ գլխովին չկրցար ճանչել զայն :

Էքպեր գուցէ բռնի գքեզ վայելել և քեզի լծակից ըլլալէ յետոյ , առաքինութեամբ , անձնութրութեամբ և սիրով իւր անցաւոր մարտութեան համար կրնար ներումի՞ ձեռք ձգել : Երջանիկ Էլտախ սիրոյ բուռն յոյզին պիտի ներէր անշուշտ , և Էքպերի համար երկրային Աստուած մը պիտի ըլլար , վառքի և առատութեան շուքովը պիտի պատէր , երկրի վրայ երկնային երանութեան պիտի հաւասարէր : Այլ Էքպեր յոյսի , սիրոյ ու երջանկութեան շուղին մէջ կանգ առաւ . . . : Իւր գլուխը սոյն հիանալի տեսիլէն դարձուց կամովին , և յուսահատութիւնը , խաւարը ու վիհը նախադաս սեպեց անկէ : Քա՛ղցր սպանի , քեզմէ

Հեռանալու ոտեն յիշատակի չեմ յուսար բնու
բայց իրօք ամենէն աւելի կարեկցութեան արժա-
նի է անիկա :

Նորենտալ կը մեկնի : Իւր հողին պարզած է :
Սէն-Մորի աղջիկը կրնա՞ր այնպիսի աղնիւ գորա-
կանի մը վրայ չգլծալ , որ ինքզինքը զոհելով
կ'աշխատէր անոր հանդիսորդ ու երջանկութիւնը
սպասողել : Իւր սրտին մէջ թաղում թոկալի
զազանիք մը կայ և վատարազդ որբին այնպէս կը
թուի , թէ որչափ խորհրդաւոր քողը վերցնեն ,
այնչափ էքպերի անձնութեան թեան վեհութիւնը
երեսան պիտի գայ :

Էրսթալ Ռենէյի բարեկամին՝ Էլտտիայի հեռ-
ունեցած վերջին տեսութեան նկարագիրը կրկին
մտիկ կ'ընէ և իր զարմանքը կը շատնայ : Ռեքեմն
Մենակեացը վեհանձն էքպերը ստիպեց որ իւր
սէրը զոհէ : Բայց ի՞նչպէս լեռնաբնակ և անծա-
նօթ էակ մը կրնայ իւր կամքը Նորենտալ հզօր
կոմսին , գործադրել ապ : Եւ ի՞նչ իրաւամբ իւր
ճակատագրին բացարձակ տէրը կ'ըլլայ :

Մերունին իւր քեռորդին էքպերի հեռ կար-
գուելու չճամաղելուն համար ցաւ մը կ'զգայ : Ո՛հ ,
ձորին կոյսը անիէ աւելի մեծ ու հռչակաւոր է-
րիկ մը , դիւրազգաց և աղնիւ սիրա մը , կորովի
սապեա մը պիտի կրնա՞յ դաննել :

Էրսթալ արդէն սէրը ճանչցած և մարդկանց
բարքը և վարքը լաւ ուսած էր , Էլտտիայի էք-
պերի նկատմամբ ունեցած անտարբերութեան այս
միտցն պատճառ կը դաննէր , լուրիչ մը իր սիրտը

հրապուրած պիտի ըլլայ : Երիտասարդ , երեւելի
և արին Նորենտալ՝ գեղեցկութեան ու երիտա-
սարդ հասակի հաճոյ ամէն յատկութիւնները ու-
նէր , սակայն իւր տատիճանը , իւր առնական և
հպարտ ձեւը , իւր փառքը , հարստութիւնը , ա-
նունը , առաքինութիւնները , վերջապէս բան մը
էլ չտիայի ուշը չկրցաւ գրաւել :

Միութեան մէջ ապրելով , վայրենի հովիւնե-
րու երեսը միայն տեսնելու սովորած՝ ի՞նչպէս
կրցաւ Ռենէյի բարեկամին փայլը և փառքը տե-
սած ատեն անտարբեր կենալ : Նորենտալ գեղա-
գէժ՝ կոմսը զինքը կը պաշտէ , իւր զգացումները
երիտասարդութեան և սիրոյ կրակովը կը յայտնէ .
զօրականը հարստութիւն և աստիճան իւր ոտից
ներքեւ կը դնէ , և իր մեծ արժանիքը իսկ կը զոհէ
և հովիտի մը խեղճ որբը է՛ն փայլուն ընծաները կը
մերժէ , է՛ն գեղանի մարտիկը կ'արհամարհէ ու
եռանդուն սիրոյ նկատմամբ անզգայ կ'ըլլայ :
— Այո՛ , կը կրկնէ էրսթալ իւրովի , ուրիշ մը իւր
սիրտը հրապուրած պիտի ըլլայ :

Հայր Մ'աեւլ՝ , պարոնին մտերիմը , իւր պա-
րագոյ ժամերը բարեկամին համար կը զոհէր ,
էլ չտիայի ապագային համար բաւական խորհելէ
յետոյ էրսթալի ընթացքը կ'եպերէ : Ռունտերլա-
խի քարոզիչը մերթ ընդ մերթ քաղցրութեան մէջ
տկարութիւն , իսկ բարութեան մէջ սխալ մը տես-
նել կը կարծէր :

— Տղայի մը հաճոյիցը զիջանիլը միթէ քեզի՛
կը պատկանէր , բոսա Մ'աեւլ : Այո աշխարհի մէջ

Աստուծոյ տիպարը կրող հօր մը , որ առանց խորհուրդ հարցնելու կը հրամայէ , հօր մը կ'ըսեմ՝ միակ պարտքն է իւր զաւակաց ապագայն յարդարել : Այս խօսքը կ'ըսեմ , վստանդի էլլտտիայի հայրը կը սեպուիս : Այո՛ , քանի որ վեհ դատաւոր մըն է , իւր տալիք վճիռին վրայ երկար ատեն թող խորհի , այլ երբ անոր արդարութեանը վրայ տարակոյս չունի , պէտք է յայտնէ ակններե : Նորենտալ կոմսը Սէն-Մորի աղջիկը կրնար երջանիկ ընել , Եւ դու՛ ալ սոյն համազումը ունէիր , ուրեմն ի գործ դնել հարկ էր :

Օր մը պիտի գայ , ուր էլլտտեա պիտի զոջայ սոյն կապը մերժելու , այլ շատ ու՛շ : Այն ատեն իրաւունք պիտի ունենայ քեզ ըսելու , իմ հայրս էիր , ինչու՞ համար դիս երջանիկ ընող ամուսնութեան հրաման չտուիր : Երիտասարդ , անուս եւ անփորձ էի , ինչու՞ իմ հաճոյիցս միտ դրիր . . . , երկնից աստղը , դարունը եկած ատեն ձորին վրայ ճառագայթ , կրակ և կեանք աիռելու ատեն միթէ տունկերուն խորհուրդ կը հարցնէ՞ :

Էրսթալ Անսելմի յանդիմանութենէն ճնշեալ կակիճներով կը հալի : Մակայն իւր քրոջը յետին կամքը իւր ընթացքին համար ներում մը կը սեպէ . իւր քեռորդւոյն թագուն զգացմանց նկատմամբ մտքին յոյզը և տագնապը պտտկառելի քահանային առջեւ կը պարզէ :

— Բայց սոյն հեռաւոր ձորակներուն մէջ , կ'ըսէ Անսելմ , ո՞վ կրցաւ էլրտիայի սիրտը հրապուրել :

— Ի՞նչ կը սրտաստիանէ լշտութալ . անիկա , որմէ դառառը կը ստակայ և անոր վրայ կը հիանայ . անիկա , որուն կեանքը առեղծուած մը , իսկ կարողութիւնը հրաշք մը . անիկա , որուն անունը ամէն շուրթերու վրայ կը թրթռայ , իսկ բարեգործութիւնները ամէն միտքերու մէջ գործմուած է : Վերջապէս թագուն և զարմանալի մարդը ըսել կ'ուզեմ :

— Ի՞նչ կը ըսեմ . միթէ կարելի՞ է : Վայրենի լեռին Մենակեացը :

— Այո՛ :

— Իրարու հետ տեսնուեցան :

— Շատ անգամ :

— Իրարու խօսեցան . . .

— Վանքին սրահին մէջ :

— Եւ ի՞նչպէս կրնայ սիրել . . . :

— Միտ դի՛ր իմ խօսքիս : Մէն-Մորի՛ գուտարը ցնորքի ու եռանդի հասակը ունի : Մենակեացը կ'ըսեն , երիտասարդ և է՛ն գեղեցիկ մարդն է : Լշտախա զինքը ճանչելէն առաջ իսկ իրմով կ'զրուղէր . գառառին զարմանալի պատմութիւնները իր երեւակայութիւնը վառած , բորբոքած էին : Սակայն Մենակեացին զիւցազնական գործերուն , մեծամեծ բարիքներուն և վեհ կերպարանքին նկարագիրը մտիկ կ'ընէր , և զինքը չտեսած այնպէս կը կարծէր որ մարդկանց մէջ ի՞նչոյ պահասպան տէր մըն էր : Լեռին սգին գողտնիքով եւ ձեռնածութեամբ պատած իրեն կ'երեւի յանկարծ . . . : Անոր անձին գեղը նոր մագութիւն մըն էր . գողցես երկնա-

յին էտկ մը ձորին կոյսին վրայ սիրալիր ակնարկ
մը կը ձգէր . . . : Այս կախարդանքը ի՞նչպէս
կրնար անդունել :

— Ուրեմն վայրենի լեռին անձանօթը որը
աղջկան սիրահա՞ւն է :

— Անշուշտ : Ինքը չտեսնուիր , և որքին քայ-
լերուն կը հեռուի միշտ , ու յարատու անով միայն
կ'զբաղի : Անցեալէն փորձառու բլլալով՝ ապագայ
եղերութիւները խկ կը յայտնէ : Երկրիս ամէն
գաղանիքին տեղեակ բլլալ կը թուի անիկա : Նան-
սիի արքունեաց մեծերը իրեն ծանօթ են : Նո-
րենտալի և Լորենի իշխանահաւայն խորհած ա-
մուսնութեան կապը՝ իւր միջոցովը վանքին մէջ
տարածուեցաւ : Ինքն է որ հեղեղին կամարին
մօտ էքպերը և իր դունդը գետին ձգեց տա-
սրաստ : Այս կռիւին նկարագիրը էլրտխայէն ման-
րաման ըսել պէտք էիր : Ինչ եռանդով կը սլատմէ
այս նոր Ագիլէսին արիութիւնը , որ անդամ մը մի-
այն վահանը վերցուցած տանն ամբողջ բանակի մը
կը յաղթէր : Ի՞նչ հիացումով յաղթութեան այս դա-
ւակը կը ներկայէ մեզ , որն որ երկնային դրօշին
ներքեւ գանուող հրեշտակապետին պէս կը փայլէր :
Ա՛հ , այս եռանդովն է որ իւր սէրը յայտնուեցաւ :

— Եւ ի՞նչ յոյս կը տածէ անիկա : Գու՛ ալ ի՞նչ
կը խորհիս այդ մասին :

— Ստալեա լեռնահանը հասարակ մահկանացու
մը չէ անշուշտ : Ատիկա փորձով կը հաստատեմ՝
Անսէ՛լմ , Նորենտալ կոմսին հրամաններ տուա-
ւանի : Լորենի դուքսին հռչակուոր մտերիմը վայ-

բենի լեռին անժանօթին ոտքը ինկաւ, և Մենակեացը ստիպելով զանի որ իւր սէրը զսէէ . էլ լատիայի վառփռուն սիրահարը Ունտերլախէն պիտի մեկնի և չալտի դառնայ յաւէտ :

Արդ, միթէ կրնամ էքպերի յաղթողին կարողութեան և անոր մեր սրբին նկատմամբ ունեցած սիրոյն վրայ տարակուսիլ . . . : Դէպի վայրենի լեռը պիտի երթամ զինքը տեսնելու :

— Դո՛ւն . էրսթա՛լ :

— Ինչո՞ւ այդպէս կը սոսկաս : Գիտեմ՝ այն սարաձայնութիւնը, որ առանց հրամանի վայրենի լեռը ելլելու ժտողին սոսկալի ազէտ կ'սպառնայ, այլ ես չեմ վախեր : Գիցո՛ւք թէ իւր սովորական հանդիստը վրդովելու մտօք իւր բնակարանին մտաիլ յանդդնող քանի մը տխմարները պատժած ըլլայ, այլ ես, որ իւր սիրուհիին երկրորդ հայրն եմ, իւր բռնութենէն երկիւղ չունիմ : Իր խորհրդաւոր բնակարանը տեսնելու հետաքրքիր չեմ ընաւ, այլ էլ լատիայի և իր երջանկութեան համար սոյն տեսութիւնը կարելոր կը սեպեմ :

— Ի՛նչ, քու քեռորդիդ այդ մարդուն հետ կարդելու անհեթեթ նպատակը ունիս :

— Նպատակ մը չունիմ, և որոշում մը չեմ ըրած, այլ կ'ուզեմ Մենակեացը տեսնել :

— Պիտի տեսնես, ըսիր, արդ քանի որ կ'ուզես, յաջողութիւն կը մաղթեմ :

— Եր կարծես որ իրեն չե՛մ կրնար հասնիլ :

— Այս տարօրինակ էակը գերբնական յատկութիւն ունի անշուշտ :

— Բայց հիմա գործը իւր բաղդէս վրայ կը կայանայ, կ'ըսէ անհամբեր պարոնը. վերջապէս գաղանիքը պէտք է գաղբի:

— Գաղանի՞քը, կ'ընդմիջէ Անսելմ մարդարէսական շեշտով մը. վա՛յ քեզի եթէ զինքը ծածկող քողերուն կ'ուզես մօտիլ. . . : Էրսթա՛լ, ով որ վիհին կը մերձենայ, հոն գահալէժ իյնալու վտանգին մէջն է: Ունտերլախի հովիւ մը չկայ որ ինձի հետ չգոչէ. վայրենի լեռը մ'ելլեր բնաւ:

— Անսելմ, ռամկային սնապաշտութիւնը արժէք չունի: Մոգութեան չեմ հաւատար, էքպերի յաղթողը մարդ մըն է, այլ վեհանձն գործերով առաքինութիւնը յայտնեց, ուրեմն ինչո՞ւ անկէ վախեմ: Իբրև յանցաւոր կ'ամբաստանուի, այլ անորոշ կարծիքներ են ատոնք, իմ բրած որոշումս անքայքայ և հաստատ է, վաղը Մենակեացը պիտի գտնեմ:

— Վա՞ղը, կ'ըսէ Անսելմ, բա՛ւ է, վաղը քեզի համար պիտի աղօթեմ:

Սէն-Մորի դուստրը Էրսթային դէպի վայրենի լեռը երթալով այն անձանօթը գտնելու միտքը կ'իմանայ, սակայն բնաւ չյուսար, որ այս տեսութիւնը բարի հետեւութիւն մը ունենայ, Հիմայ ուրիշ խորհուրդ մըն ալ իւր միտքը կը յուզէ, իրեն այնպէս կը թուի, թէ պատահարով մը իր վիճակին փոխուելիքը իմացնող ձայն մը կը լսէ ի ներքուստ:

Էլլտիա Էրսթայի ահարկու լեռին վրայ ելլելու միջոցին մօտիլը քանի կը տեսնէր, այնչափ ալ սիրտը կը տատապէր, և իւր անբիծ ու եռանդուն

աղօթքը դէպ ի վերին աթոռը կը սլանար : իւր
դիմաց վրայ սաստիկ յոյզ մը կ'երբեւի , խոկ իւր
շարժումներու շտապը հողիին սողնապը կը լայտու
նեն ակներեւ : Մերթ ընդ մերթ առանց պատճա
սի մը կը դողդողայ : Արտորնօք կը խօսի և իր
խօսքին միտքը նոյն խոկ ինքը շխմանար : Թեթեւ
աղմուկէ մը կը ստիպայ , չնչին իրի մը վրայ կը հլա
նայ , ազտիկ հարցումով մը կը յուզուի : Ի բնէ ան
կեղծ ըլլալով բան մը ծածկել չէր կրնար , և կիսա
վին մոլար կ'երբեւէր : Էրթալ զինքը կը նկատէր ,
կը հասկնար , կը հառաչէր , և կը փութար ժամ
յառաջ մեկնելու :

Կէս օր էր : Պարոնը վանքէն ելլելով իւր քայ
լերը դէպ ի վայրենի լեռը կ'ուղղէ : Առանց սու
կալու կ'ուղէ Մենակեացին բնակարանը երթալ :

Ժամերը կ'անցնին : Էլտաիա Մենաստանին մեծ
պատշգամբ նստած մերթ վայրենի լեռին ճամբան
կը նայի ակնդէտ , մերթ իւր աչերը դէպ ի երկինք
կը դարձնէ : Անմեղ սրտին մէջ սէրը կրօնական
անբիծ զգացում մըն է : Զգացուն սիրտը ինչպէս
սիրելու , նոյնպէս աղօթելու պէտք ունի :

Մըբուր հորիզոնին կը մերձենայ և իր կիսովին
սքողուած ոսկեփայլ անիւր լեռերու կատարը
միայն կը լուսաւորէ : Էրթալ հիմայ վանք դար
ձած պիտի ըլլար , ինչո՞ւ արդեօք կ'ուշանայ , թը
շուառ օրիորդին սրտին յատակը դանուող անձ
կութիւնը տակու մի կը փոխուի : Գիշերային խա
ւարը պահ մը յետոյ հովիար պիտի ծածկէ , հե
ռուն անտառին տրահետին մէջ կամ ուրիշ տեղ

Իւր աչիւրը Իւրսթալի չեն հանդիպիր : Ասադերու թագաւորին վերջին կրակները կարծես թէ վայրենի լեռին սարը շեկագոյն գիծ մը քաշած են : Ունանըլախի կոյսը կը դողայ . . . , իրեն այնպէս կը թուի թէ արխնայի ձող մը իր և լեռին մէջ տեղէն կ'անցնի : Մեծ աղաղակ մը կ'արձակէ տկամայ :

Մայր Իւրսիւլ կը վազէ , կ'ուզայ :

— Հեաս եկու՛ր կրակ հեգ որբը :

Եւ իսկոյն պատշգրամէն կ'իջնէ մտայոյզ և սրտաբեկ :

— Ու՛ր կ'երթաս , կը հարցնէ Իւրսիւլ :

— Վայրենի լեռը :

— Վայրենի լե՞ռը :

Ահարեկ պառաւը կ'ուզէ ես դառնալ :

— Հեաս պիտի դաս , այս է իմ հրամանս :

Առաջին անգամն էր որ Էլրախի այրպէս կը խօսէր : Կարճ և ազդու էր իր շեշտը , խոժու ու վեհ իր նայուածքը . մայր Իւրսիւլ շուար և մելար անոր կը հետեւի լուռ և մունջ :

Յերեկուան ասաղը գլխովին անհետ եղած էր : Հով մը ձորին ծառերը չէր շարժէր , և բնութիւնը հանգարտ էր : Սակայն հարաւային կողմը դիզուող ամպերը մրրիկ կ'սպառնային : Օդին սօթը , սրաւ թռիչ թռչունները , հեռաւոր մունջիւնը , սպառնալի փայլակը , և յտակ երկինքը ծածկել ուղղ սեւաթոյր քողը , վերջապէս ամէն բան փոթորիկ կը դուժէր :

Այլ Էլրախի բան մը չի նշմարել :

Դալարիին մէջէն կ'անցնի , գողցես արշաւա-
տոյր կը հեռանայ , Հեղեղէն անդին , անտառին
մտա , վայրենի լեռին ստորտար կանդ կ'առնէ քիչ
մը ողի և ոյժ առնելու :

— Աստուածդ սիրես , ի՞նչ պիտի ընես հոն ,
կը գոչէ մայր իւրսիւլ յողնութենէ ընկճեալ ու
երկիւղէ սառ :

— Էրսթալ , իմ պաշտպանս , իմ հայրս , կ'ըէս
որբը արտօսը թափելով , Էրսթալ առտուանէ ի
վեր Մենակեացին բնակարանը կը գտնուի :

— Ինքը , մեծդ Աստուած , կրկնեց անդէն
իւրսիւլ , խեղճ մարդ հիմայ կորսուած պիտի ըլլայ :

— Ու ես կը սլանամ զինքը փնտռելու , Էլտափա
կը յարէ գողալով :

— Ու ես քու ոտքդ կ'իյնամ , կը գոչէ պա-
ռաւը , յառաջ մի՛ երթար , մահը հոն է :

— Իւրսիւլ , մահը ինձի համար հոգ չէ : Էրս-
թալ տարիներէ ճնշեալ յողնութենէն ժայռերուն
և անտառին մէջտեղը ինկած պիտի ըլլայ . . .
Գուցէ հիմայ օղնութեան պէտք ունի , գուցէ
զիս կը կանչէ . . . :

Ո՛չ , մարդկային կարողութիւն մը զիս չկրնար ար-
դելել :

— Ուրեմն երկուքնիդ ալ պիտի կորսուիք :

— Իմ պարտքս պիտի կատարեմ :

Եւ Ունտելախի կոյսը անտառին մէջ կը սուզի ,
բայց իւրսիւլ ահարեկ և գողդոջուն՝ ետեւէն կը
վազէ , և անոր սպիտակ պատմուճանէն բռնելով
դետին կ'իյնայ գրեթէ կիսամեռ :

— Ա՛հ, կը գոչէ գլխովին շուար: Քու վրայ ,
խմ վրաս դու թ ունեցիր :

Ա,յս խօսքը սրբին գորովը կը շարժէ :

— Իւրտիւշ, վանք գարձիր : կը հրամայեմ ու
կ'ուզեմ: Իսկ ես մինակ պիտի կերթամ և պիտի
համնիմ:

— Ե՞ս քեզմէ հեռանամ, երբէք փոթորիկին
գուայր կը ըն՞ս . . . : Երկինքը իսկ քու նպատա-
կիդ գէ՛մ կ'ուգայ : Ի՞նչ պիտի ընես : Արդարդ
Աստուած , վրիժառու՞դ Աստուած , այս դժպտային
լեռը շանթահարէ՛ . . . :

— Բա՛ւ է . . . կընդմիջէ օրիորդը յուսարեկ և
զայրոսդին . քաշուէ՛ . . . գնա՛ . . . , թո՛ղ զիս :

Ահազ ին փոթորիկ մը կ'ելլէ , երկար սրտում-
ները անտառը անգամ կը սարսուեն : Շղթայա-
ղերձ հովերը անապատին սեւա և թուխ եղեւին-
ներու մէջէն կը սուլին ուժգին : Փոթորիկը հով-
տին բարձրաւանդակին վրայ կը դաղրի . . . և Իւր-
տիւշը զոտիայի ոտքը կ'իջնայ անխօս ու դրեթէ շրն-
շասպա . :

— Մեծդ Աստուած , օգնէ՛ ինձ , կըսէ կոյսը :

Գլուխը ծածկող քողը երած է : Իր երկայն մա-
ղերը իր ճակատին և ուսերուն վրայ կը ծփան: Անձ-
բււր կ'իջնէ տեղատարաւ. թանձր գիշեր մը ան-
տառները կը ծածկէ , որոնք երբեմն փոթորիկին
կրակներէն կը ցորան կարմրախայլ : Էլտոխա մայր
Իւտիւի թեւէն բռնելով մերձակայ կապնի մը
տակ կը տանի , անոր տառած անգամները տաք-
ցնելու կը ջանայ : Այն ատեն վանքին քաղցր կոյսը

լուս և անշարժ վապլակներու աղէտարեր լոյսովը կարծես թէ դժոխային խառարնեցու մէջ եղիւսեանս դաշտերու սպիտակ երեւոյթի մը պէս կ'երեւէր :

Սակայն բուռն միրիկը անցաւ . արեւմտեան կողմը լոյսի ճառագայթ մը շողաց : Այլ կայծակը լեռին կատարը չգուար : Փոթորիկին ահագին մահչիւնը կը դադարի և ամպերը արեւելեան կողմը կը դիզուին : Գեղեցիկ օրերու յստակ երկինքը վերստին կ'երեւի . ընկճեալ տունկը իւր խոնար բունը կը վերցունէ , վատահ թռչունը դարձեալ կ'սկսի երդել , և բնութիւնը անտառներու սեւ այգիներէն հալածուող երիտասարդ յաւերժահարսի մը պէս գողցես աղետալի վտանքէ մը զերծ՝ հանդիստ կ'առնէ և կ'սկսի դոյզն ինչ շնչել :

Ա՛հ , ի զուր երկինքը կը պարզուի : Էլուտիայի սրտին խորը աակաւին միրկայոյդ է : Իւր անդամները սառ են , դլուխը տաք է և իւր աչերուն կրակը ցնորքէ յառաջ կու գայ : Ճամբայները ողողուած են : Անդին հեղեղը իւր աւազախառն կոհակները կը դլորէ կարկաշելով : Փոթորիկէն յառաջ եկող նորանոր հեղեղներ բարձր տեղերէն իջնելով անտառին արահեաններուն մէջէն կ'անցնին , արմատախիլ ծառեր ամէն անցքերը կը դոցեն : Սակայն որբին համար ի՛նչ են խոչնդոտ և սոսկում՝ ա՛յլ մենաստանին գողգո՞ւուն աղաւնին չէ անիկա : Էլուտիա իր վաժուկ ու երկչուտ կերպարանքին ներքեւ մեծ հողի մը կը տածէր , որ իւր ազդեցութիւնը պարզելու համար մեծ առ ի՞թի մը կ'սպասէր :

Մայր Խրսիւլ կ'սթափի, և խը գթալի նայուած քովը գողցես կը հարցնէր թէ ինչ որոշում պիտի ընէր : Սրիորդը անոր ըին աղաչանքը կը հասկնայ, ձեռքովը մենաստանին շաւղը ցոյց կ'ուտայ, և ինքը գէպի վայրենի լեռը կը յառաջանայ լուռ և մունջ :

Արդէն էլ լատիա շատ հեռի է Խրսիւլէն, որն որ դարձեալ իրեն հեանուելու վորձ կը վորձէ, խը կեանքը զոհելը իսկ աչք սունելով : Յանկարծ եղկելի հառաչ մը կը լսէ . կը գողգողայ . . . : Այս ձայնը, իրեն այնպէս կը թուէր, թէ իրեն մօտ գժրողդ մէկու մը յետին շունչն էր, կը վազէ, կ'երթայ գէպ ի այն ծառերը, ոսկէ այն ցառադին հառաչը խը ականջը հասաւ, և հոն օրուան յետին լոյսովը դարարներու վրայ սլառկած անշունչ էակ մը կը տեսնէ : Սեւ զգեստ մը հագած էր . դուցէ անոր տակը սպաննուած դիակի մը սոսկալի տեսարանը կար : Հէզ որբը ողի և ոյժ կ'առնէ, կը մօտի, սգոյ վերարկուն կը վերցնէ և . . . Երսթայը կը ձանչէ :

Այս տեսներուն, խը ողբագին ձայներովը օգը իսկ կը թնթացնէ : Մերադիր, խը հօրը սառ մարմինին վրայ հակած կ'ուզէ զանի վերցնել, և գորովալի խօսքեր կ'ընէ անոր : Խրսիւլ կը վազէ կ'ուգայ գոչելով :

— Ա՛հ, այն հրէշը զինքը տպաննած պիտի բլայ :

— Սպաննած, կը կրկնէ անդէն էլ լատիա ահարեկ, ուրեմն ո՛ր է վերքը, ուրեմն ո՛ր է սրիւնը . . . :

Եւ իւր դողդոջուն ձեռքերը , իւր զարհուրեալ նշմարը ի դուր սարանութեան մը հեաքը կը փնտռեն :

— Ո՛հ , առաջուց դուշակեցի , կ'ըսէ իւրսիւլ :
Հոն ելլե՛լ . . . , խեղճ զո՛հ :

— Գուցէ նուազամ ըլլայ , կը յարէ Սէն-Մորի դուստրը առանց Մայր իւրսիւլին խօսքին միադնելու : Այո՛ , ճամբուն յոգնութիւնը . . . իւր ալեւոր հասակը . . . , այս փոթորիկը . . . : Եւ ինձի համար է , որ իւր կեանքը այսպէս փտանքի ենթարկեց : Իւր մահուան պատճառ ես պիտի ըլլայի . . . : Իւրսիւլ , գիւղակը փազէ՛ , բժշկութեան արհեստով դուցէ սթամիի :

Իւրսիւլ դնաց . կարեւրի եղածին չափ շուտ կը քայլէր , սակայն էլստիայի հեա համամիտ չէր բնա :

— Ա՛հ , իմ խեղճ տէրս դնաց ալ , կը մըմնէր կիսկատար ձայնով մը :

Սէն-Մորի դուստրը խոնառ դարբերին վրայ անչարժ պառկած՝ ծերունիին քով մինակ կը կենայ : Իւր ձեռքերովը կը նկրտի անոր ձեռքերը տաքցնել , իւր արտասուքը տժգոյն երեսը կը թրչնն : Կոյսը անոր կը խօսի , հարց ու փորձ կ'ընէ ու երբեմն իւր խօսքը կ'ընդմիջէ պատասխան մը առնելու : Յետոյ այնպէս համազուելով որ մեռած է անիկայ՝ անհնարին ցաւերով կը տառապի :

Հուսկ յետոյ իւրսիւլ կը դառնայ : Երկու հովիւն Մարտրլին իրեն բնկերացած են : Էլստիա իւր բարեկամուհին տեսներով ոտք կ'ելլէ և արտաս-

ուայլի աչերով անոր գիրկերուն մէջ կը նետուի :

Մինչդեռ հովիտն անդէորդները էրթալը տանելու համար պատգարակ մը կը պատրաստեն, Մարսըլին որքը ապահովելու կը ջանայ :

— Դեռ կ'ապրի՞, կը հարցնէ կոյսը :

Գիւղակին մարդարէութիւն դէպ ի ծերունիին մարմինը կը հակի : Խը ձեռքը անոր սրտին վրայ կը դնէ, պահ մը միտ կը դնէ, և կ'ըսէ :

— Կ'ապրի :

Էլլտաիա ուրախութեան ձայն մը կ'արձակէ :

— Ուրեմն այս անգամ դոնէ մարդ չէ՞ զոհած, կը հարցնէ Խըսիւլ զարմանքով :

— Ի՞նչ, սպաննութենէ՞ կը կասկածիս... կ'ընդ-
միջէ Մարսըլին :

— Սպաննութենէ կը կասկածիմ, ըսիր, կը կրկ-
նէ Խըսիւլ, էրթալ վայրենի լեռէն կը դառնայ : Մենակեացին պաշտպանած օրիորդը այս խօսքէն զչարելով գլուխը այսդին կը դարձնէ . . . : Հովի-
տները պարոնը վերցնելով լեռէն կ'իջնեն : Էլլտաիա Մարսըլինի կռթնելով՝ այս տեսակ մը յուղարկա-
ւորութեան կը հետեւի և գիշերային խաւարին մէջ սոգոյ և տրտմութեան հանդիսաւորները Մենաս-
տանին ամայի սրահներէն կ'անցնին լուռ և մունջ :

Չ Լ Ո Ւ Խ Զ .

Բժշկութեան արհեստին ամէն օգնութիւնները Մենաստանին ծերունիին տուին : Էլլտաիա յուսա-
հատ իւր պաշտպան հօրը անկողինէն այսդին չէր

գար բնաւ , ուր անշարժ պատկած էր անխիտ : Անպե՛ւ՛ , ձորին Ասկղեպիտար ի գուր կը հոգայ զինքը : Անոր կեանքը վտանքի մէջ էր , Յուսալի խօսք մը չարտատանեց : Բարի քահանային լռութիւնը գողցես էրսթալի մահուան դուշակութիւնն է :

Էրտիպլի անլուր հառաչանքը և իւր դէմքին ահարկու թալուկը պատկառելի Անսե՛ւ՛ն կ'ամառքեն , որնոր կանխաւ կ'սկսի օրիորդը սիտիել : — Իմ ազջիկս , կըսէ անոր , եթէ Աստուած էրրսթալի անմեղ և անարատ հոգին իրեն քով կը կանչէ օրհնեմք այս վճիռը , որ իւր վիշտերու վերջ պիտի տայ . յաւերժական դուռերը իրեն համար պիտի բացուին , արդէն Երկնից ներդաշնակ երգերը ընտրելոյն մերձակայ գալուտը կը հռչակեն : Արդէն յետին շունչերու հրեշտակը անմահ երանութեանց մէջ կը կանչէ զինքը : Արդարին մահուան անկողինը այն օրհնեալ կամարն է , որուն վրայ Աստուածային հոգին կ'իջնէ : Հեռացի՛ր , կոյտդ անարատ . այստեղ քու վրա՛դ միայն դժայ հարկ է :

Այս միջոցին Էրսթալի մէկ թեթեւ շարժումը աչքին կը դարնէ . ձերունիին սառ անդամներուն ողի տալու համար նորանոր վոյթ և ջանքի գործ կը դնեն : Հիւանդին երեսը թեթեւ կերպով մը կը շառագնի , իւր աչերը կը բացուին :

Կարծես թէ իւր շուրջը գանուող սիրոյ առարկայները կը ճանչէ : Հէք ուրի՛ն վրայ սևեռած աչերը գորով միանդամայն դառ կը յայտնեն : Կ'ողէ քանի մը բառ արտատանել . ընդունա՛յն վառ-

տակ : շնորհն գրէթէ անդամարցծ , խակ լեզուն
համբէ :

Էլրտխա Անտելմի կը մտտի :

— Ո՛հ բան մը մի ծածկեր , կ'ըսէ անոր : Անն
դատոր մը անոր մահը շտապած պիտի ըլլայ և
թշնամիի մը դոհ . . . :

Ատիկա անհնար է հաստատել . . . :

— Եթէ ոճիր մը գործուէր գոնէ հետք մը
ձգած պիտի ըլլար : Պարսնը անտառին մէջ կաթ-
ուածուհար ինկաւ : Եղեռնագործ ձեռք մը կամ
մարդասպան երկաթ մը չվերցուցին անոր վրայ :
Երկար ճամբան , աղետալի փոթորիկը և գուցէ
բուռն յոյզ մը այս մահարեր հարուածը փութա-
ցուց : որուն համար երկար ատենէ ի վեր կը վա-
խէի :

Այս պատասխանը ինչ ճշուղ ծանրութեամբ մը
որը օրիորդին սիրաբ սիրովեց . իւր արիւնը երակ-
ներուն մէջ աւելի ազատ սկսաւ շրջան առնել :
Բայց , ախսո՛ս , Սողոմոնի տաճարին պատերուն
տակ . Եւ՛րի + Եւ՛ Եւր--է՛ գոչող այն սոսկալի մար-
դարէին նման , Անտելմ ալ այս խօսքը ըսաւ մե-
ծաձայն :

— Էրսթալ անտառներուն մէջ իյնալէն առաջ
տեղի ունեցող պարագայները մահատիպ քողով մը
ծածկուած են : Գուցէ այն վերջնելով աղետալի
գաղանիք մը . . . : Մակայն թաղուն և անպա-
տիւ ոճիրներուն վրէժը գերագոյն Էակին կ'իյնայ
լուծել : Մարդկային արդարութենէ վեր ուրիշ
դատաւտան մը կայ : Մենալթեան մէջէն դատապար-

տիչ աղաղակ մը պիտի ելլէ Պղնձեայ կոթո-
ղը կառեղէն ամանի մը պէս պիտի խորտակուի :
Եղեռներ իւր նենգաւոր և յաղթող դահը երկրիւ
բարձրութեանց վրայ վայրասպար պիտի հանէ , լե-
ւին քիչ մը անդին շանթ կայ :

Այս բսերու ատեն իւր շեշտին և նայուած քին
մէջ գերմարդկային բան մը կար։ Ունտերը բախի կոյսը
կը դողայ ու երկար հառաչ մը կ'արձակէ ակնկոր :

Սակայն օր մը եւս բնկղմեցաւ այն վիհին մէջ,
ուր ամիսները , տարիները և դարերը կ'իյնան
անդնդամոյզ : Սէն-Մարի դուստրը իւր սենեակին
մէջ ի դուր քանի մը ժամուան քուն կը հայցէ , որ-
պէս զի օրհասական հօրը քով հսկելու համար
նոր ոյժ առնէ . ինչպէս իւր հողիին վրայէն ակո-
վանքը , նոյնպէս կոսքին վրայէն քունը կը սահին :

Էրթալի քով կը դառնայ . անոր հետ մինակ
է : Պարոնը չկրնար իրեն խօսիլ , սակայն դժալի
նշմարով մը կարծես թէ հարցում մը կ'ուղղէ իբր
թէ խօսքէ զատ ուրիշ միջոցով մը պատասխանելու
յոյս ունենար :

— Հայր իմ , կ'ըսէ Էլոտիա , քու զաւակդ ե-
րեսի վրայ մի՛ ձգեր :

Եւ իր ձեռքովը ծերունին ձեռքը կը բռնէ .
իրեն այնպէս կը թուի թէ թեթեւ կերպով մը կը
սեղմուի :

— Մահարեր արչաւ , կը յարէ անդէն . դուցէ
սուանց երկար ճամբուն դժուարութեանցը , ա-
սուանց Մենակեացին հետ ունեցած այն տեսու-
թեանդ :

Հոս կանգ կ'առնէ ահաբեկ : Մենակեացին անունը էրթալի սրտին սոսկում կ'ազդէ յանկարծ : Իւր աչերէն հուր կը ցայտէ բարկալի : Իւր հոգիին առջեւը գանուող խոչնդոաները կ'ուզէ կոխել առաթուր : Բուռն զօրութիւն մը , յետին ջգածգութեան մը պէս անոր դողդոջուն շուրթերուն շարժում տուաւ : Հաղիւ քանի մը կիսկատար բառ կ'արտասանէ , որոնք լսելի կ'ըլլան որբին : Հրէջը . . . Ա՛հ , տարարա՛ղբ . . . : Փախիր :

Իւր նայումքին հուրը կ'անհետի , իւր անգամները կը ձգտին . իւր ձայնը կը շիջի . իւր շունչը կը սառի , մէկ տեսակ մահաշուք քող մը իւր աժդոյն երեսին վրայէն կ'անցնի արագ : Ըննցաւ , դամբանական թեւեր կրող հրեշտակը մեռնողին և կոյսին մէջ աեղը յախտենականութեան վարագոյրը քաշեց :

Բաղմաթիւ օրերէ ի վեր արդար մարդը իւր ասպարեղին վերջ տուած էր : Հիմայ Անսեր՛ Սեն-Մորի աղջիկին միայն հոգ կը տանի , որպէս զի կաղդուրի անիկայ : Իր երեսը գոյն չէ մնացած , իւր ձայնը գթալի հեծութիւն մը , իսկ էութիւնը յարատեւ ցաւ մըն է :

Երկար ատեն Ունտերլախի քահանային գորովալի հոգատարութեանց առջեւ անտարբեր կը կենայ տրտում և տխուր , այլ վերջապէս հողմահար և նկուն ծաղիկը իւր թարչամեալ բունը կը վերցնէ : Երտիա մահուանէ կ'ազատի : Ափսո՛ս , իր երիտասարդութեանը միակ նեցուկէն զուրկ և անկէ ետքը տակա ին ասրելուն համար տառապեաց իւր

առջեւ բացուող ապագային վրայ խորհելու չի
ժամեր :

Առաւօտ մը կաղ ի կաղ մինչեւ մենաստանին
պատշգամբ կ'երթայ : Արեւը եթերական դաշտե-
լուն մէջէն կ'անցնի բուսափիւռ . իւր կրակները,
լեռները պսակող մշուշը փարատեցին և ձիւնաթոյր
քարհասներուն սպիտակ դագաթը հորիզոնին մէջ
կը փայլի : Մարդերը ծաղիկներով երզին երկն
զարդարուած են :

Մթնոլորտը խի անոյշ հոտ կը բուրէ : Բնու-
թիւնը հէք որբին աչերուն գեղազէ՛մ և յատակ
կ'երեւի , ինչպէս արարչադորժութեան առաջին
օրերը : Ձրվէժը հեռուն կը մլմնջէ և իւր օձապը-
տոյտ շուրերը մարդագեղեցիք երկուքի կը բաժնեն :
Անտառակին թռչուններուն զուարթ երգերէն օդը
կը թնթայ : Ա՛հ , կը դոյ՛է օրիորդը , եղկելի ձայնով
մը , խմ էութենէս և ճակատագիրէս ի դատ , այս
վատարազդ և ցաւազին սրտէս ի դատ բնութեան
մէջ բան մը փոխուած չէ :

Եւ իր արտասուքը հեղեղի պէս կը վազեն :
Աւա՛ղ , չէ՞ մի որ թշնամանք կրող վշտաբեկ սրտի
մը համար յատակ երկինք մը , գեղամիժաղ դիրք մը ,
դառն հեղնութիւն մըն է : Շիջեալ հանճարը կամ
անհետող արդարը աշխարհի մէջ իրենցմէ ետքի
ինչ ցաւ և վիշտ ձդելու ըլլան , դարձեալ երկինք
արտօսը մը , իսկ իրկիյը հառաչ մը չեն շնորհեր :
Բնութիւնը իր սովորական բնթացքը կը շարունա-
կէ : Մարդս կը կարծէ թէ իրեն համար ստեղ-
ծուած է անիկա , սլլ բնութիւնը մարդուն նկատ-

մամբ անտարբեր կը կենայ և անոր ճնունդը չի նկատեր կամ մահուամբը չի դրադիր :

Էրսթայի կամքը ի դորժ դրին : Մենաստանին պարտեղներուն մէջ բարձրաբերձ ծառերու շուքովը պատած բարձաւանդակ մը կայ : Հոն կը հանդիսանոր ոսկրոտին : Դամբանական շինք մը չպիտի կանգնեն հոն : Իւր դերեղմանը քար մը չպիտի ծածկէ : Փառաւոր տապանադիր մը իւր առաքինութիւնները չպիտի յիշեցնէ : Էլտաթայի երկրորդ հայրը, մահուան այս շուքը, փոշին այս սնտախբարդիւեց : Գերեղմանին դալարին վրայ դաշտային պարզ խաչ մը միայն համետօօրէն կը բարձրանայ :

Պատկառելի քահանայն քիչ անգամ դժբաղդորբին քովէն կը հեռանայ , որուն միակ նեցուկը և պաշտպանը ինքն է միայն : Իւր ինասքովը և բարեպաշտ խօսքերովը անոր հոգւոյն վէրքերը բուժելու կը նկրտէր : Անտերժ իր բարեկամին յետին միտքը իմացաւ : Իր քեռորդին , երխատարդ Քոնրատը Էնտերկ , կոմսուհին զրկեց , Էրսթայի մահուան լուրը տանելու : Ամէն օր Քոնրատի վերադարձին և կոմսուհին պատասխանին կ'սպասէ : Գուցէ Էլտաթայի նոր պաշտպան տիկինը , ինքը պիտի գայ իւր որդեգիրը տեսնելու : Իւր օթեւանը պատրաստ է : Բարին Անտերժ ամէն բան կարգի կը դնէ :

Սեն-Մորի դուստրը կը կազդուրի : Տիմայ մէկ խորհուրդ մը ունի , Էրսթայի գերեղմանին վրայ աղօթել : Տապանակիր բարձրաւանդակին մօտ դիշեր մը միայնակ և ծնրագիր , Ո՛վ հայր իմ ,

կ'ըսէ Էլլատիա , ես անձանօթ գունդի մը վրայ այսօր օտարական մը, ժամանակէն ինչ սպասելիք ունիմ: տառապանքի և փիշտերու մթերուելը: Մարդերէ ինչ կը յուսամ. — դթութիւն : Հայր իմ , ինձի համար բարեխօս եղիր . քու աղօթքդ զմեզ միացնէ : Ստիպէ՛ զՍաստուած որ զիս իւր քովը կանչէ, վասն զի չեմ ուզեր որ իմ և քու մէջ տեղդ պատնէշ գանուի :

Սուրբ խաչելութեան կոթնած մտախոհ որբը առանց ոչ դնելու վայրկեաններ, ժամեր կ'անցունէր հոն : Մենակեացին յիշատակը սոսկումով մը իւր մտքէն վանելով իւր հոգեվար հօրը յետին բառերը կը կրկնէր իւրովի: վայրենի լեռին մարդը, այն թագուն զօրութիւնը, այլ իրեն համար երկնային զօրութիւն մը չէ, սակայն դեռ չի կրնար չարիքի ողին կարծել զանի: Էրսթալի մահուանէն ի վեր Մենակեացին անունը ահ կ'ազգէ իրեն . թերեւս անկէ խուսելու արիութիւնը ունի , այլ զանի մառնալու կարող չէ բնա :

Գիշերային ճառագայթներ մահաչուք անտառակը կը լուսաւորեն : Ունտերլախի կոյսը իր երկար մտախոհութենէն զարմացած , երեկոյեան խոնարօքէն սառ , լուսնին լոյսին առջեւ դողդոջուն՝ կաղամախին պէս թարկահար , իւր ծանրակշիւ գլուխը կը վերցնէ . ինչ զարմանք . . . : իւր առջեւ, կանգուն, շիրիմներու ծառին կրթնած՝ լեռին սրտորդը իրեն կ'երեւի , պահելով այն օրուան դեղը ոհրապոյրը , որով Արփէոս մը կը թուէր իրեն: Չինքը կը նկատէ ուշադիր , լռին և գերեզմանի մը

արձանին պէս անշարժ : Իւր աջ բաղկին վրայ վերաբրկուն մէկ մասը կար , որն որ կեսարներու արքայական զգեստին տալարը կը կրէր : Իւր սետև խիտ մազերը իր առնակիսն և բայ ճակատին վրայ վէտ վէտ կը ծվան : Գիշերային ջահին լոյսը տեսելու խիտ սասերէն թափանձելով զինքը արծաթափայլ գօտիով մը կը պատէ : Իւր ազնիւ և հանդարտ կերպարանքը , իւր գորովայի նշմարը և զուարթ գէմքը Էլտտիայի սրահն այն ազխողորմ յիշատակները , այն ահարկու խորհուրդները հալածական վանեցին խկոյն : Արդէն զինքը տեսնելուն , օրիորդին ամէն արամագին սպաւորութիւնները անհետած էին . և լեռին դիւթիչը անոր վրայ իւր իշխանութիւնը ձեռք ձգած էր :

Օրիորդը նշմարեց որ անոր աչերուն մէջէն գրթութեան արտօսը մը Էրթալի գերեզմանին վրայ ինկու : Դամբանական անտառակին մէջ անոր ներկայութիւնը , իւր հօրը յիշատակին համար այն յետին նուէրը , թագուն բերկրութիւն մը , քնքուշ երախտագիտութիւն մը , ազգեցին իւր սրտին : Մենակեացը արդարեւ անմեղ կը գատէ մատի : Իւր մթին խորհուրդները յանկարծ լուսով մը ցոլացին . իրեն այնպէս կը թուի որ , աստուածային շունչ մը հորիզոնին ամէն ամպերը մղեց : Կեանքի ընթացքը իրեն համար այլ անապատի մէջ շախղ մը չէ , Էլտտեա այլ մինակ չէ աշխարհի մէջ ու եթէ Էրթալի գերեզմանին առջեւ վերատին ծունր գրնելու ըլլար միայն աղօթքը շպխտի ուղղէր առ Աստուած :

— Ինքը հրեշ մը , ինքը մարդասպան մը , կ'ըսէր որքը իւրովի : Ա՛հ եթէ առաքինութիւնը մարդկային պատեանի մը ներքեւ երկրի վրայ իջնէր աւելի երկնային կերպարանք մը չէր կրնար ընտրել : Օրհասական Էրսթալի խելքը դլուխը չէր , ի՛նչ , յնորքէ մը յառաջ եկած ամբաստանութեանց պէ՞տք էի հաւատ ընծայել :

Մենակեացը դէպ ի իրեն կը յառաջանայ :

— Ձիս կրցա՞ր յանցաւոր դատել . . . , կ'ըսէ յանդիմանութեան շեշտով մը , Էրսթալի մահուան իբր պատճառ ամբաստանեցա՛յ . . . :

Այս բառերը Էրսթալի թագուն խորհուրդներուն կը պատասխանէին : Խորհրդաւոր մարդը նոյն իսկ իւր հոգիին յատակը կը ճանչէ : Մտայոյզ օրիորդը չ'ուղեր անոր խօսքը ընդ միջիւր . Մենակեացին ձայնը ի՛նչ անոյշ կերպով իւր սրտին մէջ թընդաց . . . , իւր շեշտը ի՛նչ կարող մոգութիւն մըն է : Որքը խօսելու չի ժախր սրպէս զի անոր խօսք լսելէ չդադրի :

Կուզէի կրկին գրեզ տեսնել , կը յարէ լեռին որսորդը , որպէս զի ինքզինքս արդարացնեմ , Էրսթալի ոսկրոտիին վրայ այն օրհնեալ կապելութեան առջև , երկնքի ներկայութեան կ'երդնում , վայրենի լեռին Մենակեացը ո՛հիրով մը իւր ձեռքը չալճեց բնաւ :

Եւ իւր ձեռքը փրկութեանց սուրբ նշանին վրայ դնելով դողցես ամէն երկրային կամ երկնային կարողութիւն կը հրաւիրէ իւր խօսքը սուս հանելու :

— Երսթալ, կը գոչէ ուժգին, եթէ քու կեանքը դոհեցի, եթէ դէժ այդ խորհուրդը ունեցայ, թո՛ղ քու սպառնալի ձայնդ դազաղէն դուրս ելլէ . . . : Եթէ ճշմարտութիւնը մատնեցի ոճրադորժը յայտնէ՛ իսկոյն :

Էլրտիայի սիրտը ուժգին կը տրոփէր, սակայն իւր ներքին յոյզը սոսկումէ յառաջ չէր գար : Իւր կասկածը կը փարատի և ներկայ միջոցը իրեն ահազեկէ զատ իւր էութիւնը երկարելու, բազձանքը կը ներշնչէր : Կը տեսնեմ, կը յարէ Մենակեացը որ իմ երդմանս կը հաւատաս, քու առջեւդ արդարացայ : Մնաս բարեա :

Պիտի հեռանար, — իմ անիրաւ կասկածներուս կը ներե՛ս, կ'ըսէ հէք որբը վեհերոտ կերպով մը :

— Արտաքին երեւոյթը զիս կ'ամբաստանէր անշուշտ և զիս յանցաւոր դատելու իրաւունք ունէիր : Սակայն մարդկային դատաստարտութեանց ներքեւ երկար ատենէ ի վեր ճնշուած ըլլալով անիրաւութեանց վրայ երբէք չեմ զարմանար :

— Զիս կը ձգե՛ս. կըսէ Էլրտիա անոր անտառակէն ելլելը տեսնելով :

— Ա՛յո, պէտք է որ մեկնիմ և դքեզ չպիտի տեսնեմ յաւէտ :

Էրսթալի քեռորդին սցս խօսքը ըսելուն ակամայ շարժում մը ըրաւ զանի արդիւլելու և ի ներքուստ կրած վիշտը իւր դիմաց վրայ կը տեսնուէր ակններու :

— Ի՛նչ, կը յարէ անդէն Մենակեացը, զիս ջաւո՞վ պիտի յարցես :

— Չէ՞ մի սր դուն իմ ազատիչս եղար կ'ըսէ սրտայայտ աղջկիկը :

Այս «է՞ աշտիւ» բառը արտասանելու ատեն, իւր ձայնը երախտագիտութենէ աւելի բան մը կը յայտնէր : Լեռին որսորդը այլ զինքը ճնշող զգացմանցը տէրը չէ :

— Կոյս'դ անարատ, կը դռէ, զիս մ'արդիւնք վասն զի քու անձիդ համար մեծ կտրուտ է :

Եւ անձանօթ մարդը գողցես զինքը ետ կը մղէ :

Սէն-Մորի դուստրը ետ կը քաշուի : Խը սիրտը ճնշուած է ցաւագին : Աղիտղարմ խորհուրդներ զինքը կը վրդովեն, Մահատիւ խաչելութեան տակ կ'ապտտանի, իբր թէ վրկութեան կամարի մը ներքեւ գտնուէր և իր այտերը արատաւքով կը թրչուին :

Լեռին որսորդը ի դուժ շարժելով իւր ըրած ամէն որոշումները կը մտնայ և անոր տարը կ'իյնայ :

— Ուզեցիր ատիկայ . մահաբեր խոտովանութիւնը իմ սրտէս կը խլես . . . : Լաւ ուրեմն, այժմ, դքեղ կը սիրեմ : Դու միայն խաւարներու մէջ երեւցող արշալոյսի մը պէս նոր օր, նոր արև տուիր ինձ : Հիմայ երկրի վրայ ինձ համար Լըտիան միայն կայ, և այս Լըտիան չպիտի կրնայ երբէք խն ըլլալ :

— Երբէք, կը կրկնէ որբը :

Եւ այս դորովի և անցուստութեան բառին մէջ իւր սիրտը բոլորովին բացուեցաւ :

— Իմ շուրջս նկատէ՛ , կը յարէ Մենակեացը
գրեթէ շուար ու մուար . այս ծաղկաւէտ մարդերը
մահ կը յայտնեն , այս զմայլելի անտառակը գե-
րեզման մըն է , թշուա՛ռ , իմ ճակատագիրս սոյն
պարտիչ մարդերուն , և իմ սէրս սոյն մահատիպ
անտառակին կը նմանին :

Զգէ՛ զիս որ քեզմէ հեռանամ : Թող միշտերու
և անյուսու թեան ալեսաստ ծովին վրայ փոթորիկէն
հայածեալ և կայծակին հեռքը կրելով թափառ իմ ,
այս է երկնային վճիռը , իմ ճակատագիրս յանձն
կ'առնեմ : Բայց գէթ նաւարեկը միհերու յաասկը
մինակ դըրի : Դեռ ատեն կայ . . . : Գու անձգ
վրկէ՛ :

Իմ ցնորքս գրեզ կը վրդովէ . Էլուտիա՛ աղետա-
լի արկածներու սահմանուած մարդուն ի՛նչ ըլլայը
մի՛ փնտուեր , այլ վանէ՛ զանի : Երկրային հրեշ-
տակ , Երկինքի հողիներու նման քու բնակու-
թեանդ դուռը դոցէ՛ ինձի համար : »

Սրտարեկ և ստկումէ սառ կոյսը . — « Ելիր ,
անգո՛ւթ , կ'ըսէ : Ավասո՛ս , ի՛նչ կրնամ պատաս-
խանել քեզ . իմ հողիս խղեցիր : »

Մենակեացը անոր գողգողալը կը տեսնէ , կը
նկրտի անոր օգնել . իւր թեւերովը՝ զինքը կը գրկէ
և օրիորդը պահ մը գրեթէ անզգայ գլուխը անոր
կուրծքին վրայ դրած էր նազելի . այսպէս բա-
զեղին սպիտակ ծաղիկը ձորակին կնձնիին կը միա-
նայ : Սիրային աստղին կուսական փայլը իր երկ-
նային երեսը կը լուսաւորէր : Իր կէս դոց ու եր-
կայն կոպքը իր հրապուրիչ նայուածքը կ'սքողէին :

Մնասպատին անձանօթը իրեն կը նայի ուշադիր և լռին , արիւնը երակներուն մէջ կ'եռար
— «Էլլտտիա՛ , կը գոչէ սրտագրաւ վիշտով մը , ըստո՞յդ է . . . զիս կը սիրե՞ս : »

Իր նայուածքին մէջ տեսնուող զայրոյթին չափ կերպարանքին մէջ ալ մնորութիւն կը նշմարուէր . քնքուշ օրիորդը անդամ մը կը սեղմէ : Որքը սիրոյ անոյշ հարցումը լսելով կ'ուշաբերի և Մենակեացին բազուկները արձկելու ատեն իր երեսը կարմրուք մը կ'երեւի :

— « Զքեզ կը սիրե՛մ , կ'ըսէ . բայց ինչո՞ւ խոստովանիմ : Դուն չ'ըսի՛ր որ Էլլտտիա երբէք քուկոչկընար ըլլալ : »

Վայրենի լեռին մարդը , գոգցես պատասխան տալու կը վախէ , հազար ու մէկ զգայումներ զինքը կը տաշնայեն 'ի ներքուստ , շտապաւ կը հեռանայ անտառակին մէջ կ'երթեւեկէ մեծաքայլ . յետոյ որբին քով դառնալով խոր լռութիւնը կը վրդովէ :

— « Էւ ի՞նչպէս կրնամ յուսալ որ Էլլտտիա կ'ուզէ իմն ըլլալ : Ես թափառիկ , վտարանդի և գժբաղդ մէկը՝ լծակիցի մը ի՛նչ կրնամ նուիրել . աքտորի ժայռ մը , վայրենի խրճիթ մը , անձանօթ անուն մը , վատարաղդ էութիւն մը : »

— « Ես առանձին և լքեալ , կը պատասխանէ Ռենտերլախի կոյսը , ծնողքէ զուրկ , հարստութիւնէ զուրկ , նեցուկէ զուրկ , այս երկրի վրայ քեզմէ զատ ի՛նչ ունիմ . . . : »

— « Ո՛հ , այս խօսքերը իմ բազդս կը փոխեն , կ'ընդմիջէ լեռին եռանդուն որսորդը , կայծակը

իմ գլխուս վրայէն հեռացաւ . . . , զիս կը սիրե՛ս :
Ա՛հ , երկինք պիտի ներէ ինձ . ուրեմն կրնամ եր-
բանութիւն յուսալ : Ուրեմն հեռուէ՛ ինձ , և ալ
առանձինն ու լքեալ չպիտի ըլլաս . քեզի նեցուկ ,
հայր , ամուսին պիտի ըլլամ , իմ Էլրտիպիս հա-
մար ամէն բան պիտի ըլլամ : Ամայի ժայռերու մէջ
տեղը լոկ հիւղ մը ունիմ , այլ քեզի հեռ հոն տեղ
բնութեան երջանիկը , կեանքի մենաշնորհը վայե-
լողը պիտի ըլլամ : Քեզի նուիրելու սիրա մը միայն
ունիմ , այլ սէրը զ՛ա՛ն է հոն :

Աղաւնիդ անակզ , ո՛հ , եկո՛ւր իմ բնակարանս
սրբազործելու , եկո՛ւր երկնային հասումի մը պէս
վիհը Եզիսեան դաշտերու փոխելու : Այն ուղե-
ւոր թռչունին նման որ հաստատ բնակութիւն և
հայրենիք չունի և իւր սիրտն ամուսինէն միայն
կ'ախորժի , ես ալ իմ մենութեանս մէջ ուրիշ գանձ
մը չպիտի ունենամ , բայց միայն քու սէրդ , ու-
րիշ յիշատակ չպիտի կրեմ , բայց միայն քու զոհո-
ղութիւնդ , ուրիշ հրապոյր չպիտի վայելեմ , բայց
միայն քու ներկայութիւնդ :

«Մեր լեռներու մէջ առանձին , մարդկային կա-
րողութենէ հեռի , սիրոյ և հեշտութեան ամպով
մը պատած՝ թաղուն , այլ բազդաւոր կեանք մը
պիտի վարենք . մեր անձանօթ բարօրութիւնը նա-
խանձ չպիտի շարժէ : Աւա՛ղ , մեծութիւնները
ճանչցայ և զանոնք ատելը սորվեցայ . հարստու-
թիւն վայելեցի և թող ատի զանոնք . փառքէն
սիրուեցայ , և անիծեցի զայն : Ո՛վ կոչող անարատ ,
մեր թշուառութեան ձորակին մէջ սիրելը է՛ն վը-

սեմ՝ վայելքն է : Մէրը , որ երկրի վրայ սրտի պը-
տակն է , ըստ իս երկնային երանութեան մէկ ճա-
ռագայթը , հանդերձեալ կեանքի հեշտութեանց
մէկ տեսիլն է միայն : Դժոխիս , պատասխանէ ,
կ'ուզե՞ս ճակատագիրդ անոր ձեռքը յանձնել :

Այս բաերու տան լեռին որսորդը՝ թշուառ որ-
բին ձեռքէն բռնելով անտառակէն գուրս կը քա-
շէր , կը տանէր զինքը : Օրիորդը սրտայոյզ և մա-
լար՝ աչերը դէպ ՚ի երկինք կը դարձնէ , զողցես
խորհուրդ կը հարցնէ և տկար կերպով մը միայն
կ'ընդդիմանայ : Մական լուսինը՝ հորիզոնին ներքեւ
անտես կ'ըլլայ . խաւարը բնութիւնը կը ծածկէ և
հովերու երկար մունչիւնը հեռուն անտառին մէջ
կը թնդայ այնպիսի գթալի ձայնի մը պէս , որ ան-
մեղութեան օգնութիւն կը գոչէ :

— «Կեցիր , կ'ըսէ յանկարծ օրիորդը , Սասու-
ձոյ սիրոյն , կեցիր : Ինձի ո՞ւր կը տանի՞ս :»

— «Դէպ ՚ի վայրենի լեռը , դէպ ՚ի սէր , դէպ ՚ի
երանութիւն , կը գոչէ Մենակեացը սրտապունդ :»

Եւ աւելի շուտ կը քաշէ :

Որքը սիրտ կ'առնէ :

— «Ո՛չ , կը յարէ արիարար , էրիկի մը միայն
կրնամ հետեւիլ , սուրբ սեղանին առջեւ պաշտօնը
կատարուելէն ետքը միայն կրնաս իշխել իմ վրաս :»

— «Անապատին մէջ սուրբ սեղանիայ , կը գոչէ
դարձեալ Մենակեացը դրեթէ զայրագին . Սաս-
ուած ամեն տեղ մարդուս երգումը կ'ընդունի : Ա-
պատանէ՛ ինձ , քնքուշ ծաղիկ հովիտին , կ'երգ-
նում որ քու կուսական փայլը չսլիտի արատեմ :

Երկինից պաշտօնեաց մը մեր ճակատագիրը պիտի միացնէ : Եկո՛ւր, քու ամուսինդ քեզ արժանի պիտի ըլլայ, իսկ քու առագաստի անկողինդ անբիծ : Էլ լրտիա, հաճէ՛ ինձի հետ դալու : Քեզի համար ունեցած սէրս, իմ գարնան առաջնորդները, իմ կեանքի առաջին զգացումները, պատիւը, հաւատարմութիւնը, եռանդը և առաքինութիւնը շնորհեց ինձ : »

— «Ո՛չ, կը կրկնէ Էլրտիա աղերսելով. ո՛չ չեմ կրնար քեզ հետեւիլ ո՛չ չեմ կրնար, թո՛ղ զիս : »

Մենակեացը անմեղութեան այս եզկերի ձայնը ըսելուն կանգ կ'առնէ : Իր եռանդը սրընթաց փայլակի մը պէս անցաւ . հեշտալիր տեսիլները օդային մշուշի մը պէս կը ցնդին : Յնորքներու կը յաջորդեն մահարեր յիշատակներ : Աստուածային երազէ մը ետքը ահա ելի զարթում մը կ'ուզայ : Մենրկարելի մարդը խը ձեռքին մէջ սեղմած ձեռքը կը թողու և

— «Ս,յո՛, իրաւունք ունիս կ'ըսէ : Երե՛ ինձ, մասնդի կը զառանցէի . . . : Գո՛ւն, զի՞ս սիրել . ի՞նչպէս յուսալ կը ժտէի : Գո՛ւն, իմ ետեւէս գա գէպ ՚ի ամացի ապառաժ մը : Միթէ այսպիսի զոհողութեան մը արժանի՞ էի ես : Ո՛չ : Իմ անզգամ ցանկութիւնս երկինքը ու երկիրը թշնամանեց . . . : Գիտե՛մ իմ անձիս արժանի եղած պատիժը տալ . . . : Ազատ ես : »

Ինչպէս իր շեշտը փոխուեցաւ, սրտակէզ շեշտ մը, որուն նմանը կսկիծը, ցաւը, զղջումը, անյուստութիւնը իսկ չեն արձկած : Հէզ որբը ազատ է .

այլ անիկա դողցես շղթայակապ որսորդին քովը
կը կենայ անշարժ :

— «Մենաստան դարձի՛ր , յարեց անիկա տըխ-
րադին: Նոր բնակիչներ, նոր նեցուկ մը քու հօրդ
տեղը պիտի բռնեն : Իցի՛ւ թէ անոնց քով երջա-
նիկ ըլլայիր . . . : Իսկ ես վաղը հովիտէն ինքնին
պիտի աքսորուիմ: Մորա լիճէն անդին , Ունտեր-
լախէ հեռու , զատ լեռի մը վրայ, ուսկէ ձեր եկե-
ղեցւոյն բարձր տշտարակին ծայրը կ'երեւի , պիտի
երթամ դերեղմանս փորելու : Մնջաւոր նշյլ մը
խաւարին մէջէն անցնելով՝ մութը կը շատցնէ :
Մահը, իմ մինակ յոյս, շատ չ'անցնիր իմ տանջանք-
ներուս վերջ պիտի տայ . . . : Մնաս բարեաւ : Ե-
թէ իմ վերջին ժամս հնչելէն առաջ դժբաղդու-
թիւն մը քու կենանքիդ համար սպառնայ , եթէ
Մենակեացին ներկայութիւնը քեզի վտանգէ ազա-
տելու համար հարկ ըլլայ՝ Մենաստանին բարձր
աշտարակին վրայ դիշերը լսպտեր մը վառէ՛ և իս-
կոյն քու առջևդ կ'երեւիմ :

Յետոյ կայսին քովէն հեռանալով վանքին պար-
տէզներէն դուրս կը դատիկէ և անբեւախիտ ոտե-
րուն շուքին մէջ կ'անհետի : Տարաբաղդ լլուտիս,
այդ իրիկունը քու յիշատակէդ չպիտի ելլէ բնաւ :

Գ Լ Ո Ի Խ Է .

Քոնրատ, որ երկար ատենէ ՚ի վեր մեկնած էր,
տակաւին Մնսելմի երիցատունը չ'էր վերադարձած.
Ունտերլախի քահանայն սոյն յապաղումին պատ-
ճառը ինչի՛ տայ չի դիտեր: Քոնրատ հազիւ տանը-

հինգ տարեկան կար . արդեօք աղետալի պատահար մը եկած է իր գլխուն . . . : Ինքը երիտասարդ առանց առաջնորդի լեռներու մէջ մոլորած է արդեօք , իւր կեանքը վտանքի մէջ է , արդեօք . . . :

Գուցէ երկար ուղեւորութեան մը յոգնութեանցը չէ կրցած հանդուրժել : Անսել՝ վայրկեանները կը հաշուէ անհամբեր : Քոնրատ սիրատուն քրոջ մը զսուկն է : Քոնրատ իւր աշակերտն է . անոր համար մեծ դորով մը կը տածէ 'ի ներքուստ , վանորոյ դինքը պատգամաւոր կարգելուն կը զղջայ , իսկ անոր վէրադարձին յոյս չունի :

Աստեղազարդ կամարին վրայ թուխ քող մը կը ծածկուի : Գիշերուան երկուսասաններորդ ժամը կը հնչէր : Ալեզարդ քարոյիչը Մենաստանին դուռին մէկ բուռն հարուածի մը ձայնէն կ'արթննայ : Անշուշտ իւր հողեզաւակը պէտք է ըլլայ : Կ'ելլէ , ճրագը կը վառէ և կը վազէ հողճեղ իր հիւրասէր բնակարանը բանալու :

Անձանօթ մը կը ներկայանայ . իւր հասակը բարձր է : Իւր ձեռքը արիւնաթաթաւ և ահագին բիր մը կայ . իւր զգեստներուն ամէն կողմէն ջուր կը վազէ : Անշունջ էակ մը կը կրէ : Չախազանց յոգնած ըլլալով դժուարաւ կը շնչէ : Յառաջ կուգայ , և Ռենաերլախի քահանայն իւր ճրագին ազօտ ըյստովը անոր թեւերուն մէջ իւր սիրելի Քոնրատին անպզայ , նիհար , սլաղ և արիւնլուայ մարմինը կը ճանչէ :

Անսերձ սոսկումով ետ ետ կը քաշուի . — բանէ մը մի' վախեր , կ'ըսէ օտարականը , այս արիւնը

խնս է. ես թափեցի որպէս զի Քանրատը ազատեմ: »

— Մեռած է, կը դռչէ ծերը ցաւագին:

— Նուազած է միայն, շուտ օգնութեան հասէք:

Մեծ կրակ մը կը վառուի: Անձանօթը իւր բեռը վառարանին առջև դանուող անկողնին վրայ կը դնէ: Երիտասարդ Քանրատի հազուսաները ջուրի մէջ թաթխուած են. իր անդամները սառած են. դամքան դգան կ'սթափի:

— Ձինքը փրկեցիր, կ'ըսէ Անսերմ, երախտագէտ շէշտով մը, բայց ո՞ւրտեղ:

— Նեղեղատեն եզերքը:

— Ի՞նչ վտանգէ,

— Մարդասպաններու երկաթէն:

— Է՛հ, ի՛նչ, դուն մինակ,

— Երկնից օգնութեամբը:

— Սրխափրա օտարակա՞ն, ո՞վ ես ուրեմն:

— Վայրենի լեռին մարդը:

Անշարժ քահանայն ձայն չի հաներ:

Յետոյ յանկարծ լռութիւնը ընդհատելով.

— Ո՞վ որ ըլլաս, կը յարէ, քեզի երախտագէտ ըլլալու սլարտաւոր եմ: Այսպիսի վեհ անձնու իրութիւն մը . . . :

Մենակեացը անոր խօսքը կ'ընդմիջէ: Իւր դէմքին վրայ տեսակ մը վայրենի արհամարհանք կը նըշմարուի. իւր ձայնը սոսկալի է, խակ ժըպիտը դառն:

— Երախտագիտութիւնը, կը կրկնէ, միթէ մարդկանց մէջ դեռ կայ՞:

Անսերմ կը զարմանայ և գորովալի ակնարկ մը կը ձգէ իւր վրայ:

— Զարմանալի՛ մահկանացու , կ'ըսէ անդէն ,
[Թշնամութիւնը անշուշտ իւր նեաերը ամբողջ քեզի
դէմ քաշեց , բայց չէ՞ մի , որ քու հոգիիդ պէս
մեծ հոգի մը բաղդը կը դերազանցէ : Երկնային
արդարութիւնն . . . :

— Երկնային արդարութիւնը՛ . . . կը դռնէ Մե-
նակեացը մոլեղին :

— Կեցի՛ր , կ'ընդմիջէ ծերունին արխարար , կե-
ցի՛ր , վասնզի քիչ մնաց որ պիտի հայհոյէիր :

Ահարկու մարդը երկնից պաշտօնէին ձայնին
չկրցաւ հանդուրժել . իւր անզուսպ հոգին հուսկ
ուրեմն առաքինութեանց և բարեպաշտութեան
ծագումին առջև կը խոնարհի . կը լռէ և իր
նայուածքին մոլեղնութիւնը կը հանդարտի :

— Զաւա՛կս , կը շարունակէ քահանայն գորո-
վալի շեշտով մը , և իրեն մօտեւում , վերաւոր ետ :

— Վիրաւոր . . . , կը պատասխանէ Մենակե-
ացը , դրեթէ շուար ու մոլար . վիրաւոր , ի՞նչ հոգ :

— Թո՛ղ դիս որ քու վէրքդ դարմանեմ :

Իմ վէրքս անբուժելի է :

Եւ վայրենի լեռին մարդը ձեռքը իր սրտին
վրայ դրաւ :

Հեռանալու համար քանի մը քայլ առաւ : Ան-
տերմ արգիլից զինքը : — Աղնիւ փրկիչ Քոնրատի ,
տակաւին ասկէ մի՛ մեկնիր , այն վայրը քեզ օթե-
ւան թող ըլլայ , հանդիստ ընելու պէտք ունիս :

Այսպէս կ'աղաչէր ծերունին :

— Ո՛չ , կը պատասխանէ Մենակեացը , ապա-
ստին անձաներ ինձ օթեւան ըլլա՛ն , թո՛ղ ու ես

դերեզմանին քարերուն տակ միայն հանդիստ պիտի ընեմ :

— Հոգի՛դ մողար , կը դոչէ քահանայն , իմ սիրտանքս . . . :

— Մի՛թէ ես խնդրեցի՞ք քեզմէ , կը դոչէ անողոք մահկանացուն : Ո՛չ Աստուծմէ սիրտանք կ'սպասեմ և ո՛չ մարդերէն : Քոնրատի քով դարձի՛ր : Քու զտկիդ խնամք տար :

— Այո՛ , իմ զաւակս դժբաղդ է , կը պատասխանէ քարոզիչը , բայց դ՛ու , ո՛վ մարդկութենէ վեր և վար մարդ , դեռ ի՞նչ կերպով խօսելու պիտի ժախ :

Այս խօսքը լսելուն՝ լեռին որսորդը կ'ուշաբերի գլխովին և .

— Անտե՛րմ , կ'ըսէ հանդարտ ոգւով մը , իմ վրայ ունեցած դազափարդ շատունց ՚ի վեր կը ճանչեմ : Աւետարանի առաքեալ , դատուութեանցդ մէջ քիչ ի իստ , աւելի ողորմած եղի՛ր , ամեն արտաքին երեւոյթ խարէական է : Գաղանիքի գիշերը ամեն ատեն ոճիրի գիշեր չէ , և դիցուք թէ ինչպէս դժբաղդ եմ , այնպէս մեղապարտ մը ըլլամ , այլ խորհէ՛ անգամ մը թէ մարդկային ազգին փրկչին յետին բառերը ներողութեան խօսքեր էին : Ողորմածութեան Աստուծոյ պաշտօնեայ , մարդկանց մէջ քու պաշտօնդ չէ՛թէ դատապարտել , այլ մեղքէրէն արձկել է :

Մենակեացը արդէն հեռացաւ :

Ռսկեփայլ և շիկադոյն արմպի մը վրայ արշալոյսը իւր լուսեղէն պալատէն դուրս կը ցատկեր փայ-

լուն՝ և իւր առջեւէն գիշերը կը վանէր : Մարտը
լին Մենաստանն է : վերջապէս զինքը որդին քով
կը տանին :

— Քոնրատ ետ դարձաւ , կ'ըսէ անոր , գող-
ցես մթին և տխուր ասիերէն կ'ուզայ :

Ունտերլախի կոյսը զարմանքով կը դիտէ զին-
քը : Մարտըին կը յարէ :

— Քոնրատ՝ Էնպերկ կոմսուհին տեսած էր : Ա-
նոր պատասխանը և Աանսելմի դրկած քանի մը ըն-
ծայները առնելով երիցատունը կը դառնար , սա-
կայն ճամբան անխոհեմը մեծազին պարզեւնները
չկրցաւ լաւ պահել , և այս գիշեր մարդասպաններ
հեղեղատին մօտ իրեն կ'սպասէին :

Անսելմի քեռորդին իւր շուրջը սպառազէն ա-
ւազակներ տեսնելուն՝ կ'սկսի գոշել մեծաձայն :
Նոյն պահուն Տեսան մերոյ ձախակողմեան գիւ-
ցազնը կ'երեւի : Առանձին , ձեռքը ահարկու բիր
մը , կը տապալէ : գետին կը նետէ և գլխաւորին
հետ արբանեակներն ալ կ'սպաննէ : Աանոնցմէ մէ-
կը միայն կը սրծի , թշուառականը խուսելու ա-
տեն վրէժ կը լուծէ . Քոնրատը հեղեղատին մէջ
կը նետէ :

Մենակեացը դիակներէ շրջապատած ու վիրա-
ւոր՝ իրեն հետ մըցելու թշնամի չի գտներ , այլ կը
նշմարէ որ Աանսելմի աչակերտը անհետ եղած էր :
Թշուառին զդեասները հեղեղին ջուրերուն վրայ
կը ծփան , յաղթողը անդունդին մէջ կը նետուի
ու երկրորդ անգամ Քոնրատը կ'ազատի :

Յողնած , արխնլուայ՝ իւր տառապանաց տա-

Չեւ կ'ընկրկի՞, ս'չ : Քանի որ շունչ կայ իւր վրայ կեանքը գժրացղներու նուիրած է : Վայրենի լեռին աստուածային ոգին մէկ ժամ երիտասարդ Քանրասի խոնաւ և սառ մարմինը կը տանի , անձամբ կը բերէ գիւղակին երիցարանը կը յանձնէ և հայր Անսերմ' իւր որդեգիրը վերստին ձեռք կը ձգէ :

— Միթէ Մենակեացը վերաւոր է , կը հարցնէ որրը մտայոյզ :

— Իւր վերքը թեթեւ պէտք է ըլլայ :

— Անսերմի քո՞վն է հիմայ :

— Արծիւը ամպերու մէջ միայն կը բնակի :

Ունտերբախի քահանայն մենաստանը կ'ուզայ : Լչոտիա զինքը գիւմարելու կ'երթայ : Անսերմ' ձեռքը թուղթ մը բռնած է : — Ահա՛ , կ'ըսէ իւրեն , Էնպերկ կոմսուհին մէկ նամակը : Վազը պիտի գայ . . . :

— Արդէ՛ն :

— Պատրաստուէ՛ զինքը ընդունելու :

— Հա՛յր իմ' ի՞նչ , ասկէ մեկնի՞լ հարկ պիտի ըլլայ :

— Քու պաշտպանիդ նպատակը անյայտ է ինձ :

Միրասուն օրիորդ , միթէ մենք մեր ճակատու գըրին տէ՞րն ենք :

Որքը կոմսուհին գիրը կարդաց , որնոր իւր վիճակին վրայօք կը խորհի : Իւր զգացումները գորովալի են . վանքին մէջ իւր գալուստը խմայ կ'ուտայ , և իւր գիտաւորութիւնը ազնիւ և բարեւսիրտ կ'երեւի :

— Քանրասի վրայօք բնաւ չե՞ս խօսիր , կ'ըսէ Լչոտիա , պահ մը լուռ կենալէն ետքը :

— Իս՛ք եւ սրդիս վտանդէ ազատ է :

— Իւր գլուխը եկած աղէտալի պատահարը մանրամասն չպատմե՞ց ձեզ :

— Անշուշտ . այն կորովի զօրականին արիւժիւնը , որուն իր կեանքը պարտաւոր է , իւր միտքէն չ'ելլեր բնաւ : Իր եռանդը երախտադիտութեանը հետ հաւասար է :

— Զինքը տեսա՞ր , կ'ըսէ որքը սրտայայտ :

— Զո՞վ . . . , Մենակեացը , կը պատասխանէ Անսեր՛՛ , պահ մը միայն ինձ երեւցաւ :

— Իրեն խօսեցա՞ր :

— Իւր դիւցադնական վարքին համար երախտիքս յայտնելու պատրաստուած ստե՛ն՛ շուտ մը անհետ եղաւ : Բայց ՚ի զուր առջեւէս փախաւ . Գո՛նրատի վեհանձն փրկիչը յիշատակիս մէջ ներկայ պիտի ըլլայ յաւէտ :

— Սակայն Գո՛նրատի վեհանձն փրկիչը ատելութեան կասկածներու և մատնութեան ծրագիրներու ենթակայ է :

— Ո՞վ աղջիկս , հաւատա՛ ինձ , այս զարմանալի մարդուն նկատմամբ լուռ կենանք միշտ : Աստուած միայն զինքը կրնայ ճանչել , Աստուած միայն զինքը կրնայ դատել :

Անսեր՛՛ խօսակցութիւնը փոխելով կը յորդորէր էլրտխան որ էրթալի աղնիւ աղգականը վայել կերպով ընդունելու պատրաստուի : Ինպէ՛րկ կամուհին իր հարստութեամբը և աստիճանովը կեանքի վայելքներու սովորած ըլլալով մենաստանին մէջ լիկ զրկումներ պիտի դտնէ : Կթական

ապարանին սրահներուն մէջ բնաւ զարդ չկայ : Սակայն Սէն-Մորի դուստրը կը բաղձայ որ իր մանկութեան բնակարանը տեսակ մը հրապոյր ազդէ իւր պաշտպանին , որպէսզի գեղեցիկ եղանակը հոն անցնելու հաճի : Վանքին ներքին մասերը զարդարելու մտօք կը նկրտէր անդու , հին կարասիին տեղ նորեր կը դնէ : Մենաստանին սրահներուն մէջ ծաղիկներով լեցուն կողովներ անուշ հոտ կը բուրեն : Այնուհետեւ որքը կ'սկսի սպասել և յուսար :

Կառքերու և ձիերու խառն ՚ի խուռն ազմուկ մը կը լսուի : Էրսթայի քեռորդիին իրբեւ մայր ծառայելու եկող տիկինը , Ռենտերլախի գիւղակը կը հասնի , զինակիրներ և ազնուական սպասաւորներն ունի իր հետը : Իւր առջեւէն ասպետներ կ'երթան ետեւէն ունենալով նաեւ քաղմաթիւ ուղեկիցներ :

Էլլախա մենաստանին մեծ սանդուղէն վար կ'իջնէ իսկոյն և գաւիթին մէջ Էնպէրկ կամուհին կ'ընդունի , որուն քով կը գանուի բարձրաստիճան գլխաւոր մը :

Էրսթայի քոյրը Սէն-Մորի դուստրը կը գրկէ և հիացումով մը գրաւուած իրեն կը նայի ակնդէտ : Իւր գեղը , համեստութիւնը , շեշտը , շնորհալի կերպերը , ամէն բան մեծ հրապոյր մը ազդեցին ազնուական տիկնոջ :

— Էլլախա , կ'ըսէ անոր իրին հետ եկող զօրականը ցոյց տալով , իմ էն մեծ մտերիմս , Ալլմանեայի էն փայլուն ընտանիքներէն մէկուն գլխաւորը , Հիւսիսի հզօր միասկաներու դաշնակիցը , նոյնինքն Բալդօ իշխանը հաճեցաւ այս լեռներու

ստացումս ծնեքը մի առ մի թուելէն, անոր դիպագնահան դործերը մանրամասն պատմելէն, անոր առաքինութիւնները և բարեգործութիւնը գովելէն ետքը, իւր դիտաւորութիւնը կը յայտնէ : Սոյն ամուսնութենէն յառաջ գալիք օղուաները կը ճառէր, իշխանին հրատապ սէրը կը նկարագրէր եռանդագին, և կ'ըսէր թէ այս դործին ջանագիր կ'ըլլար, որպէս զի էլլտիա երջանիկ ըլլայ ազագային :

— Սիրասուն զաւակ, վրայ բերաւ խօսքը յրացրնելու ատեն. սուրբ սեղանին անջեւ Բայլօ իշխանին հետ միացիր, և քու էութեանդ շուրջը սէր, սրատիւ, հարատութիւն և վառք պիտի տեսնես : Ենչպէս կ'օրհնեմ երկինքը զիս այստեղ զրկելուն, վասն զի լքեալ որի մը երջանկութեան շարժառիթը պիտի ըլլամ : Քու հարատութեամբ Ռնտերը լախի ամէն անակներուն մէջ առատութիւն և բերկրութիւն պիտի բերես, քու աստիճանովդ կորոյճնտանեացդ նեցուկը և վառքը պիտի ըլլաս, քու առաքինութեամբդ և գեղովդ կարող լորենի արքունեաց զարդը պիտի ըլլաս, ուրտեղ մեր նախնեաց պարզասէր բարքը պիտի ներշնչես : Ո՛հ, սիրելիդ իմ էլլտիա՛, ով գիտէ եթէ Աստուած գրեզ սրաչտող դիպագունին աւելի մեծ պաշտօն մը յանձնելով քեզի համար ալ թագ մը չի պատրաստեր :

Հէգ որբը սոյն վարպետ խօսքերով չքայքայիլ բնաւ, այս նկարագրութիւնը իրեն համար հրապոյր մը չ'ունի և իւր աչերը պարզեւնեցով չեն չըլանար : Անիկա, որ գեղանի և վեհանձն էքպէրի անկեղծ սիրոյն հանդարժելու արխութիւնը ունէր,

հիմայ փառասէր մարդու մը տխտղոսներու և հա-
րրատութեանց թիւով միթէ կրնա՞ր գրաւուիլ :
Մէն-Մորի դուստրը հանդարտ՝ առանց պաղու-
թեան հաստատ՝ առանց յանդգնութեան, կը պա-
տասխանէ :

— Տիկի՛ն , երկնից ինձի համար պատրաստած
ճակատադիրը անյայտ է ինձ , սակայն արքայական
թագի չեմ՝ բաղձար բնաւ . փայլը ինձի համար եր-
ջանկութիւնն չէ : Մթութեան և առանձնութեան
մէջ մեծցած ըլլալով՝ երկրային շքեղութիւնները
և մեծութիւնը չեմ՝ ուզեր վայելել : Վանքերու
քողը աւելի կը յարմարի իմ՝ ճակտիս , քան թէ
արքայական պսակը : Հերվետիոյ լեռներէն չպի-
տի հեռանամ , մօրս յետին կամքը ինձի համար
օրէնք մըն է :

Ուրեմն ինձ առաջարկուած այս փառաւոր հար-
սանիքը մերժելուս համար հաճեցէ՛ք ներել : Բալղօ
իշխանը իշտօխայէն , երախտադխտութեան միակ
զգացումը միայն կրնայ սպասել :

Յետոյ ոտք ելլելով կը հեռանայ : Լնպէրկ կոմ-
սուհին գրեթէ շուար ու մորար , վայրապար զինքը
կեցնելու կը նկրտէր : Բալղոյի բարեկամուհւոյն
ըրած հաստատ սրոշումը անհնար էր փոխել , սա-
կայն իւր զայրոյթը ծածկելու արհեստը գիտէր ,
ուստի այն արի հողին աւելի վառելէ կ'զգուշանար :
Կոմսուհին աւելի ապստամբ միտքեր զսպած է :
Ոյժէն առաջ քաղցրութեան փորձը պէտք է : Տօ-
նախմբութիւն , պատիւ , հաճոյք , սիրահմայ ձե-
ւեր ամէն կողմէն որբին սիրտը կը պաշարեն :

Ափսո՛ս , նենդու թիւնը հազար տեսակ զէնք ունի ,
իսկ անմեղու թիւնը իրմէ զատ բան մը չունի :

Ճաշի զանգակը կը հնչէ , Էլլտիա կոմսուհւոյն
քով կ'երթայ և անոր զայրոյթին և սրտմտութեանը
կ'սպասէ անհամբեր : Ո՛վ զարմանք , տիկինը սի-
րուն ժպտաւով մը զինքը կ'ընդունի , յանդիմանու-
թիւն մը , տրտունջ մը չ'եղլեր իւր բերնէն : Բան մը
միայն իւր հանգիստը կը վրդովէ , այն է իւր երի-
տասարդ բարեկամուհին տրտմութեան մէջ ընկրղ-
մած տեսնելը : Աղջկան մը ազագային վրայ խոր-
հող մօր մը պէս կը խօսի : Բայրօ իշխանը գորո-
վալի , այլ առաւել յարգական կերպով մենաստանի
կոյսին մօտելէ կը դադրի , և ճշմարիտ սիրոյ մասին
անտարբեր թշնամանիչ վստահութիւն մը կը տածէ
'ի ներքուստ : Իւր ակնածութիւնը գողտը է , իւր
նշմարը հաճոյ , իւր խօսքը զգոյշ : Եւ Ռենտերլախի
որբը ա՛լ անոր ներկայութենէն չի վախեր :

Գիշեր է : Սէն-Մորի գուստըը միայնակ ան-
հանգիստ և տրտում՝ պատուհանին քով կը նստի :
Իւր խորհուրդները գողցես հեռաւոր լեռերու ու-
տին վրայ կը թափառին և իր էութիւնը կարծես
թէ կը դեզերի հօն . Մորա լիճին ամայի ժայռերը
անասելի հրապոյր մը ունին իրեն համար : Ա՛հ ,
տիեզերքի կենդանութիւն տալու , բնութեան մու-
գական գեղը նկատելու համար , ի՞նչ պէտք է .
մարդու սրտին համապատասխանող սիրտ մը : Կա-
տարեալ առանձինը անզգայ մարդն է , իսկ ճըշ-
գըրիտ տարագիրը մոռցուածն է :

Ճամերը կը սահին , կ'անցնին , Էլլտիա յան-

կարծ մերձակայ սպառաժի մը վրայ բոցավառ կրակ մը կը տեսնէ : Պահ մը յողալէն յետոյ կը շիջի : Դիմացի լեռին վրայ համանման հուր կը նշմարուի և կ'անհետի . իրարու պատասխանող նշաններ են ասոնք : Գէտլ 'ի հեղեղատին կամուրջը տանող արահետին վրայ բազմաթիւ սպառազէն լեռնականներ կը տեսնէ, որոնք անտառներու մէջ կ'ուղղուին : Այս թաղուն բանակը ո՞ր կը կազմուի : Այս անկանոն ամբոխները ո՞ր հրամանատարին խորհուրդովը կը միանան . . . : Ահարեկ որբը այդուն կ'սպասէ . գլուխը պատուհանին վանդակին կոթնած՝ ձորակին վերի կողմը այն տարօրինակ շարժումները և գիշերային նշանները կը նկատէ անդադար : Զէնքեր և ձիերու շաջիւն մը իւր ականջին կը զարնէ : Նորանոր օտարականներ աղօթարանը կը հասնին : Միթէ իշխանին թղթատարներն են անոնք : Արդեօք գաւառին վտա՞նգ կ'սպառնան : Լյոտիա սենեակին դուռը կը բանայ մեղմիկ , թեթեւ քայլերով վանքին մեծ դաւիթէն կ'անցնի և հոն դանուած ասպարէզին վրայ դադտագողի ակնարկ մը կը ձգէ :

Բայլօ իշխանը սպառազէն՝ ձի կը հեծնէ : Իւր հագած զրահը մանիշակագոյն վերարկուով մը կը ծածկէ : Իր սեւ սաղաւարտին վրայի սպիտակ վետուրը կը հասնէ : Իր կուրծքին վրայ չքանչան չկայ : Դիմակը երեսը կը դնէ և աշնանային գիշերի մը պէս միթին՝ մենաստանին վանդակապատէն դուրս կ'երլէ հետը ունենալով քանի մը զօրականներ :

Բայլօյի այս տարօրինակ դործէն ինչ հետեւ .

ցընել հարկ է : Անշուշտ մեծ ձեռնարկ մը ընելու
միտք ունի : Մակայն թագուն դաւաճանութիւնը
եղեւն մը կը սեպուի : Գիշերային արշաւը , այն
կեղծիքը , այն նշանները , այն ժողովները , այն
թղթակցութիւնները , այս ամէնը տեսնելով յայտ-
նի է որ սոսկալի դարաններու լարուիլը կամ ան-
լուր մեքենայութեանց սկսելը կարելի էր մտկա-
բերել : Ունտերլախի վրայ փոթորիկ մը պիտի փըր-
թի , այլ ո՞ւր . որո՞ւն գլխուն վրայ անոր ասար-
կու զայրոյթը պիտի իջնէ , եթէ մենաստանը ա-
պրատամբութեան որջն է՝ կայծակը կրնայ պայ-
թիլ հոն և զայն այրել , տոշորել : Երկնային վրէժ-
խորնդութիւնը անտարակոյս նենդաւորները պի-
տի ջնջէ , բայց հովիտը կրնայ կռուիլ և կատա-
րածի ասպարէզ դառնալ , այն ատեն Ունտեր-
լախի քաղցը կոյսը ի՞նչ պիտի ըլլայ :

Իւր հոգին աղիողորմ խորհուրդներով կը զար-
հուրի : Էլլոտիա Անսելմի հետ չի կրնար տեսնուիլ ,
որուն արգիլուած է Մենաստանը մտնել , իսկ ինքը
դերիի մը պէս դուրս չի կրնար ելլել : Այս միջոցին
մինակ է և առաջնորդ կամ նեցուկ մը չունի բնաւ :
Ի՞նչ ընէ , ի՞նչ որոշէ : — Եթէ աշտարակին լատ-
տերը վառէի , կ'ըսէ որքը իւրովի , եթէ Մենա-
կեացը կանչէի . . . : Բայց անիկա ի՞նչ կրնայ ընել
. . . : Իշխանին պահապանները օտարականի չեն
ձգեր որ ներս մտնէ : Վայրենի լեռին մարդը արի
մարտիկ մը , յուսահատ սիրահար մը ըլլալով , կրնայ
ինքը մինակ Բաղդոյի ամէն ղիննուորներուն դէմ
մարտնչիլ զիս վրկելու համար . . . : Մակայն , ալի-

տո՛ս , եթէ անոնց թիւին շատութենէն յաղթուի՝
իւր մահուան պատճառը ես եղած պիտի ըլլամ :

Սոյն տրամալի խորհուրդով կանգ կ'առնէ իս-
կոյն : — Սպասենք դեռ , կ'ըսէ անդէն : Գուցէ
հիմայ ցնորական սոսկումներով պատած էի : Կոմ-
սուհին զիս իւր զաւկին պէս կը սիրէ , իշխանը ին-
ձի նկատմամբ բռնած ընթացքը փոխեց , այլ ին-
ձի համար վախ չկայ , ուստի Մենակեացին կեան-
քըն ալ վտանքի չենթարկենք : Այո , աշտարա-
կին լսպտերը երբ յետին ծայր յուսահատիմ այն
ատեն միայն պիտի վառեմ :

Երկար ատենէ 'ի վեր Էրսթալի քեռորդին
պարտէզը իջնելու չէր ժառեր , որպէս զի Բալդոյի
չհանդիպի : Արշալոյսը երկինքը կը լուսաւորէր :
Իշխանը հեռացած էր հովիտէն : Էլլտիա գէպ 'ի
դաշտային դրօսատունը կը սլանայ աներկիւղ , և հոն
անցելոյն յիշատակաց մէջ ներկային մուացումը
կ'որոնէր :

Պաաշգամէն Ունտերլախի մարդերը կ'երեւէր :
Մարտրլին հեռուէն Աէն-Մորի դուստրը կը տեսնէ ,
կը վազէ , կուգայ Էլլտիայի քով և կը գոչէ եռան-
դագին :

— Հուսկ յետոյ դքեղ վերստին տեսայ : Մեր
գիւղակներու մէջ քանի մը օրէ 'ի վեր ի՞նչ գէպքեր
տեղի ունեցան : Մենատտանը մեր Սիօնն էր առաջ ,
այլ հիմայ ոճիրը սրբավայրին մէջ կը գործուի ,
մե՛ղք տաճարին :

— Ո՛վ երկինք , այդ ի՞նչ ըսելէ . . . կ'ըսէ
օրիորդը ահաբեկ :

— Աղաւնի՛դ սպիտակ , որտորդ թռչունը քու վրայդ թեւերը տարածած կը հսկէ , իւր արիւնայի ճիրանները կը բանայ . . . Եթէ յարմար ատենն է , փախի՛ր :

— Բայց ո՞ւր . . . :

— Լեռին վրայ , ուրտեղ չկայ հիւշ մը քեզի ապահով ապաստան մը չըլլայ :

— Հոնտեղ զիս ո՞վ պիտի պաշտպանէ . . . :

— Երկինք , որն որ մեր միակ նեցուկն է : Մեր ձորակներուն աստղը ամպերու մէջ անհետացաւ . նաւաբեկ ճամբորդներու համար ա՛լ նաւահանգիստ չկայ :

— Ուրեմն Մենակեացը դաւառէն մեկնեցա՞ւ . . .

— Այո՛ , այն օրէն ՚ի վեր որ Բոնրատը ազատեց : Հոս մեծ դաւաճանութիւն մը կը պատրաստուի : Մնտառին անցանները ապստամբ ձայներով կը թընդան : Լրտեսելով ստուգեցի որ լեռնականները կը զինուին , Լորենի վրայ սպառնալիք կը տեղայ , Պրանսան ապստամբաց ուժիկ կուտայ : Բայլօ իշխանը մատնիչ մըն է , իսկ Ունտերլախի հոլիտը որջ մը . . . : Սակայն դուցէ մեր խօսքերուն միտ կը դնեն , . . . Ես կը մեկնիմ : Ո՛հ , չըլլայ թէ անդունդներու եզերքը նիրհես :

Գ Լ Ո Ւ Խ Ը .

Յերեկուան աստղը վսեմ հսկայի մը պէս հորիզոնին վրայ կ'երեւէր ամէն կողմ առաա լոյս սըփռելով : Ներդաշնակ նուագարաններ , սլատերազմի երգեր մենաստանին մէջ կը թնդային ,

Էլրտխա կանգ կ'առնէ և իր սենեակէն դուրս ակնարկ մը ձգելով կը մակարերէ խակոյն, որ մեծ հանդէս մը կը պատրաստեն: Պարտէզին մէջ տեղը յաղթութեան կամարներ կանգնած են: Մարդագետանին վրայ բարձր տեղ մը շինած են, ուսկէ դափնիէ և վարդեղէն պսակներ կախուած կը կենան: Հոս տեղ դեղանուէր տաճար մը, հոն տեղ սիրանուէր քարայր մը, քիչ մը անդին պարի սրահ մը կը նըշմարտին, ուրտեղ երաժշտական խումբ մը կորուտայ, վերջապէս ամէն տեղ Ռենտերլախի երիտասարդ կոյսին դոյները կը փայլին:

Որքը իւր պատուհանէն զարմացումով մը այս ամէնը կը նկատէ: Ի՛նչ սքանչելի շէնքեր, ի՛նչ մոգական զարդեր: Սպիտակ գրահներ հագած ձիաւորներու խումբ մը դէպ ՚ի Էլրտխայի բնակած աշտարակը կը յառաջանայ: Ասոր անունը զօրականներու կապոյտ վահաններուն վրայ ոսկեղօծ գիրերով դրօշմուած էր: Ասպետները հինօրեայ պատին տակ կանգ առած երգելու առեն՝ սենեակին դուռը կը բացուի և Էնպէրի կոմսուհին իւր բազուկները դէպ ՚ի որրին երկարելով:

— Եկո՛ւր, սիրո՛ւն աղջիկ, եկո՛ւր: Մենաստանը և հովիար քու ծննդեանդ տարեդարձին առթիւր Ռենտերլախի կոյսը կը աօնեն, եթէ այս օրը լեռնականներու համար երախտագիտութեան օրն է, ինձի համար ա՛լ աւելի պէտք է ըլլայ, այս երջանիկ օրը թէեւ իրենց բարերար մը տուաւ, այլ ինք դուստր մը շնորհեց:

Էլրտխա անոր սիրալիւր վարմունքը, կաթողին

չեզուն , մանաւանդ անոյշ ձայնը լսելով՝ անդամ մը եւս իւր պաշտպանը կը սեղմէ և պահ մը գտնէ քաղցր ցնորքով մը կը համոզուէր թէ իրօք մայր մը գտած էր :

Մենաստանին մեծ սրահին յատակը , աստեղազարդ ամպհովանիի մը ներքեւ բարձր տեղ մը կը գտնուի , որուն շուրջը յաղթութեան նշաններ պատած են : Որք աղջիկը կոմսուհիին ձեռքը բռնած հոն գտնուած տեսակ մը գահին տախճաններէն վեր կ'ելլէ և անշարժ ու զմայլուն՝ դողցես սիրոյ պատուանդանին վրայ կանգուն կալաթէյին տիպարը կը կրէ :

Բաղօ իշխանը ոսկեղէն և անդամանդեայ փայլուն դէնքերով զարդարուն , հետք ունենալով զօրականներ , ասպետներ և բազմաթիւ սպասաւորներ , իւր առջեւը կը ներկայի : Մննց դօսիները , դրօշակները և փետուրները , ամէնը կապոյտ են : Ամէն նիզակ , ամէն սուր , ամէն վահան էլրտիայի առջեւ կը խոնարհի : Նոյն ինքն Բաղօ մէկ ծունկով ծնրադիր՝ իւր թուրը անոր ստից ներքեւ կը դնէ և միւսները կ'երգեն .

« Բեզմէ հեռի շանթն գոռայ ,
Ո՛վ երկնային արշալոյս ,
Քու ճակատիդ վայլէ սրակ ,
Ինչպէս նաեւ սրտիդ սէր : »

Հովիւները , լեռնականները և Ունտերթախի աղջիկները սրահէն անդին կ'երեւին . ճերմակ զգեստներ հագած և կապոյտ ժապաւեններով զարդարուն՝ զիւրակին նուէրները կը բերեն իրենց

հետ , կուգան գահին աստիճանները իրենց ծաղ-
կազարդ և ստղալի կողովներով ծածկելու : Բերկ-
բուծիւնը իրենց կերպարանքին վրայ կը փայլի և
մենաստանի կոյսը զթալի արտօսը կը հեղու մինչ-
դեռ շինական խումբը պատերազմական նուազա-
րաններու ձայնովը կը կրկնէ .

Երկնային դո՛ւտը , գարնան ծաղիկ ,
Քեզի համար նոր օր փայլի ,
Ո՛հ , ըսէ՛ շուտ , դի այս հովիտ ,
Սիրոյ բառ մը միայն կ'ուզէ : »

Ի՛նչ զարմանք : Էլ լռալիա կոնքածեւ կառքի մը
մէջ գրուած գեղացիներէն գէսլ 'ի այն գալարա-
գեղ վայրը կը տարուի , ուրտեղ այն բարձր շէնքը
կար : Յաւերթահարսին ետեւէն կուգան ասպետ-
ները , և նուազարանները առջեւէն երթալով վե-
րբստին կ'որոտան :

Որբին աչերուն ի՛նչ տեսարան մը կը ներկայի . . . :
Առջեւը ընդարձակ կրկէս մը կայ , վանդակեայ
գուռը կը բացուի և նիզակ խաղաղողներու ուղ-
մասէր ձայնը կը լսուի , գիւցազանց փա՛ռք , իսկ
կանանց սէ՛ր :

Հովիտին թագուհին սկեզօծ պատշգամին վրայ
նստած՝ քաջերու մրցիլը կը նկատէ : Ի՛նչ ար-
հեստ և ի՛նչ արխութիւն : Իրենց երկաթները կրակ
ու բոց կը ցայտեն : Իրենց նշանաբանն է , Ո՛հ Լ Էստ :

Ասպետները ձի հեծած անոր առջեւ իրենց ճա-
կատը կը խոնարհեն և իրենց դրօշակովը կը բա-
րեւէին : Կոյսը յաղթողներու առջեւ կը ժպտի և
իւր սպխտակ ձեռքերովը ասպետներու գլուխէն

տաղուարտը հանելով՝ պսակ դրաւ ու քաջասրբ-
տուժեան մրցանակները ցրուեց : Այս պատերազ-
մական կռիւներէն հրապուրեալ այս առպետական
տօնէն զմայլուն՝ երբեք այսպէս գեղանի չէր եղած :
Եռանդը իր երեսը վառելով՝ նոր փայլ մը կը յա-
ւելու հոն : Իւր գեղը , իրեն եղած մեծարանքը ,
այն քաջութեան և փառաց աղաղակը , այն դեղե-
ցիկ երկինքը , այն զմայլելի անտառակները , այն
ներդաշնակ երգերը , բնութեան սքանչելեաց մէջ
այն արհեստի սքանչելիքը , վերջապէս ամէն բան
մեծ հրապոյր մը կ'ազդէ իրեն :

Անտառակներու մէջ պատրաստուած պատուա-
կան հանդէս մը այս տօնին դիւցազունները կ'ըս-
պանէ : Զէնքերու խաւքներ սիւներու պէս ոսկեղօծ
քօղ մը կը վերցնեն : Ատոնց կամարները ծաղկեայ
պսակներով զարդարուած են :

Որբին շուրջը հաճոյքի ամէն մոգութիւնները
կը գտնուին : Գիշերը վրանէն դուրս կ'ելլէ , հաց-
կերոյթը լմնցած էր : Մի՛թէ իր աչերուն պիտի հա-
ւատայ՝ օրուան յետին հառաքայթներուն դոյնըզ-
դոյն լոյսեր կը յաջորդեն : Անտառակները լուսաւոր
են : Մարդերուն տակ երվին երվին կրակներ կը
փայլին : Բոցավառ գունաթի մը պէս մենաստանն
ալ հրաչէն աստղերէն վեր կը բարձրանայ սիգալով :
Պարտէզներուն մէջէն անցնող հանդարտ ջուրը այս
լոյսերէն կրկին շողալով՝ դողցես մարդավայրին
վրայ ահանակիտ ալիքներ , արծաթեայ աւաղ , մար-
դարիտ և անդամանդ կը սփռէ : Արեւելքի ամէն
երազները , ամէն առասպելային սքանչելիքը , ա-

Մէն գիւթային հրաշքները էլլտիայի համար իրա-
կան կ'ըլլան :

Ամէն կողմէն կը պարեն , ամէն կողմէն բերկ-
րայի երգեր կը թնդան : Ամէն ծառ իւր շահապե-
տը , ամէն անտառ իւր շաստուածը ունի : Կոմսու-
հին պահ մը կը հեռանայ : Բալլօ իշխանը էլլտիայի
յոյրը և տագնապը նշմարելով յարմար առիթ կը
դատէ և անոր թեւէն բռնելով կը տանէ դէպ 'ի
այն մեկուսի անտառակը , ուր հարսանեաց տաճա-
րը կանգնած են . անոր ոտքը կ'իյնայ և կը գոչէ .
— Դո՛ւսար պաշտելի , այս տաճարը բա՛ց ինձի :

Լուսաւոր շէնքէն կարծես թէ վերտաին ներ-
դաշնակ և անմահական ձայներով կ'երգեն և ան-
դէն կը դադրին : Տաճարը կը բացուի , անկէ փայ-
լակներ կը ցայտէին այն մէտէորայներու պալատին
նման , որն որ Ֆինկայի աղջիկներուն խոստացուած
էր : Հոն տեղ Հիմենի սեղանը կապոյտ ամպերու
ներքեւէն կը ցոլայ , ոսկեղէն ամաններու մէջ անու-
շաբոյր խունկեր կ'այրեն : Ունտերլախի քաղցր կոյսը
այս ամէնը երազ կը կարծէ , թէեւ հրապուրուած ,
այլ անզգոյշ տաճարին աստիճաններուն ոտքը
կը հասնի և իշխանը յաղթելու վրայ է :

Աղջկան և զօրապետին անունները սեղանին վրայ
նկարուած են : էլլտիա ինչ տեսիլով մը կ'ուշաբերի :
Տաճարը ելլել իշխանին կամանց լուելեայն հա-
նու թիւն տալ ըսել է , սեղանին մօտիլը իւր հա-
ւատքը , իւր սիրտը խոստանալ է : Կանգ կ'առնէ :
Հրապոյրը կը ցնդի , ահռելի սարսուռ մը կ'զգայ
և տհարեկ հո ետ կը վազէ :

Բայցօ անոր վրայ կընեառի , կ'ուզէ անդրէն տաճարը դարձնել զանի . սիրոյ գողտը և սրտաշարժ ազերսը իւր շուրթերէն պիտի ելլէին երբ յանկարծ սպառագէն մարտիկ մը իրեն առջեւ կը ներկայի , կնքուած գիր մը կ'ուտայ , կը բարեւէ լռին և կ'անհետի :

Իշխանը այս անակնկալ երեւոյթէն զայրագին՝ գրաբերը կը բռնէ և կնիքը տեսնելուն կը գողայ , կը բանայ զայն արտորնօք , նամակը կը կարդայ և կը դեղնի : Սեն-Մորի դուստրը սոյն յարմար առթիւ կը խուսի և նոյն գիշերուան որոգայթներէն պրծելուն համար երջանիկ՝ կոմսուհւոյն քով կ'երթայ :

Ա՛հ , հիմայ աւելի կը զարմանայ : Պարտէզը իւր սքանչելիքը կորուսած է . պար , ներդաշնակութիւն , ողոքանք , ամէն բան իւր հրասպնդը կորուսած է արդ : Իշխանին խորհուրդները կը հասկընայ , անոր տօնին նպատակը կը ճանչէ : Չափազանց յոգնութենէ մը կը տրտնջայ : Այլ տեսարան մը իւր ուշք չի գրաւեր . իւր ձայնը տխուր է և տառապեալ : Ա՛յլ հաճոյքները արբշիւ չեն ըներ զինքը , որոնց վերջանալուն կ'սպասէ անհամբեր : Արդեն մեծարանքը իսկ իրեն անտանելի կը թուի :

Կոմսուհին հետեւեալ օրը որբ աղջիկը իւր քովը կը կանչէ պահ մը անոր հետ առանձին տեսնուելու մտօք : Էլրտիա սոյն տեսութեան նպատակը ինքնին կը գուշակէ , նորանոր հալածումներ կ'զգայ կանխաւ և իւր հոգւոյն ամէն կարողութիւնները ժողովելով՝ իրեն սպառնացող վտթորիկին դէմ արիարար մարտնչելու կը պատրաստուի :

Կոմսուհին սովորութեանը համեմատ իւր հոգե-
պաւակը տեսնելուն՝ բազում կները կը տարածէ ,
անոյշ ձայնով մը կը խօսի , իւր քովը կը նստեցնէ
զանի և այս խօսքը կ'ուղղէ անոր .

— Գու վրադ հսկելու հոգը նախախնամութե-
նէն ինձ արուած ըլլալով իմ պաշտօնս կատարելու
եկայ հոս : Սակայն պարտաւորութեանց տեղ ու-
րախտութիւն միայն տեսայ : Սիրելիդ իմ Էլրտիսի ,
երկինք ինձ զաւակ մը շտուաւ , այլ հիմայ սրտիս
յատակը կ'զգամ որ հուսկ յետոյ իմ բաղձանքս
կատարեց : Այո հիմայ դուստր մը ունիմ և կ'ուզեմ
դիտովին անոր մայրը ըլլալ : Մեծ է իմ հարստու-
թիւնս , գիտես , ուրեմն այս ամէնը քու կը պիտի
ըլլայ : իմ ստացուածներս քեզի համար սահման-
ուած են . իսկ եթէ իմ հոգեզաւակս ասոր փոխարէն
իւր սիրտը պարգեւէ ինձ , թանկագին նուէր մը
պիտի սեպեմ :

Վստահ Էլրտիս սոյն ճառէն սրտագրաւ այս-
պիտի ազնիւ և վեհանձն մէկու մը նկատմամբ ունե-
ցած թաղուն ատելութեանը համար կը յանդիմա-
նէր ինքրզինքը . հազիւ կ'սկսէր իր երախտադիտու-
թիւնը յայտնել երբ կոմսուհին յարեց :

— Դուստր սիրուն , իմ պարտաւորութիւնս հի-
մայ կ'ստիպէ զիս իմ ասպարէզս լրանալէն առաջ
քու էութիւնդ ապահովել և աշխարհի մէջ քեզի
համար աստիճան մը պատրաստել : Բալզո իշխանը
զքեզ կը պաշտէ : Ո՛չ անոր բարձր աստիճանին և
ո՛չ իսկ անբաւ հարստութեանցը վրայօք պիտի
խօսիմ . իմ Էլրտիսիս հոգին կեանքի շտրէն և

մեծութիւններէն աւելի բարձր և ազնիւ է : Ես չեմ
 թէ Բարդոյի կարողութիւնը կամ անոր փառայ
 փայլը քննեցի , այլ իւր հոգին : Իւր ազնիւ զգա
 ցումները , վառվառն սէրը նկատելով այս քնարու
 թիւնը բրի : Ո՛րք անոյշ , քու հրապոյրդ այնչափ
 սէր կ'ազդէ իրեն , որ ցնորքի կը վտխուի , իսկ
 քու առաքինութեանցդ համար իւր զարմացումը
 կուտոյաշտութեան : Ո՛ր թագակիրին այսչափ շքեղ
 հանգէսներ և կոչունքներ տուին : Ո՛ր գեղը ասկէ
 ուելի մեծարանք ընդունեց : Ա՛հ , անշուշտ զգայուն
 սիրտ մը իրաւունք կու տայ այն կորովի մարտիկին ,
 որն որ զքեզ դէպ ՚ի սեղանին առջեւ կը հրաւիրէ :
 Լորենի դիւցազուններուն է՛ն մեծը Զուխերի կոյ
 սերուն է՛ն գեղեցիկին արժանի է :

Կոմսուհին կրնար տակաւին իշխանին ըրած գո
 վեատը երկարել . Սեն-Մորի աղջիկը անոր դգուանք
 ներէն յափշտակուած , անոր բարեգործութեանց վե
 րահասու , այլ անոր բաղձանաց յարատելութեանը
 նկատմամբ յուսարեկ , չէր ուզեր անար խօսքը ընդ
 միջելու : Սակայն վախելով որ երկար լռութիւն մը
 կրնար լռին հաւանութիւն մը ըլլալ վերջապէս կ'ըսէ :

— Ո՛վ մայր իմ , քանի որ այս փառասը կ'ու
 տաս ինձ , ի՛նչպէս իմ գորովս ու երախտագիտու
 թիւնս յայտնեմ քեզ : Քու բարիքներդ իմ յոյս
 կը գերազանցեն , երբեք չպիտի մոռնամ , այլ ափ
 սո՛ս , նորէն մերժելու ինձ պիտի ներե՛ս . . . :
 Էրթալէ ժառանգած ստացուածներս ապրելու
 կը բաւեն , ասկէ աւելի չեմ ցանկար : Ինչպէրիկ
 կոմսուհւոյն հարստութիւնը եթէ ընդունիմ , ուրիշ

արժէք մը չ'ունի բայց միայն բարեկամութեան նուէրը , մօր մը պարգեւը : Իսկ Իշխանին գալով , հազիւ զինքը ճանչելու ատեն ունեցայ . իմ սիրտս իր սիրոյն համար թէ և անգգայ , այլ գէթ չի կրնար զինքը պատրել , և զիս բարձր վիճակի մը հասցնող այդ պիտի լծի մը անարժան կը սեպեմ :

— Էլ լռախա՛ , կ'ըսէ կոմսուհին սրամտութիւնը ծածկելով , քու զգացումներդ ստիպելու և կամքիդ գիմադրելու միտք չունիմ : Որոշած էի քու բաղձանքիդ համեմատ այս միութեան կապը քիչ մը ուշացնել սպասելով որ ժամանակը զքեզ լուսաւորէ և Իշխանին անվովովս և հաստատուն սէրը 'ի գութ շարժէ զքեզ , որչափ Բաղձն ճանչես այնչափ դորով պիտի ազդէ քու սրտիդ և նոյնինքն սէրը հարսանեաց հրաման պիտի տայ , այլ ամէն յապաղում կարելի չէ հիմայ . Իշխանը չի կրնար ասկէ աւելի մենաստանը մնալ , այլ ատենն է որ իր գաղտնեաց մէկ մասին վերահասու բլլաս : Բալզօ Ֆրանսայի արքային բարեկամ և հիւսիսային արքունեաց դաշնակից՝ Ռազմասէր բանակի մը գլուխը անցնելով հիմայ գէպ 'ի գահ հասնելու շաւիղ մը կը բանայ : Լուի ԺԱ. իրեն հետ և իրեն համար պիտի պատերազմի : Ինձ ներելի չէ ասկէ աւելի բացայայտ խօսիլ . . . : Միայն գիտցի՛ր որ կարեւոր գիր մը երէկ իրիկուն իւր ձեռքը հասնելով իմաց կուտար իրեն որ իր ձեռնարկը ծածկող քողը թշնամեաց կողմէն գամ քան զգամ կը վերցուի և թէ իւր անմահ յատակագիծը 'ի դորժ դնելու , իր պատրաստած ստակալի հարուծները տալու և այս ամենը

յաջողութեամբ 'ի գլուխ հանելու ատենը հասած է :
այսուհետեւ ամէն յապաղում մահաբեր կրնայ
ըլլալ : Թագը յաղթողը կ'սպասէ :

Ուրեմն իշխանը կորուսելու վայրկեան մը իսկ
չունի , հարկ է որ Հելվեթիայէն մեկնելով՝ սլանայ
դէպ 'ի հոն , ուր փառքը կ'սպասէ զինքը , սակայն
գիւցազնութեան հետ եռանդուն սիրահար մը
ըլլալով՝ քու լծակցութեանդ տխրոսովը միայն
կ'ուզէ յաղթութեան դաշտերուն մէջ նետուիլ :

Այս ըսաւ և իւր խօսքը իւր յուսացածին գլխու-
մին հակառակ տպաւորութիւն մը ըրաւ անոր :
Սէն-Մորի գուտորը պատասխանեց .

— Ըրած որոշումն հաստատ է : Օրինաւոր թագ-
մը իմ աչերս չի շլացնէր , նենդով յափշտակուած
դահ մը սոսկում կազդէ ինձ : Դաւաճանութեանց
խաւար շախիզ՝ փառաց ճամբան չի կրնար ըլլալ և
ապստամբութեան գլուխ մը երբէք իշխանի ամու-
սինը չպիտի ըլլայ :

Ինպէրիկ կոմսուհին թէեւ 'ի ներքուստ մոլեգին ,
այլ դուրսէն իւր զայրոյթը կը զսպէ : Միայն իւր
ձայնին մէջ խիստ շեշտ մը կայ :

— Տղու մը ըրած որոշումը ինձի համար խոչնդոտ
չեն ըսուիր : Քանի որ մօր մը համազական խօսքերը
բան մը չեն ազդեր քու սրտիդ , քանի որ բարիքի
կարողութիւնը կամ սիրոյ աղերսը քու որոշումդ
չեն կրնար փոխել , յանուն Էրսթայլի ոգւոյն ,
յանուն իմ անձնական արժանեացս , յանուն երկնից ,
որ քու խնամատարութիւնդ յանձնեց , այն ան-
վրբէպ և անքայքայ վճիռը կու տամ : Արշալոյսը

իրենք անգամ հորիզներ լուսաւորելէ առաջ իշխանը քու ամուսինդ պիտի բլայ :

Եւ Լնայերկ կոմսուհին որբին վրայ սրամտութեան նշմար ձգելով կը հեռանայ :

Տրուած հրամանները կը կատարուին : Էլտտիայի և Բալլոյի ամուսնութիւնը ամեն կողմ հռչակուած է : Թանկագին վարդոյրներ մատուռին պատերը կը ծածկեն : Սեղանը բազմաթիւ նուէրներով և ջահերով զարդարուած է : Փայլուն ամաններ, վառաւոր օթոցներ սոյն նուիրական վայրին շքեղութիւն մը կու տան : Հարսանեաց հանդէսին համար նորանոր պատրաստութիւն կը տեսնեն : Կոմսուհւոյն վճիռը չի փոխուիր, որբին ճակատագիրը որոշուած է և մահաբեր վայրկեանը կը մօտի :

Տարաբազդ ստրուկը բռնաւորներուն ձեռքը իյնալէն ՚ի վեր ժամերու անցնիլը ստակումով կը նկատէր : Ո՛հ, անյուտութիւնը հողւոյն մէջն է, փրկութեան միջոց մը միայն ունի, աշտարակին լապտերը վառել : Այն սքանչելին և հրաշագործ մարդէն ՚ի զատ ո՞վ կրնայ օգնել իրեն, Մենակեացէն ՚ի զատ ո՞վ կրնայ զինքը փրկել :

Գիշերը երկինքին երեսը սքողած էր : Լեռնականները շատունց իրենց աշխատութենէն դադրած էին : Ունտերլախի կոյսը թեթեւ քայլերով վանքին մեծ դաւիթէն կ'անցնի, և լապտեր ՚ի ձեռին դէպ ՚ի աշտարակին սանդուխը կ'ուղղուի : Արդէն աստիճաններէն վեր կ'ելլէր . . . անլուր աղմուկ մը իւր քայլը կ'արդելէ : Աշտարակէն քանի մը զօրականներ կ'իջնեն, որոնք ապստամբներու ըմբեր

դանուող բազմաթիւ լեռնականներու իրենց տիրոջ հրամանը կը հաղորդէին : Էլլոտիա անոնց պիտի հանդիպի : Սանդուխէն վար ցած դուռ մը կը տեսնէ, կը բանայ և դիմացի աշտարակին հետ հաղորդակցող նեղ և մթին սրահին մէջ կ'ապաստանի :

Ջորականները ցած ձայնով կը խօսին և շինական զգեստ հագած են :

— Այո՛, առտուն կանուխ, կ'ըսէ անոնցմէ մէկը, թող սոսկալէ տարհարը հաւքուին :

— Սոսկալէ տարհար՛ . կը կրկնէ լեռնական մը ահարեկ :

— Ձեր քաջերը, կ'ընդմիջէ զօրականը արհամարհանք մը ցոյց տալով, ձեր քաջերը կ'ըսեմ միթէ Արէնալէ «գէն» կը վախեն . . . : Եթէ այդպէս է, թո՛ղ մեր դասէն բաժնուին . ստուերէ մը վախցող զինուորներ չենք ուզեր բնաւ :

— Սակայն Արէնալէ «գէն» . . . :

— Բա՛ւ է : Իյխանը հաւքուելու տեղը որոշեց : կը հրամայէ . . . : Հնազանդեցէ՛ք :

Լեռնականը տակաւին կը մռմռայ . . . սակայն հեռուն ձայները կը կտրուին, որոնք ա՛լ Էլլոտիայի լեռի չեն ըլլար :

— Ուրեմն վոթորիկին ելլելը մօտ է, կ'ըսէ Սէն-Մորի դուստրը իւրովի : Ապաստամբներու այս նոր հաւաքումը ի՞նչ պիտի ըլլայ : Սակայն վաղը չէ մէկաշնոր է, որ Բալզօ զիս դէպ ՚ի սեղան տանիլ կը խորհի : Ա՛հ . անշուշտ զիս առաջին զոհ մը ընտրեց : Հարսանեաց ջահը պատերազմի ջահէն սուաջ պիտի վառուի : Սքաորանք. թո՛ղ լրագտերը փայլի :

Եղած տեղէն զգուշութեամբ գուրս կ'ելլէ , աշտարակին տանիքը կ'ելլէ և փորոսին մետ նոր Հերան առանձին՝ ուրիշ Լէանտը մը կը կանչէ : Արդէն լասպտերին լոյսը հեռուն գիշերներու խաւարը ճեղքելով կ'անցնի : Երկինքը պարզ և յստակ է , հովը հանդարտ , իսկ աստղերը կը վալփլին . միայն թեթեւ զեփիւռէն օրիորդին քօղը կը ծփար , որն սր պաշտպան փարոսին մետ ծնրադիր , աչերը Մորա լիճին լեռներուն վրայ սեւեռած՝ գլթալի ձայնով մը կը դռչէ .

— Մենակեաց , Էլնաիա դըբզ կը կանչէ :

Եւ վայրենի լեռին մարդուն սքանչելեացը սովորած ըլլալով՝ գիշերային սիւքը մտիկ կ'ընէ ուշագիր , որպէսզի պատասխան մը առնէ :

Ունաերլասի կոյսը հիանալի ստուերի մը պէս ցնորական , ակնկալութեան պէս յեղյեղուկ՝ այլ հիմայ այնպէս կը մնայ անշարժ , իւր բարակ քօղը իւր անձին երկնային ձեւ մը կու տան : Գիշերային աստղին պէս աշտարակին բարձր տեղը կերելի անձանօթ և լռին՝ կամ մանաւանդ սպիտակ և մերամաղձ , փարոսէն լուսաւոր այնպիսի թեթեւ շոգի մը կը թուի , ուսկէ երկնային ճառագայթ մը կը ցորայ :

Որքը պահ մը յետոյ տանիքէն վար ի՞նչ էր : Կ'ուզէր հանդչիլ , սակայն անքունութիւնը իւր հետը , բարձին վրայ տարածուած էր : Ոտք կ'ելլէ յոգնութենէ ճնշեալ . աղօթքը միայն կրնայ հազիւ իւր յուզեալ զգացմանց հրամայել . արշալոյսէն առաջ մատուռը կ'երթայ , հոն միշտ իւր տառապանքը ինչ որ ըլլայ , սփոփանքը սրտին կը հասնի :

Աղօթքը հոգւոյն վերքը բժշկող բաղասամովն է, երկիրը երկնից հետ միացնող նուիրական կապն է, աղօթքը դերբնական սահմաններու գուտոր և մարդուս ու արարչին մէջ տեղը անտեսանելի միջնորդն է:

Էլբտիայի աշտարակէն իջնալէն 'ի վեր վանքին ժամացոյցը հինգ անգամ հնչած էր: Սուրբ սեղանէն հեռանալով իւր քայլերը գէպ 'ի այս լռին քարայրը կ'ուղղէ, ուր կը հանդչի իւր մօրը ոսկրոտին ու փոշին: Գիշեր ու ցօրեկ ջահեր կը վառին հոն և իրենց տկար լոյսը այն մահաշուք շէնքը կը լուսաւորէ: Ունտերլախի կոյսը գերեզմաններու սափորին կաթնած միտքով գէպ 'ի Աստուածային սահմաններ կը սլանայ, ուսկէ անշուշտ նոյն պահուն իւր մայրը զինքը կը նկատէ, երբ յանկարծ թեթեւ ազմուկ մը իւր ուշք կը գրաւէ: Շիրմին յատակը ստորեկրեայ դուռ մը կը բացուի յանկարծ, որ անծանօթ էր սրբին, իւր աչերուն մէկը կերեւի, վայրենի լեռին մարդն էր այն:

Զանազան զէնքեր կը կրէ: Իւր վեհ ճակատը ծածկող պղնձեայ սաղաւարտին վրայ սեւ փետուրներ կը տատանին: Իւր ձեռքին մէջ թուր մը կը շողայ, իւր մարմինը զրահաւոր է, և Աքիլլեսի հոյակապ տասլանին վրայ Պիւրոսի պէս, Նինոսի շիրմին վրայ Արչակին պէս, այս արի և ահարկու ասպետը վրիժառու ոգիներու կողմէն զրկուած ըլլալ կը թուի:

Սէն-Մորի գուտորը զարմացումի և բերկրութեան ձայնով մը դռնեց. — Ո՛հ վերջապէս եկար: Ուրեմն իմ աղօթքս կատարուեցաւ:

Յետոյ մտայոյզ և ակնկոր՝ իւր այտերուն վրայ կարմրուք մը իջաւ:

— Էջրտիա զիս կը կանչէ , պատասխանեց Մե-
նակեացը , ի՞նչ հրաման պիտի տաք ինձ :

Իւր կայնուածքը ծանր և վեհ է , իւր շեշտը
աղիողորմ , իւր նշմարը տխրագին է , իսկ իւր
խօսքը գրեթէ սառ : Կոյսը դարմացումով զինքը
կը նկատէր : Ո՛հ վիշտը և տառապանքը իւր դէմքը
ինչպէս այլայլած էր : Մենակեացը լուռ և մունճ
դողցես կեանքը իբրեւ ծանր բեռ մը կը կրէ ,
զոր պիտի կրնայ թոթուել եթէ ուժգին և յուսա-
հատ որոշում մը չընէ : Իւր խօսքը կտրուկ է , իսկ
երեսը թափահար և զայրագին : Իւր գիմաց վրայ
կարծես թէ մոլորութիւնը դրոշմուած է , և սա-
կայն էջրտիայի քով դողար , կաթողին և խոնարհ
բան մը զինքը ծածկող սպառնայի պատեանէն
կը թափանձէ , կ'անցնի :

— Քեզ տալ՛ու ի՞նչ հրաման ունիմ , կը յարէ
Էջրտիա քաղցր շեշտով մը : Ուրեմն քեզի հրաման-
ներ տալու իրաւունքը ունի՛մ :

— Խօսէ՛ , կը պատասխանէ վայրենի լեռին
մարդը : Ինձ հրամայելու իրաւունք ունենաս կամ
ո՛չ , դարձեալ պատրաստ եմ քեզի հնազանդելու :
Իմ ամէն երգումներս դրժել տուիր : Քեզի համար
միայն այս զէնքերը ձեռք առի , զորոնք չկը-
րելու երգում բրած էի , քեզի համար այս թուրը
պատեանէն հանեցի , զոր մէկ քով նետած էի
ատերով և դարձեալ քեզի համար սրտիս տրոփելը
կ'զգամ , զոր որոշած էի անզգայ և սառ պա-
հել միշտ :

Մենակեացին ձայնը հետզհետէ իւր սաստկու-

Թիւնը կորուսած էր : — Պատասխանէ՛ ինձ , կը
յարէ , ինչո՞ւ դիս քովդ կանչեցիր :

— Այս մատուռը , կըսէ որբը , էլքախոյի և
Բալզոյի հարսանեաց համար պատրաստուած է և
դու դեռ կը հարցնես թէ ինչո՞ւ զքեզ կը կանչեմ :

Այս խօսքը եռանդուն առկեալին զայրոյթը կը
շարժէ , որն որ կ'սկսի անդէն իւր թուրը շողայնել՝
իւր գէմբը աղէտարեք ու սոսկալի լոյսովմը կը վայլի :

— Տակաւին արի՛ւն , կը դռէ : Ուրեմն այս
երկաթը բաւական չթափեց . . . : Օ՛ն , դիս Բալ-
զոյի քովը տար :

— Մեծդ Ատուած , կ'ըսէ կոյսը ահարեկ ,
ի՛նչ պիտի ընես , . . . ի՛նչ խօսք :

Եւ դողդոջուն , արտասուալի՛ անոր ձեռքը կը
սեղմէ : Անխմանալի մարդը կը դողդողայ . . . :
Մոյն մողական յոյզը և տազնապը իւր էութիւնը
կը վախէ : Չինքը արդիւող ձեռքը կը համբուրէ
սկամայ : Այն կրակը որ երակներուն մէջ կը վառի
զայրոյթէ յառաջ չի դար բնառ . անապատին ա-
ռիւծը իր վայրենութիւնը թողուց :

— Ներէ՛ , կ'ըսէ մեղմով , Յանուն Բալզոյի , յա-
նուն այն ժպիրհին , որ զքեզ տենջալու կը ժախ ,
զայրոյթի և սրտմտութեան շարժումմը իմ միտքս
վրդովեց : Ահդ ու երկխղզ , յոյզդ և տազնապդ
վարատէ՛ . նենգաւորը պիտի պատժուի , սակայն
ևս հարուած պիտի չաամ անոր . մատնտուն
պիտի կորսուի , այլ անոր ամենչանոց տեսարանը
քեզ չպիտի ներկայի :

Ազնիւ դերի՛ , կըյարէ , ըստաերին լոյսը նպատա

Հայցելէն առաջ քու բռնաւորներուդ ճանկէն
զքեղ աղատելու համար ամէն բան պատրաստած
էի արդէն : Ճակատադրիդ վրայ կը հսկէի : Քեզի
սպառնացող հարուածը նախատեսած էի . բաւըօ
քու էրիկդ չպիտի ըլլայ բնաւ :

— Եւ ո՞վ զինքը պիտի արդիլէ :

— Ո՞վ, ես :

— Դ՞ո՞ւն, ո՞հ կեանքդ վտանգի մ'ենթարկերու :

— Արիւն չպիտի հեղուն բնաւ, ու ես լեռէն
չպիտի հեռանամ երբէք :

— Ուրեմն ո՞վ պիտի դայ զիս փրկելու :

— Մենակեացին առաքեալները :

— Եւ կեանքդ վտանգի չենթարկել կ'երդ-
նո՞ւս, կը խօստանանս, ըսաւ էլլօտիա Չերմագին :

Իւր անոյշ ձայնը և մանաւանդ իւր սրտազրաւ
աղերսը զօրականին սիրտը յուզեցին, որն որ որբին
երեսը նայելու չթոելով յարեց արտորնօք :

— Այն ստորերկեայ ճամբան, ուսկէ անցնե-
լով մենաստանը եկայ, երկար ատենէ ՚ի վեր ծա-
նօթ էր ինձ : Վախելով որ մէկը զիս չտեսնէ կամ
ինձ չհանդիպի՝ սպառազէն ելայ դուրս, սակայն
դարձեալ առանց խոչնդոտի քովդ գալ կը յուսայի,
թագուն նախազգացումն էր այս : Քու տագնապդ
գիտէի, ուստի զայն փարատելու եկայ հոս : Կը
կրկնեմ, մի վախեր այնպիսի հարսնիքէ մը, որ
երբէք չպիտի կատարուի : Իմ խոստումներս ՚ի
դործ դրի . . . : Իզմէ օգնութիւն ուզեցիր, իմ
մնձնուիրութեանս վատահեցար, ուրեմն փրկու-
թիւն պիտի դանես :

Դէպ ՚ի նկուղին գուռը գառնալով մեկնելու
կը պատրաստուի :

— Ի՞նչ , կը մեկնի՞ս , բաւ աղջիկը :

Եւ Մենակեաց իրեն կը մտաի .

— Ատեն մը զիս մերժեցիր և հիմայ արդիւն՞ը
կ'ուզես . . . : Ո՛վ դու , որուն յիշատակը և տխրա-
րը ամէն տեղ կը կրեմ , ամպ և մրրիկ բերող բուռն
հոռին պէս երբեք իմ վրաս չը՞ պիտի գթաս :

Յետոյ յանկարծ իւր ոտքը կ'իյնայ և չի կրնար
ինքրզինքը բռնել :

— Ի՞նչ ըսի , գո՛ւն իմ վրաս գթաս . . . : Ո՛չ ,
իրաւունք ունիս , գթութեան արժանի չեմ ես ,
իմ հառաչներուս գոցէ՛ , քու ականջդ . տխմար
մ'եմ ես , այլ զքեզ կը պաշտեմ : ախոս՛ս , իմ նաւա-
բեկութիւնէս առաքինութիւն մը միայն , այսինքն
սէրս փրկեցի : Հրեշտակային գե՛ղ , ձեռքս սեղմե-
լու ատեն անոր բիծերը սրբեցիր . . . : Քու ներ-
կայութիւնդ գողցես իմ շնչած օդս կը մաքրէ ,
այլ քու նայումքդ միթէ կրնա՞յ զիս արդարա-
ցընել : վարտաբա՛ղտ , հեռի քեզմէ , կեանքի
գիրքէն սրբուածի պէս խաւարներու մէջ միայն
կը թափառիմ և լոկ ո՞նչութեան կը դիմեմ . . . ,
Էլտտիս , կու լա՞ս . . . : Ա՛հ , կը տեսնեմ . . . ,
իմ տառապանքս զքեզ ՚ի գութ կը շարժեն . . . :
Իմ անծանօթ ճակատագրովս կ'զրաղիս : Այլ
չպիտի կրնաս զիս մերժել : Ուրեմն գործդ ՚ի
գլուխ հանէ՛ , թո՛ղ քու սիրտդ զիս արդարացնէ
ու երկինք պիտի ներէ ինձ : Սիրէ՛ և պիտի
տղտտիմ :

— Պիտի ազատիս . . . պատասխանեց Էլրտիա կարեկից և նկուն :

— Ուրեմն , ընդ միջեց վայրենի լեռին մարդը և ունեցող , ուրեմն , երդում ըրէ՛ հոս որ յաւիտեան իմն պիտի ըլլաս :

— Այս գերեզմանին^օն վրայ . . . , ըսաւ որբը ևս ևս երթալով ահաբեկ :

— Ի՞նչ փոյթ , պատասխանեց Մենակեացը սաստկութեամբ , ինչպէս կեանքը նոյնպէս մահն ալ օրհնեալ է ու ևս գերեզմաններու մարդն եմ :

Ունտերլախի կոյսը մարտիկին անյաղթելի իշխանութեան կը հնազանդի . հարսանեաց սուրբ սեղանին առջեւ ըրածնուն պէս մխրոց սափորին վրայ ձեռքը կ'երկարէ և գերեզմանին կամարին տակ , դամբանական կանթեղներու ըյտովը , վեհ ձայնով մը այն երդումը կ'արտասանէ :

— Կ'երդնում որ յաւիտեան իրը պիտի ըլլամ :

— Ես ալ , կը գոչէ Մենակեացը , Էլրտիայէ զաս ուրիշ լծակից մը չպիտի ունենամ : Այո՛ , Էլրտիա կամ մահ , երկինք կամ դժոխք :

Նոյն պահուն մենաստանին մեծ զանգակը , մեռելոց զանգակին նման աղիողորմ ձայնով կը հնչէ : Էլրտիա ահաբեկ՝ երակներուն մէջ իր արեան կասիլը կ'զգայ : Պաղ քրտինք մը ճակատը կը թրջէ և դլուխը Մենակեացին ուսին կը յենու :

— Մեծդ Աստուած , կ'ըսէ հուսկ յետոյ գրեթէ շուար ու մուար , ի՞նչ է այս ստակալի ձայնը , ի՞նչ արտասանեց , միթէ՛ առաջաստի օրհնութի՛ւնն է այն :

Նորէն զանդ ակին երկար հնչիւնները կը լսուին :
Որքը կ'սթափի : Առաջին աղօթքին ժամն է և ամէն
առտու արշալոյսին ծաղած ասենը միեւնոյն ձայ-
ները հավիտին բնակիչները կ'արթնցնեն :

— Բաժնուինք , կ'ըսէ Էլուսիա :

Եւ Մենակեացին վրայ սիրոյ , արամութեան և
ցաւերու նշմուռ մը ձգելով նկուղէն դուրս կ'ելէ ,
ստորերկրեայ դուռը կը դոցէ և մատուռէն կը
հեռանայ :

Գ Լ Ո Ւ Խ Թ .

Արշալոյսին առաջին ճառագայթը հազիւ հո-
րիզոնը կը լուսաւորէր , երբ Բալղօ խշամնը իրեն
ուղեկից բազմաթիւ պահանջարկներ ունենալով
խը քայլերը դէպ'ի սոսկալի քարհատը կ'ուղղէ ,
ուրտեղ ապտամբները պիտի ժողվուին : Խը
կասկածոտ դէմքին վրայ անձկութիւնը ակներեւ
կը տեսնուի , իւր խօսքերը դաժան և խիստ են ,
իւր նայուածքը անհամբեր : Որոշեալ օրը կը մտաի
և դաւաճաններու դիտար մը որչափ արխութիւն
ալ ցոյց տայ , դարձեալ հանդարտ մտախոհութիւն
մը , որուն սոսկալի փոթորիկ մը կը յաջորդէ , սակայ
իրեն համար կը նմանի այն սգեվարին , որ վեհ
ժամին կ'առաջնորդէ :

Սոսկալի քարհատին ոտքը հասած է . իւր
ճակտին վրայ հիմայ հանդարտ փտահօթիւնը
և իշխող խառութիւնը կ'երևի : Յաջողակ քաղա-

քաղէա մը բլլալով՝ դիտէ ինքզնինքը կառաւա-
րել և յանդգնութեան երեւոյթով զինքը մաշող
նեղութիւնը կը ծածկէ: Հեղաշրջիկ գլխաւորներէն
շատերը զինքը կ'սպասեն, սակայն ինչպէս որ
թղթատարը արդէն խմաց տուած էր, այն սպա-
ռաղէն լեռնականները, որոնք այս տեղ Բաղդոյի
առջեւ հանդէսի պիտի ելլէին, չուզեցին Սահա-
ֆորնորը ելլել: Գաւառին նախապաշարեալ բնա-
կիչները, որոնք պատերազմի դաշտին մէջ արիա-
բար կը կռուէին, իրենց կեանքը գրէ թէ միշտ
մահուան վտանգի ենթարկելով, չէին ժտեր սոյն
քարհատին մերձենալու, որուն գաղաթը «Էն-
գէն» կ'երեւի. իրենց աննկուն քաջութիւնը իրա-
կան վտանգէ չխլախեր բնաւ, այլ գերբնական
երեւոյթի մը առջեւ կը նուաղի:

Իշխանին դժգոհութիւնը մեծ է, պզտիկ յա-
պաղում մը մահաբեր կրնայ բլլալ, այսու ամենայ-
նիւ իր ներքին յոյզը և տազնապը մէկու մը չի
յայտներ, և ամենէն եռանդոտ ու նախանձախնդիր
գաւաճաններէ շրջապատեալ, անոնց ցոյց կու տայ
Ֆրանսայի պաշտօնէից նոր մէկ նամակը, որոնք
Լուի ԺԱ.ի ամէն խոստումները կը նորոգեն:

Ասկէ զատ անոնց խմաց կու տայ անոնց որ Լո-
րենցի գունդերուն մէկ մասը միայն իւր հրամա-
նին կ'սպասէ Ռենէյի գէմ ապստամբելու, իւր
դրօշին ներքեւ գումարուելու և իրեն նանսիի
գաները բանալու: Գաւաճաններու յատակադի-
ծին համեմատ, Լորենի հարաւակողմը Էրինապէ
սկսելով զատ գաւառ մը պիտի կազմէ, որուն

ասհմանը մինչեւ Մորա նահանգը պիտի տարածուի, և որուն իշխանութիւնը Բալզոյի պիտի յանձնուի : Նանսի, Լիւնէվիլ, Մեց, Պարուան և Ռեւնէյի երկիրներուն մնացած մասը՝ Ֆրանսայի պիտի միանայ : Ապստամբութեան դրօշը սլարզուելուն պէս, Լուի ԺՄ.ի բանակը Բալզօն դիմաւորելու պիտի ելլէ, և իրենց զինուորական դունդերը էքլինալ միանալով, անկէ Նանսիի վրայ պիտի քալեն : Իշխանին մէկ ճարտասան ատենախօսութենէն ապրստամբութեան գլխաւորներու սիրաք նոր եռանդով մը կը վառուի, կը բորբոքուի : Կրկին իրենց հաւատարիմ մնալուն վրայ կ'երդնուն : Բալզօ անոնց ծափ զարնելը նկատելով կը ժպտի և կը հրամայէ որ հետեւեալ երրորդ գիշերը ամեն զինուորները դարձեալ ժողովուն Մորայի այն դաշտին մէջ, ուր Զուլցերցիք Պուրկոյնցիներուն յաղթեցին : Հոն ընդհանուր գումարումէն յետոյ գէպ 'ի էքլինալ պիտի երթան, ուրտեղ Լորենցի և Ֆրանսայի դունդերը իրենց պիտի միանան անյապաղ :

Վերջնական կերպով դաւաճանութեան յատակադիծը ընելէ յետոյ, ապառնի ինքնակայք սպրտամբ գլխաւորներէ զատուելով Մենաստանին շաւիղը կը բռնէ, Մնատաին մէջ տեղը կանդ կ'առնէ : Իրեն հետեւող զօրականներու զանազան կարեւոր գործեր կը յանձնէ և առանձին աւատխոհ գէպ 'ի հովիտը կ'իջնայ :

Իր երկիւրը ուղիւ ճամբայէն կը շեղի սանձարձակ : Անխորհուրդ կերպով մը եղև իններու և ժայռերու մէջէն կ'արշաւէ, փոսի մը առջեւ ձին կը կա-

սի , բայց իշխանը առանց նշմարելու զայն ուժղին
կը մտնակէ : Աշխոյժ կենդանին խոչնդոտը առա-
ջութիւն անգոսնեւրու համար կ'ուզէ մէկ եղբերքէն միւ-
սը ցատկել , այլ եղբւի ծառի մը արմատը ոտքե-
րէն մին կ'արգիլէ և իյնալով փոսին յատակը կը գլու-
րի գահավէժ :

Չիաւորը վիրաւոր՝ ոտք կ'երդէ . իւր զգեստները
պատուտած են , այլ վէրքը թեթեւ :

Մացառներէն և ժայռերէն մագլցելով կրնայ
վերջապէս այն մահաբեր անդունդէն ազատիլ . յե-
տոյ կ'ուզէ իւր ձին վեր հանել . ընդունայն վատակ
զանի հոն ձգելու կ'ստիպուի ու դէսլ ՚ի Ռնտեր-
լախի աղօթարանը կը յառաջանայ ընդ ոսն , ա-
րիւնրուայ և ճնշեալ :

Այլ ուղիղ ճամբայէն կը շեղի : Անտառին մէջ
տեղը յողնութենէն լայն անդունդի մը եղբրքը
կանգ կ'առնէ , որն որ իւր ընթացքը կ'արգիլէ և
ոգուն յատակէն հեղեղատին մոնսխնը կը լսէ : Հոն
քիչ մը ոյժ և ոգի առնելու մտք բարձր ժայռի մը
վրայ կը նստի և հոնկէ իւր աչերովը կ'ուզէ վիհին
խորութիւնը չափել , սակայն թանձր խաւարներով
պատած է այն , միայն ջուրերու ձայնը կը լսէ ,
որոնք քարերու մէջ պղպղպով անձաւներու կամար-
ներուն տակ կը գահավիժին մռմնչելով : Մոյն լայն
վիհին մէջէն յանկարծ մարդկային ձայն մը կը բարձ-
րանայ : Երկրին աղիքներուն մէջէն դժօխային երգ-
մը կը թնդայ : Միթէ անդունդին մարդարեւու-
թիւնը կամ խաւարներու իշխանին շնչան է այն :

Իշխանը կը դողդողոյ ստակում ; սառ , իւր զար-

հուրած աչերը անդունդին վրայ սեւեռած կը նայի,
ուսկէ դուցէ սպառնալի ճիւղ մը դուրս ելլէ,
դէմքը աժդոյն, արիւնը սառ, պաղ քրալնք մը
խը ճակատէն կը վաղէ, ակռայները իրար կը զար-
նեն և մտղերը կը անկուին: Կուրծքէն ազաղակ մը
կ'արձակէ մեծածայն. ոտք կ'ելլէ դունատ, շուար
ու մնլար. խոյս կու տայ այն ահռելի եղերքէն,
ուսկէ կարծես իւր մահուան վճիռը արտասանած
էին, է՛ն վտանգաւոր ժայռերէն վեր կ'ելլէ, է՛ն
ստտախիտ անառանքէն կը թափանցէ և հուսկ
յետոյ հովիտը կը հասնի:

Հոն առտուան զով օդը իրեն ոգի և մտքին
հանդիսա կ'ազդէ: Այլ իւր դլուխը առաջուան
պէս զինքը չ'այրեր, չի տոչորեր և կ'սկսի շնչել:
Վանքը մտա է, կ'երթայ հոն, ամեն նայուածքէ
կ'զգուշանայ ու դամ՝ քան զգամ՝ այն մահաշունչ
երդին տպաւորութիւնը կը նուազի: Վիճին մէջէն
լուած ձայները դուցէ գերբնական չեն բնաւ,
ժայռին մէջէն փորուած թագուն ճամբայ մը մին-
չև անդունդին յատակը իջնելով կրցած է անծա-
նօթ մը պահել. . . , այլ այս անծանօթը՝ կրնայ
թշնամի մը, և այն պատահարը՝ գերբնական ըլլայ
կամ ոչ, բօթալի դուշակ մը կրնայ ըլլալ:

Նանսիէն եկած հարսանեաց թանկագին պար-
դեւները, որոնց Բայզօ շատունց կ'սպասէր ան-
համբեր, մեծաստանին մեծ սրահին մէջ դրուած
են: Շուայտութեան է՛ն ընտիր ընծաները, արուես-
տական է՛ն հազուադիւս գործերը հոն կը գտնուին:
Էլտոխայի աչերը ստոնցմէ պիտի չլանա՞ն արդեօք:

Ո՛չ, վասնզի այն՝ պաճուճանքներու և դոճարներու վրայ լոկ անտարբեր և անխոյժ ակնարկ մը կը ձգէ : Բան մը անոր զարմացումը կամ հիացումը չի դրաւեր, իրեն համար օտար և անօգուտ հարսանեաց հանդիսատեսի մը պէս սիրանուէր ու վառաւոր զարդարանքները կը դիտէ հեռաքննին :

Էնպէրկ կոմսուհին դինքը կը նկատէր : Որբին պատասխանները, անոր սառ պողութիւնը, անմտադիր նայուածքը, արհամարհող հանդարտութիւնը և անոր գրեթէ հեղնակիան ժպիտը իւր ամէն խորհուրդները տակնուվրայ ըրին : Սէն-Մորի դուստրը խռովեալ կամ անհանդիստ չէ բնաւ : Մնայիշտ և լռին ո՛չ զարմանք, ո՛չ ուրախութիւն և ոչ արամուծիւն կը յայտնէ, ու կոմսուհին մարդկային սիրտը քաջ ճանչնալովը հանդերձ, չէր զօրեր իւր քեռորդւոյն տարօրինակ վարմունքը հասկնալ կամ անոր անծանօթ զգացումները և թաղուն խորհուրդները ճանչել :

Այս օրն ալ անցաւ առանց նշանաւոր եղելու թեան : Քանի քանի անդամներ որբը Մորայի լեռները կը նկատէր ուշադիր . . . : Քանի քանի անդամներ իւր աչերը մենաստանին ճամբուն վրայ Մէն-Էն-Յին տաճարը կը վնասուէին : Անոր խոստացած օգնութիւնը չհասնիր երբէք, այլ հեռուեալ օրը այն մահաբեր հարսանիքը պիտի լուսաւորէ :

Գիշերը կիսադուռնալ կը ծածկէ : Բալզօ իշխանը ալ ասկէ անդին երանութիւն չ'երազեր բնաւ : Ի՞նչ անհամբեր սրտով նոր արշալոյսը կ'սպասէ . . . : Աղջկան հանդարտութիւնը իրեն համար յարմար

և օգտաւէտ կը թուի , և առանց այն անդունդին մարդարէութեան՝ իւր սիրտը յոյսէ և ուրախութենէ արբշխու՝ սիրոյ միայն անճատութիւնի բլրոյ :

Վստահ էլ լոտիան շիրնալով վայրենի լեռին մարդուն խոստումներէն կասկածիլ՝ կը նիրհէ հանդիստ և արշալոյսի ատեն կ'արթննայ : Ի՛նչ աղաւղակ , ի՛նչ դղրդիւն , ի՛նչ աղմուկ : Սէն-Մորի աղջիկը դէպ ՚ի պատուհանը կը յառաջանայ . . . : Ի՛նչ տեսնէ . վանքին ամէն կողմը բազմաթիւ զինուորներ պաշարած են : Լորենի դուքսին դրօշը աշտարակներուն դադաթը կը տատանի : Այս յանկարծական յարձակումէն Բալզօյի պահանջողները զինաթափ եղած են ու դերի : Ռենէյի Գունդերը առանց կռիւի մենաստանին ամէն կարեւոր կողմերը և ամէն մուտքերը առած են և վանքը պատերազմական պատանէշի մը պէս նոր իշխանի մը ձեռքը անցած է :

Էնպէրկ կոմսուհին գլխովին շուար էլ լոտիայի կը ներկայի : Մնյուսութիւնը իւր հողւոյն մէջ կը տիրէ , սոսկումը իւր դէմքին չորս կողմը պատած է և հիմայ պաշտպանն է որ պաշտպանեալէն օգնութիւն կը հայցէ :

Յանուն Լորենի դուքսին Բալզօն իբր ոճրագործ դաւաճան մը կը բռնուի , իւր ձեռքերը երկաթեայ շղթաներով կը կապեն , կը կաշկանդեն : Ռենէյի զինուորներու գլխաւորին հրամանովը վանքին բանաւերուն մէջ զինքը կը նետեն և սյս գրելաւորը կոմս Նորենտալն է :

Յայտնուած դաւաճանութեան մէջ Բաղդոյի իշխանին բարեկամուհւոյն ալ մաս մը ունենալը պիտի խմանան անշուշտ , դուրսէ իբր խորհրդակից և դաւակից մը պիտի բանտարկեն : Կոմսուհին Էքսպէրի սէրը կը ճանչէ . այս սէրը իրեն սպառնացող աղէտներէն կրնայ զինքը փրկել : Ուստի որբին քով կ'ապաստանի :

Էլլտիա յուսահատ կոմսուհւոյն վրայ դժբալով անոր զգուշութիւնները և անդժուժիւնը կը մտնայ և անոր յոյզը և տաղնապը փարատելու կ'աշխատի : Էրսթալի խորամանկ ազգականը հիմնց գողցես կը զգջայ :

— Նենդաւորդ Բաղդո . . . , կը դուռէ , ի՞նչպէս այս մարդը զիս խամիեց . . . : Էլլտիան պիտի զահէ՞յի զանի ապստամբներու պետին հետ միաւորելով . . . : Ամենէն վատ դաւաճանութեան հաղորդակից՝ կախազանք հետուէն կ'ընդնշմարեմ . ա՛հ իմ տխմար դիւրահաւանութիւնս սոսկալի պատժոյ արժանի է : Յանցաւոր եմ , ո՛վ աղջիկս : Սա կայն քու սիրտդ բռնաբարել ուղեւու համար մեծ ցաւ կ'զգտմ , որ մը եւս և իմ բռնութեանս զոհը պիտի ըլլայիր . . . : Ո՛հ , թող Բենէ զիս խաւորին բանտի մէջ նետէ , թո՛ղ համօրէն աշխարհ զիս դատապարտէ , ալլ թող Էլլտիաս ներէ ինձ և առանց տրտնջալու վիշտ և ցաւ պիտի կրեմ :

Իւր շեշար կ'երեւի թէ ճշմարտութենէ յառաջ եկած ըլլայ : Անմեղութիւնը դիւրահաւան է , Սեն-Մորի դուստրը իւր պաշտպանը կ'ապահովէ և Նորինչտալի քով կ'իջնէ :

Էքզպեր Էլտտիային կ'սպասէ : Կոմսը իւր անձին յաղթելու և զգացումները պահելու նկրտելով հանդերձ՝ կոյսը տեսնելուն կը վրդովի : Իւր ճամբորդութեան նպատակը կը յայտնէ : անոր առջև այն մեծ դաւաճանութեան մանրամասն պարագայները կը պարզէ : որուն ստոյգ փորձերը Լորենի դուքսին ակներեւ ցոյց տուած են և իւր նկարագիրը այսպէս կը վերջացնէ : — Չուիցերի կառաւարութիւնը դաւաճաններու բռնելու թոյլ տուած էր : Բարդո նանսիի մէջ պատերազմական խորհուրդի մը առջև պիտի դատուի : Քիչ օր պիտի ապրի : Նոյնը նաև պիտի բլլան իւր դաւակիցները, մեծ օրինակ մը հարկաւոր է :

— Ասպէտ , կ'ըսէ աղջիկը , դաւաճանութիւնը ո՛վ յայտնեց :

— Ո՛վ , կը պատասխանէ Էքզպեր . Մէն-լէ-ցը :

— Եւ անի ի՞նչպէս կրցեր է դաւաճանութիւնը պարզել , ի՞նչպէս կրցեր է Լորենի դուքսին խնայտալ , ի՞նչ միջոցներով կարողացեր է ոճիրը արդիւլել :

— Էհ : ի՞նչ հող , յարեց կոմսը . յաջողեցաւ , բաւական է :

Վայրենի լեռին մարդը աշխարհի դարմացումը գրաւելու համար ծնած է : Նաև այսօր եթէ խօսք մը ըսէ Եւրոպայի վիճակը կրնայ փոխել : Անդամ մը եթէ լեռէն վար ցատկէ տինդերքի ահու դող կրնայ ազդել :

— Անի՛ , ո՛վ երկինք , ուշաբերէ՛ :

Այլ Նորենտալ բնաւ չպատասխանեց :

Բարդոյի մեծաշին պարզեւները դեռ մենաս

տանին մեծ սրահին մէջ կը կենացին : Էքսպեր
նկատելով կը հառաչէ :

— Բաղո , այս առտու դքեղ դէպ ՚ի սուրբ սե-
ղան պիտի առաջնորդէր : Իսկ հիմայ կը ցաւիմ
անոր վրայ , կ'ըսէ կոմսը :

Եւ շնչին արժէք մը ունեցող քող մը և անող
հետ ծաղկեաց պսակն ալ վերցնելով .

— Երբեք , կը յարէ վշտահար՝ երբեք իմ
ձեռքս կնոջ մը ճակարին վրայ դանուած ամուսնա-
կան վարսակալին չպիտի դալչի : Գժբաղթութեան
մահաբոյր շունչը ինծի համար հարսանեաց չահերը
չիջեց , ինչպէս նաեւ սիրոյ պսակները չարցուց . . . :

— Եւ Լորենի դուքսին քոյրը . . . , հարցուց
որքը ահարեկ ձայնով մը :

— Զքեղ սիրելէ ետքը , կ'ընդմիջէ Էքսպեր
սրբատայոյց , այս սիրտը միթէ կրնա՞ր ուրիշ կնոջ
համար տրտիել . . . , միթէ պաղ անախառու թիւնը
եռանդուն սիրոյ տեղը կը բռնէ՞ . . . : Իմ իշխանիս
ուրքը ինկայ , իմ հողիս անոր առջեւ բացի , իմ
մերժումն ներեց և Լորենի դուքսին քոյրը այսօր
Ալքամանեայի ինքնակալի մը երջանիկ կ'ինն է :

Ելրտիս մտայոյց՝ դոււխը կը դարձնէ , ըստ որում
վեհանձն զօրականին նայուածքը դրաւելու կը վա-
խէ և . . . — Շնորհակալ եմ կ'ըսէ , կեանքէ աւելի մեծ
բան պարտաւոր եմ քեզ , քու օգնութիւնդ . . . :

— Ո՛չ , կ'ըսէ Էքսպէր : Ինձ բան մը պարտաւոր
չես , այլ ամէն բան Մենակեացին պարտաւոր ես :

— Վեհանձն մա՛րդ , իմ երախտագիտութիւնս
կը մերժես . . . :

— Անդռ՛ւթ , չէ՞ մի որ իմ սէրս մերժեցիր :
Կոյսը խօսակցութիւնը փոխելով Էնպէրկ կոմ-
սուհւոյն նկատմամբ քանի մը խօսք կ'ուղղէ անոր ,
որն որ Ռենէյի հրամանին համեմատ Նանսի տար-
ուիլ պէտք է , որպէս զի քանի մը հարց ու փորձ
ընեն իրեն : Էլտտիա ջերմ կերպով իրեն պաշտպան
տիկինը կը սրաշտպանէ և Նորենտալ կոմսը այս
գործին համար Լորենի իշխանին քով միջամտել
կը խոստանայ :

Էքպէր ստիպուած է հետեւեալ օրը Զուիցե-
րէն մեկնելու , որքը դեռ մենաստանը պիտի կե-
նայ , մինչդեռ Նանսիի մէջ իւր ներկայութիւնը
և ազաւանքը կրնան կոմսուհին ազատել . . . :

Միթէ թշուառութեան մէջ երեսի վրայ պիտի
թողըւ այն կինը , որ երջանկութեան ստեն եր-
կար և դժուարին ճամբորդութիւն մը ըրաւ իրեն
իրբ մայր ծառայելու . . . : Ո՛չ , պատիւը իրեն կը
հրամայէ որ վեհ անձնուիրութեամբ մը վարուի .
բայց , ա՛ւաղ , Մենակեացէն հեռանալ հարկ է ,
իւր հզօր պաշտպանէն զատուիլ և խուսիլ պէտք է ,
այն էակէն , որուն կերպով մը իւր ճակատագիրը
կապուած է : Մեծդ Աստուած , իւր սրտին մէջ
ի՛նչ ահռելի տագնապ մը կ'ողոյս . . . :

Հուսկ յետոյ պարտաւորութիւնը սիրոյն կը յաղ-
թէ . այլ այնուհետեւ Էրսթալի ճգած պաշտպան
տիկինը անպաշտպան չպիտի թողու , քանի որ
թշնամութիւնը իւր կենաց վտանգ կ'սպառնայ ,
սակայն կոմսուհին անդամ մը եթէ ազատ ու եր-
ջանիկ ըլլայ Հելլեաիոյ անոյշ աղջիկը անդէն Ռեն-

տերը խի մենտոտանը պիտի դառնայ իւր օրերը հոն վերջացնելու :

Նորեն տալ էլ լոտիայի յետին դիտաւորութեանը վերահասու ըլլալու տա՛ն մեծ ուրախութիւն մը կ'զգայ ՚ի ներքուստ, վասն զի կը մակարեբէ խակոյն որ օրիորդին առաջնորդը, սլաշտպանը պիտի ըլլայ և թէ երկար տա՛նն անկէ չպիտի բաժնուի :

Որքը առժամանակեայ վանքէն հեռանալու նպատակը Բաղզոյի բարեկամուհւոյն կը յայտնէ, էքսպերի խոստումները կը կրկնէ անոր և կոմսուհին եւս անդուն՝ իր երախտագիտութիւնը կը յայտնէ :

Մենաստանին մուտքը ալ հովիտին բնակիչներուն համար արգելուած չէ . Անսերճ էլ լոտիայի քոջն է . — Ո՞վ ուրեմն, կ'ըսէ քահանան՝ օրիորդին, դաւաճանութիւնը յայտնելով դքեզ Բաղզոյի ճիրաններէն ազատեց :

— Մեր ձորակներուն բարերարը, Մենակեց :

— Դարձեալ Մենակեաց, կը դռչէ Անսերճ և գիմացը վրայ տրոմութեան ամպ մը կը նշմարուի :

— Էլ լոտիա՛, կը յարէ անդէն, ապստամբներու պետին մեր խաղաղ երկիրը դպէն ՚ի վեր վայրենի լեռին մարդը աեսա՞ր :

— Ա, յո՛, կը սպտասխանէ որքը կարմբելով :

— Ո՞ւրտեղ, ո՞վ աղջիկս :

— Ա, յս սուրբ կամարներուն տակ :

— Եւ ո՞վ զինքը կանչեց :

— Ես . Հա՛յր իմ :

— Պաշտպանութիւն խնդրելու :

— Ո՞չ, այլ զիս ազատելու :

— Անկեղծ օրէն պատասխանէ՛ , կը յարէ ծեր քարոզիչը զինքը նկատելով ուշադիր , Մենակեացը քեզի հետ սիրոյ վրայ խօսեցա՛ւ :

Էլ լռտիա այս խնամ հարցման այսպէս կը պատասխանէ , երկնից պաշտօնէին վրայ դորովայի և քաղցր նշմար մը ձգելով :

— Ո՛վ հայր իմ , միթէ սիրելը արդիլու ա՞ծ է անոր :
Անտե՛ր , յոյզ մը կ'զգայ և այս պատասխանը ամէն կասկած կը փարատէ :

— Ամենակարողդ Աստուա՛ծ , կ'ըսէ քարոզիչը , եղիցին կամք քո . . . :

Էլ լռտիայի Լնպէրկ կոմսուհւոյն հետ Նանսի երթալու , զանի դատաւորաց առջև պաշտպանելու , այնուհետեւ Հելվետիա վերադառնալու միտքը կը ճանչէ : Այս վեհանձն զգացումը կը գոյլէ , թէ և ՚ի ներքուստ Բաղդոյի յանցաւոր բարեկամուհին կը դատապարտէ : Որբին ուղեւորութիւնը զոնէ զանի ատեն մը Մենակեացէն կը հեռացնէ և այն հեռաւորութիւնը բարի հետեւանքներ կրնայ ունենայ : Լորենի արքունիքէն հզօր ասպետ մը կարող չէ՞ լինին անձանց թը մուսցման մէջ թաղել : Երկինք գուցէ Սեն-Մորի դռստը Նանսի կը կանչէ հոն տեղ նոր փիճակ մը հաստատել տալու համար : Անտե՛ր անոր մեկնելուն կը հաւանի և սիրայլոր մնաս բարեւներ կ'ըսէ :

Էլ լռտիա ուղեւորութեան պատրաստուելու ատեն իւր դիտաւորութեան մէջ հաստատ կ'երեւէր , բայց վանքէն բաժնուելու ատեն քաջասրտութեան նուաղիլը զգաց :

— Միրո՛ւն հովիտ , ուրեմն քեզմէ պիտի հե-
ռանամ . ես անաէր և անօք տունկ մը , իմ ծնըն-
դեան ժայռէն զատուելով և փոթորիկներու հովէն
մղուած ո՞ւր պիտի իյնամ չոր ու գունասա . . . :

Աչերը դէպ 'ի Մորա լիճին լեռերը կը դարձնէ ,
ցաւաղին հառաչ մը իւր թաղուն յոյզը և տաղ-
նապը կը վկայէ : Գէթ եթէ կարենար իւր սրտին
յարմար էակին մեկներուն շարժառիթը իմացնել . . . :
Բայց Ռենտերը լսի մէջ այսպիսի պատգամաւորու-
թիւն մը ո՞վ յանձն կ'առնու : Հովիտին մէջ լեռնա-
կան մը Մենակեացին մտաւրու չիժաիր :

Էքզերի ընդունած պատուիրանաց համեմատ
սպասամիներու զայրոյթը չգրգռելու համար իւր
դերիին հեռ , կէս դիշեր ատեն միայն Մորա գա-
ւառէն պիտի անցնի : Էլրտիա կոմսուհւոյն հեռ
փառաւոր ջորի մը հեծած հովիտին մէջ կը յառա-
ջանայ : Գիւղին բնակիչները անոր մեկնելը ըսցին
ու թէ և անոր կանուխ վերադարձին համար բրած-
խոստումներէն ապահով կրկին անոր շուրջը կու-
դան կը հաւքուին ցաւաղին , այլ անոնցմէ շատերը
արտօսը կը հեղուն և իրենց համր երթասարարեւը
որբին սիրար կը հաչմեն , կը յօշոտեն :

Մարգերը կը մթաղենին , սակայն լեռերու ձիւ-
նապատ կատարները տակաւին լոյսով կը շողան
և շիկագոյն ընդարձակ պատմութեանով մը ծած-
կուած են : Օդը անոյշ և յտտակ է , իսկ հովիտը
հանդիստ , աշնանային դեղին և ծիրանի դոյներով
անտառներու դալարը երվին երվին կը փալթի ,
երկչոտ քարայծը ամայի ժայռերու վրայ հեռուէ

հեռու կը նշմարուի, Ալպեան լեռերու մեծ անդղը ամպերուն վրայէն կը սըննայ ծանրաշարժ և հեղեղատէն ականակիտ ջուր մը կը սահի : Բնութիւնը որբին աչերուն երբէք այսպիսի ընտիր տեսարան մը չէր ընծայած, երբէք ձորը իրեն համար այս գեղը ու հրապոյրը չէր ունեցած : Ափսո՛ս այս է մարդկային սիրտը . ստէպ կորուսելու ատեն միայն իւր արդէն վայելածին արժեքը կը ճանչէ : Մարդու որակութենէ աւելի ցաւերու սահմանուած ըլլալով իւր արդէն ունեցածը մեծ բան կ'երեւի իրեն, երբ ալ չունենայ կը տառապի : Մարդու աչերը ուրեմն լայու ատեն միայն կը բացուին :

Արդէն մենաստանին ճերմակ պատերը հեռուն աներեւոյթ կ'ըլլան : Լոկ իւր բարձր աշտարակները հազիւ կ'երեւին, ուր խաւարներու թռչունը կը բնակի և որոնք բազեղի տերեւներով պատած են, հովերը ճեղքերու մէջէն սաստիկ կը մռնչեն, անոնց դագաթը մարդկային քայլ մը չի թնդար հիմայ, որն որ դողցես լոկ ամպերու հետ կը հաղորդակցին : Սոյն ահեղ աւերակները կարծես թէ ճամբորդին բարեւներ կու տան արտում և փութ, որն որ վշտահար ու լռին մնասը և չարիքը նախազգացուածով մը կ'իմանայ, օրերը և ժամերը կը հաշուէ և զինքը զարնող մանգաղը կը ճանչէ :

Բալլօ ուղեւորներու առջեւէն կ'երթայ, չորս գին պահանորդներ պատած են ու ձեռքերը շղթայակապ : Երկու բարձր ժայռերու մէջ տեղէն Նորինտալ կոմսին գունդերը կ'անցնին ծանրաքայլ : Հանկարծ Սէն-Մորի դուստրը իւր խոր մտախոհու-

Թե՛նէն կ'սթախի իրեն՝ մօտ գրեթէ մտական բառ մը ըսելով: Ի՞նչպէս այս անունը իւր ուշը կը գրաւէ իսկոյն . Ի՞նչպէս մինչև իւր սրտին յատակը կը թնդայ : Ի՞նչ է այն ուրեմն . . . : Վարդէի վառ :

Ամէն դիէն բարձր լեռեր կ'երևին , որոնք բնութեան բերդերն են և որոնց պատնէշները մինչև ամպերը կը բարձրանան : Հաւերժական սառէ շինուած հոյակապ սլալատներ , ուր ձիւնակոյտները կը կազմուին , որոնք երկիրը երկինքի մօակցնող յանդուգն քարհատներ են և այս ամբարտաւան կոթողները ՚ի զուր մարդմային հասակը ծաղրել կ'երևին՝ որչափ բնութեան արքային խորհուրդը դուռնոյն ամէն բարձրութիւնները կը դերադանցէ , այնչափ իւր հողին ալ արարչադորձութեան սքանչելիքէն վեր կը բարձրանայ :

Էլտտիա ահարկու լեռին ստորոտն է : Էքպեր ու քանի մը սապեաններ իւր շարժը պատած են : Իւր աչերը խորհրդական անտառին վրայ սելեւած կը նայի նախանձայոյդ . սիրտը կը տրտիէ ուժգին : Հիմայ համազուած է թէ այն մարդը , որ իշխաններու և արքունեաց ամենէն թագուն խորհրդները կը ճանչէ , անշուշտ իւր ճամբորդութեան պատրաստութիւններն ալ և դառնալու նպատակը դիտէ : Մենակեացը հարկաւ այս ամայի կիրճերէն անցնելիք ժամը կ'զգայ , անշուշտ հոն պէտք է ըլլայ իր սիրելոյն վրայ յետին նշմար մը ձգել ուղած է . . . : Ա՛հ , որըը ինչո՞ւ սոյն նշմարին չի հանգիստը :

Լեռին զառիվայրին վրայ , եզերիններու և ժայռերու մէջէն Էլտտիա վայրենի բնակութիւն մը կը

Նշմարէ մտայոյդ : Քանի կը նայի, այնչափ իւր որոշել ուզած առարկայները իւր ուշը կը գրաւեն : կրանիթեայ ահադին բեկորի մը վրայ դաշտային շէնք մը կ'երեւի, որուն պատերը ծառի կոճղերէ, խկյարկը եղեգներէ շինուած են : Չէնքերէ բաղկացեալ յաղթութեան տեսակ մը նշան կը դասուի սոյն տարօրինակ բնակարանին քով, որն որ անտառին քանի մը ճիւղերէն ծածկուած է կիսովին : Սոյն պատերազմական խուրձէն կախուած փայլուն վահան մը կայ, որուն վրայ արեւուն յետին ճառագայթները կը շողան : Ո՛վ զարմանք : Էքզեր այս տեսներուն կանգ կ'առնէ, իւր ընկերներուն նշան մը կ'ընէ և յանկարծ թմբուկին երկար թընդիւնէն անոնց ճակատը և նեղակները Մենակեացին վայրի տնակին առջեւ կը խոնարհին :

Զինուորական ողջոյնը կը լմնայ . Ռենէ յի բարեկամը ճամբան կը շարունակէ առանց Էլրախայի զարմանքին նայելու : Վայրենի լեռին մարդուն տրուած այս մեծ պատիւը ի՞նչ կը նշանակէ . . . : Ի՞նչ, Մենակեացին լոկ մէկ զինանշանին առջեւ Էքզեր կոմսը ի՞նչպէս խոնարհեցաւ . . . : Այս գաղտնիքը ի՞նչպէս բացատրել հարկ է :

Լորենի դուռդերը կը յառաջանան հապճեպ : Վայրենի լեռին կիրճերէն դուրս ելած են և արդէն Մորա լիճին եզերքը կը քալեն : Գիշեր է և անոնք Սոսկայի քարհատը հասան, ուր ամենամեծ վտանգի ենթարկուած են :

Ապստամբները Բաղօյին բռնուիլը լսեցին : Նորենտալի մեկնիլը, անոր բռնած ճամբան, անցները .

Միջոցը , վերջապէս ամենը գիտեն : Ապստամբ դը-
 խաւորներն ու զինուորները իշխանը փրկելու մտա-
 դիր՝ Սոսկայի քարհատին մտա դարան կը լարեն և
 Ռենէյի բարեկամին գունդերուն կ'սպասեն որպէս
 զի անոնց վրայ յանկարծ յարձակելով խոյս տալու
 ստիպեն և գերին ազատեն :

Էքզպեր Էլտտիայէ քիչ մը կը հեռանար : Անոր
 փոքր շարժումներուն իսկ ուշադիր . պատրաստ էր
 իւր հոգւոյն ամէն կարողութիւններովը , իւր կեան-
 քին ամէն զօրութեամբը օգնել անոր : Իւր սիրուհին
 առաջին անգամ ծննդեան երկիրէն զատուելուն
 համար ցաւ և դառնութիւն կ'զգար : Այս ցաւը ,
 այն դառնութիւնը , ինչպէս նաև ճամբուն յոգ-
 նութիւնը , դիշերային խոնաւ օդը և այն իսկ ան-
 տառին մանչիւնը Էքզպերի սիրտը կը վրդովէին :

— Այս բարձր ժայռը ո՞րն է , կը հարցնէ Էն-
 պերկ կամուհին : Այդ կարմիր դոյնը տեսնելով
 կարծես թէ դժոխային անձաւներէ զատուած մաս
 մըն է : Անոր ահեղ ստուերը հեռուէն սպառնայի
 ճիւղի մը պէս կ'երեւի . . . : Միտ գի՛ր , ժայռին
 խոռոչներուն մէջէն լսուած աղիողորմ տրտունջները
 միթէ հովէն յառաջ կ'ուզան . . . : Ասպեաննէ՛ր ,
 ո՞ւր կը գտնուինք : Հոտեղ օդը իսկ լի է սոսկու-
 մով . . . : Կո՛մս նորենտալ մեզ ո՞ւր կը տանիս :

Իւր ձայնը դողդոջուն է և սրտին ահուդողը
 երեսին վրայ ակներեւ կը նշմարուի :

— Այս ժայռը Սոսկայի քարհատն է , պատասխա-
 նեց Ռենէյի բարեկամը . սամիկին սնապաշտու-
 թիւնները սոյն վայրը գրեթէ անմատչելի ըրին :

Հասէ որ Ռենտերլախի Մենատանին կրօնաւորները բարբարոս ամբօխի մը հարուածներուն տակ մեռան : Ըստ լեռնականաց Հասէ որ Արեւելի գին . . . :
 — Էքզեր , կ'ընդմիջէ որըը ահարեկ , հեռա- նանք , սոյն վայրը մահարեր է :

Հաղիւ թէ Ռենտերլախի կոյսը այս խօսքը ընն- ցուց մէյժ՝ ալ յանկարծ անատին մէջէն մեծա- ձայն աղաղակներ լսուեցան : Նեւտերու ամզ մը օղբ ճեղքեց . ճայտերան շարժը նիզակներ և դի- նաւորներ պատեցին . ամէն կողմէն ապստամբ լեռ- նականները Էքզերի զօրքը նեղեցին :

Սոսկայի քարհատին մօտ ահռելի կռիւ մը կ'ըս- կրսի : Բայցօյի պահապանները տապաստ կ'իյնան արիւնջուայ : Իշխանը իւր շղթաներու կտարակը կը նշմարէ և արդէն սուր ՚ի ձեռին իւր ազատիչնե- րուն գլուխը անցած է :

Էքզեր ձայնը կը հանէ , իւր ահարեկ զինուոր- ներուն ոգի կ'ուտայ , ցրուած դունդերը կը հաւքէ և յարձակողները իւր անվեհեր յանդգնութիւնը տեսներով կը վհափն : Ամենէն վտանգաւոր և անշիտթ անդերը իւր յաղթող փեւտուրը կը տատանի : Որքը սոսկայի քարհատին առջև բազկատարած իւր աչերը դէպ ՚ի երկինք կը վերցնէ : Կոմսուհին զինքը թող կ'ուտայ և ջորին մտրակելով դաւա- ճաններու կողմը կ'անցնի : Շատ անգամ ազաննիչ նետը Էրտիայի ակամջին կը սուլէր : Նորենաալ պաաննէչի մը պէս Սոսկայի քարհատին մօտելու տեղերը կը պաշտպանէ : Արիւնաթաթաւ առխճի մը պէս անյուսութեան զայրոյթովը կը մտրանչի :

Սակայն արիութիւնը թիւին յաղթեց . ուսրստամբներու կողմը անկարգութիւն կը մտնէ, անոնց գիակաները գեղտին սիրտուած են: Բայրօ Էրսթայի քեւորդին կը փնտռէ: Եթէ չկրնար Էքսպերի գունդերը ցրուել, դէթ լեռնականներու հետ խոյս տալէ առաջ իւր սրտին յարմար էակը ձեռք կը ձգէ: Չանի հռչակաւոր ժայռին սատրտը տեսնելով՝ կրան կը վազէ: Բռնելու մօտ էր . . . երբ Նորենտալ վրան ցատկեց:

Երկու ասպետները, անողոք և անհաշտ ոտխներ, ատերութեան ամէն սաստիկութեամբը, կատաղութեան ամէն ուժգնութեամբը իրարու հարուածներ կու տան, իրենց արիւնը զէնքերու վրայ կը շողայ . երկուքն ալ անյաղթելի կ'երեւին: Ո՛վ յուսահատութիւն, լեռնականի մը ձգած մէկնետը Էքսպերի դրահը կը ծակէ և ծոցին մէջ կը մխուի: Արի Նորենտալ մահաբեր սլաքը կ'ուզէ հանել, այլ 'ի դ'ւր, երկաթը վերքին մէջ կոտորուած է: Էքսպեր իւր ոյժին նուաղիլը կ'զգայ, սակայն տակալին կը կռուի: Իրեն քով հոգւոյն ազդեցութիւնը միայն մնացած է, և այս բարոյական ազդեցութիւնը զգայութեան ազատ զօրութիւնն է, անկախ կեանք մը որ հիւժեալ բնութեան մը ամէն խոչընդոտները առաթուր կ'անդոսնէ և նոր շունչի մը պէս ոչնչութեան ոգի կ'ուտայ:

Ունտերլախի կոյսը տխրութեան աղաղակ մը կ'արձակէ, անյուսութիւնը սակէ եղիելի ձայն մը չէ արձակած. Էքսպերի գողգողալը կը տեսնէ. ախտո՛ս, իրեն համար ա՛յլ ազատումի յոյս չկայ. Բայրօ իշխանը կը յաղթէ:

Մասկայի քարհատէն նոյն պահուն ահեղ որո-
տում մը կը լսուի : Ժայռին վրայ փայլուն բոց մը
կ'երեւի : Ամբողջ անտառը խիտ մուխի մը հեռ
խառն կարմիր ու կիզիչ կրակներով կը լուսաւորուի :
Երկիրը կը դողայ : Մեւ մրրիկ մը դէպ 'ի երկինք
կ'երլէ օձաձեւ : Մոյն դժոխային ամպէն ժանա
հոտ մը կը բուրէ , ուսկէ սպառնացող և դերբնա-
կան ձայն մը լսելի կ'ըլլայ : Ամպը կը բացուի . . .
և բոցավառ կառքի մը պէս, կարծես թէ մետէորի
մը մէջտեղէն արիւնայի ոգին կ'երեւի :

Լեռնականներու մէջ ի՛նչ ազազակ , ի՛նչ վայ-
նասուն . . . : Իրենց մազերը կը տնկուին : Ոմանք
տհարեկ քարացած և անշարժ կը մնան , ոմանք
դէպ 'ի անտառը խոյս կ'ուտան և իրենց զարհու-
րեալ երեսը անձաւներու մէջ կը պահեն . մեծ մասը
ճնրադէր՝ յաղթողներու կողմէն շղթաներով կը
կապուին . ամէնքն ալ մահ կը հայցեն , ամէնքն
ալ վիհի մը բացուիլը կ'սպասեն որպէսզի մէջը
գահալիժին և Նորենտայի զինուորներն ալ իրենց
առջեւ կռուելու կ'սպասեն :

Բաղո ոգին կը նկատէ : Ահեղ կոթող մը որ
ժիրանի զգեստ հագած է և որուն խիտ մազերէն
արիւն կը տեղայ դողցես : Զինքը շրջապատող
ձմբային մուխին մէջ տեղէն սեւ օձի մը պէս խա-
ւարներու իշխանին աղեղը իւր բոցավառ ձեռքե-
րուն մէջէն կ'երեւին , և մահուան սլաքը պիտի
ձգուի : Իւր հրացայտ աչերը իրենց կապիճին մէջ
այսդ իս այնդին կը դառնան և կարծես թէ իրենց
նշմարած իրը կը մաշեն : Իւր նայուածքը պայթիւնի

մը վայլին կը նմանի , իսկ իւր ձայնը յերան դա-
տաստանի մահաբեր օրումն հնչիւնին : Բնութիւնը
լուռ կը կենայ զարհուրելով : Անտառին մանչիւնը
կը դադրի : Օդը համր կերպով կը սաքսուի : Ո՞վ
կը հրամայէ . . . երկի՞նք թէ դժողք :

Նորենտալ Բարլոջի բազմաթէւ հարուածներուն
դեռ կը տակայ : Որքը անոնց կը նայի ուշադիր :
Ինչո՞ւ արդեօք իշխանը յանկարծ իւր սակը զար-
նելէ կը դադրի . . . : Ինչո՞ւ արդեօք իւր ճակատը
կը խոնարհի : Ինչո՞ւ արդեօք իւր յանդուգն եր-
կաթը դողդոջուն ձեռքեռէն կ'իյնայ . . . : Ինչո՞ւ
արդեօք անզուսպ զօրականը կը դրտորի անշունչ . . . :
Արիւնալի ողիին աղեղէն մահուան նետը ձգուած
է : Ազատամիտներու սկտը ալ չկայ :

Ունտերլախի կոյսը երեն տրուած բարոյական
հարուածներուն տակ կ'ընկրկի : Նորենտալ կոմսը
աղատած է , անոր համար շնորհակալ կ'ըլլայ Սո-
տուծմէ : Մտկալի քարհատին ահարկու երեւոյթին
վրայ յերան նշմար մը ձգելով՝ արիւնալի ողիին դէպ
իրեն վար իջնելը կ'զգայ . . . և որքը կը նուաղի :



Գ Լ Ո Ւ Խ Ժ .

Արեւին քանի մը նախընթաց ճառագայթները
եթերական դաշտին ստուերները հարածեր էին :
Անտառին ծառերը առաւօտեան ցօղէն խոնու ,
զերիւռներէ շարժուն , իրենց ազօտ սրահները կը
թօթալիւնին : Հունձքի յերան ամիսը անցած էր ,
արդէն չոր տերեւները իրենց հայրական զարմէն

կը զատուէին և բնութիւնը երկնային աստղին տակեղօժ ճառագայթին պէս դեղադէմ՝ անտառակները , մարդերը ու բլուրները հազարաւոր դոյներով կը զարդարէր : Ծաղիկներու եղանակին վերագարձը թէեւ հրապոյր մը ունի , այլ դեղեցիկ օրերու մնասրարեւը աւելի յոյզ մը կ'ազդէ մեր սրտին :

Էրթալի քեռորդին ողի և ոյժ պլախ առնէ : Իւր շփոթ խորհուրդները դեռ չեն զօրեր զինքը շրջապատող ստուերները թափանձել : Սակայն իրեն այնպէս կը թուի թէ մրրիկէ մրրիկ մղուելով փոթորիկներու հաճոյքին անձնասուր՝ օդեղէն դաշտերը կը ճեղքէ , կ'անցնի արագ : Իւր արտեւանունքը կը բացուին տկար ու հալ և մաշ : Էլտախաբան մը չի կրնար որոշել , այսու ամենայնիւ երազ մը չէ այս բնաւ . լեռին առժիւէն բռնուած դաշտային թռչունին պէս կը կարծէ թէ անձանօթ կարողութենէ մը վերցուած է , որն որ սլանալէ չի կասիր : Մտախոհութիւնը կը պարզուի : Յիշողութիւնը կեանքին հետ կը վերածնի : Առտուան լոյսովը վերստ ահնարի մը կը ձգէ այն անձանօթ առարկային վրայ , որն որ իր ծանր գլխուն նեցուկ կ'ըլլայ : Ինչ ստակում . . . , Էլտախա կարմիր վերարկուով ծածկուած որո՞ւ բազուկներուն մէջն է . — Արեւուկ Ոգին :

Ոգին լեռէն վեր կ'ելլէ հասգճեայ , անտառներու ծոցին մէջ կ'ընկղմի : Աւերիչ մետեորի մը պէս ահարկու ստուերներու մէջ սահելով ժայռերու և անդունդներու մէջէն կ'անհետի : Յնորական փոթորիկի մը պէս թեթեւ՝ իւր անհամբեր ընթացքին

մէջ գողցես հետը շողելից և մրգապատ տարր մը միայն կը տանի : Մահանման երեւոյթի մը պէս յը-
ռին՝ գողցես ո՛չ կեանքէ և ոչ մահուանէ կա-
խում ունի :

Մեն-Մորի դուստրը ահա ելի հառաչ մը կարճա-
կէ և աչերը կը գողէ զարհուրելով : — Էլտտիա՛ ,
Էլտտիա՛ . . . , կը գոչէ գողտր և աղերսալի ձայն
մը : Ո՛հ , ինչպէս այս ծանօթ շեշտը որբին սրտին
մէջ անոյշ կը թընդար : Արեւուն առաջին կրակները
չեն կրնար մրկայոյզ գիշերէ մը հողմահար ծաղկը
աւելի կանուխ վերցնել : Մահարայի անապատին
մէջ կորսուած ճամբորդին ծարաւի շուրթերուն
տարուած ջուրը սակէ շուտ չի կրնար զովայնել ու
կեանք տալ : Երկնային օրհնութեան երգ մը
սակէ նուազ հրապոյր կ'ընծայէ : Էլտտիա սիրալիր
և վշտահար ձայնին իր արտեւանունքը կը բանայ
կրկին ու իւր նշմարը Մենակեացին նայուածքին
մէջ կը խառնուի :

Վայրենի լեռին մարդը յամբ քայլելու կ'սկսի ,
զանի կը վերցնէ , և կուրծքին մէջ կը սեղմէ : Կոյսը
անշարժ կը կենայ , բայց այս անգամ չէ թէ անըզ-
գայութեան հանդարտութիւնը , այլ հրապուրիչ
երազի մը հանդիսան էր այն . անոր համար շար-
ժումի դադարը արթննալու երկիւղէն յառաջ
կու գայ :

Մենակեացը դեռ ողիին արխնադոյն վերար-
կուն հագած է և անոր երեւայթը պահած է կիսո-
վին : Բայց հէզ որբին համար աւելի սոսկում՝
Այլ զարհուրելի զգեստէ ի՞նչ կ'ըլլայ , կը բաւէ որ

ահարկու մարդուն հագուստին տակ սիրահարի մը սիրտը միայն արտիէ :

Արշալոյսին շոյիչ սիւքը իւր խարտեաչ մազերը կը ցրուէ , որոնք ուսերուն վրայ կ'իյնան ծփալի : Անոնց խոպոպիքը մերթ ընդ մերթ Մենակեացին բերնին կը դալին , որն որ պահ մը կը վարանի . . . , անմեղութեան քողը անարդելու կը վախէ , զանոնք կը զատէ մեղմով . . . , բայց առտուան թեթեւ շունչը դարձեալ ետ կը մղէ զանոնք : Մենակեացը ա'լ չի զօրեր իր եռանդը և ախներ արդիլել ու էլրտիայի մազերուն դանդուրը կը համբուրէ դուրովագին :

Սիրային քաղցր ելեկտրականութիւն , օրիորդը իւր ամէն գոյութեան մէջ սոյն կիզիչ համբոյրը զգաց , իբր թէ իւր շուրթերուն արուած բլլար : Մենակեացին նշմարը թէ և առաջուանէ փայլուն ու գգուալի , այլ զինքը կը վրդովէ : Առանց վտանգը ճանչելու անոր մօտիլը կանխաւ կ'զգայ : Լեռին գեղադէմ որսորդը զինքը դեռ կը սեղմէ և ինքը դրէ թէ արըչիւ տակաւին հոն հանգչելու կը ժախի իր երակներուն մէջ անձանօթ բոց մը կը վառի , սրտին արովիւնը կը սաստկանայ : Ա՛հ , Մենակեացին սիրտը աւելի ուժգին կը յուզուէր : Յանկարծ կը ստրսռի . ջիչ մը առաջ իր հանդարտ և չափաւոր շարժումները հիմա դաժան և բուռն կ'ըլլան , անխմանայի ձայներ կը մռմռայ , իւր ճակատը դէպ 'ի Էլրտիայի ճակատը կը խոնարհի , իրենց շնչառութիւնը կը խառնուի , իրենց նայուծքը կը սլըղտորի և սիրոյ վառվռուն շունչը անտառին մէջ ա-

ուանձին դանուող երկու սիրահարներու շուրջը խոր մեղական մէղք կը տարածէ :

Սէն-Մորի դուստրը նոյն պահուն Մենակեացին բայուկները կը ձգէ, կը քաշուի, և — կրնամ քայլել, կրնամ քեզի հետեւիլ, կ'ըսէ, ու կը հեռանայ կրկին զարհուրելով :

Առանց դղալու թէ իր քայլերը դէպ 'ի ո՞ւր կ'ուղղէ, ժայռերու մէջ կը թափառի աննպատակ : Բան մը իր ընթացքը չարգելիք և բան մը իւր մտքին դրադում չի ներշնչեր : Էլլտախ լեռը կ'եղէ : Իր աչաց առջև զինանշան մը կը ներկայի : Քիչ մը անդին ծառերէ շրջապատած՝ մենարան մը կայ : Որքը հուսկ յետոյ կը ճանչէ այն վահանը, զոր նախկին օրը Նորենտալ ողջունած էր :

— Ո՞ւր կը գտնուիմ, կ'ըսէ Մենակեացին դառնալով, զիս ո՞ւր կը տանի :

— Քեզի հետեւողը ես էի, կը պատասխանէ Մենակեացը արամազին :

— Ի՞նչ է այս վայրը :

— Վայրենի լեռը :

— Այո՛, կը յարէ, ահա՛ աքսորի ժայրը, ահա՛ այն բնակարանը, զոր Հելվետիոյ տարաբազդը կրնայ իւր լծակցին նուիրել : Հոս իւր յիշատակաց անձնատուր դամբանական ծառին տակ հանգչելով, չոր ու ցամաք հաւամբողիներու վրայ նստած՝ հեղեղին ջրովը, արմատներով, վայրի պտուղներով և քանի մը լեզի խտերով ապրեցաւ : Էլլտախ՛, . . . միթէ անմեղու թեան և գեղեցկութեան ընտրած ամուսինը ա՛յս պէտք էր բլլալ . . . : Աւա՛ղ, բնաւ հայրենիք

չունի անիկա , տխուղոս մը չի կրեր , այս օր ա-
նանուն է և ո՛չ խակ նուէր ընելու յատակ սիրտ
մը ունի . . . : Անոյշ ազաւնիդ Ռենաերըլախի վայ-
րենի լեռին մարդէն փախիր :

— Ա՛հ , կը գոչէ սրբը կաթողին , դժբաղդներէ
չհեռացայ երբէք :

Դառն ժպտա մը Մենակեացին ճակտին փայլ մը
կ'ուտայ կիսովին : Զէնքերու կը մօտի և վահանին
վրայ շողացող արքունի զինանշաններ ցոյց տարով .
— Միշտ այնպէս չէի ինչպէս եմ հիմայ , կը յարէ
վերստին , ատեն մը եղաւ որ իմ անունս հռչակուե-
լով ամբողջ Եւրոպայի մէջ արձագանդ կու տար . . . :
Ափսո՛ս , անցերցն յաղթանակներէն լոկ այս վա-
հանը մնացած է իմ քովս :

Ելտախայի ձեռքը կը բռնէ . — Խօսէ՛ , կը գոչէ
մոյիդին , հարստութիւնը , փառքը , շքեղութիւնը ,
մեծութիւնները քեղի համար հրապոյր ունի՞ն . . . :
Դեռ կրնամ զանոնք քեզ նուիրել : կը բաւէ թէ
բառ մը ըսեմ և իմ վիճակս առաջուրնէ շատ աւելի
ամենուն զարմանքը կը դրաւէ . . . : Այս բառը . . .
ստակու մով միայն սլտտի արտասանեմ , փոյթ չէ . . .
իմ կեանքիս հրամայէ :

— Երկրային արժանիքը և մեծութիւնը միշտ
առեցի կը սլտտաստանէ որբը :

Յետոյ պահ մը լուռ կենալով՝

Երթանք մենաստանը ժուռ դալու , կ'ըսէ և
իր քայլերը դէպ' ՚ի վայրենի բնակարանը կ'ուղղէ :
— Մենակեացին բնակարան , ա՛լ հուսկ յետոյ
մաքրուեցա՛ր , կը գոչէ լեռին երջանիկ որսորդը

և Էլրտիայի ոտքը կնալով՝ վերջ տուր, կը յարէ սրտայոյզ, սիրոյ խրճիթը ընդունէ՛, աքսորեալին կինն եղի՛ր :

— Ուրեմն, իմ ամուսնոյս անունը տուր ինձի :

— Քեզի անունը տամ, կ'ընդմիջէ և սոսկումը երեսին վրայ կ'երեւի. Էլրտիա՛, եթէ այս անունը, մահաբեր յայանութեան մը պէս քու սիրազ իղմէ նորէն յափշտակէր :

— Ո՛վ իմ սիրելիդ, կ'ըսէ Մենակեացը իր երախտագէտ սրտին եռանդուն զգացմանց գլխովին անձնատուր՝, դո՛հ պիտի ըլլաս : Իմ անունս, իմ սխալներս, իմ ճակատագիրս, իմ կեանքս, վաղը քեզի ծանօթ պիտի ըլլան, քու առջեւդ հոգիս պիտի պարզեմ ամբողջ և քու դատաստանիդ պիտի սպասեմ :

Բայց, Աստուած սիրես, այն ժայռերէն մի՛ հեռանար, իմ բնակարանս երեսի վրայ մի՛ ձգեր, Էքպեր վիրաւոր՝ վանք տարուեցաւ, որուն կ'իշխեն իւր կատաղի և անգութ զինուորները, Էնպերկ կոմսուհին ա՛լ ապրելէ դադրեցաւ, իւր ջորին Մուկայի Քարհատին բոցերէն ահարեկ՝ զինքը հեղեղատին մէջ դահավիծեց : Թո՛ղ ուրեմն սր այսօր երկրի վրայ քու միակ ապաստանդ ըլլամ՝ կ'երդնում Սմենակարող Էլին առջեւ որ Ունտերլախի կոյսը մարդկութեան արգիլում Ստուածային առարկայի մը պէս պիտի յարդեմ : Մինչեւ այն կէտին ուր սուրբ սեղանին առջեւ իրար պիտի միանանք. իմ բնակարանս, քանի որ Էլրտիա հոն կը գտնուի, այնպիսի սրբալսյր մը պիտի ըլլայ, զոր իմ ներկա-

թիւնս չպիտի պղծէ , և քեզի պիտի մօտիմ , այլ
ինչպէս կը մօտին այն միութեան կամարին , որուն
ամբարիշտ ձեռք մը չի կրնար դաշխի :

Այն տարազերին պատմութիւնը դրեւու գրա-
դած՝ որ վաղը իւր անունը պիտի յայտնէ քեզ ,
անտառին ծառերուն տակ հեռուն պիտի երթամ ,
բայց գէթ պիտի կրնամ քու ձայնդ լսել և քու
չունչդ , կեանքդ , վերջապէս քեզմէ բան մը դեռ
պիտի այն միայնութեանը հրապուրէ , որուն մէջ
պիտի գրեմ :

Իւր նայուածքին մէջ ի՛նչ կրակ կը փայլէր : Իւր
խօսքերուն մէջ ի՛նչ վսեմութիւն . . . : Մեն՝ Մորի
դուստրը արտուսուալի անոյշ աչերով իրեն կը ժպտի :

— Էլուտիս՝ , կը շարունակէ Մենակեացը , ստէպ
կըցայ քեզի յաղթել , բայց միշտ դքեզ ազատ թա-
ղուցի , քեզ տեսայ որ գրեթէ իմ ստացուածս էիր
և քեզ հնազանդ եղայ : Երբ դքեզ գիրկերուս մէջ
առնելով սիրոյ հրատապ խանդը իմ՝ դդացումս և
միտքս կը մարտէր , քու շեշտերէդ լսկ մին իմ էու-
թեան ամէն կարողութեան կը յաղթէր : Կրնա՞ս
վայրենի լեռին մարդուն վրայ ունեցած իշխանու-
թենէդ կասկածել : Ա՛հ , ինչո՞ւ արդեօք Ռենտեր-
լսի կոյսը միշտ իւր քովը չունեցաւ անիկայ ,
որպէս զի առաքինութեան արահետէն չչեղի . . . :

Քանի մը ժամ եւս , ու զիս պիտի դատես :

Իշխանութեան դադարէն ինկած՝ անցեալ
երիտասարդութեանս անմեղ օրերուն կորստեան
վրայ կը ցաւիմ : Ո՛հ , պատասխանէ՛ , սղաշտելի
օրիս՝ ը , իմ մենարանս կը մնա՞ս . . . :

Էլրտիա յողնած և մտայող վար կը նայի հա-
ռաչելով :

Հաղիւ կընամ ինքրդինքս բռնել , սակէ աւելի
լստիլ չեմ կարող կ'ըսէ :

Ու եղեգէ հիւսեալ աթոռի մը վրայ կ'ընայ
նիհար , աժգոյն և դողդոջուն :

— Ուրեմն ինձ կ'ապաստանիս , կը գոչէ Մե-
նակեացը երախտապիտութեամբ և բերկրութեամբ
արբշիւ : Ո՛վ երկային հրաշի արարած , միթէ
կընամ դքեղ երկրէն դողնալ : Լոկ ինձմէ պաշ-
տուած , լոկ հարցումս դրաւելով քու վիճակէդ
միթէ գոհ պիտի ըլլա՞ս : Սքսորի յարկին տակ իմ
սիրտս քու կեանքիդ պիտի բառէ՞ :

Ի՞նչ կ'ըսեմ : Ա՛հ , միթէ հարստութեան ամէն
պարզեւները արհամարհողը դուն չէի՞ր : Է՛հ , այն
իմսէրս հարստութեան , արժանեաց և իշխանու-
թեան հաւասար պիտի ըլլայ :

Պատուներով սեղան մը պատրաստած տերեւա-
խիտ ստերու տակ , ուր էլրտիայի քեռորդին կ'ա-
ռաջնորդէ : Բնութիւնը դողցես կը ժպտի , եր-
կինքը լուսաստիւռ ամոց հովանիի մը պէս զանոնք
իր երկնագոյն քողերովը կը ծածկէ , անտառակին
երգիչները իրենց երջանկութիւնը կը հռչակեն ,
օդը ծաղիկներէ և պտուղներէ գոյացած երկնային
հիւթի մը պէս , իրենց շուրջը սիրային անոյշ հտեր
կը բուրեն . անապատին մէջ ամէն բան ներդաշնակ
է և արշալոյսը փայլուն և յստակ այս նոր Եղեմը
կը լուսաւորէ :

Սակայն Մենակեացը սրբէն զատուած է . և

ամբողջ օրը իւր կեանքի վշտային սրատահարները կը դրէ : Ճամերը կ'անցնին արագ : Ստուերը յոյսին կը յաջորդէ : Էլրախա կը դոցուի այն ծոցին մէջ, ուր իր համեստ անկողինը կը գտնուի : Լեռին գեղազէմ որսորդը պաշտելի կոյսին բնակած սրբավայրը չի ժտիր մտելու, այդուն կ'սպասէ միայնիկ կռնակը մենարանին դուռին տուած՝ և արդէն սկսած գործը կը շարունակէ :

Խաւարներու դիցուհին իւր շրջանին կէսը հասնելով՝ իւր գահին վրայէն թմբրած երկրի վրայ կապարեայ գաւազանը կը տարածէ : Էլրաթայի քեռորդին անլուր՝ հառաչ մը բերուն՝ կ'արթննայ : Խրճիթէն դուրս վայրենի լեռին մարդը գողցես սոսկալի երեւոյթէ մը զարհուրելով կը զառանցէ : Էլրախա կը կարծէ թէ հաւամբդիններու վրայ անոր ծունր դնելը կը լտէ. . . , Մենակեացը խառն ՚ի խուռն բառեր կ'արտասանէ. . . և խեղդուած արտունջներով գողցես իւր յետին վճիռը բերող վրիժառու ողիլի մը կը պատասխանէ — Շնորհք. . . , կը գոչէ եղկելի ձայնով մը, դթու թիւն. . . , և մահուան լուծիւնը անյուսու թեան շեշտին կը յաջորդէ :

Ինչպէս գիշերը որբին երկար կը թուի. . . : Արշալոյսի ատեն գաղանիքի մարդը նորէն կը տեսնէ : Տխուր և լռին՝ գերբնական պատահարով մը նկուն կ'երեւի : Ահուելի մտախոհութեամբ մը դբաղած է և գլխատու թեան դատապարտուած մահապարտին պէս գլուխը կը ծռէ :

Մենարանէն կը հեռանայ և գործին ձեռք կը դարնէ վերստին . Էլրախա իրեն հարցուփորձ ընելու

չի ժտիր բնաւ : Անհանգիստ և միայնակ տխուր նա-
խազգացումներու անձնատուր կ'ըլլայ : Արեւը մարը
մտնելու ատեն անթափանձելի դաղանիքներ իրեն
ձանօթ պիտի ըլլան : Այլ ի՞նչ պիտի լսէ արդեօք ,
իւր վիճակը ի՞նչ պիտի ըլլայ : Ավտոս , ամբողջ
կեանքի համար որոշում մը տուող վայրկենին մօ-
տիլը ի՞նչպէս սոսկալի է :

Վերջապէս աստղերու թաղաւորը հարիզոնին
ներքեւ կը սուղի և իր առկայծեալ բոցերով Հել-
վեախոյ ժայռերը կ'ոսկեզօծէ : — Մի՛թէ ասոնք
ինձի համար երջանկութեան յետին ճառագայթ-
ներն են , կը միմուայ որբը և չորս գին ակնարկ մը
կը ձգէ Մենակեացը տեսնելու :

Կ'երեւի անիկա , իւր երեսը տժգոյն և նիհար
է , իսկ նայուածքը ապիտղորմ և մոլեղին : Մեւ վե-
րարկու մը հաղած է . — Ինձ հետեւէ , կ'ըսէ բերտ
կերդով մը :

Լեռէն վար կ'իջնէ հապճեպ : Անտառէն դուրս
կ'ելլէ , հեղեղատէն կ'անցնի և իր սոկալի ընթաց-
քը դէպ 'ի Մօրայի դաշտը կ'ուղղէ նոյն առաջին
մարդասպանին նման , որ դատապարտութենէ հա-
լածուելով Արեւի երկիրէն կը խուսէր :

Յերեկը կը շիջի , որուն ետեւէն կ'ուղայ մութը :
Չորակներու մէջէն ելած թանձր մէզ մը լեռերը
կը ծածկէ և բնութիւնը կ'սքողէ , մենաստանին աղ-
ջիկը սեւ մուխերու մէջէն իւր լուին առաջնորդին
կը հետեւի , կը քայլէ ակնկոր և մտախոհ : Յան-
կարծ Մօրա լիճին մօտ Մենակեացը կանգ կ'առնէ :
Միայնակ , եզրին վրայ , արտում կերպով , վշրուող

ալեաց մռնչիւնը էլլտիայի ականջը կը հասնի հո-
վէն : կը դիտէ . . . կը դողդողայ . . . : Ամենակա-
րողդ Աստուած , ո՛ւր կը գտնուի . . . մարդկային
ոսկրոտիէ կամարակապ շէնքի մը առջեւ , իրարու
վրայ դիզուած կմախքէ սիւներու մէջ , վրէժխընդ-
րութեան կողմէ անագորոյն վայրենութեան հա-
մար կանգնուած յաղթութեան կամարի մը ներքեւ :

— Երկի՛նք , ո՛ւր եմ , կ'ըսէ հէգ որբը :

— Մորայի ոսկրեղէն յիշատակարանին տակ , կը
պատասխանէ վայրենի Լեռին մարդը , ու ես Յան-
գո՛ն Շո՛րշ եմ :

Իւր սեաւ վերարկուն կ'իյնայ . . . : Ո՛վ զար-
մանք : Մենակեացը աշխարհակալի դէնք կրելով
կարծես թէ այս ընդարձակ դամբանին մէջ տեղը
դիակներու գահի մը վրայ կ'երեւի , և հոն ոճիրին
դերեզմաններուն տակ վառաց սլալատէն իյնալով
տանջանաց անձաւին յատակը գլորող , շանթահար
հրեշտակի մը տիպարը կը կրէ :

— Յանդուգն-Շա՛րլ , կը կրկնէ վշտահար ձայ-
նով մը տարաբաղդէն էլլտիա : Դո՛ւն , արիւնոուշտ
Պուրկոյնի դուքսը , դո՛ւն , իմ հայրս սպաննողը :

Եւ օրիորդը սրտայոյզ , դողդօջուն մահուան մէկ
սիւնին կը կրթնի :

— Այո՛ , կը պատասխանէ տեսակ մը կատղու-
թեամբ , այո՛ , անյաղթելի Պուրկոյնցին եմ , այն

* Մայն ոսկրեղէն յիշատակարանը յեղաշրջումէն առաջ
դրեթէ ամբողջ կը կենար : Հանրասլետութեան կռի-
ւերու ժամանակը Զրանսացիք զայն կործանեցին : Սակայն
գեւա անոր հետքը կը նշմարուի :

Մարդը որ առենօք Եւրոպայի մեծ հարուստ տուտ
և մեծ աղէտներ սլաւաճառեց : Երկինք . . . նոյն
խոկ երկինք ինձ լոկ հրաման մը տուտ անունս քեզ
յայտներու , այլ սոյն դժօխային կամարին ներքեւ ,
այլ իմ՝ կեանքի ամէն յիշատակները , ամէն սոս-
կումները իմ շուրջս ունենալով : Վրիժառու վճիռ-
ներ բերող հրեշտակը վերջին գիշերը իմ մեղապարտ
դիտուս վրայ իջաւ : Ամպերուն մեջտեղէն Յաւեր-
ժական էին ձայնը լսուեցաւ : Հրամայեց . . . սլար-
տիւմ հնազանդիլ . . . ուստի ահա՛ւատիկ :

Իր կապարեղոյն ճակատէն սլաղ քրտինք մը կը
վաղէ : Իւր աչերը դաժան և խիստ են , իւր շըն-
չառութիւնը բռնուած , իսկ իւր ձայնը հազիւ թէ
մարդկային է . — խօսէ՛ , կը յարէ , և անիծէ՛ զիս :
Աստուած կ'ուզէ անշուշտ , վասնզի այս ահուելի
տեսարանը ընծայել հրամայեց , վասնզի այս ան-
նըման զոհողութիւնը խնդրեց ինձմէ : Չիս ամբաս-
տանողները չորս գիւ կը դանուին . . . անոնց ազի-
ողորմ ձայնը կը լսեմ . . . : Մարդկային ազգը զիս
կը մղէ , երկինք զիս կը մերժէ : Դո՛ւտար Սեն-
Մորի անիծէ՛ զիս , ինձ այս կը վայլէ :

Դժբաղդ Շարլն զարհուրելի յիշատակարանին
տակ կ'իյնայ գրեթէ անշունչ : Իւր ճակատին դրոշ
մը , իւր ըրած զոհերուն մոխրին վրայ կ'եղլէ : —
Շա՛րլ , Շա՛րլ , ոտք ելի՛ր , կը գոչէ : Էլ լատիա ինք-
նասասա :

— Չիս ո՞վ կը կանչէ , կ'ընդ միջէ Մենակեացը ,
որուն գէմբը յիմարութեան օխալարը կը կրէ :
Արդեօք սպաննուած ժողովուրդիս հառաչա՞նքն

է . . . : Մի՛թէ վի՞ճն է այն, որ բռնաւորը կը խոնդ-
րէ . . . : Մի՛թէ արիւնուռչտ մարդուն վճխոր ար-
տասանող Աստուածային արդարութի՞ւնն է այն :

— Ո՛չ, կ'ըսէ որբը, ոգի և սիրտ առնելով .
երկինք հանդարտած է: Իւր արդարութիւնը նպա-
տակին հասաւ, իւր գթութիւնը կը ներէ :

Վայրենի լեռին մարդը սոյն սփոփիչ խօսքերը
լսելուն գլուխը վեր կը վերցնէ, մեծ զարմանքով
էլտտիան կը նկատէ, իւր դիմաց վրայ տակաւին
մնորութիւն մը կը նշմարուի, բայց ալ զառանցելի
կը դադրի, իւր աչերէն արտառքի կաթիլ մը կը
հոսի :

— Ո՛հ, կը կրկնէ՛ դարձեալ օրիս՛րդ, երեւո՛յն
դուր է, է-ր գթութիւնը կը ներէ . մի՛թէ այս բառերը
դուն չարտասանեցիր : Փրկիչ հրեշտակ, յոյսի և
փրկութեան ճառագայթ, քու երկնային պաշտօնդ
կատարէ՛ : Աստուծոյ համար ըլլայ զիս մեղքերէս
արձկէ՛ :

— Դէպ ՚ի Մենարա՛ն, կը դռչէ էլտտիա :

Իւր թեթեւ ընթացքին մէջ կը նմանի այն ան-
ժանօթ աստղերուն, որոնք գիշերային կամարին
տակ կը սահին: Դէպ ՚ի անտառը կը սլանայ, Վայրենի
լեռին արահետը կը գտնէ և Մենակեացին ընակա-
րանը հասնելուն խրճիթին ներքեւ կ'իյնայ յողնած :

Իւր զգայարանայ գործողութենէն քանի մը
վայրկեան գրեթէ կիսովին կը դադրի: Տարաբաղդ-
Պուրկոյնցի Շարլն իրեն կը տեսնուի վերատին, կը
մօտի, ձեռագիր մը ցոյց կու տայ և այս խօսքը
կ'ուզէ անոր :



— Ահա՛, իմ կեանքս, կարգա՛ւ և դատէ՛: Այսուհետեւ առանց հրամանիդ քու առջեւդ չպիտի ներկայանամ: Եթէ իմ ոճիրներս թողութիւն առած կը թուին քեզ, եթէ դժուրութիւնդ սրտիդ կը խօսի, եթէ անմեղութիւնը զղջումին կը ներէ ինձ քանի մը յուսայի խօսք ուղղէ և քու գիրդ լեռին արահետին վարի կողմը հինօրեայ ուռիին խոռոչին մէջ կը դադրի: Քեզմէ հեռի իմ վճիռիս պիտի սպասեմ:

Իւր ձայնը ականջ է և անյուսութեան հարուածը երեսին վրայ ակներեւ կը նշմարուի: Իւր տառապանքը ծածկելու կ'աշխատի, իւր աչերը կը դարձնէ, իրեն դատաւոր ընտրածին սիրտը չ'ուզեր դրաւել իւր անձնական օգտին համար. . . : Էլրտիա անոր պատասխանելու փորձ մը կը փորձէ. բայց ոյժ և կարողութիւն չունի. . . և Մենակեացը մենարանէն կը հեռանայ:

Որքը մինակ է, իւր ձեռաց մէջ մահաբեր ձեռագիրը կը դանուի: Ո՛հ, քանի քանի անգամներ այն սոսկալի գիրը կարդալուն յորդառատ արասուք պիտի թափէ:



Գ Լ Ո Ւ Խ Ժ Ա .

Շարլ է. Յրանսայի վրայ կ'իշխէր և երկար ատենէ ՚ի վեր անխնայ պատերազմներով խռովալոյց, յետոյ պարզ հովուհիի մը ձեռօքը հրաշալի կերպով մը ազատող, իւր այն դժբաղդ տէրութեան մէջ, խաղաղութիւնը վերադարձած էր յուսայի: Ռժգին փոթորիկներու յատակ և զուարթ օրեր

յաջորդած էին: Ամբողջ Եւրոպայի մէջ պատերազմողներու յողնութիւնը գանձերու սպառումին հետ միացած՝ ժողովուրդներու երկար հանդիսա մը կ'աւեաէին :

Շարլ Է.ի որդին Լուի Ժ.Ա. յաջորդել կը բազմար անհամբեր : Գեղանի Անեէս Սօրելը* թունաւորելուն և իր առջի կինը վշտահար սպաննելուն համար ամբաստանուած՝ հիմայ երկրորդ անգամ հօրը դէմ դաւադրելու կը ժտէր : Այս նոր դաւը 'ի դերեւ ելած էր: Լուի երիտասարդ և ոճրագործ, հայրական վրէժխնդրութենէ տարագիր Պուրկոյնի գուքս Ֆիլիք-լը-պոնի քով կ'ապաստանի և անոր արքունեաց մէջէն բնակարան մը կը հայցէ :

Ֆիլիք Շարլ Է.ը կ'ատէր . իւր հօրը , հռչակաւոր Ժան-Սան-Բէօրի (անվախ) սպաննութիւնը անվրէժ մնացած կը թուէր իրեն : Ֆրանսայի թագաժառանգի մը արժանի եղած պատուովը ընդունեց . փառաւոր պալատ մը և գեղեցիկ խնջոյքներ արքայորդւոյն համար պատրաստեցին :

Այն ատեն կեանքիս դարնան մէջ նոր կը մտնէի. Ֆրանսայի իշխանը փաղաքուշ և նրբամիտ, իւր ճակտին վրայ առաքինութեանց և անկեղծութեան տիպարը կը կրէր : Իսկոյն կրցաւ հօրը ամբաստանութեանց համար ինքզինքը արդարացնել: Շարլ Է. անողորմ հրէշ մը , իսկ իշխանը ազնիւ և անմեղ զոհ մը կը թուէին ինձ : Լուի սրտագրաւ ձեւերով , երիտասարդական և սրտագին խափուսիկ կերպերով բարեկամութիւնը նուիրեց ինձ, իմ

* Ֆրնա. Agnes Sorel:

դիւրահաւատ , եռանդուն , հրատապ սիրտս դէպ
'ի իրեն սլացաւ : Այն ատեն չէի խորհեր որ իշ-
խաններու մտերմութիւնը կը նմանի ճիշտ այն չոր
տերեւին , զոր հովը մերթ լեռին վրայ և մերթ
ճահիճներու մէջ կը տարուբերէ ըստ բախտին :

Շարլ է . Ֆիլիբէն իր որդին կը պահանջէր ,
բայց անոր մերժելը տեսնելուն՝ Պուրկոյնի դէմ
սպառնալ ձեւացուց : — Թող ամբողջ Ֆրանսայի
մէջ պատերազմի պատրաստուին , կը դռչէի այս
լուրը առնելուս , և իմ թուրս բռնելով մուկդին ,
քանի որ Շարօլէ կոմսը պիտի կարենայ սոյն եր-
կաթը իւր պատանանէն հանել , Շարլի արբանեակ-
ներէ և ոչ մէկը լուի իշխանին պիտի մօտի :

Իշխանը զայրոյթս նկատելով կը ժպտէր և իր
յայտնած երախտադիտութիւնը իմ հոգւոյս նոր ե-
ռանդ մը , արիւն մը կը ներշնչէին : Ֆրանսայի դա-
հաժառանգի մը պաշտպանը և բարեկամը ըլլալուս
կը փքայի , այլ անիկա պաշտպանը գործի մը , իսկ
բարեկամը ծառայ մը կը կարծէր 'ի ներքուստ :

Պուրկոյնի արքունեաց աւագանիին մէջ ման-
կութենէս 'ի վեր Սեն-Մոր կոմսը ինձ խորհրդական
ընտրած էի : Ինքը քաջ և հռչակաւոր մարտիկ մը
ըլլալով , պատերազմի դաշտերու մէջ իմ առաջին
քայլերուս առաջնորդած , իմ ամեն գործերուս
հետեւած , և ամէն հաճոյիցս կը մասնակցէր : 'ի
բնէ ուշիմ քննիչ և անաչառ դատաւոր մը ըլլալուն
արքայորդւոյն սրտի յատկութիւնները լաւ կը
ճանչէր :

— Կոմս Շարօլէ , ըսաւ ինձ օր մը , ներէ՛ ինձ ,

որ Շարլ է . ի դաւիին նկատմամբ ունեցած չափազանց գորովք պարտաւեմ : Անիկա քու զգացմանց մասնակից չէ , և գուցէ ասով օր մը քու կեանքդ ալ դժբաղդ ըլլայ : Թէեւ իշխանը պատիր քոյի մը տակ պահուած է , այլ ես անոր նենդութիւնը երեւան հանեցի , այն նենդութիւնը , որուն մէջ գուրարեկամութիւն տեսնել կը կարծես :

Այսպիսի խօսուածքէ զայրադին , նոյն օրէն ՚ի վեր Սէն-Մոր կոմսէն կը խորշէի : Անոր վրայէն վատահութիւնս վերցուցի . այսպէս անկեղծ և անձնուէր մարդը կեղծաւոր և անօրէն իշխանին կը զոհէի :

Էրսթալ սեպուհը իւր գուտորը իրենան Ֆիլիբի արքունեաց ներկայեց : Իրենա հեռաւոր ազդականի մը՝ Արովելի գքսուհւոյն ժառանգն էր : Պուրկոյնի մէջ ասկէ աւելի փայլուն դեղ մը չէր տեսնուած , այնպէս որ ամէն խօսակցութեանց նիւթը և ամէն նայուածքի առարկան եղաւ : Արքունեաց այս նսեհ կուռքին շուրջը պաշտողներու խումբ մը կը ժողովէր : Հանրական զգացումին ես ալ մասնակից եղայ , Էլուտիան չէի տեսած դեռ , ուստի իրենա երկնային ճարտար գործ մը կը թուէր ինձ և զարմացումս կը զբաւէր :

Այն ատեն Շարլ է . մեռաւ և ամէն մարդ կը կարծէր թէ արքայորդին թունաւորած ըլլար : Լուի իւր հօրը պիտի յաջորդէր : Իրենայէ հեռացայ , որպէսզի սրտակից բարեկամիս , այսինքն նոր ինքնակալին հետեւիմ , և Պուրկոյնէ մեկնելով գէպ ՚ի Ֆրանսա սլացայ :

Լուի ԺԱ . իւր արքունեաց մէջ թանկագին պար-

գեւնէր տուաւ ինձ , սակայն տիրոջ կողմէն սպասաւորին նուիրուած ընծաներն էին անոնք :

Ի զուր բարեկամս կը բնառէի , հիմայ թագաւոր մ'էր անիկայ : Սոյն յանկարծադէպ փոփոխութենէն վշտահար Լուիէ մասնաւոր բանակցութիւն մը խնդրեցի , հաճեցաւ : Իւր սենեակին մէջ առանձին էր , առաջուան պէս կ'ուզէի զինքը գրկել և սրտադին ու գորովալի կերպով կշտամբել , այլ ինքը ետ ետ քաշուեցաւ , և կնքուած թուղթ մը ցոյց տուաւ ինձ ըսելով

— Կո՛մս Շարոլէ , քու անձնուիրութիւնդ փորձերով հաստատեցի , ուստի պարտիմ երախտագէտ ըլլալ : Նորմանտոյ կառավարութիւնը քեզ կը յանձնեմ և ահա՛ քու հրամանագիրդ : Վաղը Ռուան պիտի երթաս , ուր պարտաւորութիւնդ քեզ կը կանչէ : Նայէ՛ որ այսուհետեւ ալ քու արքայիդ վստահութեանը և բարեացը արժանի ըլլաս :

Լուի այս խօսքը ըսելէ յետոյ հեռացաւ : Չչարումով և զարմացումով սրտաբեկ՝ պահ մը անշարժ մնալէ յետոյ պալատէն դուրս վաղեցի մոլեղին և կը գոչէի իւրովի .

— Ահա՛ այսպէս են իշխանները , թշուառութեան մէջ քաղցր և շոյիչ , երջանկութեան մէջ ապերախս , սէգ և խրոխտ :

Սեն-Մորի կոմսը մինչեւ Բարիզ ինձ ուղեկից եղած էր : Իմ զայրոյթի և նոյն իսկ մոլեղնութեան մէջ կ'ուզէի դիր մը ուղղել Լուիի , իր պարգեւները արհամարել և նոյն օրը իր երկիրներէ փախչիլ , Սեն-Մորի իմաստուն խրատները իմ անխոհեմ որս-

չումն փոխեցին, այլ ի՞նչու չկրցան իմ վիշտերս ամու-
քել . կեանքի գարնան մէջ սրտի առաջին վէրքերը
խիստ ցաւագին են . . . : Մարդկային փորձառու-
թեամբ մարդս բնաւ չէ զգաստացած գեռ : Ըզ-
գացումի սաստիկ ցաւը կրելէ զատ խափուած ըլ-
լայուս համար ամթահար կը մնայի . ցնորքներուս
ցնդիլը մեծ վիշտ կ'ազդէր ինձ :

Մարդկային սեռին նկատմամբ արհամարհանքը
առաջին անգամ կ'իջնէր իմ եռանդուն և անկեղծ
հոգւոյս մէջ , զոր Լուի վշտացուցած էր : Սեն-Մոր
արքայորդւոյն վրայ այն դաղափարը ունենալուն
իրաւունք ունէր , բայց իր ներկայութեանը չէի
ուզեր իմ պարտութիւնս յայտնել : Թագուն մոլու-
թիւնները երեւան հանելու մասին իր ունեցած
հանճարը հանրական շարութեան վրայ իր ունեցած
ներքին համոզումին կու տայի :

Այսու ամենայնիւ ինձ տուած խորհարդին
համեմատ Բարիզէ մեկնելով Նորմանտիոյ կառա-
վարութիւնը ձեռք առի : Լուի իւր անտարբերու-
թիւնը յայտնելէ յետոյ , հիմայ իւր ատելութիւնը
ինձ փորձով երեւան կը հանէր :

Շարլ Է.ի մահուանէն շատ տարիներ առաջ
Բրիտանիոյ՝ կոմսը կը ճանչէի , մեր երիտասարդ
հասակին մէջ իրարու դէմ ոտիս ըլլալով դաշտային
պատերազմ մը բացինք և յաղթութեան մրցանակը
առի : Լուի մեր փոխադարձ թշնամութիւնը գի-
տէր : Նորմանտիոյ մէջ հազիւ իշխելու կ'սկսէի
երբ Ֆրանսայի թագաւորը արտաքոյ կարգի իշխա-

* Ֆրանսայի մէկ նահանգը . Ֆրնս . (Bretagne) :

նութեան տէր և կուսակալի պաշտօնէ գերագոյն պաշտօն ունեցող անձ մը քովս կը դրկէր և այս անձը Բրիտանիոյ դուքան էր :

Այս նենգաւոր դործը , այս նոր թշնամանքը տեսնելով շափազանց զայրացայ . Սեն-Մոր դարձեալ կըրցաւ իմ զայրոյթս ամաքել , Սակայն առաքիւի սրտի մը սրամտութիւնը պարսաւելով մարդիկ խաբել սորվեցուց ինձ , իւր խրատներովը սովորեցայ զգացումը շահի զոհել և սրտի աղնիւ յոյղին տեղ , մաքի ցուրտ հաշիւները փոխադրելը Հուսկ յետոյ յաջողեցաւ իմ ներսի դիւս դտնուած եռանդի և ուղղութեան արդիւնաբեր շտապիչները շիջել , որոնք՝ եթէ ազատ ածել կարենային , փառաւոր արգետոք պիտի տային , կսխուած կրակը աւերիչ հրաբուզիւ մը եղաւ , որ հուր ժայթքեց և խոհեմութեան ձայնը զիս միայն դէպ ՚ի ոճիր առաջնորդեց :

Լիէժի բնակիչները երկար ատենէ ՚ի վեր , Պուրկոյնցիներու յայտնի թշնամիներն էին . Լուի ԺԱ . անոնց հետ դաշնագրութիւն մը կ'ստորագրէ : Իւր նուաաս և անարդ . քրտեսները Ռուանի մէջ զիս պաշարած էին , մարդասպաններու դաշոյնը ամէն օր կենացը դէմ կ'սպառնար , իսկոյն մահուան ըմպելին միջեւ գերեզմանին դուռը տարաւ զիս :

Իմ ոյժս ու երիտասարդութիւնս թոյնին յաղթեցին : Նորէն ապրիլ սկսայ . այլ մարդկային ամէն ճիգ և հնար չկրցան այս անգամ մոլեղնութիւնս զսպելը Լուի ԺԱ . ը ուխտագրութ , մատնտու , թունաւորիչ և հայրասպան հրապարակեցի : Երկրային նա-

խատանայ ու երկնային վրէժխնդրութեան արժանի ցոյց տուի զինքը . այնուհետեւ իւր ատելի հրամանագիրը ետ դարձնելով ընդ ոսա դացի Պուրկոյնը Ֆրանսայի դէմ պատերազմի պատրաստելու :
Փաղաքուշ ինքնակալը իմ ամբաստանութեանցս համար խիստ վշտացած երեւցաւ : Ազգերու առջեւ ինքըզինքը արդարացնելու մտօք , իւր ազգատոհմին իշխանները , արքունեաց աւագանին , քաղաքներու երեսփոխանները խորհուրդի հրաւիրեց , իւր ամբողջ կեանքը անմեղ ցոյց տալու փորձը փորձեց , ժողովին մէջ յանդուգն և հանճարեղ կերպով խօսեցաւ և հոններկայ գտնուողները դատաւոր կարգեց :

Սակայն բռնակալը իւր դատաստանին անդամները ինքը ընտրած էր և ոճրագործը արդարացաւ :

Բայց տէրութեան գլխաւորները երբ պատերազմի և վրէժխնդրութեան ազազակս լսեցին , Հուի ժԱ.ի դէմ ապստամբեցան և արդէն արքայի փեսան , Պուրպոնի դուքսը , Ալանսոնի դուքսը , Արմայնեաքի կոմսը , ասոնցմէ զատ խել մը սեպուհներ և դուքսեր , նոյն խկ Բրխտանխոյ դուքսը ինձ միացան :

Սոյն դաշնակից իշխանները* իշենց հպատակները զինուորելով ընդհանուր ապստամբութիւն մը երեւան հանեցին : Տէրութեան զօրութիւնները իսկ բռնաւորին մահ կ'սպառնան , որն որ իրեն դաշ-

* Այս պատերազմը « Հասարակաց բարւոյն պատերազմը » կոչուեցաւ :

նակից ունի միայն Միլանի դուքսը, Ֆրանսուա Սֆօրս անուն նշանաւոր պուսնկորդին :

Քաջասիրտ բանակի մը գլուխը անցած դէպ ՚ի պատերազմ կը սլանամ : Շատ շանցնիր Պուրկոյնցիք Լուիի դուսդերը հալածական կը վանեն : Ամէն կողմէ բիւրաւոր դավնեայ պսակներ գլխուս վրայ կը տեղան և յաղթութիւնը մեր դրօշակներէն չի զատուիր բնաւ : Քանի կ'երթամ կը յաղթեմ, Ֆրանսայի քաղաքները իրինց դռները կը բանան ինձ . ժողովուրդները զիս իրենց ազատիչ կը կոչեն . ամէն թշնամիներս ցիր ու ցան կ'ընեմ, ամէն վտանգ կ'անգոսնեմ, և Բարիզի առջեւ հասած ատեն ամբողջ Եւրոպա Շարուէ կոմսը Ահաբեհեմ-Շուլ կ'անուանէ :

Լուի ԺԱ. իր ամէն զօրութիւնները մայրաքաղաքին մօտ կամփոփէ : Լոնժիմոյի դաշտին մէջ վերջնական պատերազմ մը տեղի կ'ունենայ, ուր Շարլ Է.ի տղան անձամբ կը կուռի, քանի մը անգամ իր կեանքը վտանգի կ'ենթարկէ և հուսկ յետոյ շնչասպառ իյնալով Մոնթլերիի դղեակը կը փոխադրուի անզգայ : Իւր զինուորներու պարտութիւնը իսկոյն կը յայտնուի : Ֆրանսայի գլխաւորները արքայական դահէ զինքը վար առնելով իր եղբայրը Պերիի դուքսը միևնոյն պատերազմի դաշտին մէջ Ֆրանսայի արքայ կը հրապարակեն :

Բարիզը կը նուաճեմ . Լուի գաղտնի աղաչանք կ'ուղղէ ինձ, մեր նախկին մտերմական զգացումները կը յիշեցնէ, իր հինօրեայ բարեկամին կը պազատի, ինձմէ պահ մը բանակցութիւն կը հայցէ և իմ անկեղծութեանս վտահերով կ'ուղէ առանց

իւր հետը ուղեկից կամ պահակ ունենալու առան-
ձին բանակս գալ և զիս տեսնել :

Ոխակալութեանց ասպարէզի մէջ ընկ սկիզբ
մ՞ էր այս, և այն նոր երկրի վրայ դեռ քայլերս հաս-
տատ չէին բնաւ : Գժբաղդ Լուի ԺՄ.ը փախտա-
կան արքայորդին կը յիշեցնէ ինձ : Արտասուալի ա-
չերով իր նամակը կարդալու ատեն ցաւ , զղջում
և ճշմարտութիւն գտնել կը կարծեմ հոն : Իր դըժ-
բաղդութիւնը իմ դութս և համակրութիւնս կը
գրաւէ , իր վստահութիւնը զինաթափ կ'ընէ զիս .
փաղաքուշը կը յաղթէ ու ես արքային կը պատաս-
խանեմ . թէ զինքը ընդունելու պատրաստ եմ :

Մեր գունդերը Պերսիի մօտ բանակ կազմած
էին , իսկ արքայական զօրքին մնացորդը Սենայի
միւս եզրը կը տարածուէին : Ֆրանսայի միապետը
գիւրարեկ նաւակով մը կը սահի կ'անցնի դետէն :
Իւր թշնամիներու առջեւ նաւակէն մինակ դուրս
կ'ելլէ . մինչեւ այն ատեն անոր իմ վրայ ունեցած
վստահութեանը համար կը կասկածէի :

Գետեզրէն քիչ մը հեռանալով ինձ կը մօտի .
սիրտս կը տրտիէր ուժգին , զինքը տեսնելուս իս-
կոյն ճանչցայ այն արքայորդին , որ ինձ սիրելի
եղած էր մէկ ատեն . ալ ինձի համար Լուի ԺՄ.
չէ անիկա , այլ երկտասարդ հասակիս մտերիմ
ընկերը , իրեն քով կը սլանամ : — Ո՞վ է որ ինձ
կը մօտի , կ'ըսէ անի :

— Եղբայրդ , պատասխանեցի իւր դրկացը մէջ
նետուելով :

Էլտո՞իա՛ , այն օրը չպիտի մոռնամ երբէք ,

տակաւին զիս կը խարէին , այլ երջանիկ էի ես :
Լուի իմ հաւատարմութիւնս իրեն խաղաղք բրած
էր , այլ ես գոհ ու զուարթ էի :

Անգթութեան շաւիղը թող սալով նոր , դըզ-
ուալի և ազնիւ զգացումներ կը տածէի , իմ օրերու
դարնան եռանդը և նախկին կեանքս ձեռք կը
ձգէի :

Սոյն մեծանճն արիւնը և խանդը արքային հա-
մար նպաստաւոր ելք մը ունեցան , վասնզի դիւ-
րին կերպով մը կըրցաւ խաղաղութիւնը վերահաս-
տատել : Քանֆլանի դաշնագիրը ստորագրուեցաւ :
Միապէսը Ֆրանսայի դիւսաւորներու նոր ստաց-
ուածներ և նոր պատիւներ խոստացաւ : Դաշնա-
կիցները զատուեցան : Լուի յաղթութիւնս հռչա-
կելու համար մինչեւ Վիլեէ-լը-սէլ ուղեկից եղաւ
ինձ , ուսկէ Պուրկոյն անցայ :

Ափսոս , երբ պատերազմող մը՝ անգամ մը մի-
այն իր շուրթերը դէպ ՚ի վառաց բաժակը կը տանի ,
պատերազմի ծարաւը ալ չչնջիր իր ներսի դին :
Յաղթութիւններովս մեծ համբաւ ստացայ և ու-
զեցի իմ հռչակն աւելի ընդարձակել : Լիէժցիք
Պուրկոյնի դէմ կ'սպառնային , և անոնց երկիրը
արչաւելով զիրենք նուաճեցի . նենգաւոր յաղթու-
թիւնը իմ զօրուն հետ միանալով ինձ վառք միայն
կը ներկայէր , պսակ միայն կը խոստանար . . . և
վիհ մը միայն կը պատրաստէր :

Լուի Քանֆլանի դաշնագիրը ոտնակոխ կ'ընէր
անընդհատ : Թշնամի ամէն դուառներու և իշ-
խաններու մէջ վարպետօրէն խաւովութիւն և բա-

ժանու՛մ սերմննա՛ծ ըլլալով . ալ գաշնակցութենէ՛ մը չէր վախեր . իւր խորամանկութեամբը գժտու-
թեան ջահերը վառած և իր նննդութեամբը ատե-
լութիւնը բորբոքած ըլլալով, նոր միաբանութեան
մը վտանգներէ՛ սպահով էր : Ուստի այն ատեն իր
խոստումը աշխարհի առջև դրժեց անվեհեր : Այն
Ֆրանսայի գլխաւորները , որոնց հարստութիւն և
պատիւ խոստացաւ գաշնադրին մէջ, բանտարկեց ,
կողոպտեց և աքսորեց : Իմ սիրելի բարեկամներէ՛ս
մէկ քանին սպաննեց անխնայ : Թրխութան կրօնա-
ւորը , որուն որոշակա՛ն որոշի՛ծ մականունը տուած
էին , իւր սխակալութիւնները ՚ի գործ կը դնէր :
Լուի այն խեղճերու սպաննումը տեսնելով, մեծ հա-
ճոյք մը կ'զգար : Թրխութան դատապարտեալներու
տանջանաց ձեւը կը փոխէր սրպէտղի հաճելի թուի
իւր գաժան արքային : Բռնաւորը սնապաշտութիւնը
անդժութեան հետ միացուցած՝ ոճիւր կը հրամայէր,
մասնութեանց կը յօժարէր , սպաննութեանց ներ-
կայ կը գանուէր : Այնուհետև կ'սկսէր աղօթքով
և ուխտերով միայն զբաղիլ , ընկ խաչ և նշանագիր
կրել , սլաակերներու և սրբոց մասունքին վրայ
միայն երդնուլ :

Ֆրանսայի այն ազնուական ընտանիքները , որ
հինօրեայ ծառայութիւններով ձեռք ձգած իրա-
ւունքներ ունէին աչքէ ինկան , փառաւոր անուն
մը կրող մարդիկ որ չէին ուզեր իրենց պատիւը
արատել բռնակալին անյարմար կու գային , վասն-
զի անիկա նուաստ գործի միայն կը բնտուէր :
Լուի պէտք էր այնպիսի մեծեր , որ իրեն արարած-

ները ըլլային և ըստ քանց կարենար զարնել կամ
 դիրենք անհետ ընել անվեհեր : Ամենէն դժուճ և
 տննչան սծրադործները այնուականութեան առա-
 ջին կարգին և տէրութեան բարձր պաշտօններու
 հասան . բայց այն թղուկին նման որ եթէ Ալպեան
 լեռներու կատարն ալ հանես կը բարձրանայ , այլ
 չմեծնար բնաւ , նոյնպէս գահին մօտեցող ազգեցու-
 թեան տէր մարդն ալ ընկեցիկ և անարդ մնաց :
 Լուի ՅԱ. աստիճանները հաւասարել կը խորհէր ,
 այլ տիազոսներու պէտք եղած մեծարանքը վեր-
 ցուց , պատիւը անարդեց : Քռնաւորները կ'ուզեն
 ամէն բան նուաստացնել , որպէսզի ամէն բանի մէջ
 առաջ անցնին . աստիճանի հաւասարութիւնը բըռ-
 նութեան կը յարմարի :

Պուրկոյնի դուքսին երկիրները Շարլ Է.ի զաւ-
 կին գաղտնի պատուիրակներովը , լրատներովը լե-
 ցուն էին : Տինան քաղաքը անոնց հրաւերը լսե-
 լով կ'ապստամբի . հայրս ինձ կը հրամայէ դէպ 'ի
 հոն արշաւել , ես ալ անոնց ամբողջ կը պաշարեմ :
 Լուի Է. օգնութիւն առնելու յուսադիր՝ հօրս տձեւ
 արձանը ժանտահատ տիղմէ անկողինի վրայ դնելով
 պատնէշին վրայ կը տարուբէրէին , վարը դանուող
 Պուրկոյնցիներու այսպէս դռչելով . — «Ահ՛ յեր-
 նորէ և զյոս իշխանին գահը : »

Այս ապստամբութիւնը , այս պատերազմը , և
 Ծրանասլի մէջ 'ի դործ դրուած այն ամէն սծիր-
 ները և աղէաները Քանփլանի գաշնադրին հետեւու-

* Տե՛ս Ծրանասլի ամէն պատմագիրները :

Թիւնն էին: Իմ արգարուծեան և գթութեան վար-
ձատրութիւնը այս էր: Առաքինութիւններս սկսան
տկարութիւն և թուլութիւն թուիլ ինձ, և այն վե-
հանձն գործերս աններելի սխալներ:

Տինան քաղաքը դեռ կ'ըզդիմանար, այլ իւր
պարտութիւնը ակներև ևր տեսնուէր: Իրենց սպառ-
ժացող վտանգը ցոյց տալու համար, պատգամաւոր
մը ևր զրկեմ, իսկ անոնք ևր կախեն զանի: Իրենց
ևր դրեմ և նամակս լիօքք աղու մը հետ ևր զրկեմ,
որպէսզի գէթ անոր հասակին վրայ գթան, այլ
ապստամբները չարաչար կ'սպաննեն զանի: Իմ զայ-
րոյթս բորբոքելու և զիս դէպ ՚ի եղեռն առաջնոր-
դելու համար, կարծես թէ գթոխային ամէն աղղե-
ցութիւն ինձի դէմ գրգռուած էր: Ապստամբ քա-
ղաքին զօրութիւնը անդէն ևր նուազի: Իւր պա-
հասան զօրքը ալ յոյս չունի, պատնէշը ամէն
կողմէ ևր կարծանի, բնդհանուր և վերջնական յար-
ձակում մը ևր տրուի: Տինանի բնակիչները այն ա-
տեն միայն իրենց անմտութեամբը բացուած միհը
ևր նշմարեն, այլ շատ ո՛ւշ: Առանց պայմանի իմ
կամացս անձնատուր ըլլալ կ'ստիպուին: Սակայն
տակաւին չէի ուզեր վրէժս լուծել: Ամբողջին տէր
եղայ և հօրս որոշմանը սպասեցի: Յիլիր՝ Պուվին
գացած էր. ապստամբ քաղաքին կործանումը հրա-
մայեց և անոր ամէն բնակիչներու մահուան գա-
տակնիքը ստորագրեց:

Կեանքիս ոճիրները և անդթութիւնները հոսկէ
կ'սկսին: Հօրս հրամանին ևր հնազանդիմ: Ծե՛ր,
կին և մանուկ միայն ևր խնայուին, իսկ Տինանի

միւս բնակիչները կ'սպաննուին : Ապտամբ դիւաւորներէ ութը հարիւր հազի երկերկու կապուած Մէօզ գետը նետել տուի , ու աւեր և անապատ դարձած քաղաքը հիմա ա՛լ հրդեհին բոցերէն դիտովին անհետացաւ :

Մոյն աղէտալի և մահաբեր պաշարումէն քիչ մը ետքը , Յիլիր մեռաւ ու Պարկոյնի դքսութեան դահը նստիլս սոսկալի մարդասպանութեամբ մը նշանաւոր հանդիսացաւ : Ո՛վ կոյսդ Ունտերլախի : սոյն աղէբէկ նկարագիրը ընելու ատեն , գրիչս կը կատի . . . պիտի դողդողաս : Ախա՛ս , այլ պէտք է յրացնել , վասնզի կը բաղձամ որ ամէն յանցանքներս ծանօթ բլլան քեզ :

Անդրէն Տիժօն կը դառնամ , ուր իմ հայրս թաղուեցաւ : Լուի ԺԱ. ի ոսկին և իր խորամանք ընթացքը քաղաքին մէջ ամեն միտքերը ինձի դէմ դարձուցած էին , միւս կողմէն Լիէժցիք իր ձայնը լսելով նորէն ապստամբեցան , զէնք ձեռք առին ու մեր երկրէն քաղաք մը դբաւեցին :

Նոր հարկեր դնելու և նորէն զօրք ժողկելու ստիպուելով նոր դատերազմ՝ պիտի սկսէի , երբ ապստամբութեան ցոյցեր տեսայ մայրաքաղաքիս և նոյն խի բանակիս մէջ : Սէն-Մոր կոմսը զինուորներու պաշտելի դիւաւորը օր մը իմ առջեւս կը ներկայի . խիստ և դրեթէ սպառնալի կերպով մը իմ միտքս դբած սրոշումները կը պարտաէ , և Լիէժցիներու վրայ յարձակելու առարկութեանս կ'ընդդիմանայ : Սակայն ասկէ աւելի արդարացի պատեւրազմ մը չէր բլլալ բնաւ : Ինձ սպառնացող թշնա-

մին երկու անգամ՝ դաշնագիրը սանակոխ ըրած , երկու անգամ իր երդումը դրժած էր : Չայրոյթս իրաւացի էր : Այն նենգութիւնները նկատելով , որոնց ստէպ զոհ գացի , Սէն-Մորի խրատները կը մերժէի զայրագին : Կոմսը իր հրաժարականը տուա ինձ : — Ի՞նչ , կը գոչէի իւրովի , անոր հեռանալը տեսնելով , ինքքզինքք բարեկամ կը ձեւայնէ , այլ վտանգի զանգակը հնչած ատեն՝ գլխովին թող կ'ուտայ զիս :

Յանկարծ պալատին բակին մէջէն ահուելի ազաղակ մը լսելով իմացայ խտրոյն որ կուիւ մը փրթ թած է , պահակներս ապստամբներու հետ կը կրուուէին : Յարձակողներու դուռովն և դռնովն մէջէն այս ձայները ականջս հասան . բռնաորին մահ . Կեցե՛ Սէն-Մոր : Բարեկամութեան մատնութեանցը սովորած՝ ա՛լ տարակոյս չունիմ որ կոմսը ինձի համար երկրորդ Լուի մ' է . բաղմամբիւ ասպետներ կ'առնեմ հետս և պահակներու օգնութեան կը վազեմ սպառապէն : Պալատին սանդուղներուն վրայ Սէն-Մորի կը հանդիպիմ , որն որ քովս դաւով զիս արգիլել կ'ուզէր : — Մատնի՛չ , կ'ըսեմ իրեն , թո՛ղ զիս : Այլստամբներու ահագին ձայնը ականջիս մէջ կը թնդայ , շուար ու մուրթ՝ իմ քայլերս արգիլող կոմսը նկատելով զիս զարնել ուզող մարդասպան մը տեսնել կը կարծեմ , զինքք կը մղեմ մղեղին , և իմ զօրուն ցոյց տալով կը գոչեմ . — Ահա՛ դաւաճաններու պետը :

Հազիւ թէ այս խօսքը կ'արտասանեմ , մէկ մ'ալ յանկարծ իմ վայրենի արբանեակներս իր շորս զին

կը ժողովին և սուրի մահարեր հարուած մը կ'իջնէ անոր: Ածրադարձութեան պատրաստ, վառ փառաքաշներու գլխաւորը կ'ուղէին սպաննել հապճեպ, ըստ որում անոր վեհ և անաչառ բարոյականը կ'ատէին: Էլլոսիս, քու տարաբազդ հայրդ առջեւս կ'յնալով մեռաւ. այլ գոնէ, երկինք միայ ըլլայ ինձ, իմ ձեռքս անոր արիւնսովը չթրջեցի:

Ազգաւամբներու մէջ տեղ կ'երեւիմ, կը մրցիմ և կը յաղթեմ: Այլ աւանդ, յաղթութենէ առաջ սպաննութիւն մը գործուած էր: Սեն-Մորի մահը արդարացնելու համար, անոր նենգութիւնը կը հաստատէի, թէեւ քաջ ապահով չէի այս մասին: Թշնամակի և անարժան վճիռով մը իւր յիշատակը արատեցի, իր ամէն ստացումները յարքունիս դրաւ եղին և իր վտաւբազդ այրին թաղուն ապրելու համար հեռաւոր երկիր մը գնաց տարագիր:

Էիէժցիք երեսուն հարսը հողիի շտի ժողոված իմ գաւառներս դրաւել կ'սպառնային: Մոյն ժպիրհ ազգաւամբներու միայ հոսկ յետոյ կը յարձակիմ, և կատարեալ յաղթութիւն մը կը տանիմ: Սենդրոն քաղաքին կը ախրեմ, ուրիշ քաղաքներ անձնատուր կ'ըլլան, այլ ես ամէն տեղ իմ փառքս կ'ազարտեմ վրէժխնդիր գործերով:

Փայրաքաղաքս կը դառնամ, ուր խոր հանգիստ մը կը տիրէր. խոռոխութիւնը դադրեցաւ և թշնամիներս լուծիւ տակն ինկան. Տիժոն հանդէսներ կը պատրաստէր ինձ: Իմ շուրջս փառաւոր սարքունիք մը ժողովեցի, հաճոյք և խնջոյք միայն պատրաստեցի: Իրենան կրկին տեսայ: Եւ Արափ-

ի զեղադէմ՝ ժառանգը իմ սիրաս նորէն գրաւեց :

Էլ լոտիա՛, մի թէ շարունակել տխրի ժախ՝ . . .
Էրս թայի աղկան սիրային ամէն հրապայրները մա-
տուցի : Քաղաքական պարագաներու ներս՝ ա-
տեն հարսանեաց հանդէտը հռչակել խտտացայ ,
խտտանանս վրայ յաւէտ հատաստ մնալ երդմնեցայ :
Իրենա իմ երդմանցս հաւատ ընծայեց և հայրենի
տունէն խոսիրս Պարկոյնի հինօրեայ գղեկի մը
յատուիր եկաւ ինձ ասպախներու :

Ամեն օր Լուիս նորանոր խաղէութիւնները ա-
կանջս կը հասնէին : Լուի՛ թուր քաղքին մէջ երես-
փոխաններ , եկեղեցականներ ու զօրապետներ
ժողովեց , և իր թէ իրաւայի կերպով Քոնֆրանի
գաշնադիրը ջնջեց , նկատելով որ ապստամբները
բռնի ստորագրել տուած էին : Անկիտայ Էպուարդ
թագաւորը ուխտագրու՛ժ արքային դէմ իր զօրու-
թիւնը իմ զօրուն հետ միացնել առարկելով իւր
Մարդարիա անուն քոյրը ինձ կնութեան տալ կ'ու-
ղէր : Սերը թէեւ այս փառաւար կապը կ'արդի-
ւէր , այլ ժողովուրդիս շահը այս մասին հաւանու-
թիւն տալու պարտք կը դնէր իմ վրաս : Քաղա-
քականութիւնը և փառասիրութիւնը ազգու կը
խօսէին իմ հողւոյս : Իրենա զհոռեցաւ ու ես դէպ
ի Անկիտայ իշխանուհին սլացայ : Տա՛՛՛՛՛՛՛՛ եկեղեցին եր-
կու ամոխներու երդումը ընդունեց :

Հարսանեաց հանդէսէն քիչ օր ետքը կը խու-
սիմ գաղանի , և իրենայի բնակած գղեկակը կ'եր-
թամ : Իմ ապօրէն գործս թողուն պահելու հա-
մար ձեռք տուած զգուշութիւններս ՚ի գերեւ

Երան , Արովիլի ժառանգը ամեն բանի վերահասու
ըլլալով նոյն գիշերը դղեակէն անհետ եղած էր :
Վշտաբեկ և ցաւագին սկսայ զինքը վնասել , այլ
ի զս'ը Իրենայի կայութեան վրայ անթափանց
քող մը ծածկուած էր :

Թուրի ժողովին որոշումը լսած ատեն՝ Լուի
դէմ պատերազմ հրապարակեցի : Իմ յաղթական
զօրուն զլուխ անցած՝ իւր անբութեան ուսման
ներէն ներս մտայ , մարտի հրաւեր կարգալով :
Ֆրանսայի բանակը իմ առջևս կանդ կ'առնէ ա-
հարեկ . պատերազմը հատու և որոշ պիտի ըլլայ :
Կը հաւատասօ , Էլրտիա՛ , թէ Շարլ Է-ի զուակը՝
կռիւին մէջ անցաջող ելլելու երկիւղով , իր նախկին
եղբորը՝ ինձ հաշտական նամակ մը գրէ . Բերոնի
մէջ կրկին տեսութեան կը հրաւիրէ , Բերոն՝ որ
Պուրկոյնցիներու կը վերաբերի , և Շարլ տակաւին
հաւանելու և իւր ըսածներուն միտ դնելու մեղ-
մութիւնը ունի :

Լուի Ժ.Ս. իր բանակէն կը հեռանայ : Անպա-
հակ և անպաշտպան ինձ կ'ուզայ , արդէն իւր
մատնութեանց , իւր դրժութեանց և իւր սպաննու-
թեանց նկատմամբ արդարանալ կը ճգնէր վարպե-
տորդին , երբ թղթատար մը Լիէժցւոց նոր մէկ ա-
պրտամարութեան լուրը կը բերէ : Ապտամարու-
թիւնը գրգռողը Ֆրանսան էր : Ասկէ զատ կ'իմա-
նամ որ Լուի մինչդեռ մէկ կողմէն ինձմէ տեսու-
թիւն մը կը հայցէր , միւս կողմէն Լիէժը ինձի
դէմ ոտք հանելու համար շտապաւ նամակ գրկելու
կը ժախէր :

Բարկութիւնս անսահման էր : Լուի իշխանութեանն ներքեւ կը գտնուէր, ուստի սրտմտութիւնս իրեն յայտնեցի , ամենէն ծանր և անսպասելի խօսքերը ըսի իրեն , նոյն խակ մահ կ'սպառնայի : Լուի ինքըզինքը անմեղ ցոյց տալով կը բողոքէր վայրասպար , 'ի դուր կ'երդնու որ Լիէժցիները չզինելէ զատ, պատրաստ է ինձ օչնելու անոնց դէմ : Բան մը չի կրնար իմ դայրոյթս ամնքել : Զինքը իրբեւ տարուկ կը պահէմ իմ քովս, և կը թողում որ խղճին խոյթը վիշա և ցաւ ազդէ իրեն :

Շատ օրեր անցան : Լուի ԺԳ. իւր բանտին պատահաններէն սոյն սոսկալի աշտարակը կը դիտէր, ուր տեղ Հերպեր Տը վերամանտուա կոմսը ԳՁ8 թուականին Շարլը Լը Մէմբլն բանտարկած էր , որն որ հոն իւր արքայական թագը և կեանքը կորսնցուցած թր , սոսկումը , անցուտութիւնը անոր հողին փոխտակի աղէյօշ կը պատուէին : Մնոր գահը կործանելը , իւր եզրայրներէն մին թագաւոր կարգելը , կամ անոր արքայական թագով իմ ճակատս սլտակելը ինձմէ կախեալ էր . իմ անցեալ յաղթութիւններս , իմ իշխանութիւնս և անունս ամէն տեսակ ձեռնարկ ընելու թոյլ կու տային ինձ , և ամէն տեղ յաջողութիւն կ'երաշխաւորէին : Իմ կողմէս բառ մը կրնար այն ստեն Եւրոպայի կերպարանքը փոխել : Ոճիրի ասպարէզը մտած կրնայի՞ ետ քաշուիլ . . . : Իմ դերիխ տէրութիւնը նուաճելով Լուի ԺԱ. ի նենդութեանց պատիժը և իմ յափշտակութիւնս փառքով արդարացնելը շատ գիւրին էր ինձ : Քրանսա յանդուգն աշխարհակալին զբայ պիտի

զարմանար և մատնութեան արատները յաղթութեան պատկներու տակ անհետ պիտի բլլային :

Յւժղին յաղթահարուած՝ տակաւին անիրաւութեան զօրութեանց դէմ՝ կը ստեղծէր, այն անիրաւութիւնը, որ աստիճանաբար հողիս կը գրաւէր : Եւտին անդամ արեւը իմ վրաս պաշտպան ճառագայթ մը նետեց, ու ես շտապաւ այն բնակարանը գացի, ուր թագաւորը իւր վճիռին կ'սպասէր ասհարեկ :

— Գու խղճի տաղնապղ անկե՞ղծ է, դոչեցի : Իրա՞ն է թէ լիւժիցիները չգինեցիր, իրա՞ն է թէ ինձի հետեւելու պատրաստ՝ կ'ուզես անոնց դէմ պատերազմիլ :

Իմ ձայնս աղիտղորմ էր, նշմարս զայրադին և ձիերս սպառնայի : Գութը սրտիս մէջ, այլ մուկոյնութիւնը ճակտիս վրայ էին :

Լուի ԺԱ. զարմանքով իմ պահանջած ամէն երգումներս կ'ընէ : Մեծն Կուրուէ Խուճ վրայ երգում եղած է խաղաղութիւնը հաստատ պահելու և Ֆրանսայի թագաւորը ինձի հետեւելով լիւժիցաց վրայ կը քալէ : Նուաստ հարկատուի մը պէս իմ դրօշս կը կանդնէ, իմ հրամանիս ներքեւ կը պատերազմի և իմ բանակս բաղմաթիւ յաղթանակներէ ետքը մինչեւ լիւժի պատերուն տակը կը հասնի :

Այս ատեններս Պուրկոյնցի դիւցազուններու մէջէն երխտասարգ էջօպերը կը նշմարէի : Փառքի համար եռանդուն՝ իւր ճակատը յաղթութեան պատկներով ծածկուած էր, ամէն այն անգ, ուր իւր թեւը կուտած էր : Եջօպէր դինակիր եղբայր բլլալու

արժանի երեւցաւ ինձ , իմ անձին մտեցուցի զանի
և նորանոր տխրասներ տալով՝ զինքը Տը նորնե-
տալ կամս անուանեցի : իմ արխութեանս համար իւր
զարմանքը մինչեւ զառանցութեան և իւր անձ-
նուիրութիւնը մինչեւ աւերորդապաշտութեան կ'ա-
ռաջնորդէին զինքը : Որչափ իր երեւակայութիւնը
եռանդուն , այնչափ իւր սիրան ալ մաքուր էր :
Էքպէր հասկցաւ որ զինքը կը սիրեմ , և ինձի նկատ-
մամբ իւր յօժարութիւնը և սէրն ալ այս կէտէս
տեսակ մը կուսպաշտութեան դարձաւ :

Սակայն Մէտօղի եզերքը երկնային առաջին պա-
տիճներէն մին մեղադարա Շարին կ'սպասէր :
Պաշարուած քաղաքին պատերուն մօտ , էքպէրը և
ուրիշ ասպետներ հետս տնենալով , թառտ ան-
տառի մը մէջէն կ'անցնէի : Խորին դիշեր մը երկ-
րիս շորս գին պատած էր . ճամբայէն շեղելով
եզելիններու մէջէն հեռուն լոյս մը կը նշմարեմ ,
դէպ 'ի ուր իմ քայլերս կ'ուղղեմ . հինօրեայ բնա-
կութիւն մը կը բարձրանար հոն : Քանի մը ժամ-
ուան հիւրասիրութիւն կը խնդրեմ և զիս կ'ընդու-
նին : Տէր մը չկայ որ այս օթեւանին մէջ բնակի և
սակայն զգոյշ սպասաւորներ մեծ հող և խնամք
կը տանին մեզ :

Ընդարձակ և օխտը բնակարան մը առաջնոր-
դեցին զիս : Յողիութեան տակ ճնշուած՝ բոլորո-
վին սպառապէն՝ անկողնիս վրայ կը նետուիմ , և իս-
կոյն դարմանիչ քուն մը իմ ծանրացած արտեա-
նունքս կը դոյնէ :

Յանկարծ թեթեւ ազմուկ մը զիս կ'արթնցնէ ,

չիջելու մօտ նուազ լոյսի մը օգնութեամբ, պատե-
 ռու սրահակներուն խմառջեւ շարժիլը կը տեսնեմ:
 որոնք կը բացուին և մութին մէջ տխուր վարագոյ-
 րին վրայ ճերմակ և սքողում երեսի մը դժագ-
 րութիւնը կը տեսնուի: Չեռքը ճրագ մը բռնած
 է: Հինօրեայ սրահին յատակէն անձանօթ կիներ
 թափառական մութի մը պէս լսին, դէպ ՚ի ինձ կը
 մօտի: Իւր մերկ թեւերը ճերմկութեամբ վայլուն՝
 Արաբիոյ արեւակնին* նման թափանծիկ էին. իւր
 երկայն սեւ մազերը վէտ վէտ կը ծփային, իր
 տօգոյն և թափահար երեսը թեթեւ շղարշով մը
 սքողում, իւր շարժումներու դանդաղութիւնը,
 վերջապէս ամէն բան իրեն քով առ աչօք տեսիլ
 մ^ը էին: Իւր օգեղէն ձեւերը նայումքը պիտի
 հրապուրէին եթէ անորոշ և գերբնական բան մը
 անոր մահաշուք դոյներ չի տար:

Իւր պաղ և սառ ձեռքով խմտաք ձեռքս բռնե-
 լով իւր քողը կը վերցնէ, ճրագը իր երեսին կը
 մօտեցնէ և ցաւերէ ու վիշտերէ հայեմաշ դիմաց
 դժագրութեան մը տակ Ատուածային գեղութեան
 մը ահարկու ստուերը ցոյց կու տայ ինձ:

— Ճանչցի՛ր, եթէ կրնաս, կ'ըսէ ինձ, Արտիլի՛
 երիտասարդ, գեղանի, վայլուն ժառանգը: Ա-
 հաւաստիկ ինչպէս ըրիք զանի . . . քու գործդ
 նկատէ:

- Իրենա՛, կը գոչէի անոր վրայ կոնալով:
- Ետեւէս եկու՛ր, կը յարէ տարաբաղդ կիներ:

* Ֆրնա . Opale :

Եւ դէպ ՚ի այն թագուն անցքը արագնթաց հովէ մը քշուած օդի պղպղակին նման խոյս կու տայ :

Անոր հեռքին հապճեպ կը հետեւիմ եւ խոյսն սեւով պատած բոլորածեւ ընդարձակ վայր մը , եկեղեցւոյ ջահերով լուսաւոր՝ տեսակ մը դադաղի առջեւ անոր կանգ առնելը կը տեսնեմ , որուն վրայ մահուան շուքը կար :

Չահերու աղիտողորմ լուսով Իրեննան կը նկատեմ . ի՛նչ սոսկալի փոփոխութիւն : Խւր սառ սիրար դողցես հաղիւ կը արտօնէր . իւր ածղոյն ճակատին վրայ յիմարութեան ախպարը կար . իւր սպիտակ շուքերը անկենդան էին . կարծես թէ արիւնը իր երակներու մէջ չէր շրջադայէր , իւր համր բերնէն շունջ մը չէր ելլեր . իւր բիրը անշարժ էր եւ նայուածքը յատակու սեւեռապինդ , որ մարդկային բան մը չունէր եւ սակայն երկնային ալ չունէր :

Էրսթայի դուստրը դառնապէս ժպտեցու : Մահաշուք սաւանը վերջնելով . — Քու ամուսնոյդ առաջատախ անկողինը չէ այս , բոտու ինձ , այլ քու զաւակիդ երջանիկ որբանը :

Եւ դադաղին յատակը տղու մը ժանտառակի գիակը կը նշմարեմ :

— Կը նիրհէ , կը յարէ Իրեննան : Պու բղոյնի երիտասարդ եւ ազնիւ զաւակ , քու անմեղութեանդ ողջոյն եւ խաղաղութիւն :

Յետոյ ջղաճգակիան նոր ծիծաղով մը դիս նկատելով . — Չե՞ մի որ , Շա՛րլ , կը նիրհէ . . . : Ա՛հ , անիկայ չի խաբեր . . . :

Խռովայոյցի եւ յուսահատ՝ ողբալի եւ ցաւաղին

աղաղակ մը կ'արձակեմ, և իմ դահած էակիս ստոր կ'իյնամ: — Բարբարոսը, կը դռնէ իրենա, իւր դուակը արթնցուց . . . : Մի՛ դուցէ սպաննէ . . . : Վայրագ հրե՛շք . կ'երեւի որ մայրը իրեն չբաւեց :

Եւ դագաղը տապալեբով ամեն ճրագները կը շիշէ ու մութին մէջ անհետ կ'ըլլայ :

Տարաարտին յատակը Եւմենիդէաներէ հալածուող Գանաւոսին պէս, մեծ և սուր աղաղակներ կ'արձկեմ: Իրենան կը բնառեմ. սեւաթոյր սրահներու, դաւիթներու մէջ ըստ բաղդին կը վազեմ, և անծանօթ անցքի մը տակ իմ դգացումներս կիսովին կորուսած՝ պահ մը յետոյ ինքզնինքս էքսպերի և իմ ասպետներուս մօտ կը դանեմ, որոնք իմ ահեղագոչ ձայնս լսելով քոյս եկեր էին: Անոնց մէ և ոչ մէկը բոլորածեւ ու մահաշուք վայրը մտած էր: Այն գիշերուան պատահարը իրենց համար դաղանիք մ' եղաւ:

Արշաղայր երեւցաւ. թղթատար մը հասցնեալ եկաւ իմաց տալու ինձ, որ լիէժցիները դուրս ելլելով Պուրկոյնցիներու բանակին ստակում աղղած են: Մահաբեր բնակարանէն կը մեկնիմ և կը սրանամ դէպ ՚ի հոն, ուր պատերազմը զիս կը կանչէ: Երեք օր վերջը Հերաթալի գուտարը ապրելէ գաղբած է:

Լիէժի վրայ յարձակելու հրամանը կը սրուի: Պատանչին վրայ առաջին ելլողներէն մին ալ ես եմ: Սմէն բան խոյս կու տայ իմ առջևէս, ամէն բան իմ հարուածներուս ներքեւ կ'իյնայ և անագորոյն Շարլը մալեգնութեամբ մուրա ահաբեկ աշխարհի առջև և կէղեցիները ապատտանող ամբողջ ժողովուրդի

մը սպանութեան , յաղթողին դժու թիւնը հայցող մեծ քաղաքի մը հրդեհով ճարակելուն , և արխանայի լիճի մը մէջ այողին անդին աւերակներ զոյց տուող երկրի մը կործանման տեսարանը կ'ընծայէ :

Մինչդեռ այս սոսկալի սպանութիւնները կ'ըլլային , մինչդեռ Պուրկայնցիներու երկաթը այն դժբաղդները կ'սպաննէր , որոնց Շարլ է. ի դաւակը Լուի ՃԱ. թէ և օգնութիւն խոտաացած , այլ յետոյ ապստամբութեան դրդուած էր , ասիկա քաղաքին հրդեհին լուսովը կը ճաշէր հանդիստ : Ի՛նչ մեծ վատութիւն . իւր զոհերու ազիտորմ աղաղակներու ականջ դնելով , այն սոսկալի օրուան վառքը կը գրուատէր :

Մեծաշուք դերին իւր աղատութիւնը կը խընդրէր : Ես ալ սլարտատրեցայ այդ աղատութիւնը տալ իրեն : Իւր մայրաքաղաքը վերադարձաւ և իր իշխանութեան վերադարձը նորանոր բարբարոսութիւններով նշանաւոր հանդիսացաւ : Իւր ամենէն մեծ մտերիմը Լ. Պալան դոր մլաղացի մը քով սպասաօրութենէն մինչեւ եպիսկոպոսութեան և կարգինալութեան ատիճանին բարձրացուց , իւր հրամանովը բանտարկել տուաւ ու թը քառակուսի սաք երկայնութիւն և լայնութիւն ունեցող երկաթեայ վանդակի մը մէջ , և զայն աշտարակի մը մէջ տեղը դրաւ , ուր առանըմէկ ամիս մահուան սպասեց , որ վերջապէս գալով դինքը այն չարչարանքէն աղատեց : Լուի իւր ռխակալութեանց ընթացքին հետեւելով Արմանեաքի կամըր գաղոյնով սպաննել , յլի կամաւ հիին վարը ձեղքել և ալիքները թափել

և տէրութեան ամենէն մեծ իշխանները մաղի վրայ պարտացնել և երկրաքարչ ընել առաւ :

Ով անօրէնութիւն , որ իր նմանը չ'ունի, Ֆրանսայի թագաւորը , որուն այնչափ անդամներած էի՝ նորէն երեւելու ժողով մը կը գումարէ , և զիս կ'ստիպէ մատնառ և ոխտաղբութիւնը պէս անոր առջեւ ելլելու . այնուհետեւ բարձրագոյն ատենին անարդէլ մէկ վճիռովը զիս ապստամբ կը հռչակէ : Այն ատեն անոր զօրութիւնը աւելի մեծ էր , ևս ալ իմ զօրքս արձկած էի , ուստի Լուի իմ վիճակներս գրաւեց :

Չեռքս ղէնք կ'առնեմ , թշնամիներս կը մղեմ , սակաւին կը յաղթեմ և բիքարտիայի վրայ կը յարձակիմ : Անկիւն թագաւորը , Էսուար , Վալիդինի հաւատարիմ գաշնակից հմտեղի ցամաքը զօրք հանել կը պատրաստուէր : Լուի Ժ.Ս. իր եղբորը , Կիւյնի գումքսին հետ անարժարար վարուելուն ինձ լուր կը զրկէ թէ ընդհանուրի թշնամիին գէժ ինձի հետ կը միանայ և իր զօրքերը Բարիդի վրայ կը քայնն : Ուրիշ բաղմաթիւ իշխաններ Շարլ է.ի դաւակէն քանի մ' անդամ խաբուած բլլալով նոր գաշնակցութիւնը կը զօրացնեն : Լուի անոք և ա՛նօդնական՝ կորսուած կ'երեւէր . երկինք կամ գծով իրեն օդնեցին : Թիւնայի գեղձ մը Կիւյնի գումքսին նուէրել տալով , ստիկա ամենէն գծնակ ցաւերով պաշարուած մեռաւ : Ամբողջ Եւրոպայս վատ եղբայրատարանութեան համար Լուին ամբաստանեց , բայց Լուի մահաբեր սուգ մը ձեւացլներով և իննօրեայ պաշտամունքը կատարելով

Հրեշտակ: Տե՛ղն աղօթիքը հաստատեց (Angelus)* :

Այն ատեն Ֆերրեթի, Ալլատի և ուրիշ բազմաթիւ կամուսթիւններ և քաղաքներ Պուրկոյնի միացնելով աշխարհի ամենէն հոգի իշխաններէն մին եղայ : Ֆլանտր և Հոլանտա իշխանութեանս տակ էին, իմ՝ երկիրս աւելի դէտլ ՚ի Ալմանիա ընդարձակած էի և հիմայ Լորենի աչք ունէի :

Մաղդարիտ Տիօրք մեռած էր, աղայ մը միայն ունէի, և Մարի՛ ընդարձակ սասցումքներուս միակ ժառանգն էր :

Յրեաներիք կայսրը իւր սրդին այս Մարիին հետ կ'ուղէր կարգել, որ աակաին ամուսնութեան հասակը չունէր և այս ամուսնութիւնը ՚ի գործ դնելու համար անախտութիւնս դդուելով Լորենը նուաճել կը յորդորեր զիս : Գաղանի դաշնագրով մը ինձ կը խոստանայ, իմ երկիրներս թագաւորութեան վոխել, ինքը իւր ձեռքովը արքայական թագով իմ ճակատս սլտակել, և զիս Գաղղիա—Պելճիգայի թագաւոր հրատարակել : Այս ակնկալութիւններով սրտադրաւ՝ անոր առաջարկած ամուսնութիւնը կ'ընդունիմ : Եկոյնի դուքսին մահը դաշնակիցները սրտած էր, հետեւ արար ստիպուեցայ Քիքարտիայէն մեկնելու : Լորենի դուքսը Ֆրանսայի թագաւորէն թելադրուած՝ իմ սահմաններս նուաճել կ'սպառնար, անոր զօրուն յրայ յարձակելով ամբողջ դաւառը կը դրաւեմ և արդէն նանսին սլաշարած եմ : Ֆրանսայի թագաւորը Ռենէն զինելով անոր երթումը բրած էր անձամբ օդ-

* Վսեկնի դուքսը պիւեան մտքը մտած ատեն մեռաւ :

ներու և զինքը պաշտպանելու : Ընդունա՛յն խառ-
տու մներ , ո՛չ Լուի ԺԱ. և ո՛չ իր մարտիկները անոր
օգնութեան կը հասնին , ու ևս Նանաի կը մտնեմ՝
յաղթական :

Աշխարհակալի մը կորստեան համար ի՞նչ պէտք
է , իրարու ետեւէ եկող յաջողութիւններ : Յաղ-
թութեան շնորհները վայելելով , ինքըզինքս անյաղ-
թելի կը կարծէի : Ինձի օրինակ բռնած էի Աննի-
բաղը : Անոր պէս Ալպեան ըսներէ անցներու յա-
տակագիծը կը շինէի և ինքըզինքս խաալիոյ , Ֆրանս-
սայի մէկ մասին և Ալմանիոյ հարսւային կողմին
տէր կը տեսնեմ :

Արքայական թագը Թրեօլի մէջ պիտի ընդունէի,
ուր Ֆրեանբիք կայսրը դիւ կ'սպասէր : Այդ քու-
ղտքը երթալու ատեն միտքս կը դնեմ Հելլեոսիոյ
մէկ մասը նուաճել : Հետո ունիմ՝ բազմաթիւ նշա-
նաւոր ասպետներ և թագ մը ու գաւազան մը կը
կրեմ : Զուիցերի գաշնակից նահանգները իմ նպա-
տակներուս վերահասու ըլլալով՝ բազմաթիւ երես-
փոխաններ կը դրկեն ինձմէ արդարութիւն հայցելու .
— Մեր ամուլ երկիւղներէ ի՞նչ շահիլ կը յուսաս ,
կ'ըսեն ինձ , եթէ մեր ամէն հարստութիւնները
մէկանգ ժողովես , քու ձիերուդ սանձերը և ասպետ-
ներուդ կարծերը չեն արժեր :

Վայրասպար աղաչանք : Կրանսօնի դուռը հա-
սած եմ , և ինձ արխարար կ'ընդդիմանան . ամէն
խոնդոսները առաթուր կ'անդոսնիմ : Քաղաքը
սուանց պայմանի անձնատուր կ'ըլլայ : Ափսո՛ս ,
յանդուգն—Շարլ իւր յաղթութիւններէ արբչիւ .

անոր բնակիչներուն կէսը կախել և միւս կէսը Նէօֆ-
շաթելի լիճին մէջ խեղդել կու տայ :

Այս բարբարոս գործը, ակնկալութեանս համե-
մատ, Զուիցերցւոց ահ և սոսկում ազդելով, զանոնք
նուաճել չտալէ զատ, ամբողջ Հերլետիան ինձի դէմ
ապստամբեցուց : — Լեռնականները, կըրսէն ինձ,
կըյառաջանան, իրենց առաջնորդ ունենալով վրէժ-
խրնդրութեան ոգին : — Այդուհի յի՞տը զի՞, պատաս-
խանեցի : Այնուհետեւ փոխանակ զանոնք դաշտին
մէջ սպասելու, ուր իմ հեծելազօրներս կրնային
զանոնք սնչացնել, իմ ճամբաս կը շարունակեմ
Ալպեան լեռերու մէջ տեղը, և ամենէն անձուկ կիր-
ճերու մէջ կը մտնեմ :

Խոր անցքի մը յատակը, երկու կողմէն դէպ ՚ի
վեր մինչեւ ամպերը բարձրացող ժայռերով սպա-
տած՝ կայր վստահութեամբ կը յառաջանամ : Յան-
կարծ սպառնացող ժայռերու գագաթը լեռնա-
կանները կ'երեւին : Իրենց թշնամիները նետերու
կարկուտի մը տակ կը ճնշեն, անոնց դիտուն ահա-
գին ժայռերու բեկորներ կը նետեն և բանակին
առաջին կարգերու մէջ անկարգութիւն և շփոթու-
թիւն կը ձգեն : Պուրկոյնցիները աճապարելով
կ'ուղեն կիրճէն անցնիլ : Ճամբուն մէջ տեղը եր-
կու կողմէն ժայռերու փակած ծանր շղթայ* մը այս
խեղճերը կ'արգիլէ, որոնք ամէն կողմէն շանթ ահար

* Տես ամէն պատմադիրները :

** Այս շղթան մինչեւ հիսայ կը կենայ . Զուիցերցիք
սիգալով զայն ցոյց կու տան ուզեւորին :

կը մնան առանց կռուիլ կարենալու : Չիերը և հե-
ծելագորները կիյնան տապաստ. դիակներու կոյտ
մը անցուդարձը կ'արգիլէ. սոսկումը ամենուն սիրտը
կը սլաշարէ : Հրամանատարներու ձայնը չի լսուիր :
Զինուորները կը ցրուին, աղէտները կը շատնան, և
փախուստը ու կոտորածը ընդհանուր են :

Վրանները*, զէնքերը, սպասները, գանձերը,
գաւազանը, ծիրանին, թագ, ամէն բան լեռնա-
կաններու ձեռքը լնկաւ : Այսչափ հարստութեանց
տէր, որոնց արժէքը չէին ճանչեր, արծաթեղէն-
ները անագի տեղ կը դնէին, և այն ծանր դիպակ-
ները և հագուստները առանց խզտելու չնչին գի-
ներով կը ծախէին : Իմանդամանդներէս մէկը ա-
սպակի տեղ տեղացի քահանայի մը մէկ ֆիօրինի
ծախեցին** :

Այդ մահաբեր և աղետալի օրը էքզպերի կեան-
քը երկու անդամ փրկեցի : Իրիկուան դէմ անորմէ
զատուած, իմիններէս երեսի վրայ թողուած լեռ-
ներու վրայ խոյս կ'ուտայի միայնակ, և Պուրկոյնի
դիւցազնը, Ֆրանսայի սոսկումը, յաղթութեանց
մարդը, թշնամի երկրի մը վրայ, անձանօթ հեղե-
ղատի մը եզերքը, կ'իյնար թափառիկ, անօք, ա-
նօգնական, վիրաւոր և շնչասպառ :

* Յանդուչն Եսրի վրանին զարդարանքը մինչև
հիմայ Պեռնայի մէջ պահած են : Խիստ նշանաւոր են
իրբեւ Աճրդ զարի ձեռակերտ :

** Այսօր այդ անդամանդը տէրութեան երկրորդն
է, և երկու միլեօն ֆրանքի արժեքը ունի :

Ի՛նչպէս իմ անյուսութիւնս յայտնեմ : Իմ յաղթանակներս , քով գիտէի թէ ինձ ոտխա իշխաններու նախանձը գրգռած էր : Իմ վրայ կը հիանային և զիս կ'ատէին : Ամբողջ Եւրոպայի բերկրալի աղաղակը մինչեւ իմ ականջս կը հասնէր , ես որ նուաստ և նկու՛ն էի հիմայ : Արդէն անկեալ յաղթ թականը ճնշելու մտօք բազդի վատ խնկարկուններու յանդգնաբար 'ի մի ժողովիլը կը տեսնէի : Հինօրեայ կաղնիի մը ստուերին տակ զլորելով մահը կը բնտուէի ահեղագոչ և մուկեղնութիւնս հայհոյութիւններով կը յայտնէի :

Յանկարծ խորհուրդներս կը մոլորին . ինձ այնպէս կը թուի թէ երկինք կը մթազնի . նսեմ քող մը բնութիւնը կը ծածկէ : Հեղեղատին ջուրը արիւնայի կը պղպջայ , անտառին ոստերը գլխուս վերեւը այնչափ դաշոյններ կ'երեւին ինձ . ժայռերուն տեղ գողցես զիակներու շեղձակոյտներ կը տեսնեմ . դարարքն ու եղէզները ինձի համար վիհէն ելող բոցերու կը նմանին , և անբողհատ գիշատիչ անոզը կ'սպասեմ , ինչպէս Պրոմէթէոս կոմիլաւեան լեռներու վրայ :

Հեղեղատին եղերքը կապուտադոյն խիտ մուխ մը կը հաւքուի . դիշերային հովը զայն կը շարժէ , այն աձեւ ամպը կը տարածէ և կը բարձրայնեւաններեւոյթ անգրիտոզործի մը պէս անով ահագին կմախք մը կը ձեւէ : Այս ահարկու տեսարանին հետ անտառէն սոսկումի աղաղակ մը կը բարձրանայ , արիւնայի արիքները կը պղպջան : — Շա՛րչ , կը գոչէ այդ ճիւտը , քու իշխանութիւնդ անցաւ :

Փորձանքէ փորձանք, չարչարանքէ չարչարանք, ան-
դունդէ անդունդ մինչեւ գերեզման պիտի դատուիս
Շանթը կը պայթի, ամպը կը խզուի և այն
սոսկալի երեւոյթը անհետ կ'ըլլայ :

Սակայն լուի՛ պարտութիւնս լսելով չափազանց
կը բերկրի : Լորենի երիտասարդ դուքսը իր ար-
քունիքը դանուելով՝ նորանոր դունդեր կը ճարէ
անոր, և Ռենէ դէպ 'ի Նանսի կ'ուղեւորի : Կրօնա-
ւորի կերպարանքի տակ Գրանսացի լրտեսներ Զուի-
ցեր կ'երթան, ամէն կողմէ զանոնք կը գրգռեն
Պուրկոյնցւոց դէմ պատերազմ՝ բանալու և Հելվե-
տիոյ ամբողջ ժողովուրդը վրէժխնդրութեան և ա-
զատութեան ազազակներէն կ'սկսի զինուիլ :

Միթէ այն ատեն ինքրզինքս պաշտպանել կը
խորհէի՞, զինուորներս ժողվելու կ'զրադէի՞, իմ
արիական գործունէութիւնս ձեռք կ'առնէի՞. ո՛չ :
Հեղեղատին այն սոսկալի երեւոյթը իմ էութիւնս
ամբողջապէս փոխած էր : Պաղ, դաժան, աղեկէզ,
անպատիւ և անարդ՝ ալ ոչ յատակադիծ կը պատ-
րաստէի և ո՛չ խորհուրդ մը կը տածէի . ժամերով
անշարժ կըլինայի առանց խօսքի և առանց յիշա-
տակի . յետոյ բոցավառ լեռի մը պէս ամենէն խո-
րին հանգիստը մերկանալով ցնորքի կիզիչ ԼՎՆԵՐԷ,
անէծքներու հեղեղատ մը դուրս կու տայի :

Այս մուրրութեանց մին վրաս եկած ատեն՝ առ-
պետներուս խրատը մերժելով՝ առանց Զուիցեր-
ցւոց նպաստաւոր դիրքերուն և իրենց թուոյն մեծ
առաւելութեանը ականջ կախելու կ'ուզէ պատե-
րազմիլ . կռիւր սկսաւ և բանակիս մնացորդը Մօր-

լիճին եզերքը կորսուեցաւ : Հօն իմ դժբաղդ Պօլ-
կոյնցիներուս ոսկրոտիէն այն սոսկալի յիշատակա-
րանը կանգնեցին , որնոր ապագայ դարերու իմ
մոլեգնութիւնս և անհառութիւնս ցոյց պիտի տայ :

Ինչպէս յաղթութիւնները առաջին յաղթութեան
մը ետեւէն կ'ուզան , նոյնպէս աղետները առաջին
աղէտի մը կը հետեւին : Դիւրաւ կրնայի իմ իշխա-
նութեանս մնացորդները փրկել և աշխարհակալու-
թեանցս մէկ մասը պահել : Իմ ներկայութիւնս ,
քաջութիւնս , անունս , տակաւին կը բաւէին երկրի
հրաման ընելու : Եւրոպա յանդգնութիւնս ճան-
չելուն՝ հանճարին արիական փորձերը կ'սպասէր :
Ինչ մեծ էր իւր զարմանքը , ես չէի գործեր և
ոչնչութեան թմբութեան մէջ ընկղմած էի : Ըսին
անշուշտ թէ , ինչպէս յաջողութեանց՝ նոյնպէս ձա-
խորդութեանց մէջ թագուն և անհասական մնալս
տեսակ մը փառք կը սեպէի ինձ : Իրենց անտա-
րակոյս այնպէս կը թուէր թէ , ինչպէս իմ յաղթու-
թեանց , նոյնպէս տառապանքներուս համար հպարտ
էի , և թէ ծայրայեղութեան մէջ վեհութիւն մը
նշմարելով անարգութեան վերջին աստիճանին
կը բաղձայի , ինչպէս իշխանութեան կատարը հաս-
նելու բաղձանքը ունէի :

Լորենի դուքսը Ֆրանսայի արքային օգնու-
թեամբը Նանսին առած էր : Այս լուրը առնելուս
պէս՝ նոյն կէտին Հելվետիայէն մեկնեցայ . մազերս
և մօրուս թողուցի որ աճին . նոր Նարուդող սնոտորի
մը պէս , մարդկային արժանիքէ զուրկ՝ վայրագ
հիւններու նման իմ չորս գիւ կատաղի նոյսածք

մը կը ձգէի, և մոլեգին մռնչիւններ միայն կարձկէի :
Էքսպեր և քանի մը քաջ մարտիկներ ինձ հաւա-
տարիմ մնացած էին . դեռ իմ հրամանիս տակ քա-
նի մը զինուորական գունդեր ունէի . մարդերու
դահիճը՝ իւր կեանքը պիտի կատարելագործէր ,
իւր պաշտպաններու մնացորդն ալ դէպ ՚ի մահ
առաջնորդելով : Ամենէն տատիկ ձմեռուան մը
մէջ տեղը , սառնային հովէ մը մղուած ձիւներու
յորձանքներու մէջէն , դէպ ՚ի Նանսի կը պանամ
շուար ու մուար : Իմ զօրքս մաշուած էր և հազուա-
թիւ , իսկ Լորենի գուքսը աւելի մեծ զօրութիւն
ունէր և իր բանակը չէր յոգնած : Նանսիի մօտ
Ռենէի հետ կը պատերազմիմ : Յաջողութիւնը եր-
կար ատեն անյայտ շմնաց : Պատնեշներու վրայէն
Լորենցիք Պուրկոյնցիները կը շանթահարէին : Դող-
դովուն ելիվարները ամէն կողմ սառած դաշ-
տին վրայ կը գլորէին , և պաշարող ձիաւորները
թէ եւ սպառազէն՝ այլ ցրտահար չէին կրնար ոտք
եղել : Վիրաւոր ինկայ և Յանգուգն Շարլ լճակի
մը սառերուն տակ անհետ եղաւ :

Մահուանս լուրը կը տարածուի : Սուրի հար-
ուածէն զերծ մնացող Պուրկոյնցիները թշնամիին
ձեռքը կ'իյնան : Ռենէ նորէն Նանսի կը մտնէ
յաղթական , և պատերազմի դաշտին դիակներուն
մէջէն , Պուրկոյնցի նշանաւոր Շարլն փնտռել կու
տայ վայրապար* :

Սակայն դեռ կ'ապրէի . . . , մանկաւիկ մը իմ
կեանքս փրկած էր : Երկիրը ծածկելու սկսող դի-

* Տե՛ս Անքրթիլ և ուրիշ պատմագիրքեր :

չերէն պաշտպանուած՝ ուզած էր իմ դիակս յաղ-
թողներու ձեռքը չտալ, և ՚ի թագուս մօտակայ
անտառը հիւղի մը մէջ տարած էր իս : Պուրկոյն-
ցիք յաղթուած էին :

Քանի մը ժամէն աչերս բացի : Երկարատեւ
թմրութիւն մը մերկացող մարդու մը պէս, որուն
յիշատակները սրբուած են . իմ փրկիչս կը դիտէի
ուշագիր, որն որ իմ անկողնիս քով անհամբեր
դէտ ՚ի կեանք վերագարծս կ'սպասէր : Մեծ հան-
դարտութեամբ հարցումներ կ'ուղղէի անոր, իմ
դաղափարներս աստիճանաբար մտքիս մէջ ծագե-
ցան . վերջին պարտութեանս նկարագիրը մտիկ
կ'ընէի առանց սրտի յոյզ մը և տագնապ մը դդալու,
և ամանկլաւիկին ձեռքը բռնելով գոչեցի . — Եր-
դում՝ ըրէ՛, որ տայիք հրամանս հաւատարմաբար
՚ի դործ պիտի դնես :

Ուզած երդումս արտասանեց ու ես այսպէս
յարեցի . — Ռենէ զիս մեռած կը կարծէ, ըսիր,
իսկ ես միտքս դրած եմ, չէ թէ լոկ անոր, այլ
համօրէն աշխարհի համար մեռած ըլլալ : Յան-
դուգն Շարլ անպատիւ և անարգ՝ ալ չուզեր
մարդկային աչաց առջեւ երեւիլ :

Արչալոյսէն առաջ պատերազմի յետին դաշտը
դարձիր : Մեռելներու մէջէն ինձի նման բարձրա-
հասակ մը գտիր, իմ սգեատներս հազցո՛ւր անոր . իւր
դէմքը աւրէ՛, կերպարանքը փոխէ՛, անո՛ր վրայ վէր-
քերը շտոցո՛ւր, քաշկռտելով տա՛ր այն լճակին սա-
ռոյցներու տակը, ուսկէ՛ զիս հանեցիր և իմ մահս
հաստատելով դնա՛ իմ դիակս յաղթողին ցոյց տալու :

Հաւատարիմ մանկաւիկը հնադանդեցաւ . Լուրենցի իշխանը Յանդուղն Շարլն ներկայացնող անծանօթ զինուորին յուղարկաւ որութեան շքեղ հանդէս մը կատարեց և ամբողջ տիեզերք մահուանրս հաւատ ընծայեց :

Շատ չանցած վէրքերս բժշկուեցան ու եւ որոշեցի ամենէն անթափանձելի միայնութեան մէջ էութիւնս թողել . մահարեր մեծութիւնները թող տալով , աշխարհի տեսարանին վրայ անօրատիւ երեւան դալու տառապանքէն խոյս տալով ընկաղջկանս վրայ կը ցաւէի , բայց միաքս դրի զանի ալ չտեսնել :

Վստահ էի որ Լուի ԺԱ. Պուրկոյնի ժառանգաղջիկը պիտի յարդէր , զոր կ'ուզէր իւր զուգին հետ ամուսնացնել : Ալմաննայի կայսրորդին զանի թշնամոյն դէմ պաշտպանելու մէջ շահ ունէր Մարիամի միճակին նկատմամբ հանդիսաւ էի ուրեմըն , աներեւոյթ ըլլալս Եւրոպոյի մէջ խաղաղութիւնը կը հաստատէր , ինձի սոտի իշխանները կըրոնային յանցաւոր աշխարհակայր հաղածել , այլ չէին կրնար իրաւամբ անմեղ որբի մը վրայ յարձակել . ինքրզինքս աքսորելով Պուրկոյնը և իմ գուտարս կը փրկէի :

Այսպէս ինքրզինքիս զոհողութիւնը իր գիտաւորութեանը մէջ վեհանձն և վսեմ բան մ' ունէր , մեծ բերկրութեամբ սրտիս մէջ առաքինութեան կայծ մը կը գանէի : Մանկաւիկը երգում ըրաւ կրկին իմ գաղանիքս երբէք երեւան չհաննելու և իմ երեսս ամէն նայուածքներէ թապուհ պա-

հելով առանձին դէպ 'ի Հելվետիա մեկնեցայ* ։

Մօրա լիճին մօտ կանգ առի ։ Զուիցերցիներ տեսայ, որոնք այն ոսկրեղէն նշանաւոր յիշատակարանը շինելու կ'աշխատէին, և սոսկումով երեսա կը դարցնէի . . . ։ վայրենի լեռը աչքիս զարկաւ ահարկու աւանդութիւնները, ուսմիկը կ'արդ իլէին անոր մօտելու . մարդերէ հեռացող մարդկան հաւմար սոյն վայրը խիտ յարմար դատայ ։ Հինօրեայ ճգնաւոր մը հոն կը բնակէր, ևս ալ անոր բնակարանը նուաճեցի, և քանի մը դիւթութիւններով, որոնք տգէտ լեռնականներու դերբնական երեւցան, Մենակեօցին բնակարանը առաջուանէն շատ աւելի անմատչելի և ահարկու ըրի ։

Զղջումով և պատիժներով, եթէ կարելի էր միտքս դնելով, երկնային վրէժխնդրութիւնը, զինաթափ ընել՝ դիտմամբ իմ վերջին չարագործութեանց տեսարանը ընարեցի իբրեւ տարագրութեան վայր ։ Իմ առանձին տնակէս Նէօֆլաթէլի լիճը և Մօրայի ոսկրեղէն շէնքը կը նկատէի։ Անոր մօտ Մոսկայի քարհատը կը բարձրանար, ուր իմ բարբարոս բանակս Ունաերլախի կրօնաւորները

* Պուրկոյն նահանգը Յանդուգն Շարլի մահուան չհաւատաց ։ Պ. Տիւրլօ պատմագիրը այս մասին այսպէս կը գրէ ։ Ժողովուրդը երկար ատեն Շարլի մահուան վրայ տարակուսեցաւ ։ Ոմանք կ'ըսէին թէ մենութեան մը մէջ քաշուած էր, ուրիշներ ալ կը պնդէին թէ Երուսաղէմ գացած էր ։ Քանիսըներու նախապաշարումը այնչափ զօրաւոր էր, որ այս իշխանին վերագործին վճարելու թէութեամբ ստակ փոխ կու տային ։

սպաննեց Զուիցերէն անցնելով , և այս ժայռը վը-
րէժինդիր ուրուականի մը պէս անընդհատ աչացս
առջեւ կ'ընծայուէր :

Միայնակ թէեւ ամբաստանողները և դատա-
ւորները շուրջս պատած , մենարանին մտ ծնրա-
դիր՝ ոճիրներս յիշելով մարդիկներէ ներում և յա-
ւիտենականէն շնորհ կը հայցէի , բայց Աստուած
իմ աղօթքս և մաղթանքս կը մերժէր , և ակնկա-
լութեան ճառագայթը շեռին վրայ չէր վայլէր :
Ս. փառս . ինչ եղած էր երիտասարդութեանս եր-
ջանիկ ատենը , ուր խորհուրդներս դէսլ 'ի երկինք
սաւառնելով՝ նահապետին սանդուղէն վար իջնող
հրեշտակներու դասին պէս վայլուն և մաքուր կը
դառնային :

Հետս բաւական հարստութիւն առած էի .
գաւառին մէջ բարեգործութիւններ ըրի , աղքատը
կ'սփոփէի , դժբաղդին կ'օգնէի : Մենակեացը
կ'օրհնէին և Մենակեացը ինքզինքը կ'ատէր : Ուն-
տերլախի սփոփիչը անմխիթար սիրտ մ'ունէր և
դէսլ 'ի առաքինութիւն իմ՝ վերագարծս շատ յա-
պաղած էր , որպէս զի դէսլ 'ի երջանկութիւն վե-
րագարծ մ'ըլլար :

Իմ գացած խրճիթներուս մէջ , իմ անցած
ձորակներուս մէջ , ամէն այն տեղ , ուր իմ քայ-
լերս կ'ուղղէի , էլ լոտիայի անունը կը լսէի , զոր
երախտապիտութեամբ և զարմացումով կը կրկնէին :

Վանասառնին այս աղանին կը բաղձայի , զոր
լեռնականները կը պաշտէին : Քայլերուդ հետեւե-
ցայ , գրեզ տեսայ . . . և սէրը երկնից նոր մէկ

վրէժխնդրութեան պէս էութեանս տանջանքներու վրայ չարչարանք մ'ալ աւելցուց :

Այն ատեն զգացի թէ առաջին անգամ կը սիրէի : Իրենա իւր գեղովը զիս հրապուրած էր, այլ այս եռանդուն սէրը, այս կրօնային յարգանքը, այս տեսակ մը տենդային հաւատը էլլտիային միտյն սահմանուած էր ինձ ճանցնել :

Երկար ատեն հեռքերուդ կը հետեւէի առանց քեզ երեւիլ ժամելու : Գիշեր մը վանքին ապարանքին մէջ քու հանգոյցդ ձեռք ձգեցի, ու բերկրալի առանձնութեանս մէջ դարձայ իբր թէ առաքինութեան հմայեակը դատած ըլլայի : Զայն սրտիս վրայ դրի . . . : Ախոսս . կիզիչ հուրի մը պէս զայն արծարծեց :

Որոշեցի մահաբեր հանգոյցը քեզի դարձնել . քեզի մնտելու և խօսելու բազմանքը այդ որոշումը առնել տուաւ ինձ : Գեղի խելագարի մը պէս երեւցայ, քեզի սոսկում ազդեցի, սակայն երբ մատուռին մէջ քեզ երկինքը ցոյց տալով այս տարօրինակ խօսքերը արտասանեցի — Հո՛ն, եթէ զղձումը վիհը ծածկէ, այո՛, հոն միայն պիտի կարենայ ըսել . Գեղ կը սիրեմ . այն ատեն քու սիրտդ ամուրում աւսայ :

Այս տեսութիւնը իմ խելքս մուրեց : Ո՞վ ե՛ս կը ժպրհէի Սէն-Մօրի, դուստրը պաշտել : Յիշատակներս միաքս կը բերէի և առաջուանէն աւելի դաժան ու խիստ էի : Յանդուգն-Շա՛րլ իւր նայուածքը դէպ ՚ի Սոսկալի քարհատը, դէպ ՚ի Նէօֆշաթեի լիճը և Մօրայի ոսկրեղէն յիշատակարանը

դարձնելով կը գոչէր ինքնիրեն անապատին հաւամբդիններու վրայ կամ թաւուտ անատին անձաւներուն մէջ դլորելով . — Հրե՛շ , քեզի դեռ զո՞հ մը պէտք է :

Վախելով որ իմ անմաքուր շունչս բնակարանդ չպղծէ , ալ վանատուն գալէ դադրեցայ , ուր շատ շանցած ար Նորենտալ կոմսը եկաւ : Այն մանկլաւիկը որ իմ կեանքս փրկեց , անոր մարդիկներու մէջ կը գանուէր , որ իմ բնակարանս գիտէր . հոն եկաւ . 'ի թագուտս զիս տեսնելու և լորենի իշխանուհւոյն հետ Էքսպերի կարգուելիքը լսեցի :

Ռենէի բարեկամը Լլոտիայի գեղէն հրապուրուած՝ Ռենտերլաի հովիտէն չէ բաժնուէր բնաւ . Մարտինի ապսպրեցի ար Նորենտալ կոմսին առաջէն յանձն առած ամուսնութիւնը քեզ իմաց տալու , և իմ անձնուէր մանկլաւիկէս է , որ Էքսպերի առաջարկութիւնները և քու մերժումներդ լսեցի , ինչպէս նաեւ անոր ճամբորդութիւնը և զքեզ առեւանգելու գիտաւորութիւնը , զոր քիչ ատենէն 'ի գործ պիտի գնէր :

Էլտաիա՛ , ս'ըչաի մեծ պէտք էր ըլլալ քու զարմանքդ երբ հեղեղատին կամուրջին վրայ ար Նորենտալ կոմսը Յանգուզն Շարլն ճանչցաւ , և զանի ճիւղալ կարծելով իւր թեւը իր զինակից եղբորը երկնցուց ծնրադիր . . . : Ա՛հ , վայրենի լեռին վրայ անոր հետ իմ տեսութիւնս երբէք չըպիտի մոռնամ :

Էքսպերի եռանդուն հողին կը ճանչէի և տարակոյս չունէի որ իմ երեւոյթս անոր ահռելի ար-

պաւորութիւն մ'ազդած էր : Պատուոյ դաշտին վրայ երկու անգամ անոր կեանքը փրկեցի . գիտէի թէ լոկ անունս լսելով դեռ առաւօտէն արտօսը կը հեղուր : Գիտէի թէ իմ ոճիրներուս նկատմամբ ներողամիտ դանուելով՝ առաքինութիւններս միայն կը յիշէր , և վստահ էի թէ Պուրկոյնի երջանիկ դուքսին նկատմամբ ունեցած իր աւելորդապաշտ անձնուիրութիւնը կրկին այնչափ եւս անգուն տարաբաղդ Մենակեացին համար ալ պիտի վերածնէր :

Չկայ խօսք մը որ կարենայ անոր բերկրութիւնը պատմել երբ վայրենի լեռին խրճիթին մէջ զինքը սրտիս վրայ կը սեղմէի : Բարեկամութեան ամբողջ հրաժեշտովը վանատունին որրին համար ունեցած սէրս կը յայտնէի անոր : Անոր արտունք թափելը տեսայ . . . և զոհողութեանց է՛ն ցաւաղ ինը անկէ խնդրելու արիտութիւնը ունեցայ . . .

— Իմ իշխանս , բարեկամս , եղբայրս , գոչեց բարեփրտ և վեհանձն մարտիկը . թո՛ղ էլօտիաքու վայրենի տարագրութեանդ սփտփիշ հրեշտակը ըլլայ . . . : Ո՛չ , այնչափ բարբարոս չեմ որ նաւարեկութեան յետին տախտակը ձեռքէդ քաշեմ առնեմ . . . : Գաղտնիքդ երբէք չդիտի մատնեմ . . . յաւիտեան խոյս պիտի տամ էլօտիայէն , Շա՛րլ , սէրը , ամուսնութիւնը , հանդիստը , երջանկութիւնը և կեանքը քեզ կը զոհեմ :

Այս խօսքերը կ'ըսէ չըսիր խոյս կու տայ և այնուհետեւ անգամ մը Սոսկայի քարհատին վրայ տեսայ զանի , որուն մօտ Բալզօն սպաննեցի :

Նորեն առաջ երդմանցը վրայ հաւատարիմ կեցաւ , սակայն կսկիծ մ'եւս հոգիս կ'այրէր , կը տոչորէր : Էլրտիայի էրիկը ըլլալու ինքզինքս անարժան կը գտնէի և այնպիսի կապ մը կտրեցի , որն որ անշուշտ զինքը երջանիկ պիտի ընէր . երիտասարդ , արի , առաքինին էքպէր Ունտերլախի կոյսին արժանի էր :

Առանձին էի մենարանիս մէջ քաշուած՝ երբ դուռը կը բացուի . . . Էրթալը կը տեսնեմ :

— Մե՛ծդ Աստուած , դո՛ւն հոս , կը գոչէի :

Սոյն միջոցին լոյսի ճառագայթ մը դէմքիս փայլ մը կու տայ : Ծերունին սոսկումի աղաղակ մը կ'արձակէ : Յանդուգն Շարլն կը ճանչէ :

Անոր ոտքը կ'իյնամ . — Էրթալ . . . դրժբազդութեան , զղջումին , յուսահատութեան ներքէ՛ , կամ ա՛ռ այս երկաթը վրէժդ լուծէ՛ :

Ծերունին զիս ետ կը մղէ բարկայի :

— Եղբայրս սպաննող Իրենայիս մարգասպանը : Ամբողջ ընտանեացս դահիճը , ս՛վ , ե՛ս քեզի ներեմ . . . երբէք :

Հիւզին մէկ ակնոտին վրայ կ'իյնայ խոովայոյդ :

— Անողոք մարդ , պատասխանեցի աղերսալի ձեռքերս անոր երկարելով . յանդուգն Շարլն , այն վայրագ , սնափառ , անդուծ Պուրկոյնցին այս վատաբազդ տարագիրին մէջ կրնա՞ս ճանչել , որ քու առջեւդ ճնրագիր ճնկուիներդ կը գրկէ :

— Հրե՛շ , քաշուէ՛ , կ'ըսէ Էրթալ սաստիութեամբ և հապճեպ ոտք ելլելով , կսկիծներու վրայօք կը խօսիս և նոր ոճիքներ կը խորհիս : Մի-

Թէ չ'ե՛մ գիտեր որ Էլլոտիան կ'ուզէս հրապուրել : բարբարո՛ս, քու և անոր մէջ տեղը իրենայի սառ գերեզմանը և Մեն-Մօրի արիւնաներկ սառերը կը բարձրանան :

— Էրսթալ, խնայէ զիս . . . գուժ ունեցիր իմ վրաս . . . : Այլ մոլեգնութիւնը իւր նայուածքին մէջ կը փայլատակէ և զիս կ'ընդմիջէ այսպէս : — Քու զոհերուդ ձայնը կը լսեմ . . . : Անոնք ինձ կը գոչեն . Մէր Էրե՛ք Ե-ձէ' : Արիւնարբու մա'րդ . կսկիծներդ ինձի ի՞նչ հոգ : Քեզի համար գո՛ւժ , Աստուած չընէ : Իցիւ թէ երկնից անէ՛ծքը իմիններուս նման մինչեւ յետին ժամդ . քեզ հալածեն , իցի՛ւ թէ մահուան չարչարանքը կեանքիդ ոճիւրներուն հաւասարէին :

Էրսթալ խոյս տուաւ ու ես մնացի գողցես շանթահար : Ծերունիին յետին խօսքերը վրէժխնդիր Աստուծոյն գատապարտութեանց պէս ականջիս մէջ կը թնդային : Այս միջոցէն ինքրդինքս կորուսած կը կարծէի անոք , անօդնական և իմ սուրս կեանքս պիտի բառնար եթէ թեւս ամէն զօրութենէ , հոգիս կամքէ , անգամներս շարժումներէ գլխովին զուրկ չմնային :

Այս սոսկալի վիճակին մէջ ամբողջ շարսթ մը անցուցի . կանուխ դժոխք մ'էր այս : Յանկարծ Էրսթալի մահը լսեցի և կը գողդողայի որ չըլլայ թէ Էլլոտիա կասկածէր անոր մարդասպանը կարծելով զիս : Վանքին պարտէզներուն մէջ մտայ . . . : Տարօրինակ ճակատագիր . յոյսի առաջին լոյսը ինձի համար այս ձերունոյն գերեզմանին վրան

էր որ փայլեցաւ : Հուսկ յետոյ ճանչցայ թէ զիս
կը սիրեն :

Բայց երջանկութեան այս փայլակը ինչպէս շուտ
անցաւ . . . : Իմ վիճակիս ահ և սարսափը զգացի ,
ինչպէս նաեւ այն դառն վիճակը որ անմեղու-
թեան կը պատրաստէի : Էրսթայի անէծքը միտքս
եկաւ , Սիրոյ և պարտաւորութեան մէջ կռիւք մեծ
էր , սակայն վեհանձն զգացումները միայն յաղ-
թանակը կանգնեցին : Քեզի յետին մնաս բարե-
մ'ըսի և վայրենի լեռէն հեռու գացի տարագ-
րութեան և ցաւերու ուրիշ երկիր մը փնտռելու :

Բայլօ դաւաճանին լարած դարաններուն վե-
րահասու ըլլալով և քեզ սպառնացող վտանգը նա-
խատեսելով՝ աշտարակին վրայ լսպտերին փայլե-
լէն շատ առաջ ապստամբներու գլուխին վատ մի-
ջոցները միտքս դրի երեւան հանել : Էքպէրի մի-
ջոցովը Ունտերլախի դաւաճանութիւնները Լորէնի
արքունեաց ականջը կը հասցնէի , ու երբ զքեզ
կրկին մատուռին մէջ տեսայ՝ գիտէի թէ Տը Նո-
րէնաալ կոմսը արդէն Նանսիէն մեկնած ըլլալով ,
քեզ օգնութեան կը հասնէր :

Ո՛վ սիրելիդ իմ Էլրաիա՛ : Որոշած էի քովդ գալ
առանց սիրոյ բառ մը արտասանելու , սակայն ան-
գամ մը որ քեզ տեսայ որոշումներս երազի մը
պէս յօդս ցնդեցան : Ի դուր խիստ ճակատս քու
նայուածքէդ կը դարձնէի , քու զմայլելի ձայնդ
լսեցի և ոտքդ ինկայ :

Բայլօ իշխանը բռնեցին և դուն որոշեցիր կոմ-
սուհւոյն հետեւելու : Վայրենի լեռին կատարէն

այն խումբին անցնելը տեսայ , որ կեանքէս աւելի սիրելի բան մը կը յատկատակէր իզմէ , և ինձ այնպէս կը թուէր որ մահը դաշոյնին պաղ երկաթին պէս սրտիս վրայէն կ'անցնէր :

Նախընթաց օրը Ունտերլախի հեղեղատին մօտ , խոր անձաւի մը մէջ պահուտելով մարգարէական երգով մը Բալզոյի սոսկում ազդեցի : Քու մեկնած օրդ նոյն իսկ ապստամբներու իրենց գլխաւորը ազատելու մտօք՝ շինած յատակադիծը երեւան հանեցի : Էքզիլի դունդերը փրկելու համար , որոնց թիւը լեռնականներէ խիստ նուազ էր , Սոսկալի քարհատը ձեր տոջեւը ելայ : Սոյն ահարկու ժայռին , այն ահագին անձաւին մէջ ունտեղական փայտեր , այրելի նիւթեր , ծծումբի , կուպրի և փոշիի կոյտ մը պահեցի : Մարտնչելու ատեն սոսկալի պայթիւն մը հաւատացեալ լեռնականներու Արեւելի երեւելիը իմաց կ'ուտար : Ծիրանի վերարկու մը առած , բոցերու մէջ տեղէն ելլելով ապստամբ զօրքերը կ'ոչնչացնեմ , Բալզօն կ'սպաննեմ և Էքզիլը մահուանէ կ'ազատեմ :

Ո՛վ կոյսդ Ունտերլախի , երբ գրեզ նուազ վերցրնելով վայրենի լեռը տարի և գրկացս մէջ առի , բերկրութեամբ և սիրով արբշխու կարծեցի թէ երկինքը բացուեցաւ :

Գիշերային սիւքը ականջիս խաղաղութեան և փափկութեան շեշտեր միայն կը բերէր : Մեծ հեշտութեամբ անտառին գաղջ և յտակ օղը կը ծծէի : ամբողջ բնութեան հետ ինքզինքս հաշտուած կարծեցի : Անմեղութիւնը գրկացս վրայ կը հանդէս ,

ինձ այնպէս կը թուէր թէ, անոր այս շօշափումը զիս մաքրած էր . ոճիրներուս յիշատակը նոր արշալոյսէ մը խորտակուած հինօրեայ քառօխ մը պէս խոյս կու տար : Եռանդուն հոգիս յոյսի համար վերածնելով ամէն առաքինութեանց առջեւ բացած էր : Փառք , հարստութիւն , դահ , իշխանութիւն , լեռին աքսորեալին առջեւ որչափ չնչին բաներ էիք դուք . ձեզմէ աւելի , կեանքի ամէն պերճութիւններէ աւելի , վեհ բան մը դտած էր . երկինք իրեն ներած ըլլալով իւր Աստուածը դտած էր :

Իմ աչքս երախտագէտ սրտով դէպ ՚ի երկինք դառնալով , ալ Արարչէն շնորհ չէր հայցէր , ալ չէր հայհոյէր , չէր կասկածէր , անմեղութեան օրերէն ՚ի վեր առաջին անգամ վեհ Դատաւորէն շնորհալի կ'ըլլայի , աստուածային բարութիւնը կ'օրհնէի : Յաւիտենականը՝ Էլրտիան ինձ կը յանձնէր , որ երկնային վրէժխնդրութեանց վախճանը՝ ազատուող մարդկանց աւետող Նոյեան տապանի ազատնիին պէս՝ մաքուր երկրին վրայ ծրող ծաղկող գըթութեան ոստը գողցես ինձ կը նուիրէր :

Շունչ և կենդանութիւն առիր , ընակարանս ընդունեցիր . այդ օրը ի՞նչ երջանիկ էր , բայց ի՞նչ դիշեր մը անոր յաջորդեց . . . : Գու նիրհած վայրդ , դուռին ետեւը ինքզինքս անոյշ քունի մը յանձնած ատեն՝ յանկարծ հեղեղաափն ճիւղը ինձ կ'երեւի . ճակատը արիւնաներկ սրտակ մը կը կրէ . խղտուած ծիրանիի կտորներ իր կապոյտ մտքմինը կը ծածկեն և օձեր իւր սիրտը կը կրծեն :

— Շա՛րլ , կ'ըսէ ինձի ճիւղը , երկինքը հան-

դարտած է, կսկիծներդ անոր արդարութիւնը զինաթափ ըրին. բայց Յաւիտենականին թողութիւնը ամբողջապէս վայելելու համար, պէտք ես այն հրամանին հնազանդիլ, զոր անոր կողմէն քեզ կը նուիրեմ: Մօրայի ոսկրեղէն յիշատակարանին ներքեւ, կեանքիդ ամէն յիշատակներէդ շրջապատուած ատենդ, ոճիրի և մահուան շէնքին տակն է որ անունդ Ունտերլախի հէզ որբին պիտի յայտնես, քու Աստուածդ քեզ այսպէս կը հրամայէ, հնազանդ եղիր: »

Այս ահարկու դատակնիքը լսած ատեն ահռելի աղաղակներ կ'արձկեմ, ճիւղին գթութիւնը կը հայցեմ, որն որ զիս մղելով անհետ կ'ըլլայ: Շուարու մոլար, ամբողջ մարմինս պազ քրտինքով մը թրջուած, և քստմնելի՛ կ'արթննամ: Երեք անգամ քունը ակամայ իմ արտեւանունքս կը գոցէ, երեք անգամ այն երազը կը տեսնեմ: Հեղեղատին ճիւղը իմ առաջին փորձանքիս օրը աղէտներու հետք մը ինձ գուժելով զիս չէր խաբած բնաւ: Եթէ որոշուած հրամանը կատարէի՛ Երկնից ներումը հիմա կը խոստանար ինձ . . . : Ա՛հ, յաւիտենական արդարութիւնը չավաղանց անողորմ և դաժան զոհողութիւններով ծախու չէր առնուէր: Ճակատագրի հպատակեցայ, հնազանդ եղայ:

Կանգ կ'առնեմ. իմ աղետայի խոստովանութեանս վերջ տուի: Միթէ դժբաղդութեան բաժակը մինչեւ իր մրուրը քամեցի՞: Սէն-Մօրի դ'ուսար, քու վճիռդ կ'սպասեմ: Ինչ որ ըլլայ՝ զայն արտասանէ՛ անվեհեր: Հաւատա՛ ինձ, եր-

դում կ'ընեմ որ ասոր համար տրտունջ մը չեմ ընեը , զքեզ չեմ յանդիմաներ : Եթէ Շարլ քու կողմէդ դատապարտուած է՝ ալ զինքը չպիտի տեսնես , եթէ ներես . . . : Ո՛հ , Էլրտիա՛ , այդ կարծիքով չեմ ժախր համակուիլ : Միթէ ինձի՞ կ'ընայ երջանկութեան հաւատալ . . . : Թո՛ղ երկինք ինձ ներէ , ատիկա կրնամ յուսալ , բայց պէ՛տք եմ վարձատրութիւն մը սպասել :

Ամէն ատեն դէպ ՚ի կախազան դիմող մահապարտին նման՝ ակամայ կը դողդողամ . . . : Ինձ այնպէս կ'երեւի թէ զիս հարուածող ամէն շանթերէ ուժգին շանթ մը , Էրսթայի անէժքէն աւելի սոսկալի անէժք մը , իմ տարագիր դիտուս պիտի զարնեն : Եթէ իմ նախազգացումներս կատարուին , եթէ սիրող զիս մերժէ՝ մնաս բարեա՛ւ , սիրելիդ իմ Էլրտիա՛ , մնաս բարեա՛ւ : Նկուն և տրտմագին կը մեկնիմ . . . Գուցէ այն Աստուածը որ երկրիս վրայ զմեզ բաժնեց՝ երկնից մէջ զմեզ պիտի միացնէ : Ո՛հ , այս քաղցր խորհուրդը իզմէ թող չյափշտակեն , ասի նեցուկ ունենալով դերեզմանին մէջ պիտի իջնեմ բերկրալի , որուն վրայ գթութեան արասոր մը չպիտի հեղուն . . . : Մնաս բարեա՛ւ , զղջումի և ցաւի ախփիչ լոյս , կուսական ծաղիկ , որուն երկնային անուշաբոյր հոտը շնչեցի , և որուն մաքրութիւնը իմ շունչս դոնէ երբէք չպղծեց : Երկնային սահմաններու անոյշ երեւոյթ , յոյս , սէ՛ր և երջանկութիւն . . . մնա՛ք բարեաւ :

Գ Լ Ո Ւ Խ Ժ Բ .

Ունտերլախի կոյսը ձեռագրին ընթերցումը լլեմնցուց : Ո՛հ , իւր սխալներովը հանդերձ այդ Շարլն որչափ մեծ կ'երեւի իւր աչերուն , այն Շարլը , որուն առջեւ երկիրը դողաց , այն Շարլը , զոր երկիրը մերժեց : Ի՛նչ մուլթիմներ , բայց և ի՛նչ սրտի տաղնապ : Ի՛նչ սճիրներ , բայց ի՛նչ ապաշխարանք : Ի՛նչպէս իւր ուշը կը դրաւէ , ի՛նչպէս իրեն սքանչելի կը թուի այն Պուրկոյնի գիւցազնը տարագիր , զղջացած և ախրոյ՞ բնութենէ մոռցուած . . . : Շարլ ծիրանին հագած , աշխարհակալ և յաղթական՝ բաղդաւոր իշխան մ'էր միայն . Շարլ ամայի լեռին վրայ ամէն վառքէ , ամէն մեծութիւններէ կամովի զուրկ , խոնարհութեան վերջին աստիճանը հասած և կեանքի տառապանքները կրելով՝ իրեն համար մարդկային բնութենէ վեր կ'երեւի :

Էլլտի ի՞նչ պիտի պատասխանէ այն խեղճին , որ զինքը կը բնտուէ . Աքսորեալը տիեզերքէն երեսի վրայ ձգուած , միթէ զինքը կեանքի հետ կը ցող միակ էակէն պիտի մերժուի : Երկնից զայրոյթը կը հանդարտի , միթէ Էլլտիա երկինքէ աւելի անողո՞ք պիտի ըլլայ : Զինքը անյուսութեան մէջ թաղելով՝ միթէ իրեն առջեւ վիհը պիտի բանայ , մինչդեռ Աստուած զինքը անմահ շաւիղներու մէջ կը դնէ : Ո՛հ , արդէն որչումը առնըւած է . վանաստանին որբը խաղաղութեան և ներումի հրեշտակը միայն կրնայ և պէտք է ըլլալ .

իրեն այնպէս կը թուի, թէ նոյն ինքն Աստուած զինքը ընտրած էր որպէս զի զղջումի մարդը ըս-
փովէ, զայն հաստատէ այն առաքինութեանց
չառկին մէջ, ուր մտած էր անի, և անոր հանգիստ
ու երջանկութիւն ներշնչէ :

Ունտերլասի կոյսը գիտնալով թէ սուրբ պար-
տաւորութիւն մը պիտի կատարէ՝ չի տատամսիր
բնաւ . քանի մը տող բան կը գրէ և հետեւեալ
գրուածը լեռին ստորոտը այն հինօրեայ ուռնիին
ճեղքին մէջ հապճեալ կը դնէ :

« Ոճրագործ մը եղար, բայց երկնից գութը
մարդուս շարագործութիւններէ աւելի մեծ է :
Ա՛հ, ո՛ւր էր թէ իրօք յաւիտենականին կողմէն
դքեղ դատելու համար դատաւոր կարգուած ըլ-
լայի: Շ՛արլ, անմեղութեան ձայնը չ՛որոտար բնաւ .
. . . երիտասարդութիւնը գթած է, եղէցը մա-
հակի տեղ չի կրնար բռնել, և երբէք փրկութեան
պաշտօնէն զատ կոյսի մը ուրիշ պաշտօն չյանձ-
նեցին : Խոստովանութիւններդ աչացս առջեւ ամ-
բողջ էութիւնդ փոխեցին, բայց իմ սիրտս չփո-
խեցին բնաւ : Կարդացի, լացի, ներեցի » :

Որքը վայրկանները կը հաշուէ անհամբեր . . .
Պուրկոյնի նշանաւոր իշխանին միակնեցուկը, որուն
առաջ աշխարհիս նուաճումը չէր բաւեր յաղթող
գիւցաղնին համար, հիմա ամբողջ աշխարհը ըլ-
լալուն հպարտ՝ կանխաւ կ'զգայ այն բերկրութիւնը,
որ իր գիրը պիտի ներշնչէ: Իւր մաքուր հողին՝ ու-
րիշ հողի մը մաքրել կարենալուն համար երջանիկ,
իւր սէրը առաքինութիւն մը և իր երջանկութիւնք

պարտաւորութիւն մը սեպեց . այն ներումը որ ինքը արտասանեց , երկնային ներշնչում մը կ'երեւի իրեն , և ապագան մոգական պատկերի մը նման նկարուած , իրեն առջեւ կը բացուի երիտասարդութեան ամէն ցնորքներով , եռանդով և սիրով զարդարուն :

Իայց արդէն Մենակեացը խրճիթին մօտ է . Շարլ էլլոտիային քովն է : Ո՛հ , բաժնուծ սէրի մը առաջին խոստովանութիւնները որչափ անոյշ են : Որքը թող տուաւ որ իւր սիրտը խօսի և Պուրկոյնի երջանիկ դուքսը իր ծայրահեղ երանութենէն միայն կը վախէ . ախո՛ս , ստէպ բերկրութիւնը երբ խիտ հեռու քշուի՝ դեռ ցաւերու կը հանդիպի :

Մենութիւնը , անտառը , ժայռերը , անապատը , ամէն բան իրենց աչաց առջեւէն անհետ կ'ըլլան : Ա. Է այս երկրի վրայ չեն , ինչպէս չեն նաեւ երկնից մէջ , բայց այն հրապուրելի սահմաններու մէջ կը թափառին , ուր քանի մը վայրկեանի համար միայն կը բարձրանան կեանքի գեղեցիկ օրերու մէջ բաղդին միացուցած երջանիկ սիրահարները :

Պուրկոյնի դուքսին ամէն խորհուրդները էլլոտիայէն հաւնուած են : Մարդկանց աչերէն հեռի՝ թագուն պիտի ապրի : Վայրենի լեռին վրայ կեանք պիտի վարէ . խրճիթը նորէն պիտի շինուի . բնութեան հրապուրելը , սէրը միայն իրենց աշխատութեանց պիտի նախագահէ , և Մենակեացին մենարանը որբին համար ինչ պալատ մը կ'արժէ : Շարլի համար էլլոտիային բնակած ժայռէն աւելի ինչ գահ արժէք մը ունի :

Իշխանին շինած յատակադժին համեմատ Սեն-Մօրի դուստրը պիտի երթայ Անսերմը գտնելու : Ունտերլախի բարեսիրտ քարոզիչը չի կրնար մոռնալ թէ ֆօնրատ , իւր սիրելի քեռորդին , կեանքը Մենակեացին կը պարտաւորի , և պիտի դայ երկու սիրահարներու վանքին մատուռին մէջ պսակելու . երկրացին զօր-թիւն մը որքին ամուսնութեան դէմ կենսալու իրաւունքը չունի : Էլլտախ իւր ընտանեացը անձանօթ , և Շարլ ամէն մարդերէ մոռցուած է . մէկը միւսին պիտի բաւէ , տիեզերքին մէջ և ոչ իսկ երկուքի պիտի բաժնուին :

Հոգիի ամենէն մաքուր հրապոյցներու : զգացումի ամենէն անոյշ հիացումներու մէջ , Պուրկոյնի դուքսը և Ունտերլախի կոյսը՝ ժամերու արագ արագ փախուստը չնչմարեցին բնաւ : Ախտոս , ասոնք ժամանակին անողոք և մահարեք դուստրներն են , որոնց ամէն մէկը մանդալ մը բռնած քանի որ մարդս հաճոյք կը վայելէ՝ զանոնք կը հնձեն :

Մարդկային երանութեանց արագընթաց փայլակին պէս օրը անցաւ : Իրիկուան դէմ էլլտախ իւր բարեկամին կռթնած , որնոր իւր պաշտպանը իւր սիրահարը , իւր էրիկն ալ է , լեռէն վար կ'իջնայ : Հեղեղատին մօտ իրարմէ կը բաժնուին : Որբը էրթալի բնակարանը կ'երթայ , և իշխանը վանք : Շարլ կ'ուզէ իւր վեհանձն զինակիցը տեսնել : Կ'ուզէ զանի իւր գրկացը մէջ սեղմել : Իւր հոգին դէպ ՚ի երջանկութիւն կը դառնայ , և այս եռանդուն , հրատապ հոգիին մէջ ամէն բան երախտագիտութիւն է և փափկութիւն : Ա՛հ , նեք

բում և դուժ այն մարդուն համար, որուն է՛ն մաքուր և անարատ զգացումները գժբաղդութեան մէջ կը ստոխն և կը կարծրանան, ինչպէս ջուրը երկրիս քամոցէն անցնելով ժայռին տակը կը քարանայ . . . : Բայց ատելութիւն և արհամարհանք այն անզգայ հոգիին համար, որ երբ յաջողութիւն և բարօրութիւնը երկնային ցօղի մը պէս իրեն նոր կեանք մը կ'իջեցնեն և ինքը իւր չորս դին բերկրութեան, քարեզործութեան և սիրոյ անուշաբոյր հոտերը չի սփռեր :

Մնակըմ Էլուտիան կը տեսնէ : Ի՛նչ զարմանք . . . ս՛ուսկէ կու գայ արդեօք . . . : Ի՛նչ մեծ ուշադրութեամբ անոր ազատութեան նկարագիրը մտիկ կ'ընէ . . . : Մենակեացին անունէն և գաղտնիքէն զատ Սէն-Մօրի դուստրը պատկառելի քարոզչին ամէն բան կը յայտնէ : Անոր կամքը, առած որոշումները և դէպ 'ի վանատուն ըրած այցելութեան պատճառները իւր ծերունի բարեկամին կ'իմացնէ :

Մնակըմ միտ կը դնէ առանց զանի ընդմիջելու, բայց մերթ ընդ մերթ խորին հառաչներ կ'արձկէ իւր կուրծքէն : Էլուտիա տրամադի և ողորմ նայուածքով կը տեսնէ թէ անոր աչերը արտասուակի են . անոր պատասխանին կ'սպասէ անհամբեր :

« Մ, յսպէս ուրեմն, կ'ըսէ վերջապէս քահանան, թաղուն Մենակեացի մը, անանուն մարդու մը, որ տիտղոս և հարստութիւն չունի, այսպիսի մէկու մը ամուսինը ըլլալու համար է որ Ռենտերլախի քաղցր կոյսը, ազնիւ, առաքինի, հզօր կոմս տը Նորենտալի ձեռքը մերժեց :

« Ափսո՛ս, կը յարէ անդէն, Երկինք քու վրայ
իշխելու իրաւունք մը չառաւ ինձ : Երեսի վրայ
ձգուած ո՛րք, դուն քու անձիդ տէրն ես : Սիրոյ
հրատազ յայտնութեանց և սրտերու հրապոյրին
առջեւ ծերունիի մը իմաստուն խրատները և դա-
տողութեան պաղ խօսքերը ի՞նչ կրնան ընելը Սա-
կայն, ո՛վ աղջիկս, անկեղծօրէն պատասխանէ՛ ,
քու բաղդդ վայրենի լեռին տարօրինակ անձա-
նօթին յանձնելու պատրաստ՝ դուցէ երբ քու
առջեւդ վիհ մը կայ, իմ աղերսալի ձայնս լսե-
լով՝ քու առած որոշումներուդ սարսիլը չե՞ս զգար :
Միթէ ատիկա ակամայ սարսուռ մը չա՞ղդ եր քու
սրտիդ . . . :

— Ո՛չ, ո՛վ հայր, կ'ընդմիջէ որքը արիաբար :
Մենակեացին հողին կը ճանչեմ, իմ ճակատագիրս
անոր ձեռքը յանձնելով բանէ մը չեմ վախեր
և ինձ այնպէս կը թուի թէ նոյն իսկ Երկինք այս
որոշումը ինձ կը ներշնչէ :

— Կը սիրե՛ս, կ'ըսէ, ծերունին :

— Եթէ չսիրէի, միթէ ամուսին ըլլալ կ'ուզէի՞ ,
կը պատասխանէ աղջիկը :

Անսե՛րմ, կ'ըսէ նորէն, իմ աղաչանքս մի՛ մեր-
ժեր բնաւ. եկո՛ւ սուրբ սեղանին ոտքը, որբին և
անոր ամուսնոյն դուրսը Ամենակարողին օրհնու-
թիւնները հրաւիրելու : Քեզմով անոր ձեռքը մի-
անայ . . . :

— Անձանօթի մը ձեռքին, դուցէ բաղդախըն-
դրի մ'ալ, կը դո՛չէ Անսերմ ցաւադին :

— Բաղդախնդրի՛ մը . . . կը կրկնէ էլստիս

արտամտելով, ի՞նչ թշնամական բառ մը արտասանեցիր : Գօնբատէն վեհանձն փրկչին նկատմամբ, միթէ քեզի կ'իյնա՞յ այդպէս խօսիլ :

Յետոյ առոյգ և վեհ ձայնով մը այսպէս կը շարունակէ . — Ունտերլախի որբին ընտրածին քով Տը Նորենտալ հզօր կոմսը՝ միթին և աննշան մահկանացու մ' է : Այն մարդը, որուն իւր սիրտը կ'ուտայ այսօր, վաղը եթէ ուզէ երկրի ամենէն մեծ զօրութեանց հաւասար կը բարձրանայ յաղթական : Վանատունին աղջիկը իւր ծնունդովը և աստիճանովը աւելի անարժան է Մենակեացին : Անապատին մէջ մեկուսի կեանք վարող էրիկին համար էլրտիա հպարտ՝ միայն սիրոյ կ'ուզէ հնազանդիլ . . . , բայց կրնայ փառքին ալ հրաման ընել :

Եռանդը իւր աչքին մէջ կը փայլի : Անսերմ զարմանքով մոլար՝ այսպէս կ'ըսէ անոր . — Ուրեմն անոր գործերը քեզ ծանօթ են : Ի՞հ ուրեմն խօսէ թէ ի՞նչ է իւր անունը :

— Սուրբ սեղանին առջեւ միայն զայն պիտի իմանաս : Վանատունի մատուռին կամարներուն ներքեւն է, որ յետին անգամ այդ անունը իւր բերնէն պիտի ելլէ : Մենակեացը վերջնական կերպով փառքէ, մեծութիւններէ, մարդկային սնափառութիւններէ կը խորշի : Միթէ երկնից պաշտօնէի՞ն կ'իյնայ այս մասին զինքը յանդիմանել .

Քահանան էլրտիայի ամէն մէկ խօսքը ըսելով իւր զարմացումին աճիլը կ'զգար : — Հայր իմ, կը յարէ որբը, ինձի նկատմամբ ունեցած գորովա-

գին սիրոյդ համար , Աստուծոյ սիրոյն համար , որն որ այնպէս կ'երեւի թէ իմ հարանիքս կատարել հրամայած է , երդում ըրէ՛ որ երբէք աշխարհի առջեւ չպիտի յայտնես այն մարդուն դոյութիւնը , որն որ չ'ուզեր ալ մարդկանց հրամայել և որ իւր անունը Յաւիտենականին առջեւ միայն քեզ պիտի յայտնէ :

— Կ'երգնո՛ւմ . կը դոչէ Անսելմ :

Եւ քահանան ալ չի կասկածիր թէ վայրենի լեռնին տարագիրը նշանաւոր անձ մ'է : Էլրտիա , մաքուր և անարատ կոյս , միթէ կրնա՞ր զանի այսպէս սիրել , եթէ անիկա քանի մ' առաքինութիւնս ներով իրեն արժանի չերեւէր . . . : Անսելմ՝ ալ չի նկրտիր անոր անյողգող դրոշմը քայքայելու , և հետեւեալ օրը պիտի երթայ արեւուն մարը մտած ատեն , զանի վանատունին մատուռին մէջ 'ի թագուսա Մենակեացին միացնելու :

Էլրտիա դէպ 'ի վայրենի լեռը կը դառնայ : 'ի զուր Անսելմ աշխատեցաւ գինքը արգիլելու , մինչդեռ անի կը վախէր որ իշխանին սիրտը այս կերպով չվիրաւորուի , կը վախէր նաեւ որ անոր հոգիին նկատմամբ կասկածոտ չերեւի օր մը , միայն իւր անձը անոր յանձնելէ դադրելով : Հարսանեաց նախընթաց օրը զանի երեսի վրայ թողուլ անողորմ դորձ մը կը թուէր իրեն . Շարլ անոր ներկայութեան , իսկ ազլիկը անոր սէրին պէտք ունին :

Ի՞նչ մեծ հրճուանքով դիտար կը տեսնեն . . . : Հանդարտ , խաղաղ մենարանին առջեւ , անտառին հաւամրդիներուն վրայ , աստղերու անոյշ լոյ-

սով վայրուն՝ ինչ կաթողին սիրով և վստահու-
թեամբ արդի երջանկութեան և երջանիկ ապագա-
յին վրայօք կը խօսին . . . : Ա՛հ, անցեալը երազ
մ'անդամ չէ : Մէկը միւսին քով խրճիթին ժայ-
ռին ներքեւ նստած՝ առանձնութեան որորանին
մէջ, ոչ տերեւախիա ոստերուն մէջէն անցնող զե-
փիւռին անոյշ շիւնը, ոչ ջրվէժներու հեռաւոր
միմունջը, և ո՛չ ալ անտառին սոխակներուն ներ-
դաշնակ ձայնը կը լսեն . այլ լոկ սիրոյ ազդու շեշ-
տերուն, զգացումի կիզիչ յայտնութեանց ականչ
կը դնեն, ու երբ սիրային ճառերու ճարտարախօս
լռութիւն մը կը յաջորդէ, համր՝ իրարու հետ
զարձեալ կը խօսին :

Վանաառունին աղջիկը ցաւադին կը քաշուի այն
դաշտային յարկին տակ, ուր գիշերային ժամը զին-
քը կը հրաւիրէ : Մենակեացին քովէն մեկնել հարկ
է, և անորմէ հեռու մնացած ամէն մէկ վայրկեանը
երջանկութենէն գողցուած ատեն մը կ'երեւի իրեն :
Շարլ, որ քաջ մարտիկ, միանգամայն անկեղծ
սիրահար մ' է, յարգանքով ու եռանդադին ան-
մեղութեան սրբավայրին վրայ կը հսկէ, և մահկա-
նացուներու է՛ն սիրելին, կոյսերու է՛ն գեղանին,
սիրոյ պահպանութեան տակ, մարդկանց է՛ն ե-
ռանդուն մէկուն իշխանութեան ներքեւ՝ կը նկը-
հէ վստահ, երջանիկ և անարատ :

Էքսպէրի վէրքերը թեթեւ ըլլալով բժշկուած
էին : Շարլ իւր զինակից եղբայրը տեսած և իր-
երջանկութիւնը անոր իմաց տուած էր : Վեհանձն
Նորենտալ ինչ զսոցութիւն ընելէ ետ կը կե-

նար . . . : Խօսք տուաւ Շարլի ընկերակցիլ մին-
չեւ սուրբ սեղան, և ներկայ դանուիլ ամուսնու-
թեան այն երգումին, որ զինքը յաւէտ էլրտիա-
յէն պիտի բաժնէ :

Գիշերը իշխանին ինչպէս երկար երեւցաւ :
Հուսկ յետոյ արշալոյսը կը ծագի, սակայն բնու-
թիւնը Մենակեացին բերկրալի սրտին հետ ո՛րչափ
աններդաշնակ է . . . : Երկնային կամարը տխուր
ամպերով բեռնաւորուած է և մթին հորիզոնին
վրայ հեռուն՝ սառնապատ լեռեր սպիտակ և մահա-
շուք՝ միդապատ ճիւղներու պէս կը բարձրանան :

Վանքին աղաւնին խրճիթէն դուրս ելած է,
իւր նայուածքը կը դարձնէ դէպ ՚ի երկինք և կը
դողդողայ . . . : Նախընթաց օրը ամբողջ բնութիւ-
նը անոր երանութիւնը տեսնելով կը ժպտէր դող-
ցեա, ինչո՞ւ նորածին առաւօտը ահուելի դոյժ մը
բերող աղիողորմ՝ թղթատարի մը տիպարը կը կրէ . . . :

Սակայն սէրը ի՞նչ հրապոյրներ չճղգեք մար-
դուս : Շարլի առաջին շեշտերը լսելուն էլրտիայի
շփոթը կը փարատի . օդին մէջ ա՛լ փոթորիկ չկայ,
երկնից վրայ ամպեր չկան . ամբողջ բնութիւնը
իրեն ի՞նչ կրնայ ընել քանի որ սիրեցեալը
իւր քովն է :

Օրը իրենց համար ամենէն մաքուր վայելքնե-
րով և կատարեալ երջանկութեան սպասելուն մէջ
անցաւ : Կազդուրիչ կրակները տարածող աստղը
լեռին վրայ չփայլեցաւ բնաւ : Մրրկային ամպ մը
հովիտը կ'սքողէ և Աւսթեր* բուռն և սաստիկ տաք

* Auster

անապասներէն խոյս տալով՝ դէպ ՚ի տառնապատ
լեռերը կը յառաջանայ : Որքը և իշխանը մենարա-
նէն իջնելով երեկոյեան ստուերին մէջ առանց ե-
րեւելու Ունտերլախի հանդարտիկ և խաղաղ գիւ-
ղակէն կ'անցնին և վերջապէս մատուռը կը հասնին :

Բազմաթիւ ջահեր վառուած են հոն : Խունկը
ոսկեղէն անօթներու մէջ կ'այրի : Էլրտիա որբա-
վայրին յատակը ծունր կը դնէ : Էքպէր նոր հարս
և նոր փեսային կ'սպասէ , վշտահար է և հալու-
մաշ և որբին երեսը նայելու չի ժտիր : Անսելմ սուրբ
սեղանին առջեւն է . իւր դէմքը արտուժ է և
խոժոռ : Հիմտ պիտի ճանչէ ուրեմն այն անունը ,
զոր Մենակեացը Յաւիտենականին առջեւ միայն
ուզած էր յայտնել իրեն : Այս միջոցին քարոզիչը
լռին՝ դաաաւորի մը տիպարը կը կրէ : Իւր աչերը
Շարլի վրայ ահաբեկ և Էլրտիայի վրայ կարեկցա-
բար սեւեռած է :

Հանդէսը կ'սկսի . Մենակեացը որբին քով ծըն-
բադիր՝ տակաւին չի ժտիր շնորհակալ ըլլալ երկին-
քէն : Ատոր պատճառը ինքն ալ չիմանար ՚ի ներ-
քուստ , բայց սուրբ սեղանին դիմացը դողցես
վրիժառու դատաստանի մ'առջեւ եղածին պէս
դողդողալով ՚ի զուր գլխացող Ստաուածը կը բըն-
տուէ , այլ անողորմ ու սոսկալի Ստաուածը միայն
կը տեսնէ :

Ունտերլախի քարոզիչը սիրահարներու կը մօտի
և վեհ ձայնով մը նոր փեսային կը հարցնէ թէ
ինչ է իւր անունը և մարդկանց մէջ ինչ տիտղոս
կը կրէ : Մենակեացը կը դողայ՝ իբր թէ այս հար-

ցումը զարմանք ազդած ըլլար իրեն , իբր թէ պէտք չըլլար այդ հարցման պատասխանել . . . :
Իւր շուրթերը կը տփուենին . . . : կը խորշի . . . :
Յետոյ կցկտուր ձայնով մը այս խօսքը կ'արտասանէ .

— « Պուրկոյնցի Շարլ » :

Քահանան ետ ետ կ'երթայ տհաբեկ : Մազերը դիտուն վրայ կը հերթին , ծնկուիները կը դողդողան , ձեռքերովը աչերը կը ծածկէ , ահռելի աղաղակ մը կ'արձկէ . . . և ամենէն սոսկալի ըտթիւնը այդ աղիողորմ ձայնին կը յաջորդէ , որնոր հինօրեայ կամարներուն մէջ արձագանք տալով կը կորսուի նման այն որոտումին , զոր փոթաբիկի մուսշիւն և ամպին տակ նաւաբեկութեան արտաթրն դանօթը կ'արձկէ :

Յանկարծ Անսելմ շուար ու մուլար ներշնչեալ մարդարէի մը պէս իւր նայուածքը դէպ 'ի երկինք կը դարձնէ : Իւր շարժումը իշխանը կը մղէ : Անծանօթ բոց մը իւր սպառնալի աչերէն դուրս կ'ելլէ : Մովսէս՝ Սինա լեռէն իջնելով կուտապշտ հրէից առջև օրինաց տախտակները զայրագին խորտակելու ատեն այս կերպարանքն ունէր :

Անսելմի ճակատին վրայ շանթարձակ փայլ մը կ'երեւի : Ահեղագոչ որոտումը կարծես թէ իւր ձայնին կը միանայ : Փայլակներու մէջէն երկնային վրէժխնդրութեանց մարդուն յառաջ գալը կ'երեւի . — « Յանգուզն Շարլ , կը դոչէ , ազգերու աղէտ , ո՞ր կարողութիւնը ուրեմն կրցաւ զքեզ դերեզմանէն դուրս հանել . . . : Եւ ի՞նչ , Սէն-Մօրի մարդասպան , կը ժպրհիս քու արիւնալի

ձեռքդ Աստուծոյ սուրբ սեղանին առջեւ, քու զոհ
բրածիդ աղջկանը նուիրելու: Անարդ և վատ հրա-
պուրիչ, տե՛ս Իրենայի մուրար ճիւղը, որ կը յա-
ռաջանայ դէպ ՚ի քեզ, և իր զաւակին պաղ և կա-
պոյտ դիակը ոտիցդ առջեւ կը նետէ: Սրբապիղծ
մարտի՛կ, միտ դի՛ր, այս վանատունին կրօնաւոր-
ներու աղաղակները չե՞ս լսեր, որոնք Սոսկայի
քարհատին վրայ գլխատուեցան . . . : Ժողովուրդ-
ներու դահիճ, երկիրը սարսափելով քեզ կը մեր-
ժէ և սուրբ տաճարները քեզ կը մղեն . . . : Փա-
խի՛ր, քու անարդ ներկայութեամբդ այս դաւիթ-
ները մի՛ պղծեր: Յանուն Յաւիտենականին իմ
ձայնս հոս կը բարձրացնեմ. ոճրագործ մարդուն
արիւննուշտ աշխարհակալին, մարդասպանին, սրբ-
բապիղծին, անհաւատին Յանդուգն Շար-
լին, անէ՛ժ.ք, անէ՛ժ.ք »:

Եւ մահաշուք կամարներուն արձագանքը ամէն
կողմէն կը կրկնէ .

— Անէ՛ժ.ք, անէ՛ժ.ք »:

Նոյն պահուն ահագին փոթորիկ մը, պատիժ-
ներու և մոլեղնութեանց նոր պաշտօնէի մը պէս
օրհնեալ շէնքը կը սարսէ: Երկիրը կը մռնչէ, հիւ-
նօրեայ շէնքը իւր հիմէն կը դողդողայ: Հովը
սրբափայրին ապակիները կը խորտակէ և մինչեւ
սուրբ սեղանին առջեւ կը համնի պտոյտներ ընե-
լով: Զահերը կը շիջին, եկեղեցին խորին մթու-
թեան մէջ կը թաղուի. վանքին զանգակը փոթո-
րիկէն շարժելով կը հնչէ . . . , Ելտաիա կը ճանչէ
այն մահաբեր հնչիւնը, որ շիրմին վրայ առաջին

Երդումը ըրած ատեն լսուեցաւ : — « Ահա՛, կ'ըսէ՛, հարսանեաց օրհնութիւնը » : Եւ գերեզմաններու մարմորը իւր անկենդան մարմինը կ'ընդունի :

Ինչպէս աչերէն կրակ ու բոց արձկող հրեշտակին երկնային երիվարը Երուսաղեմի տաճարին մէջ Եղիողորոսը տապաառ գետին փուեց, նոյնպէս Պուրկոյնի տարաբաղգ դուքսը փոշիին վրայ ինկաւ : Մահաբեր սարսուռ մը իր երակներէն կ'անցնի, իւր սառ արիւնը կը կատի, իւր մոլորած աչերը կը գոցուին, անդամները կը ձգտին, իւր շարժումները ջղաձգական կ'ըլլան. խոր հառաչ մը կ'արձկէ և քանի մը վայրկեան ձայնը, զգացումը, մտախոհութիւնը կը կորուսէ :

Շարլ իւր աչերը կը բանայ . . . և Նորենտալ իւր գրկացը մէջ կ'առնէ զանի : Իշխանը ջահի մը աղօտ լոյսովը, զոր նոյն խակ հովը վառեց կրկին, իւր շուրջը Ունտերլախի կոյսը կը փնտռէ, սակայն անիկա Անսելմի ջանիւքը վանատուն տարուած ըլլալով մատուռէն անհետ եղած է : Սրբավայրը ամայի է . անէծքը և մահը ամէն բան հալածական վանեցին անկէ : Նոյն խակ խունկին հոտին մէջ աստիու մի շունչը կայ : Մարդկային քայլ մը, մահականացու ձայն մը գերեզմաններու ահուկի լռութիւնը զեն վրդովեր : Այս մահաշուք կամօրներու ներքեւ ամէն բան դատապարտութեան նշանն ունի, և Շարլ հեռուէ հեռու երեսի վրայ ձրգուած սրահներու մէջէն անցնող աւերակներու թռչունին ձայնը կը լսէ :

Անդարմանելի ցաւերը դադաղին պէս լռին են :

Խակ Շարլի վիշտերը մարդկային տառապանքներու չափը լրացուցին: Ասլշութենէն անշարժ պատկերի մը նմանութիւնը կը կրէր, և իւր բարեկամին վրայ աչքը սեւեռած կը կենար, իբր թէ Էքպէրի յիշատակը իւր միտքէն սրբուած ըլլար: Ոտք կ'ելլէ ու կը քայլէ գողցես ապահով ըլլալու համար, թէ տակաւին շարժում և կեանք ունի. իւր ձեռքովը մտրմինը կը շոշափէ, իբր թէ առաջին անգամ ինքզինքը կը քննէ. ցած ձայնով կը խօսի, իբր թէ ինքզինքին ո՛վ ըլլալը կը հարցնէ:

Իւր զինակից եղբորմէն հեռացած է. մատուռին մթին կամարներուն տակ կը գտնուի: Իւր նայուածքը դաժան և խիստ է, իսկ քայուածքը արագ: Կռնակը սիւնի մը տուած՝ քանի մը անյօդ բառեր և անհեթեթ ձայներ կ'արձկէ ակնկոր, և գողցես աներեւոյթ կարողութեանց հետ կը բանակցի ՚ի թագուստ: Էքպէր կը մօտի, կ'սկսի իրեն խօսիլ . . . , իսկ Շարլ շարժումով մը ուրիշ անձանօթ ձայն մը լսել ձեւացնելով՝ լուռ կենալ կը հրամայէ անոր:

Փոթորիկը անցած է: Տը Նորենտալ կոմսը միշտ իւր բարեկամին քով, հուսկ յետոյ կը յաջողի մահաբեր եկեղեցիէն դուրս հանել զանի: Զանի կը քաշէ, կը տանի, վանատունէն խոյս կու տայ . . . : Սակայն յանկարծ Շարլ կանգ կ'առնէ, Էքպէրը ետ կը մղէ և. — « Ո՛ւր կ'երթամ » կը գոչէ:

- « վայրենի լեռք » :
- « Ո՛վ այսպէս կը հրամայէ » :
- « Էլրտիան » :

Եւ այս բառք , որ դիպումով արտասանուած էր , մտղական տպաստութիւն մ' ազդեց : Պուրկոյնցի դուքոր առանց ընդդիմութեան իւր առաջնորդին կը հեռուի : Յարատեւ ցնորքի մը մէջ հեղեղառէն , անտառէն կ'անցնի , լեռին վրայ կ'ելլէ , ու Երկինք , գթութենէն անշուշտ , զանի գատաղութենէ զուրկ ձգելով՝ մենարանը կը հասնի առանց գիճանալու թէ ո՞սկէ մեկնած և ո՞ւր եկած է :

Շարլ աքսորի յարկին տակ չախաղանց տառապանքներու կ'ենթարկուի , խրճիթին մէջ կնիւնէ փսիաթին վրայ կ'իյնայ անզօր և նիհար : Մահաքուն թմբութիւն մը կապարի ահագին բեկորի մը պէս դլուխը իջնելով անոր ամէն անդամները կը սառեցնէ , և անդդայութեան հանդիստը կու գայ , քանի մը ժամուան համար դոյութեան չարչարանքը ընդմիջելու :

Գիշերը իւր ընթացքը շտապելով իւր քողերը կը մթաղնէր : Անձրեւը կ'իջնէր տեղատարափ : Նորենտալ իւր իշխանէն ո՛չ նուազ վատարազդ՝ Շարլի անկենդան մարմնոյն քով կը հսկէր : Յանկարծ ձայն մը զինքը կը կանչէ : Էքզերնայու ծքը կը դարձնէ լի հայր Անտելմը կը տեսնէ : Ազնիւ մարտիկը զարմացումով դրաւուած՝ լուռ կը կենայ : Նախ մտերգնութեան առաջին շարժումը չսկսելով դլուխը կը դարձնէ , սակայն յետոյ դառն ժպիտով մը դժբաղդին անշարժ մարմինը , քարոզիչին ցոյց ապով . — Ահա՛ւասիկ , կ'ըսէ , դո՞ւ ա՛ռա՛կաւին : Երկնային վրէժխնդրութեանց անողոք

գործիք , քու զոհդ դիտէ : Աքարի ամայի և անապատ ժայռին վրայ , չքաւորութեան ոնդաստանին մէջ այս մարդը , որ պաշտաններէ արատաքսուած , սուրբ սեղաններէ մղուած՝ անօք և անօգնական իւր շունչը կը փչէ . . . : Ահա՛ ասի է Երոզայի յաղթողը , իշխաններու է՛ն հզօրը , դարուս դիւցաղներ . ահա՛ Յանդուգն-Շարլ . . . : Հիմա դո՛հ ես » :

Անսելմի երեսը արտասուքով թրջուած է . — Երկինք այսպէս հրամայեց , պատասխանի կու տայ Ռենտերլախի քահանան : Իբրեւ սուրբ սեղանի պաշտօնեայ՝ իմ պարտքս կատարեցի , հիմա կու գամ իմ պարտքս հատուցանել , իբրեւ մարդկանց հովիւ : Իմ սիրտս քու կինիդ պէս և թերեւս աւելի աղեկէզ կը տառապի : Ո՛վ էքպէր , երբ Պուրկոյնցի Շարլին վրայ շանթը արձկեցի՝ ջղացը գուժիւն մը ունէի , որուն անհնար էր դիմադրուել և որն որ իմ խորհուրդէս աւելի հուժկու , իմ կամքէս աւելի հզօր էր : Բերանս խօսքեր արտասանեց , որոնք իզմէ չէին սպասուէր բնաւ . իմ անէծքս շուրթերէս անցաւ , բայց հոգիէս յառաջ չէին դար երբէք : Գերբնական իշխանութիւն մը միայն վրաս կը տիրապետէր : Երկնից իբր միջնորդ՝ վտնքին մէջ գուացի , իսկ իբր հովտին ձերբ՝ կու գամ մենարանին մէջ լարու » :

Բարեպաշտութիւնը , ցաւը , ճշմարտութիւնը , քրիստոնէական ողորմածութիւնը քարոզիչին գիւմացը վրայ իրենց նշանը դրոշմեցին : Էքպէր Անսելմի արտասուքը և տարիներէ ճերմկցած մազերը

տեսնելով, անոր եղկելի հառաչք և գթալի փաստերը լսելով ալ չի մղեր զանի. Էքպէր կը յառաչէ և յանդիմանելէ կը դադրի :

— « Վեհա՛նձն կոմս տը Նորենտալ, կը յարէ Անսերմ, մթութեան, ճամբու վտանգներուն և իմ ծեր հասակիս ականջ չկախելով, ուզեցի այս գիշեր զձեզ տեսնել : Երկինք ինձ ոյժ տուաւ մինչեւ ձեզի գալու : Իւր զայրոյթը կրնայ հանդարտիլ : Վրիժառու պատիժներու վախճանը գուցէ հասած է : Ո՛հ, ըսէ՛ Շարլի, վասն զի հիմա չի կրնար լսել, ըսէ՛ իրեն որ Նախախնամութենէ իւր յոյսը չկտրէ և թէ երկրի վրայ անդարմանելի չարիք չկայ բնաւ » :

— Եւ ի՛նչ, կրնայիր յուսալ . . . :

— Յոյսը երկնից դուստն է. զգոյշ ըլլանք զայն մղելէ : Աստուած, որ իմ բերնովս անէծքը արտասանեց, դարձեալ իմ բերնովս կրնայ ներումն արտասանել : Սակայն Շարլն ու որբը փրկելու համար իմ իրատներուս հետեւէ՛, օգնէ՛ ինձ :

— Ա՛հ, պատասխանի կու տայ Էքպէր եռանդագին, իմ կեանքս ձեռքդ է : Հրամանս ըրէ՛ և կը հնազանդիմ, խօսէ՛ ի՛նչ պէտք եմ ընել » :

— Շարլն մենարանը թո՛ղ մնայ, որպէս զի քանի մ'օր չկարենայ վանք երթալ Սէն-Մօրի դուստրին կեանքը վտանգի մէջ է, վստքիկ յոյզ մը կրնայ զինքը ուղաննել : Իշխանին ներկայութիւնը մահուան հարուածը կրնայ տալ անոր : Ո՛չ ինքը և ո՛չ ես պէտք ենք անոր տեսնուիլ : Էքպէր Շարլի վրայ հսկէ՛, ես ալ կ'երթամ Էլրտիայի վրայ հսկելու :

Քահանան խրճիթէն սլիտի մեկնի : Ո՛չ անտառը , ո՛չ հեղեղատները , ո՛չ անձրեւը , ո՛չ փոթորիկները , ո՛չ մթու թիւնը , բան մը վերջապէս ահ և սարսափ չ'ազդէր իրեն : Իւր լաթերը թրջուած , իւր անդամները ցուրտէն սառած են , իսկ ինքը բան մը չէ նշմարած , բան մը չէ զգացած . իր եռանդուն և բարեպաշտ հողին կարծես թէ իւր մահկանացու պատանը մոռցած է . պատրաստ է իւր կեանքը անմիջապէս զոհելով իւր արտասանած անէծքը դնել :

Պուրկոյնցի դուքսին վրայ յետին նշմար մը ձգելով կը դառնայ անդէն և իշխանին սառ ձեռքը վերցնելով . — « Դժբա՛ղդ , կ'ըսէ ծերը , ուրեմն կեանքիս մէջ մէկ անգամ միայն բարբարոս եղայ՝ » :

« Արդա՛րդ Աստուած » , կը յարէ ծունկի վրայ իյնալով և Շարլի ձեռքը սեղմելով . Բարերա՛րդ Աստուած , եթէ քանի մ'առաքինի գործեր իմ երկար ասպարէզիս մէջ կրցաւ վարձատրութեան մ'արժանանալ , տո՛ւր ինձ այն վարձատրութիւնը , կը խնդրեմ . Շարլն փրկէ՛ , Էլրտիան փրկէ՛ :

Ճակատագիրներու վեհապետ , այս տեղ ապաշխարանքի զոհ մը պէ՞տք է , զա՛րկ ինձի , պատրաստ եմ . իմ կեանքիս վերջին օրերը քաւուովի ամենէն դաժան տանջանքներու ենթարկէ՛ , կը հպատակիմ , սակայն թող Էլրտիա և Շարլ ներուովի արժանանան և միանալով երջանկութիւնը դաննեն :

— Պուրկոյնցի դուքս , հոս կ'երդնում քեզի . ա՛լ քուրձը չպիտի թողում , վայրենի խոտերէ

միայն պիտի ապրիմ, հեղեղատին ջուրը միայն պիտի խմեմ, մոխրի վրայ միայն պիտի սլառկիմ, և գուցէ Սատուած այսչափ զրկումներս և չարչարանքս տեսնելով, քեզի ակամայ տուած հարուածներուս հետքը անգամ անհետ ընէ :

Իր ջերմագին աղօթքը կրօնական եռանդի աղօթքն էր, որն որ իւր հոգիին տիպարը կը կրէ : Ծերունին ինքզինքը Սմնակարողին կը զոհէ : Նորոգող պատիժներու կ'սպասէ անհամբեր . իւր անձը տառապանքներու կը նուիրէ և իւր զոհերու կեանք և երջանկութիւն տալու համար կ'ուզէ անոնց մարտիրոսը ըլլալ :

Երկար ատենէ ՚ի վեր Ունտերլասի քարողէջը վանատունին ճամբան բռնած էր , երբ հռչակաւոր Պուրկոյնցին դամքան զգամ ապրելու նշան տուաւ : Օրուան առաջին կրակները խրճիթը կը լուսաւորէին :

— Էլ լուիա՛, էլ լուիա՛ . . . կը դռնէ Շարլ աչքը չորս դին դարձնելով :

Սակայն սրբին անոյշ ձայնը սիրոյ կոչումին չի պատասխանէր :

Իշխանին խելքը դուխը եկաւ : Իւր դիմացը դժագրութեան վրայ տկարութիւն և թալուկ մը կայ . հանգարտ է , բայց այս հանգարտութիւնը տառապանքներու յետին կատարումը և սահմանն է . իւր ճակատագրի հպատակիլը ազիոզորմ է , և իւր մտքին տխուր և թաղծալի ամփոփումը բարոյ յական ոչնչութիւն մ'է : Շարլ իւր կեանքին մէջ դժբաղդութեան ամէն արտունջները , կատաղութեան ամէն աղաղակները , խղճի խայթէն յառաջ

եկող ամէն հեծեծանքը , անյուսութեան ամէն շեշտերը քաշած էր : Ափսո՛ս , իրեն քով ցաւի ամէն յայանութիւններէն աւելի սոսկալին լռութիւնն էր :

Նորեն ապա տակաւին յոյսի մնացորդ մը կը պահէ . իւր բարեկամին կը պատմէ Անսելմի գիշերաշին այցելութիւնը , անոր գալուն պատճառը և անոր սրտադրաւ աղօթքը : Էքսպեր հազիւ թէ իւր վէրքերէն բուժուած , նիհար , տագոյն և վշտահար՝ ամբողջ գիշերը խրճիթին մէջ հսկած է և պատրաստ է իւր զինակցին համար կեանքը խնկզնելու : Շարլ զանի կը դիտէ , միտ կը դնէ անոր խօսքերուն , և իր հոգին զգացումի յուզմանց առջեւ աստիճանաբար կը փթթի . իւր աչերէն սրտօսք մը կ'իյնայ : Էքսպեր անոր դրկացը մէջ կը նետուի և .

— Լա՛ց . . . , կը գոչէ , լա՛ց Երկինքն ու երկիր այդ արտօսքը կ'սպասէին :

— Երկիրը՛ . . . , կը պատասխանէ իշխանը , երկիրը ուրիշ բան չ'սպասեր , այլ միայն ոսկրոտիս ու փոշիս , իսկ երկինքը . . . :

— Երկինք , կ'ընդմիջէ Էքսպեր , Երկինք զինսթափ եղած է : Ա՛նչ կրնայ տակաւին քուկո՛ր ըլլալ :

— Ա՛նչ , կը կրկնէ Շարլ ցած ձայնով և ուրիշ բառ մը չ'արտասաներ :

Էքսպեր սփոփիչ պատկերներ միայն կ'ընդհնրչմարէ , ակնկալութեան միայն խօսեցնել կու տայ : Իշխանը իւր բարեկամին կամքին և խրատներուն անսպալով մենարանէն չի զատուիր , սակայն ամենէն մահաբեր անձկութեան և վիշտերու մէջ երկու օր

կ'անցնին , վանքէն լուր մը չկայ . . . և Նորենտալ Շարլէ հեռանալու կը վախէ :

Սոսկայի երկմտութիւն , սարսափելի անստուգութիւն , էքսպեր կ'սկսի կարծելթէ Անսելմ' զինքը երեսի վրայ ձգած է : Սակայն Անսելմ' բանբերներ կը զրկէր 'ի թաղուստ , հէզ որբին անյոյս վիճակին և հիւանդութեան յառաջդիմութիւնը իմաց տալու համար : Այլ անոնցմէ և ոչ մին յանդգնած էր լեռը ելլելու և իրենց պատիր պատասխանները քարոզիչը կը խարէին :

Երբորդ առաւօտեան արշալոյսը կը ծագէր , և Շարլ ալ չի կրնար իրեն սիրտը աղէյօջ պատառող անձկութիւնը տանիլ : Իւր միակ փաղձանքը , իւր միակ խորհուրդը էքսպերէ գաղանի խոյս տալ է : Դէպ 'ի մենարան տանող արահետին վարովը աղմուկ մը կը լսուի .

—Մարդ կու գայ . . . , նայէ' . . . կը գոչէ Շարլ :
Նորենտալ հասցնեալ քայլերով կը հեռանայ . . . շուտ մը լեռէն վար կ'իջնէ . մարդ մը չկայ , 'ի զո՛ւր ջանք : Էքսպեր խրճիթը կը դառնայ . . . : Իշխանը անհետ եղած էր :

Արդէն Պուրկոյնի դուքսը հեղեղատէն և հոս փոխէն անցած է , վանատունին պարտէզներու դուռը բաց է , ներս կը մտնէ . . . : Բայց ի՞նչպէս էլլատիայի քով երթայ , ամէն բան հոն քուն եղած է : Դէպ 'ի մատուռը տանող նկուղը կ'ուզէ իւր քայլերը : Վանքին պատերուն տակը դէթ էլլատիայի վիճակին վրայօք քանի մը տեղեկութիւն պիտէ առնէ եթէ չի կրնար անոր քով երթալ :

Այն անտառակին առջեւ, ուր կը հանդչի էրբութայի ոսկրոտին՝ տարաբաղդ-իշխանը կանգ կ'առնէ. առաջին անգամ հոն իմացաւ թէ սիրուած է : Կ'ուզէ սիրոյ և մահուան դատաստանը ողջունել . կը յառաջանայ , տերեւազարդ ոստերը ձեռքովը կը քաշէ , կը բանայ . միթէ իւր աչերուն պիտի հաւատայ : Թարկահար և գթայի ստուեր մը Ալպեանց եղեւիններէ կախուող ձեան գնդակին պէս սպիտակ , վարսաւոր ուռենիին մէկ ճիւղին պէս գլխիվար՝ մահաշուք խաչին վրայ կը կոթնի հալ և մաշ և նուաղ : Շարլ կը մօտի . վախէն և յոյսէն սիրաը ուժգին կը արօփէր . . . : Կոյսը իւր ճակատը կը վերցընէ : Ո՛վ քաղցր և գողարիկ կոչում . . . :

— Շա՛րլ , Շա՛րլ . . . :

Ստուերը կ'ուզէ անոր քովը սլանալ . բայց մեռելին բարձաւանդակին վրայ կ'լինայ անզօր :

— Էլրտիա՛ , կը գոչէ իշխանը շուար ու մոլար վատաբաղդ աղջիկը վեր վերցնելով . Էլրտիա՛ . . . : Մեծդ Աստուած . . . դո՛ւն հոս :

Ի՞նչպէս տառապանքներէն անոր երեսը թարշամած է , սակայն գեղանի է դեռ : — Իմ չորսդիս կը հսկէին , կը պատասխանէ որբը մոլորած , բայց քունը իրենց կամացը հակառակ իրենց արտեւանունքը գոցեց , ցնորքի վայրկեան մը անոնցմէ խոյս տուի և ուղեցի հոս մեռնիլ :

Յեառոյ դամքան զգամ խելքը գլուխը գալով . — Նախազգացումով մը , կը յարէ , կը գուշակէի որ տակաւին զիրար պիտի տեսնենք . . . : Հոս է որ Էլրտիա նախադաս սեպեց առաջին անգամ իւր

սէրը յայտնել , հոս է նաեւ որ գոյութեան յետին
մնաս բարեւը պիտի տայ :

— Ո՛չ , կը գոչէ ուժգին Մենակեացը , ո՛չ ալ
այսուհետեւ բան մը իշտտիայէն չպիտի բաժնէ .
ո՛չ նոյն իսկ գերեզմանը չպիտի կրնայ ալ զմեզ դա-
տել իրարմէ :

— Ո՛չ , կը գոչէ Մենակեացը ուժգին , ո՛չ ալ
այսուհետեւ բան մը իշտտիան իրմէ չպիտի բաժնէ ,
ո՛չ նոյն իսկ գերեզմանը զմեզ իրարմէ չպիտի զատէ :

Եթէ կարենայի , կը յարէ ոքքը տկար և նկուն
ձայնով մը , կ'ուզէի մինչեւ վայրենի լեռը ելլել . . .
Ա՛հ , մենարանին մէջ ի՞նչպէս երջանիկ էի : Ինձ
այնպէս կը թուի , թէ հոն անազորոյն մահը վրաս
չպիտի կրնար գալ . սէրը չպիտի թողուր որ գա-
գաղը բացուի : Սիրոյ շունչը այնչափ տաք ու ե-
ռանդուն է , այս շունչը միթէ կեանք չէ . . . :

— Ո՛հ , մահուան վրայօք մի՛ խօսիր , կ'ընդմիջէ
Շարլ յուսահատ , սիրոյ վրայ միայն խօսէ : Եկո՛ւ ,
կ'ուզես մենարան դառնալ , մեկնինք . . . : Չես
կրնար քայլել , լաւ ուրեմն զքեզ գրկացս մէջ վեր-
ցնելով կը տանիմ : Հոն երկինք գթած է , հոն
ամբողջ բնութիւնը մեզ կը ժպտի . հոն է որ սէրը
զմեզ կը կանչէ , հո՞ն է որ երջանկութիւնը զմեզ
կ'սպասէ :

— Երջանկութիւնը , կը կրկնէ իշտտիա , ո՛հ ,
այո՛ , երջանկութիւնը հոն է . . . մեկնինք :

Քանի մը քայլ առնելու փորձ կը փորձէ , բայց
մահուան ցրտութիւնը իր երակներուն մէջ մտած է .
Յետին վայրկեաններու ճիւղի մը նման անպ մը

անոր աչերուն առջևէն կ'անցնի : Կ'իյնայ այս բաձ
ռերը արտասանելով : — Շա՛րլ , անէ՛ծքը մեր
մէջն է . . . : Ո՛չ , մինչեւ մենարան չպիտի հասնիմ
երբեք : Կ'զգամ ատիկա , ալ վայրենի լեռը չպիտի
տեսնեմ . . . : Ո՛հ , ինչո՞ւ անկէ իջայ . . . :

Իւր ձայնը կը շիջի , Ռենտերլախի կոյսը գրեթէ
կը նուազի : Իշխանը դարաստանէն դուրս կը հանէ
դանի , սէրը , մողեզնութիւնը , անյուսութիւնը ,
ցնորքը իւր շարժումներու մէջ ակներեւ կը տես-
նուին : — Կեցի՛ր , կը գոչէ էլատիա ուշաբրելով ,
ո՛վ սիրեցեալդ իմ , կեցի՛ր : Վայրենի լեռը ասկէ
կը տեսնուի . . . : Մենակեացին խրճիթը ասկէ կա-
րելի՞ է նշմարել : Անագորոյն մահ , վայրկեան մ'ալ :
Երկրիս դէպ ՚ի այն Եղիւսեան դաշար նշմար մ'ալ ,
յետին հառաչ մ'ալ . . . :

— Էլտտիա՛ , էլտտիա՛ , կը գոչէ Շարլ հոգւոյն
տառապանքներէն նկուն , ի՞նձ այսպէս մի խօսի՛ր ,
իմ ոյժս կը նուազի . իմ կեանքս կը վերցնես :

Յետոյ որբը դալարիին վրայ հանդէսէլով .

— Անէ՛ծքի վրայօք ի՞նչ կը խօսիս : Անսերմ
յետս կոչելու պատրաստ՝ զմեզ ամուսնացնել խոս-
տացաւ : Հուսկ յետոյ երկինք կը ներէ և
Անսերմ երբ տեսնէ թէ էլտտիա կրնայ դէպ ՚ի սուրբ
սեղան դառնալ՝ յանուն Ամենակալին՝ Շարլ և իր
սիրուհին պիտի օրհնէ :

— Ի՞նչ կը լսեմ , կ'ըսէ օրիորդը , Երկինք կը
ներէ . . . : Ես ամուսինդ պիտի բլլամ . . . , տա-
կաւին պիտի կրնանք երջանիկ բլլալ . . . :

Էլտտիայի նայուածքը կենդանութիւն կ'առնէ .

իւր սիրտը ուժգին կը արօփէ, երեսը կը շառագնի, իւր թալկահար դէմքին վրայ բերկրութեան ճառագայթ մը կ'երեւի, մահուան մօտ որբը յանկարծ Ռենտերլախի գեղանի կոյսը կ'ըլլայ : Շարլ նորէն կ'սկսի յուսալ :

— Այո՛, կ'ըսէ խնդադին, լեռին վրայ, մենաբանին մէջ երջանկութիւնը պիտի գտնենք :

Էլլտիա ոտք կ'ելլէ դողդողալով. — Շա՛րլ ի՛նչ անոյշ վայրկեան, ի՛նչ գինովութիւն մը կը փորձեմ . . . : Ո՛չ, երբէք այսչափ չսիրեցի . քու ամուսնոյդ համար թեւեբդ բաց, քու ձայնդ աւելի մօտէն կ'ուզեմ լսել . . . : Ո՛վ Շարլ, քու սրտիդ իմ սրտիս վրայ արօփելը զգալու պէտքը ունիմ, քու շունչդ շնչելու պէտք ունիմ, քու ամբողջ կեանքէդ պէտք ունիմ :

Մենաստանին քաղցր աղջիկը իւր էրկանը գրկացը մէջն է : Որբին գլուխը իւր ծոցին վրայ կը հակի, իւր շուրթերէն խորին հառաչ մը դուրս կ'ելլէ, Մենակեացին անունը կ'արտասանէ . . . : Շարլ իւր սիրուհին փրկուած կը կարծէ . . . , իսկ սիրուհին ապրելէ դագրած է . . . :

Պարկոյնցի վատաբաղդ կոմսը աղիողորմ ազազակ մը կ'արձկէ : Էլլտիա մեռած է : Պաշտելի կոյսին մարմինը Էրսթալի գերեզմանին վրայ կը դնէ, այնուհետեւ գետնին վրայէն մալեդին գլուրելով ցնորքի յիմարութեամբը գերեզմանին դալարին կը խածնէ, իւր մազերը կը քաշէ կը հանէ և իր ձեռքերով երեսը կ'ապականէ զայրտգին : Էլլտիայի աչերը գոցուած են : Ա՛լ լինջաւ, երկ-

ըիս վրայ իրեն համար փայլող միակ լոյսը շեջաւ ։
 Քառորդ , սոսկումը , ոչնչութիւնը իրենց թանձր
 մթութիւններովը զինքը պաշարած են : Յանդուգն
 Շարլ գոյութեան ամէն տանջանքները կը բերու
 սահմանուած՝ մարդկային ամէն երանութեանց
 կատարէն պիտի լինար , հեազհետէ սրտի ամէն
 չարչարանքը պիտի փորձեր , և փորձանքներու ,
 դժբաղդութեանց հովտին ամէն սոսկումներէն ,
 ամէն անյուսութիւններէն պիտի անցնէր :

Յիմարութեան ամենէն ուժգին շեշտերուն սոս
 կալի անշարժութիւն մը կը յաջորդէ :

Քանի մը վայրկեան Շարլ այնպէս կը կարծէ
 թէ իւր բարեկամուհին յաւիտենական խաղաղու
 թեան կայանը կը գտնուի :

Յանկարծ վեր կը վերցնէ այն ճակատը որ վէր
 քերուն պատճառաւ արիւնաթաթաւ է : Այս վէրքե
 րը իւր կատաղութեանը ժամանակը ըրած էր ինք
 նիրեն : Ա՛լ առանձին չէ , ի՞նչ նշմարեց :

Քահանայ մը ծնրադիր , ջերմեռանդ աղօթելով
 հոն անկենդան կոյսին քով դառն արտասուք կը հե
 ղուր : Իշխանը Անսերմը կը ճանչէ :

— Բարբարո՛ս , կը գոչէ զայրադին ոտք ելլե
 րով , դո՛ւն արտասուք թափիս . . . , դո՛ւն անոր
 վրայ լաս , ո՞վ ուրեմն այս հարուածը տուաւ
 անոր : Ո՞վ զայն գերեզմանին մէջ գլորեց . . . :
 Ա՛հ , գթութիւնդ նոր դրկանք մը , նոր թշնամանք
 մ՛ է . հեռացի՛ր , հըէ՛շ , եթէ ո՛չ իմ կեանքիս
 ամէն ոճիրներուն ոճիր մ՛ եւս կ'աւելցնեմ : Այո՛ ,
 կ'ուզեմ , պարտիմ զքեզ սպաննել , անոր գթալի

ուրուականը տեսներով : Եթէ դեռ չկրցայ անոր
ետեւէն երթալ , պատճառը այն է որ անոր վրէժը
պիտի լուծեմ :

Այս խօսքերուն վերջ տալու ատեն թուրը
չդանելով Էրսթալի շիրմին իբր շրջանակ ծառա-
յող քարը կը վերցնէ , և անպաշտպան թռչունին
վրայ իյնող արիւնաներկ անդղին պէս , մահը Անսել-
մի գլխուն վրայ կը վերցնէ :

— Զա՛րկ , կ'ըսէ ծերունին հանդարտ՝ առանց
իւր ճակատը խոնարհելու , զա՛րկ դժբաղդ , և յան-
դըզնէ հոս անկէ բաժնուելու յաւէ՛տ :

Շարլ քարոզիչին ձայնին , ճակատադրի հպա-
տակելուն , անոր արիութեան և իւր աչերուն վսեմ
նայուածքին վրայ զարմացած՝ հարուածները կը
կտակցնէ : Յետոյ մարդասպան քարը իրմէ հեռուն
նետելով . — Ո՛չ , կը դռչէ , հոն է , թէեւ մեռած՝
այլ տակաւին հողուոյս կը հրամայէ . . . : Բնաւ
չպիտի կորսուիս : Ոճիր մը , վրէժխնդրութիւն մը
զարհուրելի էին իւր աչերու աղջեւ : Հոն է . չպի-
տի պղծեմ այն օդը , զոր քիչ մ'առաջ կը շնչէր . . . :
Իւր յետին շունչը իմ շուրջս կը թափառի , միտ կը
դնեմ , ինձ կը խօսի . . . : Ո՛հ , պատասխանէ Էր-
տիա՛ , հիմա չէ որ ինձ կեցէ՛ր , գոչեցիր :

Եւ Շարլ շուար ու մուար իւր սիրուհիին քով
ծնրադիր՝ դէպ ՚ի այն կը հակի , և տակաւին հար-
ցումներ ուղղելով եղիկելի աղաղակ մը կ'արձկէ .
պատասխանէ Էլրտի՛ա . . . քու սիրեցեալդ է որ
դքեզ կը կանչէ :

Ունտերլախի ծերունին Շարլի ցաւազին անձ-

կութեան կը մասնակցի : — « Էլուտիա՛ , կը դռնէ
ինքն ալ , պահասարան հրեշտակ . չե՞ս կրնար անոր
ձայնին պատասխանել . . . Դո՛ւ՛ որ զինքը այն-
չայն սիրեցիր , անոր նայէ՛ այն անմահ օթեւանէն ,
ուր կը դանուլու , և այն դժբաղդին վերքերուն վը-
րայ քիչ մը սփոփիչ սարասամ թափէ՛ » ,

Իշխանը այս սրտադրու աղօթքը լսելով չի կրնար
իւր զարմանքը բռնել , և քարոզիչը կը նկատէ : Ան-
սելմ՛ իւր արտասուալի աչերը դէպ ՚ի երկինք
դարձնելով անոր համար դժութիւն կը հայցէր :
Իւր սպիտակ մազերը , իւր բարեպաշտ կայնուած-
քը , իւր ներշնչեալ և դժալի ձայնը՝ Յաւիտենա-
կանին հետ հաղորդակցող անապատին Հօրը կամ՝
Աւետարանի Առաքեալին անհաւատարիմ հոգին
յուզղութիւն բերելը կը յիշեցնէ :

— Ինձի՞ համար կ'աղօթես , կ'ըսէ իշխանը ա-
զիսզորմ ձայնով մը , բայց առանց մոլեղնութեան .
անագորո՛յն , ուրեմն քու անէծքը մոռցա՞ր . . . :

— Դժբաղդութեանդ վրայ միայն կը խորհիմ ,
պատասխանի կու տայ Անսելմ՛ եռանդադին :
Շա՛րլ , երկինք քանի մը վայրկեանի համար բաժ-
նեց դքեզ այն հրեշտակէն , զոր զրկած էր դքեզ
իրեն քով բերել տալու համար . կ'ուզե՞ս Երկնից
յոյսը ՚ի դերեւ հանել . . . : Կ'ուզե՞ս յանցաւոր
զայրոյթով և անհաւատ վախճանով մը ինքզինքդ
անդունդին մէջ գրորել . . . : Կ'ուզե՞ս որ դքեզ
կանչող այն սիրելի կոյսը՝ յաւիտենական երանու-
թեանց կայանը արասար թափէ տակաւին :

— Զի՞ս կը կանչէ . . . , կը կրկնէ դարձեալ

չուար ու մորար իշխանը . . . : Միտ դնենք :

Եւ իւր նայուածքը դէպ 'ի փրկութեան օրհնեալ նշանը դարձնելով՝ դողցես լուսատիւն ճառագայթի մը մենաստանի հէզ որբին վրայ իջնելը կը տեսնէ : Էլլտախայի գիւմաց գծագրութիւնը դերբնական փայլով մը կը փայլիլի : Դարաստանը խունկէ ամպով մը կարծես թէ անոյշ հոտ մը կը բուրէ , և օդին մէջէն իրեն այնպէս կը թուի՝ թէ երկնային ձայն մը Շարլի անունը արաստանեց :

— Անտե՛ր՛ւմ , կ'ըսէ իշխանը բոլորովին շուարած , խօսեցաւ . . . դիս կ'սպասէ : Բայց դիս անորմէ բաժնող խոչնդոտները ո՞վ պիտի անհետ ընէ , ո՞վ իմ առջեւ երկինքը պիտի բանայ . . . :

— Ո՞վ . . . , կը պատասխանէ քահանան սուրբ եռանդով մը . այն որ իբր առաքեալներու վտխանորդ դատապարտելու և ներելու , կապելու և արձակելու իշխանութիւնը առաւ . . . Տիրոջ ներկայացուցիչը , նոյն ինքն Անտեր՛ւմ :

— Դո՛ւն , բարբարոս . . . , կը դռչէ Շարլ զարհուրելով ու ետ ետ կ'երթայ :

— Ամենակարո՞ղգ Աստուած , կը շարայարէ Անտեր՛ւմ , այդ դժբաղդը քովդ կանչէ : Առանց քու օգնութեանդ տկարս ինչ կրնայ ընել : Աստուածային ոգի , ներշնչէ՛ ինձ : Թո՞ղ յախտենական կեանքի ջուրը այն շոր ու ցամաք ժայռէն բղխի և վազէ : Թո՞ղ այնմ թագին անապատին վրայ երկնային փայլը տարածուի : Խաղաղութեան և փրկելութեան խօսքե՛ր , մինչեւ Շարլի սիրտը թափանձեցէ՛ք : Իմ կեանքիս յետին զօրութիւններ ,

երեւան, եկէ՛ք, որպէսզի զայն փրկեմ ու մեռնիմ:

Շարլ այս խօսքերը լսելուն՝ անձանօթ զօրութենէ մը նուաճեալ անընդդիմակ շարժում մը կ'զգայ ՚ի ներքուստ և .

— Էլլտիայի Աստուած, կ'ընդմիջէ ուժգին, ուրեմն իմ կեանքի ոճիրները տակաւին չքաւուեցան . . . : Է՛հ ուրեմն, մարդկային առաքինութեան յետին և ամենէն դառն ճիգը ձեռքէս կը քաշես կ'առնես . . . : Կ'իյնամ այն մարդուն ոտքը, որ երկրի վրայ ամեն ունեցածս վերցուց, որ դոյութենէս աւելի թանկագին բան մը յափշտակեց: Ներում կը խնդրեմ այն մարդէն, որ ինձի համար ամենէն բարբարոս մարդն եղաւ . . . : Ահա՛ Էլլտիայի մարդասպանը ու ես զինքը հայր պիտի անուանեմ » :

Այն ատեն Անսելմի առջեւ ծնրադիր այսպէս կը յարէ, — Տիրոջ պաշտօնեայ, անէծքդ ետ առ, թող Էլլտիայի և իմ մէջ տեղ դանուած ամէն պատնէշները իյնան : Յանդուզն Շարլ իւր մեղքերէն արձկէ՛, անոր առջեւ անմահական շաւիղները բաց . . . : Հայր իմ, տուր ինձի քու օրհնութիւնդ :

Այս վերջին խօսքերը արտասանելու ատեն իւր ձայնը շուրթերուն վրայ կը նուազի : Մտկալի զոհողութիւնը կատարուած է, վրան ոյժ չի մնար : Շարլ իւր գրկած խաչելութեան ոտքը ոչնչացած է :

— Գթութեանց տէ՛ր, կը դռչէ Անսելմ' քրիստոնէական հաւատոյ խանդովը, ա՛լ լմնցաւ, ներեցիր, կ'զգամ ատիկա : Քու երկնային կրակդ իմ

վրաս իջաւ , կը խօսիս , ինձ կը ներշնչեա :

Եւ հաւատացեալներու հովիւը պահ մը իւր խօսքը կ'ընդմիջէ , իբր թէ երկնային ներդաշնակութիւն մը կը լսէ , իբր թէ 'ի թագաւոս Արարչին քանի մը հրամանները կ'ընդունի : Յետոյ գողցես գերմարդկային ձայնով մը այսպէս կը յարէ . — Պարկոյնցի Շարլ , քու կակիժներդ Յախտենականին գթութիւնը հրաւիրեցին , քու տառապանքներդ ոճիրներդ քաւեցին : Յանուն գթած Աստուծոյ , յանուն վրկչին Աստուծոյ ամէն մեղքերդ ներուած են :

Կ'ըսէ , իւր աչերը կը փայլատակեն , իւր ճակատը փայլուն է , իւր սպիտակ մազերը պսակի մը պէս իւր գլուխը պատեցին . Յովհաննէսն է որ առնապատը կը լուսաւորէ , Եղիան է որ լեռին վրայ բնութեան կեանք կու տայ :

Ո՛վ կրօնքի զօրութիւն : Ո՛վ բարեպաշտութեան հրաշք : Պարկոյնցի նշանաւոր Շարլ իւր շուքէն և մէծութենէն ինկած , ամէն փառքէ գլխովին զուրկ , ամէն ակնկալութիւնը կորուսած , խոնարհ խաչելութեան մը ոտքը , պարզ քարոզիչի ձայնին , անակընկալ խաղաղութեան մը , աստուածային արըշուութեան մը իր սրտին մէջ իջները զգաց : Յիշատակէ , ինչպէս նաեւ կակիժներէ հեռի՝ նորանոր յոյսեր բնդունելով , Շարլ Երկնից առաջին դռները հասած՝ երկիրը իրմէ շատ հեռու կը ձգէ :

Նորենտալ դարաստանէն ներս կը մտնէ . ամէն քան սորված , ամէն բան լսած է :

— Կո՛մս Էքպեր , կ'ըսէ անոր սուրբ քահանան ,

բարեկամդ այս մահաբեր տեղէն հեռացուր : Մե-
նաստանին հէգ որբին յետին պարտաւորութիւնս
ներս պիտի կատարեմ :

Էջպէր կը վախէ որ Շարլ չընդդիմանայ , որ-
չափ մեծ է իւր զարմանքը երբ կը տեսնէ թէ իշ-
խանը իրեն մտիկ կ'ընէ , բան մը չի պատասխաներ ,
ուրք կ'եղլէ և իրեն կը հետեւի : Երկուքն ալ լռիկ
մնջիկ լեռէն վեր կ'եղլեն : Մենարանը կը հասնին «
Ախոս » , Նորենտայն ալ էլ յատիայի մէջ այն միակ
էակը կորուսեց , որ իւր սիրտը տրոփել տուաւ , և
իւր արտաւրը բռնելու ստիպուած՝ պէտք է որ
իւր ցուերը ՚ի թաղուստ կլլելով՝ մխիթարութիւն
տայ մինչդեռ ինքը անմխիթար է :

Անձանօթ խորհուրդ մը Պուրկոյնցի դուքսը
կ'զբաղեցնէ : Անզգայութեան պէս հանդարտ ,
մահուան պէս համր , աչերը հորիզոնին վրայ սե-
ւեռած՝ կը տանջուէր տեսակ մ'անհամբերու-
թեամբ , որպէս զի օրը ըմնայ : Գիշերը եկած ա-
տեն այն խոր լռութիւնը կը վրդովէ — « Էջպէր ,
եթէ զիս դեռ կը սիրես , իմ յետին ազաչանքս
մտիկ ըրէ՛ , իմ յետին կամքս կատարէ :

— Խօսէ՛ , պատասխանի կու տայ անդէն Նո-
րենտայ : Ի՛հ , միթէ կրնամ քեզմէ բան մը մեր-
ժել :

— Քսան ու չորս ժամ , կը յարէ Շարլ , զիս Մե-
նարանին մէջ առանձին ձգէ՛ . մի՛ հարցնե՛ր թէ
ի՛նչ է նպատակս , ի՛նչ ակնկալութիւն ունիմ . . .
բայց յանուն իմ դժբաղդութեանց , յանուն քու
բարեկամութեան , քու զինակից եղբայրդ մի մեր-

ժեր : Վերդնում քեզ որ ինքնամահ այս աշխարհէ
չեմ ելլեր , կ'երդնում քեզ որ այս երկրէն չեմ
հեռանար : Վաղը իրիկուն այս ժամուն բարեկա-
միդ քովը եկու՛ր , մենարանը պիտի դանես զանի :

Կոմսը իշխանին թագուն նպատակը չի հասկնար ,
բայց անոր խնդիրը կատարելէ զատ , ուրիշ բան
չի կրնար ընել : Պիտի հեռանայ , բայց խրճիթին
սեամէն ստքը դուրս չնետած , — Էքպե՛ր , կը
դռնէ Շարլ , դողտրիկ և գթալի ձայնով մը , խօսք
մ'եւս . . . : Սիրելիդ իմ և վեհանձն Էքպե՛ր ,
իզմէ հեռանալէդ առաջ , քեզի այն սոսկալի հար-
ուածները տալու համար ներէ՛ ինձ , քեզի այն-
չափ արտօսք թափել տալու համար ներէ՛ ինձ .
ներէ՛ ինձ քու տառապանքներուդ և դժբաղդու-
թեանցդ պատճառ ըլլալու համար :

— Ե՛ս , կը պատասխանէ հաւատարիմ Էքպեր ,
ես քեզի ներեմ . . . : Կրցա՞ր այնպէս կարծել որ
բարեկամութեան զսհողութիւնները չարչարանք
ըլլան , անձնութիւնը դժբաղդութիւն ըլլայ . . . :
Ո՛վ իմ իշխանս , ո՛վ բարեկամս , միթէ ես քու զի-
նակիցդ չե՞մ , ամէն բան խնդրելու , իմ սրտէս
ամէն բան սպասելու իրաւունքը չունի՞ս :

— Առանց ինձի , կ'ըսէ Շարլը , դառն կերպով
մը , առանց ինձի անիկա քու ամուսինդ պիտի ըլ-
լար , առանց ինձի , Տը Նորենտալ կոմսը և Ունտեր-
լախի կոյսը միացած սիրահարներու պէս երջանիկ
պիտի ապրէին : Չքեզ սիրոյդ առարկայէն զրկեցի-
երջանկութիւնդ վերցուցի և շնորհն ունեցի մի-
այն դերեզմանին մէջ նետելու համար : Ախո՛ս .

իմ ճակատագիրս այս էր ուրեմն : Չիս սիրող սակէն
էակներու աղէտը՝ իմ շուրջս ցաւ , սոսկում և մահ
միայն տարածեցի : Քանի քանի որտեղ դէպ ՚ի
Շարլը սլացան . . . իսկ անի զանոնք յօշոտելու
համար միայն ընդունեց :

— Ի՛նչ կ'ըսես , էքպեր կ'ընդմիջէ ուժգին ,
ո՞ր իշխանը իւր չորս դին աւելի բարեք տարածեց ,
ո՞վ քերզմէ աւելի աղէկ բարեկամութիւնը ճանչ-
ցաւ : Ո՞վ հաճեցաւ մարդկային մեծութեանց կա-
տարէն , ժողովուրդներու յաղթող , թաղաւորնե-
րու պետ , աշխարհի դիւցազն՝ նսեմ և խոնարհ
էքպերի վրայ պաշտպանութեան և գթութեան
նշմար մը ձգել : Ո՞վ ինձի աստիճաններ սուաւ :
Ո՞վ իմ կեանքս երեք անգամ վրկեց :

Շարլ , կ'ըսէ դարձեալ , իմ բարձրութիւնս ,
տիտղոսներս , հարստութիւնս քեղի կը պարտաւո-
րիմ . այսօրու ընէ սկսելով ատոնք կը թողում : Պա-
լատներէ և արքունիքներէ հեռու՝ ալ այսուհետեւ
քու խրճիթդ միայն ինձ բնակարան պիտի ընեմ ,
և քու կեանքէդ զատ ուրիշ գոյութիւն չպիտի ու-
նենամ : Սոյս չոր , ցամաք ու ամայի տիեզերքին
վրայ ա՛լ Շարլ միայն կ'ուզեմ տեսնել , անոր միայն
կ'ուզեմ հետեւիլ և զանի միայն կ'ուզեմ սիրել : ո՛չ
այն Պուրկոյնցի Շարլը , որ բաղդէն պաշտպանուած
և վառ քէն պսակուած է , այլ իմ զինակից եղբայրս
վայրենի լեռին Սենակեացը :

Պուրկոյնցի դուքսը իւր աչերը կը ծածկէ , հա-
ռաչանքները զինքը գողցես կը խեղդեն . հաղու-
թէ կը շնչէ : — Ո՛չ , կ'ըսէ խեղճը , իբր թէ ինքը-

դինքին կը պատասխանէր , ո՛չ , անիկա որ կրցաւ
այսչափ սիրուիլ չի կրնար երբեք հրէշ մ'ըլլալ :

— Շարլ , կը շարայարէ Է.բպեւր , մտածէ՛ որ
երկրիս վրայ քեզի համար իզմէ զատ ուրիշ մէկը
չկայ . պատասխանէ՛ , մենարանդ ինձի համար բա՞ց է :

Իշխանը չարիէ դուրս ճնշուած՝ խօսք մը չի կրնար
արտասանել , այլ իւր թեւերը կ'երկարէ գէպ ՚ի
վեհանձն Է.բպեւր , իւր սրտին վրայ դանի կը սեղմէ և
երկու աքսորեալները անշարժ , արատաքներէ թըր-
ջուած քանի մը վայրկեան դիրար դրկած կը կենան :

Տը Նորենտալ կոմսը առաջին անգամ այս ցա-
ւալի տեսարանէն ինքրզինքը դուրս կը հանէ :

— Ալ քեզմէ բաժնուելու է , այդ բանը կ'ըս-
տիսպես ինձ որ ընեմ՝ , սակայն դու ինձ կը խոստա-
նաս ու ես կը հաւատամ՝ , ասիկա լոկ վայրկեանի մը
բաժանումն է , և յետին անգամուան համար :

— Յետին անգամ , կը կրկնէ Շարլ դողողալով :

— Վազը , կը յարէ Է.բպեւր , կրկին հոս դիրար պի-
տի տեսնենք . վազը ալ իրարմէ չպիտի բաժնուինք :
Եւ անտառին մէջ անհետ կ'ըլլայ :

— Է.բպեւր , կը գոչէ ամենէն ցաւադին շեշտով
մը , սիրելիդ իմ Է.բպեւր , մնա՛ս բարեալ :

Այս վերջին աղաղակին մէջ ի՛նչ մտքնաք և ի՛նչ
կակիծ . . . : Այիսո՛ս , ինչո՞ւ համար օդերու անեղը
անձրպետին մէջ կորսուի : Եթէ Շարլի գթալի շեշտը
մինչեւ իւր զինակից եզրօրը ականջը հասնէր , ի-
րենց բազմը պիտի փոխէր անշուշտ :

Նորենտալ արդէն վայրենի լեռէն շատ հեռու
է : Իշխանը երկար ատեն ծառերու մէջէն զինքը

կը նկատէր : Յանկարծ իւր խրճիթը կը դառնայ ,
այն երեսէ թողուած անկողնին վրայ կ'իյնայ , ուր
կը հանգչէր իւր սիրուհին . զանի կը կանչէ մեծա-
ձայն . — Էլտտի'ա , սիրելիդ իմ Էլտտի'ա , հոս իմ
իշխանութեանս տակ դանուեցար . . . : Հոս դուն
իմս պիտի ըլլայիր . . . : հո'ս քու սիրագ ինձի հա-
մար կը տրտիէր . . . : ա՛յ չկաս և հոն առանձին
կը մնամ :

Գիշերը իւր թանձր ստուերներով ամբողջ Ուն-
աերլախը կը ծածկէ , Շարլ վերջապէս իւր դիտա-
ւորութիւնը 'ի դարձ կը դնէ : Վայրենի լեռէն վար
կ'իջնէ արագ : Գէպ 'ի մենաստան կը քայլէ և պար-
տէզներու մէջ կը մտնէ : Բալզօ իշխանին որբին
տուած փառաւոր հանդէսին քանի մը շքեղ մնա-
ցորդները մարդագեանին մէջ կը գտնուին : Շարլ
ծպտեալ, անձանօթ, բազմութեան ետեւը պահուը-
տած՝ այն օրուան հրապոյրները դիտած էր : Նոյն
պահուն լուսինը տժգոյն և դողդոջուն՝ մահաշուք
դաշտերու աստղին պէս միգապատ հորիզոնէն վեր
կը բարձրանար : Պուրկոյնցի դուքսը այն կրկէսին
մօտ է, ուր Լորենցի ասպետները պատերազմեցան :
Էլտտիտ , հոն է որ թագուհիի մը պէս յաղթական
կառք մը հեծած՝ նիզակախօսողութեան յաղթողները
պսակեց , ինքը երիտասարդութենէ , յոյսէ , սէրէ
և դեղութեանէ փայլուն : Հո'ն է որ պատերազմա-
կան երգեցիկները քաղցրահնչիւն տալիներու հա-
մաձայն կոյսերու է'ն դեղանին կը հռչակէին և այս
խօսքերը կ'արտասանէին :

« Բեզէ հեռի շանիւն գոռոյ ,

Ո՛վ երկնային արշալոյս ,
Քու ճակատիդ վայլէ պըսակ ,
Ինչպէս նաեւ սրտիդ սէր ։

Ամսո՛ս , այն շնորհ գոհոյց . . . : Այդ թարմ
և հրապուրիչ ծաղիկը , որուն նախկին փայլը ամ-
բողջ հովիտը կը շլացնէր , ա՛լ բնութեան փառքը
չի կրնար սեպուիլ , այս կոյսը , որ այնչափ պաշ-
տուած էր , ալ այնուհետեւ հանդէսներու աստ-
ուածուհին չպիտի ըլլայ , ա՛լ ոչ եռանդի գոգր-
դական աղաղակները և ո՛չ ալ սիրոյ գողար հա-
ռաչները պիտի լսէ : Թեթեւ ստուերի մը պէս
կեանքի մէջէն անցնելով . . . անհետ եղած էր :

Շարլ երկար ու եղիկելի հառաչ մը կ'արձկէ ,
հեզ որբին այնչափ սիրած անտառակներէն կը
հեռանայ հապճեպ : Ո՛հ , գերեզմանին մարմոք-
ներուն վրայ օդին մէջ թեւատարած կեցող սիրոյ
յիշատակները ո՛րչափ աղիոզորմ են :

Դէպ ՚ի մատուռը կը դիմէ այն նկուղէն , որ ա-
ռաջ իւր քայլերը դէպ ՚ի Էլլոտիա առաջնորդած
էր : Մե՛ծդ Աստուած , իւր աչերու ի՛նչ տեսարան
մը կ'ընծայուի : Այդ սրբավայրը գոգցես մեծ
տօնախմբութեան մը համար լուսաւորուած է ,
սպիտակ սրահակներ անոր հինօրեայ պատերը
կ'սքողեն . խունկը և զմուռսը է՛ն թանկագին մե-
տաղէ ամաններու մէջ կը ծխեն , հաղուազիւտ և
ծանր օթոցներ տաճարին սալայատակը կը ծած-
կեն , օգը անոյշ հոտ մը կը բուրէ , Հարսանեաց
ջահերը վառուած են , ի՛նչ կը լուսաւորեն արդ-
եօք . . . : Մահը :

Սեղանին ոտքը , աստիճանաւոր սքանչելի բազմոցի մը վրայ մահաշուք անկողին մը կայ , և անոր վերեւը սպիտակափայլ ամպհովանի մը , զոր չորս արծաթեայ սիւներ կը բռնեն . վարդեայ պըսակներ , զորոնք սպիտակ կուճի տեղ կրնան , առնել , դագաղին շուրջը կախուած կը կենան . բարակ շղաշատեռ մը , սպիտակ ասուեղէններ սըգոյ գահը շրջապատած են , և ճրագներու փայլը և լոյսը արծաթեայ դմբէթին ծաղկեայ պսակներուն , շողաւոր սիւներու վրայ փարվելով յուզարկաւորութեան խորանը լուսեղէն տաճարի մը դարձուած էին :

Պուրկոյնցի դուքսը այն մահուան շէնքին ոտքն է , որուն չորս դին կեանքի շքեղութիւնները կը դանուին : Ունտերըլախի քաղցր կոյսը մունջ անկողնին վրայ պառկած՝ յաւիտենական քունով մը կը ննջէ : Ճերմակ շղարշ մը իւր հրեշտակային դէմքը կը ծածկէ , կուսական պսակը իւր ճակտին վրան է , որ ախո՛ս թէ և անմեղութեան խորհրդական նշան՝ հարսանեաց նշան ալ էր :

Մատուռը ամայի է և խորին լռութիւն մը կը տիրէ հոն : Իշխանը դագաղին մօտ ծնրադիր՝ այսպէս կը դռչէ : — Կոյս երկնային , ահա՛ ուրեմն առաքատի անկողինդ , ահա՛ մեր հարսանեաց հանդէսները : Իմ սոսկալի ճակատագիրս ՚ի դործ կը դրուի : Տարբա՛ղդ զոհ , առաջին անգամ դքեղ տեսած ատենս ի՞նչ ըսի . Փ-ի-ի՛ր , հ-վ-ի-ո-ի նորաբոյս ծաղիկ . ի՞նչ ասուի ծանր է , ի՞նչ երկայնակեան հոգ կը սփռի : Նոյն իսկ այս պատերուն ներքեւ մեր առաջին եր-

դու մենքու օրը ի՞նչ ըսի քեզի , թէ քեզ չմոռնայր
մարդն էի :

Եւ իւր ճակատը խոնարհեցնելով՝ սրբավայրի
մարմնորին կը զարնէ : — Հրեշտակային աղջիկ , կը
յարէ յանկարծ մնար նայուած քով մը , կ'ուզէիր
վայրենի լեռը մեռնիլ . քու յետին շեշտդ Մենա-
կեացը կանչեց , քու յետին նշմարդ մենարանը
մնառեց . . . : Լաւ ուրեմն քու յետին կամքդ պի-
տի կատարուի . աքսորեալին խրճիթը քու մարմի-
նըդ պիտի ընդունի :

Հոն աւելի անոյշ քունով մը պիտի ննջես ,
հոն քու գերեզմանիդ քով պիտի հսկեմ , հոն
քու դագաղիդ վրայ սիրոյ յետին բոցերը պիտի
շիջին : Այս առտու իմ թեւերս չկրցան գրեղ եր-
ջանիկ ու կենսայի՝ դէպ 'ի լեռը տանել , հոն գրեզ
անկենդան պիտի տանին : Շարլն է որ յետին
պարտաւորութիւնները պիտի կատարէ և քու շի-
ջիմդ իւր յետին յառաջները պիտի ընդունի :

Աստիճաններէն վեր կ'ելլէ , մահաշուք անկող-
նին կը մօտի , որբին ճակատը ծածկող սպիտակ
քողերը կը բանայ և իւր թեւերը դէպ 'ի անոր եր-
կարելով , — Եկո՛ւ , կը յարէ սիրոյ և ցնորքի շեշ-
տով մը , եկո՛ւ քու սիրականիդ սրտին վրայ . մի-
թէ յետին աւի՛ւնդ է որ այս խօսքերը կը լսեմ . . . ,
այս՛ զիս կը կանչես , ինձ կը դռչես . Բաւ շանչդ
շիջեալ գետտ ամի՛մ . Բաւ ամբողջ կեանքդ գետտ ամի՛մ :

Շարլ իւր թեւերը անոր երկարած՝ խօսքը
կ'ընդմիջէ . . . իբր թէ որբը իւր սրբաայոյց խօս-
քերը լսելով գերեզմանէն պիտի ելլէր և իւր սրբ-

տին վրայ էյնար : Ռ՛Տ , ինչպէս դեռ երջանիկ էր :
Սպիտակ վարդերով պսակուած՝ գողցես մահուան
առջեւ կը ժպտէր : Իւր երկան արտեւանունքը
գողցես անոյշ քունով մը դոցուած էին : Իւր սառ
ձեռքերը շուշանէ փունջ մը բռնած էին , որ կուրծ-
քին վրայ ինկած էր : Իւր դէմքին զովութիւնը
տեսնելով՝ պիտի ըսէին անշուշտ թէ բաղդաւոր
երազ մը հրապոյրներով իւր շուրջը պատած էր :
Երկինքը , այնպէս կ'երեւէր թէ բնութեան գլուխ
— գործոցը՝ քանը մը վայրկեանի համար միայն երկ-
րէս վերցուցած էր :

Շարլ դէպ ՚ի մահաշուք անկողինը կը հակի :
Մեղմով և զգուշութեամբ կոյսը գրկեց , իբր թէ
կը վախէր որ չվիրաւորուի կամ՝ չարթննայ . յետոյ
կը շտապէ արագ քայլերով մատուռէն դուրս ել-
լելու և մթին եղերքներէն Ալէսիօն քաշող , ազա-
տող Ալկիթէսին պէս , դէպ ՚ի վայրենի լեռը խոյս
կու տայ միրկաբեր փայլակէն աւելի արագ :

Հեղեղատին կամուրջէն կ'անցնի : Գիշերուան
ածգոյն լոյսէն կը ճանչէ այն ծառը , ուր մենաս-
տանին ալլիկը իւր ներդաշնակ տաւիղին վրայ
գարունը և բնութիւնը երգեց . . . : Ափսոս , ա՛լ
տիեզերքի աքսորեալին համար ո՛չ գարուն կայ ,
ոչ բնութիւն և ո՛չ ալ ներդաշնակ տաւիղ :

Գիշերային հովը անտառին թուփերը կը շարժէ :
Ամենակարո՞ղք Աստուած . ինչո՞ւ համար Շարլ
յանկարծ կանգ առաւ . . . ինչո՞ւ համար ա՛լ իւր
վրայ ոյժ չմնաց . . . և ինչո՞ւ այն ահռելի սար-
սուռը կ'զգայ . . . : Ա՛հ , սիւքը որբին խարտեաշ

և ցիրուցան մաղերը գէպ 'ի իւր երեսը մղեց . ա-
նոնց վէտ 'ի վէտ ծփացող գանգոյրները իշխանին
շուրթերուն դպան . մի և նոյն խոսուպիքն են , ո-
րոնց ինքը բերկրութենէ և ակնկալութենէ արբ-
շիւ՝ առաջին համբոյր մը մատոյց : Այն ատեն
Ունսերլախի կոյսը նոյնպէս իրեն գրկացը մէջն
էր , սակայն այն ատեն իւր սրտին վրայ անոր
սրտին տրոփիւնը կ'զգար . այն ատեն իրենն էր
անի , կ'ապրէր և կը սիրէր :

Շարլ չի կրնար իւր ընթացքը շարունակել . Մե-
նարանին դուռը գողցես իւր էութեան ամէն կա-
րողութիւնները կորուսեց . իւր յանկարծական ան-
շարժութիւնը գոյութեան ընդմիջումի մը պէս է :
Իւր նայուածքը ինչի՞ վրայ պնդած է : Ախտոս ,
մի և նոյն ծառերուն վրայ , որոնց շուքին տակ
քանի մ'օր առաջ որբը նստած և իրեն կռթնած
իր սիրոյն վրայօք կը խօսէր :

Կոյսին դիակը կաղնիի մը ոտքը կը դնէ : Անոր
քով ծնրադիր՝ բառ մը չ'արտասաներ , արտօսը մը
չի հեղուր : Էլտտիայի վրայ իր երկայն քողերը կը
ծածկէ . կարծես թէ այն ատեն միայն անիկա
երկրէս անհետ եզաւ իրեն համար . իւր աչքը
դէպ 'ի յաւիտենական կամարը դարձնելով՝ հիմայ
երկնից մէջ կը փնտռէ զանի : Կարծես թէ զինքը
կը կանչէ . . . անոր կը խօսի . . . և սակայն իւր
շուրթերը ա՛լ չեն շարժիր . . . ամէն բան իւր
սրտին յատակը տեղի կ'ունենայ :

Այն ժայռին մէջ , որուն մենարանը կը յենու-
լայն խոռոչ մը կայ , զոր ահագին քար մը կը

Ժածկէ : Շարը չգիտեր թէ այս խորհրդաւոր փոսը
ինչի՞ կը ծառայէր , որն որ անմեղութեան գերեզ-
մանը պիտի ըլլայ :

Ահռելի հանգստի մը քանի մը վայրկեանները
կ'անցնին : Իշխանը ոտք կ'երլէ : Իւր վատարազ-
ընկերը գրկացը մէջ առնելէ առաջ , անոր երկայն
մազերուն մէկ խոպոպիքը ձեռք կ'առնէ : — Էլո-
տիա՛ , կը գոչէ , ասիկա ինձ շնորհէ՛ և սիրոյ առա-
ջին ու յետին պարգեւը պիտի ըլլայ :

Ժայռին քարը կը վերցնէ : Բնութեան այս շիր-
մին մէջ որբին սառ մարմինը կը տեղաւորէ , այնու-
հետեւ գերեզմանը գոցելէ առաջ . — Մնաս բարե-
եաւ կը գոչէ նուազ ձայնով մը , ով կոյսերու ա-
մենէն գեղանին և ամենէն մաքուրը : Չիս թող
տուիր . . . և յաւիտենական կերպով մը : Ինչպէս
որ իմ փառքս աղտեղեցի նոյնպէս քու երիտասար-
դութիւնդ հնձեցի և գեղութիւնդ չորցուցի : Երկ-
նային ազջիկ , ցաւի և աքսորի ժայռին վրայ նիր-
հէ՛ . . . , զղջումի և սիրոյ հողին վրայ . . . հանգչէ՛
խաղաղ : Մնաս՛ բարեաւ , գողար խոստովանու-
թեանց աւիւն : Մնաս՛ք բարեաւ երկրի ամէն ակրն-
կալութիւններ . . . : Դուն որ զիս առաքինու-
թեան դարձուցիր , միայն դո՛ւն որ այս աշխարհի
մէջ մաքուր և անարատ սէրը , եռանդուն սէրը
ինձ ճանչցուցիր՝ մնաս բարեա՛ւ , էլոտիա՛ , արար-
չազործութեան հրաշակերտ , էլոտիա՛ , էլոտիա՛ ,
մնաս բարեա՛ւ :

Իւր ձայնը կը շիջի . իւր ճակատը , որ առաջ
այնչափ վեհ և պատերազմական էր՝ ամայի ժայ-

ուին վրայ կ'իյնայ : Իշխանին մնաս բարեւը լսելու համար բնութիւնը գողցես լուռ կեցաւ . իւր յետին խօսքին երկար լուռութիւն մը յաջնորդեց . . . : Յանկարծ գոյութեան վերջնական ջղածգութեան մը , մարդկային բնութեան ահաւոր յօշոտումին պէս իւր կուրծքէն խոր մունջիւն մը կ'ելլէ : Յաւատնականը այս միջոցին Պուրկոյնցի գուքսին վրայ ողորմածութեան և գթութեան նշմար մը կը ձգէր : Իւր տառապանքները վերջացած են . Երկինքը կը բացուի . . . , Շարլ մեռած է :



ՎԵՐՋՍԻԱՆ

Էրտախայի և Մենակեացին մահուանէն երկար ատեն վերջը, Լորենի արքունեաց ասպետ մը Հելվետիոյ մէջ ուղեւորելու սաեն, Ունտերլախի հովիտէն անցաւ , վայրենի լեռին մարդուն վրայօք խօսելին լսեց , որուն անունը անձանօթ մնացած էր , այլ իւր բարեգործութիւնները և հրաշքները յիշատակներու մէջ դրոշմուած էին : Այն ատեն վանքին մանկամարդ կոյսը ամբողջ գաւառին մէջ ամեն լեռնականներէ գրեթէ աստուածացած է :

Այն օրը ուր որքը ապրելէ դադրած էր, Մարտրին մատուռին մէջ կը հսկէր , անոր մահաշուք անկողնին քով . աղիկան մարմինը անհետ եղաւ , և հետեւեալ օրը Մարտրինի նկարագիրը այսպէս էր — կէս դիշերուան մօտ քանի մը վայրկինի համար

որբավայրէն հեռացայ . յանկարծ եկեղեցին դառնալով տաւիղի մը հեռաւոր ձայները կը լսեմ , դէպ ՚ի ննջեցելոց յիշատակին քաւարանը կը վազեմ . . . մաքուր և անարատ կոյսը հրեշտակապէնտերէ համբառնալով անհետ եղած էր : Տաճարին գմբէթը կարծես թէ բաց էր տակաւին և որբավայրը ոսկեզէն ամպ մը ծածկելով երկնային հոտեր կը բուրէր անկէ » :

Անտեղձ իւր վրայ դրած ծոմերէ , խտամբերութենէ , և ապաշխարանքներէ հալեւմաջ՝ մեռնաստանին որբէն վերջը մէկ տարի միայն ապրեցաւ :

Ճամբորդ ասպետը իմացաւ որ Մենակեացին բնակարանին մէջ ճգնաւոր մը կ'ապրէր : Այս խորհրդաւոր օթեւանը տեսնելու հետաքրքիր՝ վայրենի լեռէն վեր ելաւ և խրճիթին ժայռին առջև ծնրադիր անապատական մը նշմարեց : Անոր ազօթքը յարդելով՝ նախ չուղեց մօտիկ , բայց քիչ մըէն սուրբ մարդուն անշարժութիւնը մահուան անշարժութիւն երեւցաւ իրեն : Դէպ ՚ի անոր մօտեցաւ . իր երկիւղները հաստատուեցան . ճգնաւորը տպրելէ դադրած էր , այն ալ քանի մը ժամէ ՚ի վեր , իւր անդամները տակաւին քիչ մը շերմութիւն պահած էին :

Ասպետը ուշի ուշով ճգնաւորին երեսը կը դիտէ . զանի ճանշել կը կարծէ , թէեւ իւր դէմքը տառապանքէ և դժբաղդութենէ խորշմած ալ ըլլայ : Կարի սրտայոյզ , իւր կասկածները փարատելու ջանալով ճգնաւորին սեւ վերարկուն կը վեր-

ցընէ և անոր սրտին վրայ խարտեան մաղերէ դան-
դոյր մը կը դանէ, զոր արտասուքներ թրջած էին... :
Կուրծքը կը բանայ, ա՛հ, ալ տարակոյս չկայ. ծա-
նօթ նշան մը իւր աչքին զարկաւ և վերջ տուաւ
իւր անստուգութեանց : Մարտիկը գլխի աղա-
ղակ մը կ'արձկէ : Ո՛վ իմ նախկին զինակիցս, ո՛վ
իմ գլխաւորս, մի՛թէ զքեզ այսպէ՞ս պիտի տեսնէի :
Ապետը էքպեր Տը Նորենտալ կոմսը ճանչ-
ցած էր :

« Ազգային գրադարան



NL0255046

